# ԳԻՐՔ
## ԸՆԴԴԻՄՈՒ
## ԹԵԱՆՑ

Շարադրեալ
ի Սրբոյ Եզնակայ
Կողբացւոյ Հայոց
Վարդապետէ. եւ յա
շակերտէ մեծի Թ.գ
մանչին մերոյ Ս.Մն
Աեարոպայ.

# ԳԻՐՔ

## ԸՆԴԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆՑ

Շարադրեալ ի Սբյ Եզնկայ Կողբացւոյ
Հայոց Վարդապետէ․ և յաշակերտէ
մեծի Թարգմանչին մերոյ՝ Սրբոյն
Մեսրոպայ․

'Ի ԼՈՅՍ ԱԾԵԱԼ

'Ի Հայրապետութեան Տն Յակոբայ տմ
Հայոց Կաթուղիկոսի․ որ 'ի լուսանկեր
Աթոռն ի Սբ Էջմիածին․

Եւ 'ի Պատրիարքութեան Սբյ Երուսա
ղեմի՝ Տն Կարապետի երջանիկ
զարդ Վարդապետի․

Իսկ և Կոստանդնուպոլսոյ՝ Տն Յակո
բայ Նախանձայարոյց Վարդապետի․ որոյ հրա
մանաւն և [illegible] իւր տպեցաւ․

Ա[illegible] նախանձայոյզ գրչի Տն Ա
բրահամու [illegible] Վարդապետի

Յամի Հայոց 1211․ 'Ի յունիսի 4․

ՅԻԶՄԻՐ

'Ի Տպարանի Մ[illegible] Մ[illegible]․

# ԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

## ՓՈՔՐԵՐ ԵՒ ՄԵԾԻ ԳՐՔՈՅՍ .

Տեառն Յովսէփայ Անձաւեան Վարդապետի և
Պատրիարքին Կոստանդնուպօլսոյ .
տուրեալ և Անձաւէր
ընծայօղէ .

Լամն սոյն ներկայ գրոյս Հեղինակայ Սրբոյ վարդապետի Աթենականի, և աշակերտի Թարգմանչին մերոյ սրբոյն Մեսրոպայ Վարդապետի, ունիմք թէ ևս զմի քանի նշանակութիւն զարմացման . Նախկինն է . թէ ազգս հայոց տակաւին դեռ աքայլ և յօրորոցէ երախայութենորապէս ելեալ՝ Պարսից, Յունաց և Ասորոց լեզուաւն կրթեալ . զի որդ և որպէս ՚ի դուռնաքեայ ժամանակի առ այս կետ հա-

սեալ

ւեալ 'ի գրաբառութեան և ըստ ոճի բուն
չի բղխողաց անվավեր կերպիւ ծերունաբար
յայս հանդէս մտեալ. դայս աշխատաբար առ և
բազմարան նիւթեամբ որ գրքուկս շնորհեցաք ազ-
գիս արամագնոյ. յիրաւի սքանչացման ար-
ժանի է, այց առ մերձակայն հեղմունս հոսա-
նաց Հոգւոյն սրբոյ նկատեալ, ոչ զարմա-
նամք վասն տուողին. Թէ և հիանամք ընդ-
ընդունակութե առողին ։ Զի իմաստութի
երաց զերբանս տղայոց, և զերզուս համրոց
եդ պարզախօսս ։

Երկրորդ հիացման արժանին, թէ որ վար-
դապետն եգնակ բազում ժամանակ կեցեալ
յաթէնս, որպէս 'ի տղայութեան խուռնման
դողդող 'ի հաճատն մեալով, ըստ ածատեսին
Մովսէսի 'ի տան դստերն փարաւոնի սնեալ.
'ի Մեծանալն ուրացաւ լինել որդի դստերն
աթենայ չածուհւոյն. Եբր. 12, 24 ։ իսկ առ-
գրանքնի եկեղեցւոյն, վաղքաջ ուսաւ զիծա
բանութի, մինչև կուռն և կորովի բանիւք,
իբր բալխ տրաւ բարանի քակեալ իլոց գլի
նուածս պարսից հրապաշտութեանն, և զա-
ղանդս մարկիանեայ, մանեայ մանիքոսի և

այլոց հերձուածողաց ։ Յիրաւի ըստ ասից երանելւոյն պօղոսի, ‖ 2 ։ կոր․ ։ 10 ։ 6 ․ 5 ․ ‖ քակելով զամ հպարտութի հպարտացեալ ՚ի վերա գիտութեան քի, և գերելով յամե նեցուն միտս ՚ի հնազանդութի աւետարանին․ Լորդար և հարազատ որդի մերոյն Մեսրո պայ մեծի վարդապետին ։ ․Քանզի և նա զթագուցեալ կռապաշտութին ՚ի գաւառն գողթան և ՚ի սիւնեաց աշխարհին, և զ յայտ նեցեալն ՚ի թուլամորթութեան Արշակայ Արքային մերոյ․ բնաջինջ արարեալ եբարձ․ մինչ զի և դեւք դարհուրեալք յաղօթից և ՚ի հրացայտ մաղթանաց նր, մեր նահոր տես

լեռամբ անկանէին յերկիր մարաց։

Յորոյ՚ն է, զի երանելի վարդապետս այս եզ նան կոչեցի, եր ․ի ՚ի թոռնոյ աշակերտացն մեծին ՚Ի սահակայ Հայրապետին և Մեսրո պայ վարդապետին ․ որ և ՚ի բնութենէ ուշի մին, քաջուսումն, փափկաձայն և երկիր ոդի։ Սա և զկնի այնոցիկ բնական ուշիմութեց ․ էր և նախանձաւոր հոգևոր բարեաց․ Ա․ կոր․, 13 ․ 31 ։ ուստի թ ․ ախոխեալ ՚ի բիւզանդիոյ տանել առ մեծն իսահակ և մեսրոպ զբերան

սուրբս և ա̃ծաբանականս 'ի հելլէն լեզու ։ Քանզի զառաջին ունեցեալն պերճն Մ. Հրուժան այրեալ էր 'ի հուր ։

Չորրորդ. զի սա ըստ իւրումն կարի բարկ արև իմն ծագեալ երևի, իւրում ժամանակին ։ Քանզի ո՛վ ոչ 'ի նորեկ կրթեցելոց ( և կամ 'ի վաղեմենայց ) հոգացաւ զազգս հայոց վէճաբանօրէն՝ որոշելով զցօրեանն յորմանց հերձուածողաց, և 'ի պարսկական հրապաշտութ̃ց և յառասպելեացն զրուանայ և որդւոց՝ նր̃ որմզդի. և արհմնայ, և այլոց հերձուածողաց ։ Իսկ թէպէտ այս գրքուկս փոքրիկ երևի գոլով մեծ ըստ իմացուածոցն. և խորթին շարադրութե̃. սակայն խթան լինի և է՝ ա̃մ ուսումնասիրաց. ոչ միանգամ հարևանցի ընթերցմամբ բաւ առնել ըղձից. այլև քանիցս անգամ ընթերցմամբ ։ Քանզի և մինչևն զապրելեակ ինչ կամելով 'ի բոյն իւր հանել 'ի ծառն, որ քանիցս և անկանի 'ի բերանոյն, ոչ դադարի վերստին յիջանելոյ, և խայծելով կրկին 'ի վեր տանելոյ ։ Ո՛չ ապաքէն և 'ի պարզ հայելւոջ միանգամ նկատողն բաւ ըղձիցն առնէ. և որ 'ի նսեմ

հայելւոյ՝ բազմիցս նկատմամբ ։ Խորթին և նսեմ է ոճ բանից մերոյ վարդապետիս․ բայց՝ բազմիցս ընթերցողէն, լրումն տայ փափագմանացն ։

Ո՞ թէ որքան այսպիսի գրեանք կորուսեալք իցեն յազգէս Հայոց, զորս այժմու առ ձեռն պատրաստ չունողքս, եպերիմք յայլազգ քրիստոնէից, իբրև զոչ եղելեք ունողս ։ Վկայեն անշուշտ բարբառով և Սմրղանդի աշտարակքն, յորս Լանկթէմիրն տարեալ զգրեանս ելից, և անդ փոշիացեալք ոչ ևս կայանին 'ի ձեռին ։ որք և յաշխարհակործանէն նզովեալք կնքեցեալք մի՛ 'ի դուրս տալ, եթէ ոչ գոնէ՝ աղաչանօք 'ի մէջ սուղ ժամուց յաշտարակէն մտողացն՝ ըստ ժամու ներփակմանն միայն ընթեռնուլ ։

Արդ՝ մեր վարդապետս Իգնակ, արդարև եզօրէն զանվար և զկոշտացեալ երկիր հերկելով, արար արդասաբեր․ և զխոչ և զխութ 'ի ճանապարհէ 'ի բաց ձգելով, արար դիւրանց մեզ ընթացողաց առ օթևանն արքայութեան ։ Վասն որոյ և իմ տակաւին նոր առդիպեալ սոյն մեղսածորան գրքոյս միջնորդու-

Թեամբ գլխւոնոյ արք եպիսկոպոսի Տեառն
Աբրահամու Ըծխմաստ Ա արդպտի. և հե֊
ղահոզի եղբօր մերոյ սիրեցելոյ և պաշտօնակ
ցի. ի գրչասխալութեանցն անձնեւին յապաւ
եալ. և գերկար ձեռակերպ գրեալն, ըստ
զանազանեցն պարբերութեանց իմացուածոց
ի գլուխս. 76. բաժանեցի ։ զի ընթերցողացն
բարձցի ձանձրութի. և հրաման նորու տպա
գրեցման. Յակոբ և եթ պաշտօնեայ հո
գւոց ազգիս փրկութե, Պատրիարքս
Կոստանդնուպօլսոյ կայսերանիստ
մայրաքաղաքի. յամի Տն. 1762.
և յուլիսի. 10. զոր սիրով
ընկալեալ ողջ լերուք
ի Տէր։



Սուրբ Հայրդ եզնակ՝ Իմաստութեք լը ցեալ:
Մտօք լուսաւոր՝ Ուսմամբ փայլե ցեալ.
Նայում վայրի ելոցս՝ Իջին դու հայ ցեալ.

# ԵՐԱՆԵԼՈՅՆ
## ԵԶՆԿԱՅ ԿՈՂԲԱՑՒՈՅ
### ՀԱՅՈՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ·

Աշակերտի Սրբոյն Մեսրոպայ Քեծ Նորա
ճառք · Ալբոտագրութիւն ընդ դէմ
աղանդոց հերձուածոց ։

Ճառ · Ա ։

Յաղագս անեղնութեան Այ ։

# ՅՈՐԺԱՄ

ԶԱՆԵՂԻՆ ԷՈՒԹԵՆԷՆ
և զմշտնջենաւոր զօրութենէն ճառե-
ցէ ոք ( քանզի՝ մարմնաւոր լեալ է ) պարտի

 զմի

զմխիթարականն և զխորհուրդսն սրբել. զայդս
շարժմանց պարզել. ոչ յայն՝ կոր առաջի եդ,
համանիլ կարասցէ: Նաև՝ որ ընդ ճառաճիլթս
արեգականն հայել կամիցի, պտուղ զդրտո
րուէ աչացն, զաղտն և զբիժն ՚ի բաց կորուել.
զի մի՝ մթայլքն որ ընդ օրն շողայցեն, արգել
հայելոյ ՚իմաստակութեան լուսոյն լինիցին:

Ա՛ արդ՝ քանզի մի ոչ էութիւն անքննին է՝
և անհաս բնութ. առ՝ նորա անքննութիւն
ընծայութիւն անդխտութեան մատուցանելի է.
և առ էութիւն նորին՝ դաշանութեանց գի
տութեան. և ոչ քննութեանց, զի որ էն՝ պար
տի զի մշտնջենաւոր իցէ և անսկիզբն. որոյ ոչ
սկիզբն յումեքէ առեալ ՚ի լինել. և ոչ ունի զոք
՚ի վեր քան զինքն. զոր պարտ իցէ նմա պատ
ճառ կարծել. կամ խմանալ եթէ ՚ինմանէ ի
ցէ առեալ զսկիզբն էանալոյ: Զի ոչ ոք է ա
ռաջին քան զնա. և ոչ ոք է յետոյ նման նո
մա. և ոչ ընկեր հաւասար նորին. և ոչ էու
թիւն հակառակ նմա. և ոչ գոյութիւն ընդ
դիմակաց. և ոչ բնութիւն հեղթաբեր ՚ի պե
տըս նորա. և ոչ նիւթ ինչ՝ յորմէ առնիցէ
զոր առնելոց իցէ. այլ ինքն է պատճառ ամե

նային. որ 'ի լինելն և 'ի գոյանալ եկին 'ի չգոյ է 'ի գոյ. որպէս երկինք վերինքս, և որ ինչ յերկինս. և երկինք երևելիք որ 'ի ջուրց. և երկիր, և ամենայն 'ի նմանէ և 'ի նմա.

յորմէ ա͞մ և ինքն ոչ յումեքէ :

Որոց ըստ իւրաքանչիւր կարգաց տաճեալ է սկիզբն լինելոյ աներևութից անմարմնոց, և երևելեացն մարմնաւորաց. որ բաշխանին է որպէս 'ի տալն զկենդանութիւնն. նոյնպէս և 'ի գիտութիւն իւրոյ անարար էութեանն ժամանեցուցանել. և իւրոց արարածոցն 'ի հաստատումն՝ ըստ իւրաքանչիւր բնութեանց ածել. Որ ոչ այնու միայն զարմանալի է, զի եածն 'ի չգոյէ 'ի գոյ զէակսն. և եցոյց յոչինչէ յինչութիւն զէսն. այլ՝ զի և անարատ և անխախուտ պահէ զէակսն. որոց և յառաջնումն իսկ աննախանձաբար ետ զկենդանութիւնն առ 'ի յայտնելոյ զիւրոյ բղ-
բարերարութեանն հանդէս : Քանզի՝ ոչ է թէ կարօտ ինչ ոք իւիք էր. եթէ վասն այնորիկ խնայեցէ իւր միայնոյ սեպհականել զկենդանութիւնն : Իջ կամանօր և ակարեթէ զանձին և եթ խորհեցեր զզօրութիւն :

Իբ՟ ո՛չ նուաղ 'ի գիտութե՛, եթէ ինչեան եւ
եթ պահիցէ զգիտութի՛ն. Իբ՟ ո՛չ կարօտ յի
մաստութե՛, եթէ յորժամ այլոց բաշխիցէ զի
մաստութի՛ն իւր, կարծիք ինչ կարօտու՟ 'ի
ներքս մտանիցեն: Այլ կենդանի է եւ աղբիւր
կենդանութե. տայ ամենայնի զկենդանութի,
եւ ինքն կայ՝ լի՛ եւ յանսպառ կենդանութե:
Իբ՟ զօրացուցանէ զամենայն՝ մեծազօր զօրու
թբ. եւ ինքն ո՛չ թերանայ 'ի զօրացուցիչ զօ
րութե՛ն: Իբ՟ պարգեւէ գիտութի ամենայն
անգիտաց. եւ ինքն բովանդակ ունի յինքեան՝
զամենագէտ գիտութի՛ն: Իբ՟ բղխէ յամենեսին
զանսպառ իմաստութի՛ն. եւ ինքն միայն անխա
խուտ յամենահնար իմաստութենէն: Իբ՟թէ աղ
բիւրք մշտաբուղխք որք 'ի նորին հրաման է
կարգեցան, հանապազ բղխեն եւ ո՛չ պակա
սին. որոց բղխմունքն զայլոց կարօտութիւ
նսն. եւ ինքեանք 'ի նմին յորդու՟ կան մշտն
ջենաւորք: Որչափ եւս առաւել այն՝ որ 'նց
զյորդութի բղխմանցն յօրինեաց, որ աղբիւրն
է բարութե. որ զամ զօր արար՝ գեղեցիկս
արար: Այնինքն՝ զքանաւորս եւ զանքանս. զմի
տաւորս եւ զանմտաւորս. զխօսունս եւ զան

խօսունս · զասունս և զմնասունս: Ի՛ւ բանա-
ւորաց և մտաւորաց յիւրաքանչիւր առաքի-
նութեց կարգեաց ստանալ զշարութի · և ինչ
զգեղեցկութիւն: Զի գեղեցկութեն տոհիչ
ինքն է · և բարութեն զանձնիշխանութիւնն
արար պատճառ:

( Ճառ · Բ: )
Յաղագս էութեան հիւլէից:

ԱՊԱ ԵԹԷ ԻՆՉ ՅԱՐԱ-
րածոց որ գեղեցիկ է՝ այն ՚ի բարւոյ
Արարչէ կարծիցի ումանց, որպէս
յունացն հեթանոսաց · և արանց
մոգուց, և հերձուածողաց · որ չար իմն է-
ութիւն հակառակ բարւոյ դնեն, զոր հիւլէն
կոչէին · որ թարգմանի նիւթ: Մեր առաջին
և նախաբարբառ պատասխանի այն է · Եթէ
՚ի բարերար Արարչէն չար ինչ չիք եղեալ ·
և չիք ինչ չար՝ որ էութեամբ չար իցէ · և
ո՛չ է Արարիչ չարաց իրաց՝ այլ բարեաց:

Իսկ արդ՝ զո՞րս յարարածոցն բարի կարծիցեն
կամ զո՞րս չար ։ Զի բազում անգամ զոր բա
րին կարծեն ․ միայն առանձինն առանց ըն
կերին խառնութեան վնասակար լինի , յա
մենեցունց առ հասարակ վկայեալ ։ Արեգա
կըն թէ բարի է, և առանց օդոյ խառնուա
ծոյ՝ այրիչ և ցամաքեցուցիչ է՛․ Նոյնպէս և
լուսին խոնաւական բնութիւն ունելով՝ ա
ռանց խառնուածոյ ջերմութեան արեգական,
վնասակար և ապականիչ է ։ Իսկ օդ առանց
ցօղոյ խոնաւութեան և ջերմութեան , վը
նասակար և ապականիչ է ։ Իսկ ջուրք՝ գնող
երկրի ողողմնեն և ապականեն ։ Իսկ երկիր
առանց ջուրց , պատառի և խարխլի ։ Իսկ
այսպէս չորեքին բնութիւնքն ուստի աշխար
հըս կազմեալ և կայ ․ առանձինն ապականիչք
են միմեանց ․ և խառնեալ ընդ ընկերին օգտա
կարք և շահաւորք ։ Իսկ զի այս այսպէս է,
ամենեցուն յայտնի է՛ , որք կամին ուսանիլ ․
ապա ուրեմն է՛ ինչ զօրութիւն ծածուկ ,
որ զապականիչսն միմեանց խառնուածովք ա
րար օգտակարս իրերաց ։ Իսկ որ առողջ մի
տըս ունին ․ ո՛չ զշարժունսն՝ այլ զշարժիչն

պարտին փառաւորել: Եթէ ոչ ընդ արդա-
նեակս, այլ ընդ վարիչն՝ պարտին զարմա-
նալ: Եթէ ո՛չ ընդ գնայունսն, այլ ընդ՝ գնա-
ցուցիչն: Քանզի՝ և նոքին իսկ իւրաքանչ-
իւր փոփոխմամբ յայտ առնեն, եթէ է ոմն՝
որ փոփոխէ զնոսա: Արեգակն ծագելովն
և մերձենալով և 'ի մուտս դառնալով: Եթէ
լուսին աճմամբ՝ լնլով և նուազելով. և
այլք ևս յարարածոցն ըստ իւրաքանչիւր բը-
նութեանց, շարժելովն և դառնալովն,
Եթէ արդ՝ չէ՛ առողջ միտաց զշարժելն և զը-
փոփոխելն թողուլ. և շարժողն և փոփո-
խողաց պաշտօն տանել. և երկրպագութե-
մատուցանել: Զի որք շարժին և փոփոխին,
չեն էական. այլ կամ լեալ յումեքէ և յոխ-
քէ. և կամ հաստեալ 'ի չգոյէ: Եթէ որ էն՝
և շարժէ զամենայն, ինքն ո՛չ շարժի և ո՛չ
փոփոխի. քանզի՝ էական է՛ և անշարժական է՛:
Եթէ զի մի էութիւն միշտնջենաւորական է.
և պատճառ ամենեցուն լինելոյ. այնմ
և որք զըպղմածեան պաշտամուն
սըն մուծին՝ մեղեն և պատ
ճառեն այսպէս:

( Ճառ . Գ. )

Յաղագս հեշտասիրական պատճառաց
հաղորդութեանց ։

ԵՔ ԱՄԷՆ, ՔԱՆԶԻ չեմք բաւական մերձենալ յամենեցունց պատճառուն. յէն՝ 'ի գոյն 'ի մշտնջենաւորն՝ և յանմատոյցն։ Մ՚ այնորիկ այլովքն խոնարհագունիւք, նմա պաշտօն մատուցանեմք. և որովք նմա ըզ պաշտօնն մատուցանեմք, հարկ է և զնոսա ողոքել զոհիւք և նուիրօք ։ Եթէ որպէս վըկայեն՝ մի է պատճառ ամենեցուն . և նոյն էական և մշտնջենաւոր . յայտ է՝ թէ այլքն ո՛չ էականք են և ո՛չ մշտնջենաւորք ։ Ի՛ զի՛ որդ չէականքն և չմշտնջենաւորք ընդ էականին և ընդ մշտնջենաւորին երկրպագութիւն առնուցուն ։ Ի՛ մանաւանդ միր մնաւորքն և երևելիքն. որպէս արեգակն,

և լուսնոյ, և աստեղք, և հուր, և ջուր, և երկիր, որք 'ի մոգուց և 'ի հեթանոսաց պաշտին։ Այլ եթէ ասիցէ ոք յայսպիսեացն, բարիոք է զի մի էութիւն պատճառ ամենայնի ասէք. արդ՝ եթէ մի էութիւն է որ զամ յամենայնի ազդեցուցանէ. և չէք ինչ նը մա հակառակ. մեզ զերախտաւորսն և զչարերարսն որ 'ի նմանէ կարգեալ են, զի արդ հրամայէք անարգել։

Ասասցուք, եթէ զերախտաւորսն և զչարերարս, որ 'ի նմանէ կարգեցան. մեք ոչ հրամայեմք անարգել։ Բայց դարձեալ և ոչ զպաշտօն արարչին արարածոցն մատուցանել. զի չէք ոք բարերար և երախտաւոր, բայց միայն որ արար և ո՛չ լինայեաց. և պահէ կենդանի զբնաւորսն աներևոյթս, և ո՛չ նախանձի։ Զհրեշտակաց ասեմ և զհոգւոց մարդկան. և զդայականացն՝ անշնչից յիւրաքանչիւր կայանի։

Արդ՝ բարիոք է արեգակն և դեղեցիկ բնութեամբ. և մեզ և ամ արարածոց որ 'ի ներքոյ երկնից, յօգուտ և 'ի դարման. Իբրև ճրագ մի 'ի մեծի տան, 'ի մէջ ձեղուան և

յատակի լուցեալ, առ 'ի խաւարն և զատու-
ե՛րն յերկուց մեծացն անօթոց՝ 'ի բաց 'ի մի-
ջոյ փարատելոյ: Բայց լինքն եթէ լիցէ և
եթէ չիցէ, զայն ո՛չ գիտէ. զի չէ 'ի բանաւ-
որաց և 'ի մտաւորաց: Նոյնպէս և այլքն՝
յանշնչոցն արարածոց: Զի՛ թէ ջուր, թէ
հուր, թէ երկիր թէ օդ, թէ լիցեն և թէ
չիցեն՝ զայն ո՛չ գիտեն. և զպասաւորութին
յոր կարգեցան անդադար մատուցանեն. վա-
րելով այնու որ կազմեացն զնոսա, Զի՛ մեք
ո՛չ անարգեմք զնոսա. և ո՛չ պաշտօն մատու-
ցանեմք նոցա. այլ հայեցեալ ընդ նոսա փա-
ռաւորեմք զկարգիչն նոցա և զօրինիչ. զի
մեզ 'ի պէտս են, և կարգչին իւրեանց 'ի փա-
ռս: Զի ա՛րդ պաշտեսցեմք զարեգակն. որ
մերթ կոչի երբեմն զծառայ, առ 'ի սպասն
յոր կարգեցաւ հասանելոյ. և մերթ երթայ
զօղն երբեմն զարհուրեալ, և տայ տեղի խաւ-
արին լնուլ զմիջոց մեծի տանս աշխարհի.
և ընդ ժամանակս ժամանակս 'ի խաւար դառ-
նայ առ 'ի յանդիմանութիւն և յամօթ ի-
բոցն պաշտօնէից. Զայս արարեալ՝ եթէ
չեմ ես արժանի պաշտաման. այլ այն՝ որ զիս

և զամ տի՜՝ լուսաւոր պահէ․ և ՚ի ցայգ
զիս զօղեցուցանէ․ և երբեք երբեք խաւա
րեցուցանէ։ Ո՜հ իբրև խօսուն բերանով,
անշշուն չն՝ բողոքէ․ եթէ չեմ արժանի պաշ
տօն առնլոյ, այլ պաշտօն հարկանելոյ։ Կամ
զլուսին՝ որ ամսոյ յամիս հիւծանի․ գրեթէ
և մեռանի․ և ապա սկիզբն առնու կենդանա
նալոյ ։ Զի քեզ զպարութեն օրինակն նկա
րեցէ ։ Կամ զօդ՝ որ մերթ գոչեցէ փարպա
ցեալ հրամանաւ․ և մերթ սարսի ՚ի գոչելոյն
սաստի՜ց ։ Ո՜հ կամ զհուր՝ որում և զքեզ
խակ երկրորդ արարիչ կաղմաց յօրինէին․
զի յորժամ կամիցիս վառիցես․ և յորժամ կա
միցիս շիջուսցես ։ Կամ զերկիր՝ որ հանապազ
բրեմք․ և ցանգ կոխեմք․ և զաղբ մեր և զա
նասնոց մերոց ՚ի նա հեղումք։ Կամ զջուրս
զոր հանապազ ըմպեմք․ և զանուշութիւն
նոցա ՚ի ժամնտահոտութիւն ՚ի փորի մերում
դարձուցանեմք․ և զներքին և զարտաքին
աղտեղութիւնս մեր նոքօք սրբեմք ։

Ե՜ւ այսու ամե՜ն յայտ է թէ, զոր առ չափս
ունին՝ անարգեն շատք՝ և անպատուեն ։
Նա և՝ դողում և սոսկում ունի զարհուրած

սըն, յորժամ զպատիւ արարչին ոք նոցա մա
տուցանիցէ · և յայտ առնէ երկիր շարժե
լովն · և լուսաւորացն խաւարելովն · և օդքն
դժդմնելովն և քստմնելով · և ծով սաստկու
թեամբ ալեացն սպառնալեօք ։ Զի թէ ոչ
սաստ արարչին նահանջէր զնոսա, մի մի ՚ի
նոցանէն բաւական էր զամենեսին սատակել
առ ՚ի խնդրելոյ զվրէժ անարգանաց հասա
րակաց արարչին ։ Կամ ծով ծածկելով որ
տկար աւազովն պաշարեալ, չիշխէ անցանել
ըստ հրամանն ։ Յոբ, 38 · 10 ։ Կամ երկիր
կլանելով, որ ՚ի վերայ ոչինչ կայ հաստատեալ
և յոչինչ դառնալ և դարձուցանել չէ պատ
շաճ զիւր բնակիչսն ։ Կամ հողմ պարտասե
ցուցանելով, որ կենդանութիւն է ամենայն շնչաւո
րաց · և չիշխէ արգելուլ զկենդանութիւն ա
ռանց հրամանի կենդանապահին ։ Կամ օդք
երբեմն զսառնամանիս ձիւնելով, և երբեմն
զխորշակն բերելով և լինէր ամենայն ինչ ոչ
ինչ ։ Այլ նա ահաւասիկ երբև զկառս իմն
լծեալ ՚ի չորից երիվարաց, զաշխարհս ու
նեմք · ՚ի ջերմութենէ, ՚ի ցրտութենէ,
՚ի ցամաքութենէ և ՚ի խոնաւութենէ · և

զօրութիւն իւն ծածուկ կառավար. որ ըղ
ձորս կազմեցողն ընդ միմեանս, 'ի հաշտու
թե և 'ի հաւանութե պահել նուաճէր ։
Ամենայն կառք 'ի համազգեաց երիվարաց
լծին. բայց միայն այսց կառաց որ 'ի չհա
մազգեաց լծեալ են։ և որ 'ի համազգեացն լը
ծեալ են, երբեմն սայթաքին. երբեմն օձտեն
և 'ի տաղնապի զկառավարն և զանձինս կա
ցուցանեն. և մերթ խորտակումն իսկ կառա
ցըն գործեն ։ և յորժամ ողջ կառքն լիցին.
և ողջ կառավարն. և վարժ երիվարքն, ուշ
եղեալ 'ի հանդէպ երեսացն և եթ արշաւեն.
և այս կառք զարմանալիք, 'ի հակառակ և
յանհաման երիվարաց լծեալ, և ծածուկ ձե
ռամբ ուղղեալք, ո՛չ 'ի մի միայն կողմն 'ի
հանդէպ երեսացն և եթ արշաւեն. այլ յամ
կողմանս վայրաբերին. և յընդ հանուրս ար
շաւեն. և ընդ բնաւս սլանան. և ամի բաւ
ական են ։ Յորժամ ընդ արևելս ընթանան,
չէ ինչ արգել՝ թէ ընդ արևմուտս ո՛չ ար
շաւիցեն ։ Եւ յորժամ ընդ հիւսիսի վարգին,
չէ ինչ արգել՝ թէ ընդ հարաւ ո՛չ սուրայ
ցեն. զի ձեռն կառավարին բաւական է յամ

կողմանս դիմեցուցանել. և ընդ չորս անկիւ-
նս տիեզերաց արշաւեցուցանել։

( Ճառ Դ։ )

Յաղագս յօդման ընդ դիմաւորելոյն
ջաւադաշխէց ։



ՇՐՋԻԱԼ ԱՌԱՅՍ պիսի ճշմարիտ ասացուածս , անպատշաճ հարցուածս մտուցանեմ։ Ո՞ւստի իսկ բնաւ են ասեն՝ այդպիսի անհարթութիւնք։ Զի թէ ամ բարեաց արարիչ է և ո՛չ չարաց նոցա. ո՞ւստի է խաւար , ո՞ւստի են չարիք , ո՞ւստի են աշխատութիւնք , ո՞ւստի են ըլկանք. մերթ 'ի ցրտոյ , մերթ 'ի խորշակէ . կամ ո՞ւստի են անզգամութիւնք ։ Զի տեսանեմք երկու արս միապէս ընդ միմեանս զրգռեալ , միմեանց մահու և արեան ծարաւիլ։ Ի՞ այլք զգերեզմանս կրկտեն և զթաղեալ մարմինս ընդ հողով մերկացուցեալ և խայտառա

կեալ՝ արեւու ցուցանեն ․ և զմածարեալ դին
առ փոյթ 'ի չծածկելոյ, թերեւս և շանց
ևս 'ի կուր արկանեն ։ Ո՞չ է երբէք զի մինն
փախուցեալ երթայցէ անձնապուրծ ուրեք
զկեանս անձինն շահել՝ և միւսն ցասմամբ
բորբոքեալ որոյ զկնի ընթացեալ, ոչ դադարի
մինչև յագեցուցանէ զցասումն ։ Ո՞ւստի է այն
անյագ ցասումն ։ Ե՞ւ ումն մերկէ՝ զհանդեր
ձըս ընկերին, և թէ ընդ դիմանայցէ, յարեւէ
ևս արկանէ ։ Ե՞ւ ուրուն 'ի մտի եդեալ գո-
ղանալ զայլոյ ամուսնութի, և ելեալ անօրէ
նութե՛ յօտար մահճս, չտայ լինել հայր որ
դոց, այնմ՝ որ օրինօքն ամուսնացեալ իցէ ։
և երբեմն երբեմն պատերազմունք շարժին ․
ուր մեղաւորք և արդարք առ հասարակ կո
տորին ։ Ե՞ւ մահտարաժամք և ախտք չարա
չարք ։ Ո՞չ զի՛ պիտոյ է մեզ բնաւ մի ըստ մի
ոչէ թուել․ այլ համառօտ իսկ ասել, թէ ուս
տի է այս ամ․ և ո՞վ է սկիզբն և գործիչ՝ այն
պիսի անպատեհից․ բայց եթէ իցէ ինչ չար
զօրութիւն, որ զայն ամենայն անհարթութիւնս
տայցէ գործել, և ինքն իսկ արարիչ իցէ նո
ցա ։ Զի զած արարիչ ասել այնպիսի իրաց

անպատշաճ է․ և ոչ ՚ի նմանէ ունել զգոյ
ութիւն չարեաց․ զի ո՛րդ մարթ է զայնպի
սիսն յա̃յ կարծել։ զի ա̃ծ բարերար է և լա՛
ութեանց արարիչ և ՚ի չարութեանց ինչ
՚ի նա ոչ մերձենայ․ և ո՛չ խնդայ ընդ այն ա
խարժի․ այլ և խոտէ ևս զգործսն և զգործող
սն․ զի անընտանի են չարիք ՚ի բնութէ նո̃ր։
Վասն որոյ կարծի թէ՝ էր ինչ ընդ նմա, ո
րում հիւլն անուն էր, որ է նիւթ։ Աստի
զամենայն արարածս արար և զատոյց ամեն
արուեստն իմաստութեամբ․ և զարդարեաց
վայելչութեամբ։ Նա՛ յայնմ նիւթոյ պարտ է
կարծել զչարիս, որ անկիրան և անկերպարան
էր․ և խառնխռուռն օծանելով երթևեկէր
և կարօտ էր ա̃յ արուեստագիտութեանն։
Եւ՛ ա̃ծ ո՛չ եթող զնա համապազ խառնխու
ռըն վարիլ․ այլ եկն յառնել զարարածս․ և
՚ի յոռութեանցն նո̃ր զատուցանել կամեցաւ։
և այնչափ ինչ արար ՚ի նմանէ․ որչափ ա̃յ
վայելէր առնել արարածս։ և որ ինչ մրրա
խառն էր ՚ի նմանէ, և չէր պատշաճ արար
չութե, զայն եթող․ և յայնմ մրրոյ
են չարիք մարդկան։

( Ճառ Ե : )

Վասն եղծման ընդ դիմաւորութեանցն հեղինակացս :

Պատասխանի :

# ԱՐԴԱՐ ԵՒ ԻՍԿ ՉԱՐԻ

քըն որ լինին , 'ի տարակուսի կացուցանեն զքաղցուս , և բազում արք առագք , վասն նորին խնդիրս մեծամեծս արարին : Ոմանք անխղճմտաբար իբր ընդդէմ կամեցան դնել . և կէսք ըստ նմանէ նիւթ ինչ ( զոր հիւլէն անուանեն , ) թէ՝ ամենևին այնմ խնդրոյ չէ՛ք սպառուած ; Բայց մեզ հա՜րկ եղև 'ի սիրոյ բարեկամաց . և յոյժ ուղեղ հայելոյ ընդ դիմակցաց . ըստ մերում տըկարութեան՝ ապաւինեալ յայն շնորհսն , մըտանել 'ի խնդիր ճառելս : Մանաւանդ զի յուսացեալ եմ վստահութեամբ յուղղոյ ունկնդրաց 'ի կամացն միաբանութիւն և Աստու

ԳՐԱԴԱՐԱՆ

և լինիցի նոցա զճշմարիտն ուսանել. և մեզ
ոչ 'ի զուր ինչ զջանս ծախսել. Վասնզի ոչ
եթէ անիրաւութեբ ինչ յաղթել ջանամք.
այլ իրաւամբք զճշմարիտն ուսանել, որով
յայտ է՝ թէ երկուց անհաւասարաց 'ի միասին չէ
մարթ լինել. Զի ուր երկու ոք 'ի միասին է-
ցեն, հարկ է թէ լիցէ ինչ՝ որ զատանիցէ 'ի միջի.
Արդ՝ զի որք համարիցին զանձ 'ի բերև 'ի տե-
ղւոջ ինչ՝ յամ 'ի հիւլէն լինել, և թէ 'ի մի-
ում ինչ 'ի մասին նորա. Եթէ բոլոր զանձ
յամմի 'ի հիւլէն լինել ասիցեն, որչափ մեծ ևս
ասիցեն զանձ՝ գտանի հիւլէն մեծ քան զնա.
Վասնզի՝ յորում լիցէ ոք՝ այն յորում էին,
քան զայն որ 'ի նմա էին՝ մեծ գտանի. զի բաժա-
կան եղև տանել բոլոր զնա. Եւ եթէ 'ի մա-
սին ինչ միայն 'ի հիւլէն, և այնպէս բևերա-
պատիկ իսկ մեծ քան զնա՝ հիւլէն գտանի. զի
սակաւ ինչ մասն նորա բաժանեան եղև ընդու-
նել զամ զնա. Իսկ եթէ ոչ 'ի նմա, և ոչ 'ի
մասին ինչ 'նր, յայտ է թէ՝ այլ ինչէր անձը
ոչ տող ընդ մէջ երկոցունց՝ մեծ քան զերկո-
սինն. Այս այնմ և ոչ միայն երկու անսկզբ-
նակիցք գտանին. այլ երեք. այսինքն՝ ամ.

հիւլն․ և անջրպետն ։ Եւ մանաւանդ՝ մեծ և ս անջրպետող քան զերկոսինն ։ Իսկ՝ եթէ էր երբեք հիւլն անզարդ և անարգ և անկեր պարան, և զարդարեաց զնա Աստուած ( քանզի՝ ՚ի յուրութեան նորա ՚ի լաւն դարձուցանել կամե ցաւ ) ապա ուրեմն էր երբեմն՝ զի յանզարդս և յանարգս՝ և յանկերպարանս էր Աստուած․ և հարկ էր թէ իբրև զհիւլն՝ իսկ և նա խառնիխու ռն վարէր ։ Եւ թէ յամ ՚ի հիւլն ( որպէս ասենն ) էր Աստուած․ յորժամ զնա ՚ի զարդ՝ և ՚ի յարդ՝ և ՚ի կերպարանս ածէր, ինքն յո՞ մարթ էր ամփոփիլ․ զի չէր ուրեք մարթ ամփոփի լոյ ։ Ո՞ր թէ և զինքն ընդ հիւլէն, ՚ի զարդս և ՚ի յարդս՝ և ՚ի կերպարանս ածէր․ քանզի՝ ոչ գոյր ուրեք տեղի ամփոփելոյ․ որ յետին ամբարշտութիւն է ։ Ապա թէ ասիցեն՝ թէ հիւլն ՚ի յԱստուած էր, ըստ նմին օրինակի պարտ էր խնդրել, ոչ զատիչ ՚ի նմանէ․ որպէս զա նասունս ՚ի մէջ օդոյ, որք ՚ի նմա են․ և զա տուցեալք ՚ի նմանէ ։ Թէ իբրև ՚ի տեղւոջ, ոչ և ջուրք յերկրի ։ Եւ զհիւլէ զայն ասեն, թէ անճահ և անզարդ և անարդ՝ և չար էր ։ Եթէ ըստ նոցա մտացն իցէ, ապա չարեաց տե

զի էր ած. զի անհնեթեթքն՝ և անզարդքն ՚ի՛ նմա էին, որ աննմանին անօրէնութի՛ն է՛ կարծել զայս՝ թէ երբեմն ասպնջական չարեաց էր՝ և ապա արարիչ չարեաց։ Նաև բաժանելէ ւս, թէ ՚ի նմա խըրև ի տեղւոջէր։

Ճառ. Զ.

Յաղագս եթէ ած ոչէ պատճառ չարեաց.

# ԱՐԴ՝ ՀԱՐԿԷ ՚Ի ՊԱՏ

ճառս չարեացն դալ և ցուցանել, թէ ուստի լինին չարիքն. և չէ պատճառ չարեաց Ած, այնու՝ զի առ ընթեր նմա զհիւլն դնեն։ Իսկ արդ՝ զոր հիւլ առ ձեռն դնիցեն այ. ո՞չ ապաքէն զայն՝ ուստի զաշխարհս արար, որ անկերպարանն և անզարդ և անարդ էր։ Զի տեսանեմք զաշխարհս ՚ի պէսպէս կերպարանս, և ՚ի զարդս՝ և ՚ի յարդս։ Ապաւրեմն կերպարանաց և զարդուց և յարդիլեաց արարիչ է ած և ոչ բնութեց։

Իսկ եթէ արարչի այն գործ է զբնութիւնս
առնել. և ոչ միայն յարդս և զարդս և կեր
պարանս. յայտ է, եթէ աւելորդ է կարծել,
թէ ՚ի նիւթոյ ինչ իմիք յընթերական՝ արար
ած զաշխարհս. այլ՝ յոչնչէ և ՚ի չգոյէ ։
Նա և՝ զմարդիկ տեսանեմք, զի ՚ի չգոյէ առ
նեն ինչ. որպէս շինողքն, ոչ ՚ի քաղաքաց
քաղաքս առնեն. և ոչ ՚ի տաճարաց զտաճա
րըս ։ Նոքա քանզի՝ ամենևին յոչնչէ չկարեն
ինչ առնել. քարինքն զոր ՚ի շինուածս յօրի
նեն, ոչ ևս քարինք կոչին. այլ կամ քաղաք.
կամ տաճարք ։ Զի ոչ եթէ բնութ̅ե գործ է
քաղաքս կամ տաճարս շինել, այլ՝ արուեստին
է որ ՚ի բնութ̅ե ։ Եւ արուեստն՝ ոչ եթէ
յընթերական ինչ իմիք ( որ ՚ի բնութեան
իցէ ) առնու զարուեստագիտութիւն. այլ ՚ի
դիպացն որ դիպին ՚ի բնութ̅եցն ։ Վասնզի ոչ
եթէ անձնաւորք ինչ յանձնաւորաց՝ զարու
եստն կարեն ցուցանել, այլ՝ ՚ի դիպացն որք
դիպին ։ Որպէս ՚ի դարբնութեան դարբինն.
և ՚ի հիւսնութեան հիւսն. զի մարդ և յառաջա
գոյն քան զարուեստն է. բայց արուեստն չէ՝
եթէ ոչ նախ մարդն իցէ ։ Աստի զարուեստն


յո

յորինչէ 'ի մարդկէն պատշաճեալ հա՛րկ է ասել. և եթէ առ մարդկան այսպէս. ո՞ր չափ ևս առաւել պատշաճ իցէ զա՛յս իմանալ, թէ ոչ միայն յարդուց և զարդուց և կերպարանաց արարիչ է, այլ յորինչէ առնել բաւական է բնութիւն, և ոչ արդասխան նիւթ՝ յորմէ ածընտրեաց զքարին 'ի մթեր. և զջարին մրրախառն 'ի միւս կողմն. ուստի ջանայ մրրախառն զլատակն պղտորել։

(Ճառ. Է.)

Հարցմունք թէ չարն ուստի է և զինչ է։

## ՉԱՐԻՔ ՈՐՔ ԼԻՆԻՆ

ուստի լինին. Հարցցուք և մեք։ Չարիքն որք լինին. անձինք ի՞նչ իցեն. թէ արգասիք անձանց ասեն 'ի դէպ է կարծել եթէ, արգասիք անձանց։ Իսկ հիւլն զոր ասեն անարգասաւոր և անկերպարան. զնիւթ անարգասաւորն՝ և անկերպարանն՝ յայ

լոյ կարէր արդիւնս ծնուցանել, եթէ ոչ 'ի դիպացն լինիցին չարիքն, և ոչ 'ի նմանէ ։ Զի սպանութիւն չէ անձին ինչ․ և ոչ չնութիւն անձին ինչ է։ Ի՞նչ ոչ դարձեալ այլքն մի ըստ միոջէ 'ի չարեացն ։ Այլ ո՞չ 'ի դպրութեանն՝ դպիր կոչի, և 'ի ճարտարութեան՝ ճարտար․ և 'ի բժշկութեան՝ բժիշկ ։ Ի՞նչ այն ոչ եթէ անձինք ինչ են․ այլ յիւրոց անտի անուն զանուանս ։ Նոյնպէս և չարիքն 'ի դիպացն անուն զանուանուածս ։ Ապա եթէ և զայլ ոք իմանայցեն դրդիչ և գրգռիչ որ արկանիցէ 'ի միտս մարդկան զչարիսն, և նա 'ի գործոյն զոր գործէ՝ անուն զանուն չարութեան ։ Բայց զայն պարտ է գիտել թէ զոր գործէ ինչ ոք, ոչ ինքն նոյն է․ որպէս բրուտն՝ յորժամ զանօթ գործիցէ, ոչ ինքն անօթ լինի, այլ գործիչ է անօթոյն․ ուստի և զանուանումն արուեստին առնու ։ Նոյնպէս և չարագործն 'ի չարն գործելոյ՝ առնու զանուն չարութեանն՝ եթէ շուն իցէ և եթէ սպանող ։ Ապա ուրեմն յիրաւի ասէին մարդիկք արարիչք չարեաց․ զի ինքեանք են պատճառք առնելոյ և չառնելոյ ։ Ի՞նչ զչարիսն ոչ պարտիմք անձինս անուանել ․

այլ արգասիս անձանց և չար. իսկ եթէ 'ի նմին
յամառեցեալք կացցեն, թէ արդար և՝ անարդ
և անարգասաւոր էր հիւլն, և Աստուած էած զնա
'ի զարդ և 'ի կերպարանս և յարգասիս. ապա
զԱստուած ունին պատճառս չարեաց, լաւ էր լեալ
թէ նոյնպէս կացեալ էր անհեթեթ և անարգա
սաւոր, քան դալ յարդիւնս և 'ի կերպարանս,
և լինել պատճառ չարեաց այլոց: Քանզի՝
զինչ մարթի ոք լինել որ իցէ՝ թէ անկերպա
րան իցէ: Սա և՝ ասեն անկերպարան, զկեր
պարանացն յայտ առնէ: Իսկ եթէ էր ինչ
անձնաւոր և կերպարանաւոր, աւելորդ է ա
սել արարիչ զԱստուած. այլ այնու ասեն զէ յանար
գութիւն և յանհեթեթութիւն դարձոյց 'ի
զարդ և 'ի կերպարանս, յիրաւի կոչի արարիչ:
Նոյն այնմ նման է, յորժամ 'ի քարանց ոք շի
նուածս առնիցէ, պատուշաճելոյն և յօրինե
լոյն միայն արարիչ է, և ոչ բնութեան:
Բայց արդ՝ յինչ ինչ արդեօք արար Աստուած զան
կերպարանն. 'ի լաւ ինչ, թէ 'ի յոռի: Եթէ
ասիցեն եթէ 'ի լաւ. զչարիսն որ լինին՝ պար
տին խնդրել, թէ ուստի՞ լինին ուրեմն: Որդա
սիքն ոչ նոյնպիսիք մնացին որպէս և էին.

այլ զի 'ի լաւն դարձան՝ լաւք և էթ երև-
եսցին ։ Ապա եթէ 'ի յոռին ինչ դարձան · իշ-
խեսցեն ասել թէ չարեաց պատճառ ած է ·
զի նա զարդասխան 'ի լաւ անդր դարձոյց ։ Այլ
ասեն թէ՝ զյստակն 'ի մի կողմն ընտրեաց, ուս
տի զարարածն արար · և զմրրախառն եթող ։
Ասացուք · որպէս զի թէ կարող էր և զայն
յստակել՝ և զչարեան 'ի միջոյ բառնալ · և ոչ
կամեցաւ զայն 'ի միջոյ բառնալ · ապա պատ
ճառ չարեաց պարտ է զնա ասել · զի 'ի կէ
սոյն նիւթոյ արար բարի արարածս, և զկէսն նորա
եթող նոյնպէս ապականութեան լինելոյ բա
րւոք արարածոցն ։ Իսկ եթէ ճշմարտիւ ոչ
քննեսցէ զիրսն, գտանէ յանճնարին փոանգս
եկեալ զնիւթն քան զառաջինն անկարելութիւն ։
Զի նախ քան զնիւթին և զ զդային դիւրանդմն
չարեաց · յապահովէ և յանհողութեն կայր ·
և զկնի առնելոյ՝ զարդմունս չարեացն, 'ի տագ
նապի և 'ի տարակուսի կայ ։ Իսկ թէ կամիս
'ի մարդոյ խակ առցես օրինակ ։ Զի նախ քան
զպատկերանալն և լինելն կենդանի, անմասն է
'ի չարեաց · և յորժամ գայ 'ի չափ հասակի
մարդոյ՝ յայնժամ մտանէ 'ի չարխ յիւրմէ անձն

իշխանութեանց ․ Նոյնպէս և ՚ի բարբարոսութեանցն զոր ասեն յայլ եղեալ հիւլէայն․ գտանի զի ՚ի յոռութիս եկին։ Իսկ եթէ ՚ի չկարելոյ այլ բառնալ․ զչարիսն՝ եթող նոյնպիսիս․ այնու տկարութիւն ամենայն զօրին․ կամ թէ բնութեամբ տկար իցէ, կամ թէ առ երկիւղի յաղթեցաւ՝ յայլմէ զօրագունէ քան զինքն․ Եթէ յաղթել կասկածանօք ՚ի մեծագունէ քան զինքն ասիցեն, ՚ի հարկէ զչարիսն բռնադատիչս կամաց նորա դնեն ։ Իսկ ընդէր ըստ նոցա բանիցն չարիքն ոչ լինէին նմա․ որ այն յաղթել կարէին ։

( Ճառ․ Ը ։ )

Յաղագս ոչնչացութեան
հիւլէին ։



ԱՌՋԵԱԼ ՀԱՐՑ

ցուք․ հիւլէայն պարզ լինչ բնութիւն իցէ, եթէ յօդուածով ( զի ազգի ազգի գործուածք իրացըն յայսպիսի քննութիւնն առ ամենայն զօրին )

զի եթէ պարզ բնութին էր հիւլին, և մինա կերպ. և յաշխարհս 'ի յօղուածոց և 'ի պապէս բնութեանց, և 'ի խառնուածոց հաստատեալ է, անհնարին է ասել եթէ հիւլեայն լեալ իցէ։ Այ զի չէ մարթ յօղուածոյին 'ի միոջէ պարզ բնութէ ունել զհաստատութին. Վասնզի յօղուածոյքն 'ի պարզական բնութեցն յօղին, և եթէ 'ի պարզական բնութեցն յօղեցան. ապա էր ժամանակ յորժամ հիւլին իսկ չէր 'ի միջի, զի 'ի պարզականացն յօղելոյ՝ եղեն հիւլին. ուստի լեալ իսկ երեւի հիւլին են ոչ անարար։ Զի եթէ յօղուածօվ էր հիւլին՝ են յօղուածոյքն 'ի պարզականացն ունէին զնախորութին, ապա էր երբեք զի չէր իսկ հիւլին։ Մինչչեն պարզականացն 'ի միմեանս յարեալ էր. նա եթէ էր՝ ժամանակ յորժամ զի հիւլին չէր, ապա չդոյր ժամանակ յորում չէր, անարար։ Զի եթէ ած անարար էր և պարզականքն են անարարք. ուստի հիւլին յօղեցու յայտ է թէ չէին երկուքն միայն անարարք, այլ հինգ։ Իսկ արդ՝ տեսցուք. համանք ինչ ընդ միմեանս էին բնութիւքն, ուստի հիւլին յօղեցաւ, թէ հակառակք իրերաց՝ նա անա

սիկ տեսանեմք զբնութիւնս միմեանց հակառակս, քանզի ընդ դիմակաց է հրոյ՝ ջուր. եւ լուսոյ՝ խաւար. եւ ցրտոյ՝ ջերմ. եւ ցամաքի խոնաւ: Եւ ընդ ինքեան ինչ հակառակ եւ ի՛ պատակար չէ. բայց ընկերին: եւ անտի յայտ է՝, թէ չեն ՚ի միջէ նիւթոյ. եւ ոչ մի՛ նիւթն ՚ի չորից հակառակորդաց: Արդ՝ եթէ մինչ էր նիւթն. ոչ եթէ ինքեան հակառակ էր, այլ ընկերին. որ՝ սպիտակ՝ թխոյ եւ քաղցր՝ դառին:

✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲✲

( Ճառ. Թ. )

Զորն ոչէ գոյացութիւն:

ՍՈՒ ԱՐԴ ԶՀԻՒԼԻ ԵԱՅՆ ԽԸՆ դիր թողլ ու ( զոր նիւթն անուանեն կոչեն ) ՚ի չարեացն խնդիր եկեսցուք, զոր ՚ի նմանէն խմանան: Զի յորժամ չարիքն յայտ լիցին թէ չեն անձնաւորք. անտի եւ հիւլին յան դիմանի, թէ ոչ էր երբեք. եւ ոչ բնութիւն անձնաւոր: Արդ՝ զմարդկան խակ չարեաց հարցցուք: Որդասիք անձանց լինցին. եթէ

անձինք ինչ չարիքն իցեն ։ Զի որ ինչ 'ի մար
մինս և 'ի հոգիս շարժմունք խաղան, ոչ մար
թի ասել թէ այն մարդ իցէ․ այլ կամայական
շարժմունք ։ Զի մարդն անձնաւոր է և բար
քըն ոչ անձնաւորք․ որպէս ասանուլ, կամ
ձնութիւն որ 'ի բարուցն գործիցին ։

Արդ՝ եթէ այնք արարածք ինչ անձնաւորք
իցեն, հարկ է և զպատճառն զոր գնեն, ա_
րարած անձնաւոր կարծել․ զի որոյ մասն ինչ
արարած է, յայտ է եթէ ամենեւին իսկ արա
րած է․ և որոյ մասն չէ արարած, նա ընաւ
իսկ չէ արարած․ Ապա ուրեմն էր երբեք զի
ընաւ չէր ամենեւին ինչ արարիչ․ բովանդակ
մինչ չև ած զմարդն արարեալ էր ուստի չա_
րիքն լինէին ։ Քանզի մասանց չարեաց գտանի
մարդն արարիչ․ անտի յայտ է թէ և բովան
դակ իսկ չարեացն արարիչ ած է ։ զոր ամենե_
ւին մի' երբեք լիցի ասել, թէ ած չարեաց պատ
ճառ իցէ․ այլ այն՝ որ իւրով կամօք զգործ
չարեացն գործիցէ ։ Եւ յումմէ չարն գործի,
յիրաւի նմին և անուն չարութեան դնի․
որպէս և յառաջագոյն իսկ
ասացաք ։

( Ճառ. Ժ. )

Թէ չարն նմանոյ գործ է.
և ոչ բնութեան.

## ԵՒ ԱՐԴ՝ ԵԿԵՍՑՈՒՔ

յիրացն իսկ 'ի քննելն. զի յորժամ ճշմարիտ մրցութեամբ լինիցին. դիւ-րաւ զյայտնութիւն ճառիցն յանդիման կացու-ցանիցեն : Արդ՝ զայս եթէ բարի և բարերար ասիցեն. հարկ է թէ 'ի բարին և 'ի բարերարն չարութիւն ինչ ոչ մերձենայ : Իսկ եթէ այնպէս իցէ. նախ զբնութիւն և զպոռնկութեանն հարց-ցուք. և ապա զպայլոցն նոյն պիտեաց : Արդ՝ եթէ այ կամօք գործելին այնպիսի չարիք, ընդէր 'ի գործողացն չարեաց վրէժս պահանջէ, այլ այնու՝ զի ըստ չարեաց գործոցն վրէժս պահանջէ, յայտ է թէ ոչ ախորժէ ըդ-չարիսն, այլ ատեայ. և պատիժս պատուհա-սից 'ի վերայ գործողացն ածէ, որոց ըստ իւր

եանց անմտութեան, խրատք նոցա չարութեանց կարծին ։ Այլ և այժմ սպանողք յորժամ ՚ի պատիժս մատնին, ոչ բարբարս զպատժածուսըն կոչեն, այլ չար արարս ․ քանզի այնպիսի բարք են չարագործաց զիրաւ ունին անիրաւութիս ասել ։ Նայց մեզ մի՛ լիցի այնպիսի ինչ ասել․ այլ զչարիսն ոչ անձնաւորս կարծել՝ այլ կամածինս ։

Սպաքէն պտղնկութի և շնութե ՚ի մերձենալոյ ՚ի մի մեանս առն և կնոջ լինին, եթէ յիւր կին ոք օրինօք ամուսնացեալ մերձենայցէ, վասն որդէ ծնութեան և զաւակի սերելոյ․ բարիոք է մերձաւորութին։ Ապա եթէ ուրուք թողեալ զիւր կին, զայլոյ ամուսնութիւնն թշնամանիցէ, գործ չարութեան գործէ։ Նաև թէպէտ մերձաւորութին նոյն է, բայց օրինակ մերձաւորութեան ոչ նոյն պէսի ։ Քանզի մինն բուն հայր լինի որդոց, և միւսըն գողունեայ․ նոյն բանք են և վասն պտղնկութեան, եթէ վասն որդէ ծնութեան ոք մերձենայցէ յիւր կին, յիրաւի է․ ապա եթէ առ ցանկութեան օտար մարմնոց ցանկանայցէ, կարի իսկ անիրաւութի ։ Նաև յայտ է թէ իրքն

չարք յայնժամ լինին, յորժամ պետքն օրի
նօք ոչ վճարեսցին: Այս և զսպանութենէ
նոյն բանք են, յորժամ զըմբռնեալն իշխնուէ
ոք սպանանիցէ, պատուհաս խիստ ածեալ մն
յանդգնութենն՝ չառնէ չար լինել: Ապա եթէ
զանմեղ ոք, որոյ ոչ ինչ 'ի վճռականացն գոր
ծեալ իցէ, սպանանիցէ. կամ մն ինչ զերծա
նելոյ, կամ մն ստացուածս հատանելոյ,
չարուէ գործէ և գործն նոյն է երկոցունց:
Բայց օրինակն ոչ նոյնպէս: Այս և յինչս
առնուլն նոյն բանք են: Զի որ պարգև 'ի տնէ
կամ ձիր 'ի բարեկամէ առնուցու, ոչ ինչ
չարութի գործէ. իսկ որ բռնաբար յանաճա
գէն հանիցէ, չարութի գործէ, և առնուլն
երկոցունց նոյն է. բայց օրինակ առնլոյն ոչ
նոյնպէս: Նոյնպէս և Ճշմարտութե՝ յօ
րինակէ անտի ցուցանի չարութին. եթէ զճըշ
մարիտն ած ոք պաշտիցէ, գործ աստուածային
գործէ. ապա եթէ թողեալ զճշմարիտն, քա
րանց և փայտից (որպէս թէ այ) պաշտօն
մատուցանիցէ, անհնարին վնաս գործէ, զի
զօրինակ պատուոյն յանպատեհ իրս դարձոյց:
Եթէ պատկեր ոք գործիցէ և ոչ մն սիրոյ

սիրելոյն որ մահուամբ յաչացն վրիպեցաւ՝ կամ վ՟ զճարտարութե՟ ցուցանելոյ. այլ 'ի պաշտօն առնալ երկիր պագանիցէ իբր ա՟յ, գործ չարուե՟ գործէ ։ Իսկ այսպէս կազմուածոյ իրաց ինչ. և միտք գործողին գործեն զչարն. ո՟պ և երկաթ մերթ 'ի բարիս պաշտի և մերթ 'ի չար ։ Զի եթէ խոփ և գերանդի և մանգաղ ոք գործիցէ, 'ի բարիոք իրս պաշտեցաւ. ապա եթէ սուսեր և գեղարդն, և սլաք և այլ ինչ զէն որ վնասակար մարդկան է, գործ չարութեան գործէ. և պատճառ չարութեանն գործոյն է և ոչ երկաթն ։

❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊

( Ճառ . ԺԱ ։ )

Թէ անձն իշխանութենէ 'ի մեզ պատճառք չարութեանն ։

## ԻՍԿ ՄԱՐԴԻԿՔ ԱՅՆ,

յանձամ՟ նց ինչ ունիցին զայնպիսի շարժմունս. թէ յա՟յ լեալ իցեն. կամ թէ այլ ո՟ք իցէ որ զայն 'ի մարդիկս ար

կանիցէ ։ յԱյՆ մարդկան այսպիսի ինչ չինել չթուի պատշաճ առնել. այլ ունել զայն յանձըն իշխանութենէ եւ յազատութէ առաջնոյ մարդոյն եղելոյ յոյ ։ եւ 'ի նմանէն զնոյն ի-

րոց պայազատացն որդւոցն ժառանգել ։

Եթէ որդ՝ մարդն առեալ զանձն իշխանութին ումն եւ կամի ծառայէ՛, որ մեծ շնորհ պարգեւեալէ նմա յոյ ։ Քանզի այլքն ոմ 'ի հարկէ ծառայեն ըծակսն հրամանին, եթէ զերկնից ասիցես՝ կոյ հաստատեալ. եւ ոչ շարժի 'ի սահմանելոյ նմա տեղւոյն ։ Եթէ եթէ զարեգակնէ կամիցիս ասել. սակայն եւ նա կատրէ զ զատուցեալ նմա զշարժումն, եւ ոչ իշխէ խուսափել յընթացիցն՝ այլ 'ի հարկէ ծառայէ

տէրունական հրամանին ։ || Ծնն. I ։ I4 ։

Նոյնպէս եւ զերկիր սեղմացեալ տեսանեմք, որ բարձեալ բերէ՛ զհրաման հրամանատուին. եւ զայլսն ոմ համակերտս ծառայացն հրամանաց արարչին. եւ ոչ իշխեն այլ ինչ քան զայն յոր կարգեցանն գործել. վն որոյ գովեմք զնոսայ յաղագս զսահմանս հրամանացն պահելոյ ։ Նայց մարդոյ առեալ զանձն իշխանութի. ումն եւ կամի ծառայէ՛ ոչ 'ի հարկէ ընութէ

բռնադատեալ. ոչ ՚ի զօրութէն որ նմա վասն
լաւութեց շնորհեցաւ՝ կասեալ. այլ ՚ի հնազան
դութէ միայն շահի զօգուտն. և յան հնազան
դութէ զվնաս. և զայն ոչ եթէ ՚ի յոռութե
ինչ լեալ ասեմք մարդոյն, այլ վսն լաւութեց։
Զի եթէ երբեք զմի ինչ յայլոցն բնութեց լեալ
էր որք ՚ի հարկէ ծառայեն նմա. ապա և զվար
ձս ըստ կամակարութեանն առնլոյ չէր ար
ժանի. այլ երբեք գործի մի էր արարչին. զոր
թէպէտ ՚ի չար վարէր և թէպէտ ՚ի բարի.
ոչ պարսաւանք ինչ էին նմա և ոչ գովութիւնք.
այլ պատճառին այնմիկ էր որ զնա այնպէսն վա
րէր։ Նա և ոչ զլաւ ինչ գիտէր այնուհետև
մարդն, քանզի չէր հմուտ այլ իմիք. բայց այ
նմ և եթ, որ պատշաճեալն էր։ Այլ ած այն
պէս պատուել զմարդն կամեցաւ. զի առ լաւ
ութեանցն խելամուտ լինելոյ զանձնիշխանու
թիւնն սպարգևեաց նմա. որով կարող իցէ առ
նել զինչ և կամեսցի. և զանձնիշխանութիւն
նր ՚ի լաւն խրատէ՝ դարձուցանել։ Որպէս հայր
ոք յորժամ զորդիս իւր խրատիցէ որ կարող իցէ
ուսումն ինչ ուսանել. չծուլանալ յուսմա
նէն, այլ յառաջադէմ լինել ՚ի լաւն ստիպէ.

վ՟ զի գիտէ եթէ կարօղ է յառաջադէմ լինել. պահանջէ զուսումն յոր աճանդեցաւ ։ Նոյնպէս և զայ՟ պարտ է իմանալ. եթէ յօժարեցուցանէ զմարդն անսալ հրամանաց իւրոց. բայց զկամակար իշխանութիւն ոչ հանէ ՚ի նմանէ որով կարօղն է անսալ և չանսալ հրամանացն. այլ խրատէ և յօժարեցուցանէ զմարդն. զի լաւութեանցն ցանկացող լիցի. որովք արժանաւոր մեծաց պարգևաց լինիցի եթէ անսայցէ ա՟յ. այլ և զի չանսալոյն իշխանութի՟ ունիցի ։ Քանզի ոչ եթէ վայրապար ինչ կամի ը ա՟ծ զայն պէսն պարգևս տալ. որոյ վախճանն յաւիտենական անեղծութի՟ է ։ Զի վայրապար իսկ էր այնպիսոյն տալ որ ոչ ունէր իշխանութիւն երկոցունց անսալոյ. այնմ զոր ա՟ծն կամէր և չանսալոյ այնմ զոր նայն չախորժէր ։ Բայց իրաւունք այն է.

յորժամ արժանի ըստ

որոց գործեացն

ոք ինչ առ

նուցու ։

☼☼

☼

( Ճառ․ ԺԲ։ )

Թէ անսալոյ, այլ և ոչ անսալոյ անձին, իշխանութիւնն է պատճառ։

## ԵՒ ԱՐԴ՝ ԶԻ ԱՐԴԻՒՔ

էր ընտրութիւն գործոցն, եթէ ոչ
ունէր մարդն իշխանութիւն երկո
ցունց և անսալոյն և չանսալոյն։ Իսկ արդ՝
յայտ է թէ անձն իշխան եղև մարդն՝ առնել
զբարին և հակել՚ի չար։ Իբր ոչ եթէ չար ինչ
առաջի կայր յոր հակեցի․ այլ այն և եթ առա
ջի կայր՝ կամ անսալ այ, կամ չանսալ․ և զնոյն
չանսալն և եթ պատճառ չարին է իմանալ․
քանզի լեալ մարդն առաջին առնոյր պատուէր
յայ․ և չհնազանդեալ Ածական հրամանին,
մտաբերէր ՚ի չարիս․ և անտի լինէր սկիզբն
չարեաց։ Աստի ոչ ոք կարէ անարարիչ և անձ
նաւոր զչարն ցուցանել․ և դարձեալ ոչ յա
րարչէն, այլ յան սաստութենէ դիւաց ՚ի սատանդա
նողին․ և յուրուք վարդապետութենէ դրդեալ։
Զի ոչ եթէ այնպիսի ինչ հաստատեալ

բնութեան, զմարդն ցուցանել կարէ՝ ոչ։ Եթէ
այնպիսի ինչ բնութիւն մարդոյն առեալ էր,
ապա ոչ 'ի բնութենէ արարածոյ. և յամե
ղէն գրոց նմա վարդապետութի ընծայանայր.
ոմ ասէ ուրեք ածական բարբառն. եթէ
'ի մանկութէ մարդիկք 'ի խնամս չարին մի
տեալ են. || Ծնն. 8. 21։ զի ցուցցէ թէ որ մի
տին, կամօք միտի և ոչ ուրուք բռնութե։
Որդ՝ անսաստութին և եթ որ արտաքոյ այ
կամացն գործիցի՝ պատճառ չարեաց իմանա
լի է. Անմին զայլ ոք վարդապետ ծածուկ հա
շոնել դրդիչ և ոչ բռնադատիչ, որ զմարդն
'ի լաւութեցն մերկացնել կամեցաւ։ Ապա
եթէ զպատճառն ես կամիցիս խնդրել. զնա
խանձն որ առ մարդն եղև իմասցիս պատճառ։
Իսկ եթէ զնախանձուէն ես ճշդիւք քննիցես
թէ ուստի՞ եղև, առասցուք եթէ յառաջե
լութէ զմարդն Այ պատուել ոյն. քանզի միայն
մարդ ըստ պատկերի և ըստ նմանութե այ
եղև || Ծնն. 1. 27։ Իսկ եթէ այնու զած
պատճառ չարեաց կամիցին ասել. անկանին
յիմաստնարար խորհրդոյ։ Քանզի եթէ զի՞
ինչ համեայլէք և մարդոյն հորհեալ, թերևս

յերաՀի պատճառ չարեաց կարծիւք տուՀիչն ապա եթէ զնա նոյնպէս որպէս եղեն պահեաց, և զմարդն այնպէս կամեցաւ առնել. պատճառ չարեացն նախանձորդն է ։ Քանզի ոչ եթէ յորժամ լցեն ուրուք ՚ի ծառայք . և զմինն ՚ի ծառայութեն ունիցի . և զմիւսն յորդեգիրս գրեցէ . և միոյն յարուցեալ ՚ի վր զմիւսն սպանանիցէ . մի՞թէ պատճառ չարեաց զտէրն պա՛րտ իցէ իմանալ . որ ո՛չ եհան ինչ ՚ի ծառայէն և շնորհեաց միւսոյն ։

( Ճառ ։ Ժ.Գ ։ )

Թէ սատանայ ուսուցի հնարեցաւ շշուկն Ադամայ . այլ ինքն ՚ի պատուիրելոյն Այ ։

ԱՐԴ ԵՒ ԶԱՅՆ ԵՒՍ հարցանեն, եթէ չար ինչ չէայր առաջի, ուստի՞ ծն ( զոր սատանայ կոչէք ) իմացաւ զհանդամանս չարին ։ Նոյնպէս եթէ սատանայ, չար իմացաւ զատուն

գանելն մարդոյն յ՟յ· վ՟ն զմարդն յայն յօժա
րեցոյց։ Որպէս յորժամ լիցէ ոք ուրուք Թշ
նամի և Թագուցեալ զԹշնամութիւն, գաղտ
կամիցի վնասել· և չգիտիցէ զհանգամանս վնա
սակարութեանն և շուրջ եկեալ յածիցի հը
նարս խնդրել։ Ապա գտեալ ժամանակ, յորժամ
ոք՚ի բժշկաց Թշնամւոյն նը պատուէր տայցէ
յայս ինչ չհպել· և յայս նիշ կերակրոց չճա
շակել· որով առողջութիւն կարիցէ հասա
նել· և նորա լուեալ վաղվաղակի ՚ի կեղծիս
բարեկամութեան կեղծաւորեալ զբժիշկն պար
սաւիցէ· և զօգտակարն նմա վնասակար Թե
լադրեալ կարծեցուսցէ · և հակառակ պա
տուէրս հրամանաց բժշկին տայցէ՝ և այնու
առնիցէ նմա վնաս · որ ոչ եԹէ յառաջագոյն
գիտէր զհանգամանս վնասակարութեան , այլ
՚ի պատուիրելոյ բժշկին գտեալ հնարս · եղև
վնասակար ։ Նոյն պէս կարծի և զսատանայէ
նախանձելն նմա ընդ նախաստեղծ մարդոյն
և չգիտեալ զհանգամանս վնասակարութեան՝
( քանզի ոչ եԹէ չար ինչ առաջիկայր ուստի
զհանգամանս մարԹ էր առնուլ · ) ուսեալ
յ՟յ պատուիրանէն որ մարդոյն տուաւ՝ ար

գելուլ զնա 'ի ճաշակելոյ 'ի տնկոյ 'ի միջէ
'ի մահաբերէ. զայն յառաջադրեաց մարդոյն։
Որ ոչ եթէ անպիտան ինչ 'ի կերակուրս մար
դոյ էր ( և ոչ բնութեմբ տունկն մահաբեր.
և վն այնորիկ ինչ արգելաւ մարդն 'ի ճաշա
կելոյ 'ի նմանէ . ) այլ՝ ան սաստուին եղև
պատճառ մահուան մարդոյն. իբրև յանցաւ
որի որ յանցանիցէ զհրամանաւ հրամանա
տուին որ նմա կարգեալ իցէ ։ Արդ՝ հրապու
րեաց թշնամին զմարդն անցանել զհրամանաւ
ըն ա̃յ . քանզի ոչ եթէ ստուգիւ գիտէր , ե
թէ այնու նմա վնաս ինչ գործել կարիցէ ,
այլ կարծեօք 'ի դերևս մատուցեալ եթէ լի
ցի և թէ չիցի ։ Իբ՛ յետոյ յա̃յ պատուհա
սէն որ առ մարդն եղև վն պատուիրանազան
ցութեն , իմացաւ եթէ պատուիրանք նորա
նմա մահ գործեցին. և յիրաւի պատժեցան.
և նա և մարդն. զոր յօժարեցոյց ան հնազան
դուին ճաշակել 'ի փայտէն. որ ոչ թէ բնու
թեամբ մահաբեր էր. այլ յա̃յ սպառնալեա
ցն եղև այնպիսի իրաց պատճառ. որ միայն
նշան էր հնազանդութե ։ Իբ՛ ոչ բժշկին ոչ
կարեմք մեղադիր լինել վն յառաջադոյն զգու-

շացուցանելոյ որով օրինակաւ կարէցէ մարդըն առողջանալ․ և ոչ թողեալ զպատուէր բժշկին, անսայցէ թշնամոյն, որ զիւր ասարար խրատն տայցէ նմա, որով ոչ զպատճառս մահուն 'ի բժշկէն ( որ յառաջագոյն զուշակեաց նմա ) իմանալէ, այլ 'ի թշնամւոյն․ որ 'ի պատուիրանէ բժշկին նմա զհիւանն հնարեցաւ ։ Նոյնպէս և զսատանայէ ասեմք լեալ թշնամի մարդկան․ որ չև ևս զխոտէր զհանգամանս չարեաց․ այլ 'ի պատուիրանէն ոչ ուսեալ, կամեցաւ հիւասել մարդոյն ոչ զէ է թէ առանց ոչ կամաց 'ի ծառոյն ճաշակեսցէ, առնուցու պատիժ զմահ ։ Վասնզի եթէ յառաջագոյն չէր զուշակեալ ոչ մարդոյն չուտել 'ի կերակրոյ ծառոյն, և ոչ յանդգնեալ կերեալ, չլինէր նմա պատիժ մահ ։ Որպէս թէ առ 'ի չգիտելոյ եկեր՝ կամ թէ առ չժուժելոյ 'ի կերակրոյ ծառոյն, չէր լինէ պատժի պարտական։ Վասնզի և մանուկ կըթնակեր որ յայլ ինչ կերակուր մտաբերիցէ, ոչ պատժելի է այլ արգահատելի․ որպէս թէ առ 'ի չգոյէ կաթին յայն յօժարեաց ։ Նա և օձն որ է սատանայ, յիրաւի պատժեցաւ մն

ընդ անպարտուն թշնամուն ը մարդոյն ունե
լոյ։ Իբր արդ՝ զակիզբն չարեաց զնախանձն ու
սեմք և զնախանձն յառաջել Այ զմարդն պա
տուելոյ . և զ չարիսն 'ի մարդոյն անձնադան
դութիւն ։ Զի ած այնպէս առաջել զմարդն
պատուեաց , և նորա անսաստեալ կոխեաց
զ պատուիրանն ։ Աստի զմ ինչ որ լինի չար
ոչ բնութե չար գիտեմք . այլ զի առանց կա
մացն այ գործին իրք ինչ՝ լինին չար ։ Եւ և
ընդ լինելն իսկ սատանայի յայ՝ գիտաց եթէ
անսաստել ումեք այ չար է և ոչ բարի ։
Բան զի ոչ եթէ անմիտ ինչ ոք եղև նա յայ
մի թէ չգիտէր եթէ որ ինչ ըստ այ կամացն
լինի բարի է . և որ ինչ արտաքոյ քան զնր կամսն՝
այն չար է . և վն այնորիկ յիրաւի տանջէ զնա
ած . զի գիտէ նա զչարին և ոչ առնէ և հմուտ
է՛ չարին և ոչ խորշի ։ Իբր ոչ թէ չար՝ և
չարի արարիչ հաստատեաց զնա ած և ոչ փոր
ձիչ . եթէ նովաւ փորձեալ զարդարս զատես
ցէ։ Իբր ոչ ինքն յանձնէ չար գտեալ և ոչ անա
բար և հակառակ այ , այլ մտաւոր եղեալ յայ
և հմուտ գիտութե՝ թէ չար է հակառակ կալ
այ հրամանին . և յայն զօր գիտէրն թէ չար է

յանդգնեցաւ՝ զանսաստութենէն ասեմք ։ Եւ անսաստութիւն ոչ եթէ անձնաւոր ինչ յառաջագիւտ էհաս 'ի գիտութիւնն սատանայի, այլ իբրեւ զմի ինչ եղեալ 'ի դիպաց կամեցելոյն ։ Նա եւ զմարդոյ յիրաւի ասեմք կրել պատուհաս ընդ որոց գործիցէ. քանզի կամաւ երթայ յուսումն այնպիսի իրաց յորոց յորժամ եւ կամիցի՝ եւ մեկնել կարող է ։ Քանզի կամելոյն եւ չկամելոյն ունի իշխանութիւն զորոյ զհետ երթայ, եւ կարէն զոր ինչ կամիցի առնել եւ ոչ առնել ։

( Ծաղ. ԺԴ ։ )

Թէ սատանայ ոչ է բնութեամբ չար.

ՈՐՈՎ_ՀԵՏԵՒ ԱՍԵՆ, չարեաց արարիչ զԱծ չկամիք ասել. այլ 'ի մարդկանէ եղեալ թելադրութեամբ սատանայի 'ի հնազանդելոցն նորա եւ 'ի խաբեցելոց. եւ յիրաւի կրեն պատիժս՝ զի կարէին հատանել եւ ընկենուլ 'ի բաց զչարիսն եւ ոչ կամեցան ։ Եւ արդ՝ վասն նորին իսկ սատանայի

հարցցուք: Այնպիսի արդեօք արա՞ր զնա ա՟ծ՝ եթէ ինքնին այնպիսի չէր, և յօժարեցաւ 'ի չարաբարել: Եթէ այնպիսի արարեալ էր զնա ա՟ծ, պատիժս 'ինմանէ չէր պարտ պահանջել. զի պահեաց զպայման բնութեն յոր արարն զնա ա՟ծ. և որ ոք ո՛չ կամօք ինչ գործէ, ընդ այնր պատիժ չպարտի կրել. բայց որ կամօք կարօղէ գործել՝ և գործ ինչ յոռութե գործիցէ, յիրաւի պատժի. զի ո՛չ եկաց յայնմ զօր ա՟ծն կամի. Ապա եթէ յա՟յ բարուոք եղև, և անձամբ յանձնէ դարձոյց զկամսն 'ի չար հեռացուցեալ զինքն 'ի լաւէն, յիրաւի պահին ջի ընդ որոց յանդգնեցաւն պատիժս: Զի զսատանայ մ՟ք ո՛չ յա՟յ՝ սատանայ եղեալ գիտեմք (այլ զսատանայ անուն վ՟ն խոտորելոյն էառ իւր անուն. քանզի սատանայ յեբրայեցւոց և յասորւոց լեզուէ խոտորեալ թարգմանի.) այլ զօրութի իմն զգայուն լաւուեց հաստատեցաւ յա՟յ. և 'ի թշնամուէ ընդ մարդոյն ունելոյ՝ իւրն կամօք եղև բանսարկու. թողեալ զա՟յ հպատակութի՝ սկսաւ անսաստել և հակառակ կալ ա՟յ հրամանացն. և յայն կլթել զմարդիկ. և իբրև զապստամբ

յետոյ կացեալ թխուրեցաւ յոյժ ։ Ինձ վկայէ քանզի՝ Սողոմոն բարբառոյն, որ ապստամբ վիշապ կոչէ զնա ։ եթէ հրամանաւ սպան զապստամբ վիշապն ‖ Եսայ ։ 27 ։ 1 ։ Քանզի արդարև իսկ՝ քանզի Սողոմոն սպան զսատանայ ։ այնու զի կոխեաց զնա իշխանութեամբն, Արդ՝ ապստամբ կոչէ զնա գիր ։ որ եթէ նոյնպիսի ( որպէս եղեն յոյժ ) կացեալ էր, ապա ոչ ապստամբ կոչէր զնա ։ Զի որ ապստամբի ոք, թողու զիւր պայմանն ։ յորմէ երևի թէ ոչ անարար իսկ ցուցանի, Զի եթէ անարար էր ապա ոչ յիւրմէն բնութենէ այլափոխիւր ։ Քանզի չմարթի բնութեան իմիք առանց կամաց, մերթ բարի լինել և մերթ չար ։

( Ճառ ․ ԺԷ ։ )

Հակառակութեանց հերձուածողացն՝ ի Քաջայ գովութեան սատանայի ։



# ՍԿ ԱՐԴ՝ ԵԹԷ ՈՉԻՆՉ

անարար՝ առնէ ըստ ձեզ սատանայ, և ոչ այնպիսի եղեալ յոյժ ։ և ան

ձամբ զանձն դարձոյց 'ի լաւէ անտի 'ի յոռին (որ է 'ի հնազանդութենէ յանհնազանդութի՟ն ։) Արդ՝ մեզ ասացէք, գիտէ՞ր ա՟ծ եթէ այնպէս լինելոց էր, եթէ ոչ գիտէր ։ Թէ գիտէր և արար, ինքն է՝ պատճառ ն՟ր 'ի լաւութենէն դառնալոյ ․ ապա եթէ ոչ գիտէր, զի՞ արդ առնէր զայն՝ զոր ոչն գիտէր, թէ որպէս ինչ ոչ լինելոց էր ։

Պատասխանի ։

Անգիտութի՟ն կարծել զա՟յ անհնարին յիմարութիւն է ․ քանզի միայն ինքն կանխագէտ է հանդերձելոց ։ Այլ քանզի բարերար էութի՟ն է՝ ա՟ծ ․ ոչ կամեցաւ զանխնամութիւնն իւր ծածկել ․ վասն որոյ յառաջագոյն գիտէր զսատանայն, եթէ թիւր լինելոց է ․ և զմարդիկս յանցուցանելոց առ 'ի ջունկն դիր լինելոյ հրամանացն նորա ․ որով միանգամայն վ՟ն անձն իշխանութ՟ն մարդոյն երևելոյ արար զնա ա՟ծ ․ զի առաւելութի՟ն բարերարութ՟ն ն՟ր յայտնի լինիցի մարդկան, վ՟ն թողութ՟ն տալոյ մարդկան յառաջագոյն գործելոցն մեղաց ‖ Հռոմ ։ 3, 25 ։ Զի յորժամ զսատանայ

ամբարշտացեալ տեսանիցեն՝ և չբարձեալ 'ի միջոյ, և վասն իւրեանց մեղացն իմանայցեն․ թէ զ՚ոյ չափ թողութե̄ն ապաշխարութեամբ․ զի ա̄յ բարերարութիւնն ցուցանիցի, և մարդիկք զշնորհսն նորա գիտասցեն, Զի եթէ այնպէս չէր լեալ՝ և ո՛չ բարերարութեանն նորա ոք խելամուտ լինէր ։ Ապա՛ ընաւ լոկ ասեն, յետ թիւրելոյն սատանայի և խաբելոյ զմարդն, ընդ է՞ր լոկ ո՛չ եբարձ 'ի միջոյ․ զի մի՛ զբազումս սպանանիցէ ։

Պատասխանի ։

Ո՛չ եթէ չէր կարօղ ա̄ծ բառնալ զսատանայ 'ի միջոյ․ (քանզի չէք ամենևին տկարութի զա̄յ․) այլ զի չէր ինչ մեծ գործ ա̄յ՝ զսատանայ ինքնին անձամբ սպանանել․ և զարարած մի զիւր փոքր, յոչ ինչ դարձուցանել․ զի մի՛ կարծիցի թէ՝ վասն չ՚ժուժելոյ չարութեանն նորա եսպան զնա ։ Երկրորդ անգամ․ զի անծանօթ ևս լինէր առ յապա մարդկան ա̄յ բարերարութիւն եթէ յառաջագոյն սպանանէր զսատանայ ։ Զի ո՛չ ոք ունէր նշանակ ինչ յայտնի՝ բարերար կոչելոյ

զմծ ։ Այլ թերևս և կարծիք ինչ 'ի մէջ մտանէին թէ՝ հաւասար ինչ ոք էր նա ոչ · և աճապարեալ 'ի միջոյ եբարձ · վասն որոյ պահեաց զնա և ոչ կորոյս 'ի միջոյ · զի մարդիկք յորժամ լաւութեանցն հմուտ լինիցին յաղթեսցեն նմա ։ Փոխանակ այնոցիկ որք յառաջնումն յաղթեցան 'ի նմանէ ։ Այն իսկ մեծ և զարմանալիէ , զի մարդն ոչ վառեալ Այ օգնականութէն՝ պատերազմեալ յաղթիցէ սատանայի ։ Որպէս մարտուսոյց ոք ամենայն հնարիւք հնարի զիւր աշակերտն թեքել՝ առ 'ի ցուցանելոյ զհանգամանս մարտիցն · որով մարթասցին յաղթել ախոյանից · և առաջիցէ զնոսա 'ի հրահանգս մցիլ ընդ ախոյեանսն · և յաղթութեցն ուշառնել խրատիցէ , մինչ և զկեանս անգամ՝ արհամարհել ։ Զի լաւ համարի թէ վասն անուան բարւոք մեռանիցին , քան թէ կենդանի կայցեն և վատ անուն լինիցին · Եւ նոցա զթելադրութիւնս վարդապետին 'ի մտի եդեալ , և զայրդևս ընդ յաղթութեն՝ գերի վերոյ լինիցին ախոյանին և պսակեալ առ վարդապետին հասանիցեն և նշանակ ճգնութեան ընդ ախոյանին՝ առ նա

զպսակն բերիցեն։ Ապա եթէ զմարտ_ուսոյցն զմտաւ ո՛չ ածիցեն և յաղթութե՟ և պսակի ոչ ցանկանայցեն․ կործանին վասն անուն յախոյանէ անտի․ յիրաւի այնու հետև թշնամանին և տանջին և մահու պատիժ փոխանակ ընդ վաստակոց կրեն։ Նոյնպէս և զա՟յ իմանալի է․ թէ ուրուք պատուիրանօք վառէ գեղեցիկ զմարդիկս առ 'ի պսակելոյ զյաղթօղն․ և յամօթ առնելոյ զվատացեալն։ Նաև եթէ ո՛ք յոչ ինչ զա՟յ պատուիրանսն համարիցի․ յորժամ մրցել ընդ բանսարկուին մարտնչիցի՝ վաղվաղակի կործանի․ քանզի չունի զնշանակըս յաղթութե՟ն․ և յիրաւի կրէ զպատիժս պատուհասի այնպիսին․ զի ո՛չ նմանեցաւ ընկերին որ կռուեցաւ և յաղթեաց։ Արդ՝ վասն այնորիկ թողեալ է ա՟ծ զսատանայ․ իբրև հրահանգս կռուանոցաց յաշխարհի․ զի յորժամ իւր նահատակեալքն կռուիցին և յաղթիցեն նմա՝ պարծանք առաջնոյ յաղթութե՟ն նորա քակեսցին յայժմուն յայնպիսեացն մարդկանէ, որք լաւութե՟ցն ցանկութի՟ց պարտիցեն զնա․ և նշան յաղթութե՟ զնահատակութեան կանգնիցեն․ քանզի կոխանարկեալ

ընդ ոտիւք մերովք անկեալ գնի մեռեալ և կործանի. առ 'ի լաւութեանցն ցանկութեան մերոյ 'ի պարտութիւն մատնեալ ։

( Ճառ. ԺԶ. )

Թէ ոչ բնութեամբ են չարիքն. ընդ դէմ հեթանոսաց ։

ԱՐԴ՝ ՅԵՏ ԱՅՍՐ ԱՄԵնայնի 'ի յանդգնութե̄ յամառեալք զնոյն 'ի մէջ բերեն ։ Բնութբ̄ են ասեն չարիք, և ոչ կամածինք ։ Ասեմք եթէ բնութբ̄ իցեն, ընդէ՞ր օրէնք 'ի թագաւորաց դնիցին և սաստ յիշխանաց և պատիժք 'ի դատաւորաց. ոչ ապաքէն վն̄ կործանելոյ չարեացն ։ Իսկ՝ եթէ բնութբ̄ իցեն չարիքն. ոչ պարտի օրէնսդիրն օրէնս դնել. և ոչ իշխանն պատիժս 'ի վր̄ չարագործին ածել ։ Քանզի ընդէ՞ր պատժիցեն զայն՝ որ ոչ կամօքն չար իցէ. որում արգահատանք պարտ էր և ոչ պատիժս 'ի վր̄ հասուցանել ։ Իսկ արդ-

այնպիսոյն եթէ կե՛ն չնայցէ․ չպարտի մեղա
դիր լինել․ քանզի ո՛չ կամաւ ո՛չ ասենն յօժա
րեցաւ 'ի չարն՝ այլ բնութ՛ բռնադատեցաւ ։
Իսկ եթէ որդւոյ իւրոյ սուր առեալ 'ի վերայ
խաղայցէ, մի՛ լիցի նմա մեղադիր․ զի ո՛չ իւր
կամաւ երթայ, այլ չարն տանի զնա յայն ։
Իսկ եթէ 'ի դրացւոյ և 'ի բարեկամէ թշնամա
նիցի՝ մի՛ փոխարէն թշնամանեսցէ․ այլ առաւ
ել արգահատեսցէ և ս, զի ո՛չ եթէ նա ինչ
թշնամանէ, այլ չարն՝ որ բռնաբար վարէ զնա։
Նոյն պէս յորժամ դուստր զմայրն անարգի
ցէ, և նու զսկեսուր իւր, և կե՛ն զայր․ և ծա
ռայ զտ՛ր․ և եղբայր զեղբայր․ մի՛ ինչ տար
ցի՛ն ընդ միտ որք անարգեցանն․ այլ արգա
հատեսցեն նոցա ո՛չ 'ի չարէն բռնադատելոց։
Նոյն եթէ տեսանեմք թէ թագաւորն զիւրոց
օրինաց վրէժս պահանջէ, և պահանջմամբ
վրիժուցն զմտան կարծէ, և դատաւորն ըղ
դոյն և զառաջակն պրկէ և քերէ, վասն ըղ
ջմտաւորութեանն 'ի միջոյ բառնալոյ․ և
հայր զորդի դժնեայ՝ մահապարտեալ դատաւ
որաց մատնէ ։ Իսկ այլքն ամենեքեանք զիւրա
քանչիւր անձանց խրեանց զանարգանաց՝

վրէժս պահանջէն • կամ անձամբ կամ իշխա
նօք • յայտ է թէ չարիքն որք գործին , կամա
ծինք են և ոչ բնականք ։ Բայց ա՛ղէ՝ դու զկա
րին իսկ զոք շռայլեալ ցանկութե՝ պղծեալ և
մոլորակեալ • տե՛ս թէ՝ ընաւ ամենեւին գտանի
ցի՞ ՚ի նմա յիշատակ ցանկութեանն ։
Եւ արդար և ոչ ինչ ընդ վայր ասացեալ է
բան իմաստնոյն , թէ ծառայ ընդ ունկն ոչ
լսէ , ընդ մկանունս տան լսելի նմա ։ Նա թէ և
յայլուստ ևս մարթ եմք իմանալ ։ Զի մար
դոյ բնութե բարեաց ցանկացող է և ոչ չա
րեաց ։ Զի շունն որ շնայ՝ մինչ դեռ իսկ ՚ի
գործ շնութեն իցէ , եթէ ոք շուն զնա կոչէ •
ցասնու և զայրանայ • պոռնիկն որ յայտնի
պոռնկի , զանուն պոռնկութեն ոչ ախորժէ
լսել • նոյնպէս և դողն և աւազակն • և այլ ևս
չարագործք • թէպէտ և զգործ չարագործու
թեան գործեն , զանուն չարագործութեանն
յանձն ոչ կամին առնուլ ։ Նա և կեղծա
որն կեղծաւորեալ որ մեղմխանօք ընկերին
կամիցի վնաս առնել՝ թագուցանէ զկեղծաւո
րութիւն , և ո՛չ թէ բարի ինչ խրատ տայցէ,
հրապուրեալ արկանէ ընդ վնասիւք զանմեղն

և եթէ ոչ զքարուոյ զդէմս զդեցեալ մեղմեխիցէ
չկարէ ընդերկրել յիրաւանց զիրաւագէտն ։
Նա և յորժամ զխիստ ոք իշխան կամիցի ոք
՚ի քաղցրութ̅ ածել՝ չկարէ յայտնի երթալ և
ասել թէ դու խիստ ես · այլ քաղցրախառն
բանիւք մատուցեալ ողոքէ · թէ դու տէր
քաղցր ես և բարերար ամե̃ուն , ամենեքին
գոհեն զքէն ։ Բոլորք առ իրաւագէտս ունին
և այնպէս կարէ մեղմով քաղցրացուցանել
զխստութ̅ի իշխանին և խոնարհեցուցանել
և ածել՝ յիրաւ̃ն և յարժանն ։ Նոյնպէս և
առցասուցեալն և տրտմեալն և առ նախան
ձոտն քաղցրութ̅է ոք մատչի և ցածուցանէ ·
և անտի յայտէ · թէ՝ բարեաց ցանկացող է
բնութ̅ի մարդկան և ոչ չարեաց ։ Իսկ եթէ
գազանացն գազանութեան չար ինչ բնութ̅է
կարծեցուցանիցի նոցա , գիտասցեն զի կէսքն
յանասնոցն ՚ի պէտս մարդկան արարան · որ
ուս և արջառ և ոչխար · և այլ ինչ որ ուտելի
և կրելի է ։ Իսկ կէսքն՝ վասն երկիւղ ՚ի միտս
մարդկան ծնուցանելոյ ։ Զի թէ գազանք ահա
գինք են , և վիշապք և օձք և այլ ճճիք վնա
սակարք՝ և մարդս այն չափ հպարտացեալ է,

մինչ ըստ յոյժ երկիւղին սահմանաց արտաքոյ ելեալ՝ անսասան է․ եթէ այնպիսի գարշուրեցու-ցիչք չէին, որ չափ և ս առաւել չկայր երբեք յակաստանի։ Նա և նոքին իսկ որք չարքն կարծին անմռաց, երբեք երբեք օգտակարք լինին, և զերծուցիչք ՚ի մահուանէ։ Զի՞նչ չար քան զօձ կայցէ․ և ՚ի նմանէ թիրակէ և ՚ի պատանօղ դեղոց որք ՚ի նմանութէ մարդկան կազմեցան, չև հասուցեալ և անդէն բուժէ։ Եթէ բնութ չար ինչէր օձ, կամ չարի իրիք արարած, ապա չգտանէր ինչ ամենևին ՚ի նմա օգտակար․ և ո՛չ զգօնանայր երբեք ՚ի գազա-նութէ անտի իւրմէ․ նա առանիկ տեսանեմք ՚ի հնարագիտութէ թռչնոց զգօնացեալ․ և իւրև զչուան խաղալիկնոց լեալ․ և բազում անդամ ընակեալ ՚ի տան չեղանչեն ընակչացն։ Իսկ արդ՝ եթէ հեթանոսիցէ (որ չար ինչ բնութ կարծիցէ) յանդիմանեսցի յիւրոց ա-րուեստակցացն օձապաշտիցն․ որք այն չափ զգօնացուցանել զօձս գիտեն մինչև կոչել յուռթիւք ՚ի տունս, և կերակուրս մատու-ցանել․ ո՛չ բաբելացիքն վիշապին զոր պաշ-տէինն․ և ապան զնա ո՞յ սիրելին նորին լինելա

կան կերակուրն || Դան. 13. 26: Իսկ եթէ մո՛ղ
իցէ, և չարի արարած զդազանսն (վասն դա
զանութե) ասիցէ, 'ի հասարակաց մտացփոշի
մանեալ ըմբերանեսցի, Զի եթէ զազանքն
չարի արարածք իցեն, և երկիր բարւոյ, զի
ո՞րդ բարւոյն արարածք չարին արարածոց
դայեակ մտեալք սնուցիչք լինիցին. որք 'ի
նմանէ կերակրին և 'ի ծոց նը հանգչին. զի
երկու հակառակք իրերաց մի մեանց ծախիչք են
ոչ խաւարի լոյսն և ջերմն սառնամանեաց:
Արդ՝ եթէ գազանք չարի արարածք էին և
երկիր բարւոյ. ծախել պարտ էր զնո երկրի և
ոչ սնուցանել. սպառել և ոչ սերել: Ապա
թէ երկիր և զգազանսն սնուցանէ և ոչ ապա
կանէ, յայտ է եթէ յորմէ արարչէ երկիր լեալ
է'. 'ի նմանէ և գազանք արարեալ են. և չիք
ինչ չար բնութե: Բանզի չիք ինչ արարիչ
բնութե չար: Իսկ մանաւանդ թէ և գազանք
խակ զօրոց ասեն՝ թէ 'ի չարէ արարչէ եղեալ են
ցուցանեն թէ չեն յուստեք. այլ յերկրէ.
այնու՝ զի յերկրէ կերակրին և 'ի նմա բնակեն
և մեռեալն 'ի նոյն շրջեալ հողանան: Նա թէ
և 'ի չարէ ինչ էին չարք արարեալք՝ ոչ ինչ 'ի

նոսա օգտակարք գտանին ․ այլ ամենևին
խակ վնասակարք։ Իսկ սորդ՝ եթէ անասնեմք
զի կլնոցն մորթքն պատսպարան մերկութե
ների լինին․ և կլնոցն ճրագունն գեղ լինի՝ և
այլ ինչ յանդամոցն ․ ոմն առ խուծոյն և արջոյ
և այլոցն ըստ իւրաքանչիւր միոյ ըստ միոջէ ․
յայտ է թէ՝ ի բարւոյ արարչէ լեալ են վն միոյ
իրիք օգտակարին գտանելոյ ՚ի նոսա ։ Զի որ
չար ինչ է, որ և ոմն ինչ վնասակար է ․ և
մորթ և միս ։ Այլ ոնց ոմն զմորթն զգենումք
և ոչ վնասէ ․ և զմիսն եթէ ուրտ ուրուք
առնոյր և ուտէր, ոչ վնասէր ․ ոմն վարազի
որ գազանադոյն է քան զամենայն գազանս, ու-
տի միսն՝ և ոչ վնասէ ․ նոյնպէս և նոցայն,
եթէ ուտէր ոք՝ վնասէր ․ և յարջառ (զոր
ասեն ․ եթէ ՚ի բարւոյ արարչէ արարեալ է)
գտանի ինչ վնասակարութի ։ Զցլու միս
ուտել՝ դարման է մարմնոյ ․ բայց եթէ զա-
րիւնն ոք ըմպիցէ, սատակի։ Նոյնպէս և ՚ի
բանջարս է ինչ որ առանձինն սատակիչ է ․ և
խառնեալ ընդ այլ բանջարս՝ բժշկիչ պէսպէս
ցաւոց լինի ։ Զմանրագորն եթէ ոք լոկ ու-
տիցէ՝ սատակիչ է ․ և խառնեալ ընդ այլ ար

մատս՝ քնածու լինի քնահատաց ։ Եթէ զհաւըր (որէ մառօլ) եթէ 'ի տօթ ժամանակի ուտիցէ ոք, (քանզի զովացուցիչ է) զտապս 'ի փորոյն փարատէ. և եթէ 'ի հով ժամանակի ուտիցէ ոք, վնասէ. և եթէ զջուրն քամեալ անապակ ըմպիցէ ոք՝ սատակի. և եթէ զսերմն աղացեալ՝ ջրով ըմպիցէ ոք, 'ի ցանկուէ արկանէ։ Եթէ կամնեփուկն թուփ ինչէ, որ սերմն նը դեղէ. և նոյն՝ դարձեալ կասեցուցիչ ցանկութեան ։ Եթէ մոլախինդ՝ որ առանձինն 'ի յայտնի ինչ ժամանակի սպանօղէ, նովիմբ զմաղձս հնացեալս հնարին բժիշկք հատանել։ Եթէ կաղանչանան՝ ազգ ինչ առանձինն՝ սպանօղէ. և խառնեալ ընդ այլ դեղոյ մաղձադեղէ բուժիչ 'ի մահուանէ. Մրդ՝ յայսպիսի իրս անհարթս՝ առ ոչ ուղիղ հայելոյ, կարծեցին եթէ չար ինչ բնութե իցէ. բայց ամ այնպիսի իմաստութն զմարդն կազմեաց. զի և 'ի դարմանիչսն մարթ իցէ վայելել, և որք զնա սակարքն կարծիցին, և անտի ևս հնարիւք օգտակարութիս կարիցէ գտանել առ 'ի յանդիմանելոյ զչարս անմտացն՝ եթէ չիք ինչ

որ բնութե չար է ։

Հառ

( Ճառ. ԺԷ : )

Ի սուրբ Գրոց ցուցանէ. թէ չարն ոչ է արարչածեալ ինչ:

ԲԱՅՑ ԹԷՊԷՏ ԵՒ ՙՆՈ քա Մճակեան օրինացն ոչ հաւատան, մեք յուղղորդ պատասխանւոյ զմեր ընտանիս մի՛ զրկեսցուք : Վասնզի այն չափ ինչ չար 'ի գազանացն բնութեն ոչ գոյր, մինչև ածել զնոր-արարսն առ նորաստեղծն, նմա նոցա անուանս հրամայէր դնել: Ծննդ. 2. 20 : Իսկ եթէ մօտ նմա չէր այլին, զի մարդ միոյ միոյ իւրաքանչիւր ազգաց անուանս յօրինէր : Ապա եթէ մօտ գային, եւ ընտանութե ընդ մարդոյն ունէին, յայտ է եթէ՝ ոչ չարք էին եւ ոչ մարդոյն վնասակարք : Այլ յետ յանցանելոյ մարդոյն զԱյ պատուիրանաւն, տուաւ նմա զարհուրեցուցիչք առ 'ի չհպարտանալոյ հողեղէնին որ 'ի հողոյ էղեւ. եւ 'ի հող դառնալոցէր : Իսկ առաջնոց զվնասակարութե գազանացն մարդոյ, այժմու

համբոյրք և ընտելութիւնք վկայեն, զի ում ըղ-
ձայլոյ կորիւն մնուցանէ. և երբ զշան կո-
րիւնս առ ընտելութիւն ընդ մանկանցն. և
միւսն զառիւծոյ կորիւնս մնուցեալ ածէ՛ 'ի
համբոյր և 'ի քծինս. մինչև պատել զմնու-
ցողսն. և թէ այլ ոք 'ի նա հուպ գայցէ,
չմոռացեալ զբարս զազանութեան՝ 'ի վերայ յարձակի
և նմա սաստել զազանին երբ շան, ցածուցանէ
յանասուն զազանութենէն: Իսկ այլ ոք զարջոյ
թոժիւն մնուցեալ, կաքաւել ցուցանէ. և
նմանեցուցեալ բարուց մարդկան, զզազանս
բարոյն ցածուցանէ: Իսկ այլ ոք զկապիկս
անապատականս ըմբռնեալ. հոլխոս և ընչա-
պաշտս և ամենաչարս ուսուցանեն. և այլոց
զչարիս խզակերպս կալեալ՝ թովչութեամբք
յընտելութիւն մարդկան ածեն ջրեցուցեալ ըղ-
թոյնս սպանողս: Արդ՝ եթէ չար ինչ էին զա-
զանքն բնութեամբ, չէր հնար փոփոխակերպացն ընդ-
իւրեանցն փոփոխակերպին ընտելութիւն ունել:
Իսկ եթէ զխորշակս և զսառնամանիս վասն
փոփոխակերպութեան 'ի չարս արարչէ կարծիցեն.
գիտասցեն, զի եթէ ձիւն և սառնամանիք ոչ
լինիցին գ լերինս, արմատք խոտոց ոչ պարա-

ընելին . և եթէ ոչ տօթ ջեռուցանէր զանդաս
տանս, պտուղք ո՛չ հասանէին ։ Եւ եթէ
զախտս և զհիւանդութիս և զմահտարաժամս
և զընաւ զմահ ևս՝ 'ի չարէ ինչ արարչէ լմա
նայցեն, եթէ Աստուածական օրինացն հաստատային
անդստին յօրինացն առնէաք պատասխանի .
բայց որովհետև 'ի չարէ արարչէ զնէն զայս
պիսի անհարթութիս, հարցցուք ևմք զնո . բա
րեացն արարիչ և չարի ց, ո՞ քան զո՞ հարուստք
լիցին . եթէ ասիցեն եթէ բարեացն արարիչ
հարուստ է, ասեն . զի եթէ հարուստ ոք էր
նա՝ քան զչարեացն արարիչ, ոչ տայր նմա ըզ
վնասակարութիւն՝ յիւր 'ի բարի արարածն արկա
նել . նա և տեղի և պարտ՝ չէր տալ նմա յիւ
րումն վայրն . զի եթէ կարող ոք ինչ էր, նախ
իւր տեղին զատ 'ի նմանէ առնէր, և ապա
զարարածս զինչև կարողէր առնել . Արդ՝
զայն ասասցեն . կարողէր զնա մերժել բարին
յիւրոց 'ի բարիոք արարածոցն, եթէ չէր
կարող ։ Եթէ ասիցեն, եթէ կարողէր, լուի
ցեն ։ Եթէ կարողէր մերժել զչարն և ոչ
մերժեաց, ինքն է պատճառ վնասուն . և եթէ
ոչ էր կարող մերժելոյ զչարն, զտանի՝ հա

ըստադոյն քան զնա էր չարն, որ ընտանաքարնե-
ղէ և ապականէ զբարիոք արարածս նորա ։
Պարծեալ և այն ևս սուտէ զոր ասենն թէ՝
'ի վաղճանի յաղթէ նմա բարին ։ Զի որ
յառաջնումն չկարաց յաղթել, յայտ է թէ
և 'ի վաղճանին չկարէ յաղթել․
ապաքէն տկար էր ։

( Ճառ․ ԺԸ ։ )
Յաղագս Ընչոց և հաց՝ դատէյէ
Գեղոյ էն՝ և ոչ տրտմեցէ ։

## ՅԼ ՍՆՎՔ ՁՅՐՒՈՑ

և զմահուան, բազում ինչ պատճառս ունիմք ճշմարիտ բանիւ 'ի մէջ բերել ։ Նախ՝ այն իսկ՝ զի յորժամ մարդըն զայն պատուիրանն էանց, ապա եղև ընդ ցաւօք և ընդ մահուամբ․ քանզի ց՚կինն ասաց, թէ ցաւօք և տրտմութբ որդիս ծնցիս․ և ցայրն՝ թէ աշխատութբ և քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո, մինչև կալցես

զդարձն անդրէն յերկիր ուստի առար զի հող
էիր եւ 'ի հող դարձջիր ։ || Ծն. 4. 16 ։ Որով
յայտ է . զի թէպէտ եւ բնութի մարդոյ՝ քան
զի մարմնապատ է . ընդ ցաւօք եւ ընդ մա
հուամբ կարծիւք , այլ թէ կացեալէր 'ի պա
տուէրանին , պահէր զնա կենդանարարն կեն
դանի . որ յոչինչէն կարող եղեւ զշունչ մարդոյն
առնել , եւ պահէ միշտ կենդանի եւ անմահ ,
նոյն եւ զմարմինն զոր յերկրէ ստեղծ՝ կարող
էր պահել կենդանի ։ Այլ երբ եւ զայս լսեն
թշնամիք ճշմարտութեանն . աղէ՛ ապգի զի
'նուաք վառեն ընդդէմ ստուգութեան ։ Զի կէսքն
ասեն թէ՝ չէր մարթ մարմնաւորի անմահ
կեալ ։ Եւ՞ այլքն ասեն . վասն զի ոչ տեւէր
մարմինն ընդ շնչոյն յերկար ժամանակս կեալ
հարկէ անտեւականին մեռանել ։ Այլ զարա
ջինսն յանդիմանեն Եղիա եւ Ենովք որք մինչեւ
ցայժմ կենդանիքեն ։ Եւ՞ զայլսն՝ հասարակաց
համօրէն յարութիւն ։ Զի եթէ այժմ վն
զի անտեւականն են մարմինք , յայն սակս մե
ռանին . ապա եւ 'ի յարութեան ըստ ոչ քանի
չ'տոկան ընդ շնչոյն . եւ այսու յայտ առնեն
թէ՝ զյարութիւն իսկ մարմնոյ խափանել կա

մին . ուր Սողոմոնի գիրք , և արարածոց
բնութիւնք անդադար վկայեն զ յարութե՛
մեռելոց ։ Այլ սակայն՝ թէ ոչ մահկանացու
խակէր մարմին , զի որք էր զի մի դոյզն յանց
ման անկանէր ընդ մահուամբ . և ոչ արդա
հատէր ՚նմա արարիչն և ՚ներէր յանցմանն .
զի ՚ներող և արդահատող է արարիչն , այն ա
մենեցուն խել յայտնի . և առաւել յայժմա
նէ , զի յետ յանցանելոյ մարդոյն իջեալ անմար
մին իբր զմարմնաւոր ոք՝ ոտնաձայն առնէր
՚ի դրախտին . և մեղմով և գորովալիր բարբա
ռով ասէր ցյանցուցեալն , ու՞ր ես ադամ ։
|| Ծննդ . Գ . Թ ։ Զի մի՛ տագնապեցուցեալ
ճտայցէ ուշաբերել ՚նմա զապաշխարութի .
և զի չեկն ՚ի զղջումն յանցուցելոյն . յիրաւի
կրեաց պատիժ զմահ ։ Պարծեալ և այլ ազգ
նս . զի իբր արարիչն յառաջագոյն պատու
իրեալ էր ՚նմա , թէ՝ յորում աւուր ուտիցես
՚ի պտղոյ ծառոյն , ՚ի նմին աւուր մեռանիս .
և թշնամին յետոյ եկեալ ասէր՝ ոչ մեռանիս
այլ իբրև զմեզ լինիս ։ Իսկ արդ՝ ո՞յր բանից
պարտ էր հաստատուն լինել . այնր՝ որ յա
ռաջագոյն զգուշացոյց և կամեր ունել զդրու

Թեւամբ պատուիրանին զնա անմահ պահե՞լ. եթէ միայն՝ որ պատուիրանօք ջանայր զնա մահկանացու առնե՞լ։ Եւ՛ եթէ չէր արար չէին յետ յանցանելոյ զպատուիրանաւն զմարդին մահկանացու արարեալ, համապազ մարդին սատանայի հաւատայր, և ո՛չ ա̃յ • զի սա ասաց, եթէ ուտես 'ի պտղոյն, մեռանիս • և նա՛ ասէր թէ ուտես, չմեռանիս • այլ իբրև զա̃ծս լինիս։ Ա՛րդ՝ եւ մահ 'ի վերայ բնութեանս մարդկան՝ արարիչ բնութե՛ն, զի խորքանն հաստատեսցի, և չար խրատտատուն պարտաւորեալ դատնեսցի։ Զի թէպէտ առ ժամանակ մի վ̃ս այսց երկուց պատճառանաց ընդ մահուամբ անկանիցի, այլ բստ խորում կարողութե̃ յարուսցէ միւսանգամ և յանսպառ յաւիտենանս կենդանի և անմահ պահեսցէ։ Եւ՛ որ զհրեշտակս և զհոգիս մարդկան յոչ ընչէ՛ արարեալ կենդանիս և անմահս պահէ, նոյն և զմարմինս կարօղ էր կենդանի պահել՝ թէ չէր առաջնոյ մարդոյն զա̃յ հրամանըն 'ի բաց ընկեցեալ։

❋❋❋

( Ճառ. ԺԹ. )

Թէ Ած՝ ոչ արար և ոչէ պատճառ մահուան

# ՅԱՂԻ ԱՍՏՈՒԱԾ

Մահուան չէ պատճառ, վկայեսցէ ամենարուեստ իմաստութիւնն որ ասէ եթէ Ած զմահ ոչ արար. և ոչ խնդայ ընդ կորուստ մարդկան. || Իմաստ. Ա. 13: այլ հաստատեաց Ած զմարդն յանեղծութի ըստ պատկերի իւրում մշտնջենաւորութեան, և նա խանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ || Իմաստ. Բ. 23: Եւ դարձեալ ինքն իսկ ասէ, Ես ասացի թէ Ածքիցէք և որդիք բարձրելոյն ամենեքին. || Սաղ. ՁԱ. 6: այսինքն թէ ես զձեզ անմահս արարի՝ եթէ կացեալ էիք յիմում հրամանին. բայց որովհետև ոչ կացիք յիմում պատուիրանին, դուք իբրև զմի յիշխանաց անկանիք: Ես ոչ զձեր մահն կամէի, և ոչ ընդ իշխանութեամբ վասն խրատատուին անկանելոյ: Այլ բնաւ իսկ ասեն ընդ էր եմոյծ զնոսա

'ի կռուի՛ ընդ միմեանս ։ Այսու՝ զանձն իշխանու՟ին սատանայի և մարդոյն կամին խափանել ։ Զի ա՟ծ որ անհնախանձն արար զնա՟ անձնիշխան ․ ոչ կամէր թէ որպէս զանասունս 'ի հարկէ վարեսցի․ և ապա անձն իշխանութիւն այնուհետև չլինէր անձն իշխանու՟ի ։ Բայց ա՟ծ թէպէտ և ունէր իշխանու՟թե զիւրոյ արարածոյն զհանդէսն տեսանել այլ ո՛չ ինքն դրդեաց զնոսա անկանել ընդ միմեանս ։ Իբրև ետես զսատանայ նախանձու բորբոքեալ․ թոյլ ետ անձն իշխանին ընդ անձն իշխանին ողորել ։ Քանզի գիտէր եթէ ոչ լինէ տկարագոյնէ սորա անձն իշխանու՟թի քան զնորայն ․ և ոչ նա կանխագէտ և սա ոչ կանխագէտ ․ և ոչ նա բռնաւոր , և սա՝ տկար ոք ։ Զի՞ զի չէր բռնաւոր ոք՝ յայնմանէ յայտ է ․ զի ց'կինն պատրանօք մատուցեալ հարցանէր՝ և ոչ բռնու՟թե զարհուրեցուցանէր ։ Զի՞ զի չէր կանխագէտ՝ աստ , զինչ է այդ զոր ասաց ա՟ծ․ զի 'ինմանէ ուսցի զհանգամանսըն ։ Դարձեալ՝ և 'ի յոբայ փորձանացնէ՝ ուսանել․ թէ չէ սատանայ բռնաւո՛ր և կանխագէտ ։ Զի եթէ բռնաւոր ոք լինէր նա , ոչ

յա̄յ խնդրեալ առնոյր օձան ․ Եւ ապա մխէր ՚ի փորձութիւն ։ Իսկ եթէ կանխագէտ էր ոչ մատչէր ՚ի փորձել ․ քանզի գիտէր թէ յորժամ ոչ կարէ յաղթել յամօթ լինելոց է ։ Նա և ՚ի Տէրունական իսկ փորձանացն իմանալի է ․ թէ չէր կանխագէտ ․ այնու՝ զի ասէր ինքն իսկ , եթէ որդի ես ա̄յ ‖ Մատ ․ 4 ․ 2 ։ Եւ յայտ առնէր՝ թէպէտ և լուեալ էր ՚ի մարգարէից թէ գալոց է որդին ա̄յ , այլ՝ զժամանակ գալստեանն ոչ գիտէր ․ եթէ գիտացեալ էր , եթէ արդար և որդին ա̄յ էր այն որ ՚նմա իբրև զմարդ երևէր , ոչ փորձէր զնա և ՚ոչ յամօթ լինէր ․ թէպէտ և յա̄ծեղէն զօրութեանցն իմացաւ զգալուստ որդւոյն ա̄յ և տագնապեալ աղաղակէր ․ թէ գիտեմ զքեզ ով ես որդի ա̄յ ։ ‖ Ղուկ ․ 8 ․ 18 ։

Դարձեալ ․ թէ կանխագէտ ինչ ոք էր նա , ոչ դրդուէր զհրէայսն զնա ՚ի խաչ հանել ․ զի գիտացեալ էր թէ մահու քն ընկենոյր զնա յիշխանութենէ ․ ըստ այնմ զոր ասաց տէրն , թէ իշխան աշխարհիս այսորիկ ընկեսցի արտաքս ։ ‖ Յովհ ․ 12 ․ 30 ։ Իսկ դարձեալ ․ թէ տեսանէր զսատանայ իբր զկայծակն անկեալ յերկ

նից ։ ‖ Ղուկ ․ 10 ․ 18 ։ Իջ՟ դարձեալ ․ թէ իշխան աշխարհիս այսորիկ արդէն խել դատապարտեալ է ։ ‖ Յովհ ․ 13 ․ 31 ։ Զի ցուցցէ թէ և յիշխանութիւն, անկած որ ած՟ամենայն կամեցած և յաւիտենական դատաստանացն պարտական եղև ։ ‖ Եսայ ․ 14 ․ 13 ։

( Ճառ ․ Ի ։
Թէ վասն է՞ր ած՟ զմարդն ոչ
արգելու ։

ԱՐԴ՝ ՈՐՈՎ ՀԵՏԵՒ ՎԱՍՆ մահու ցաւոց ՚ի վե՟ մարդոյն դնելոյ ցուցած յած՟ատուր գրոց ․ թէ վս՟ յանցանելոյ պատուիրանացն ա՟ծ՟ոյ՝ մտին յաշխարհ ։ Ասասցուք և զայլ ևս զպատճառն վասն որո՞յ տարաժամ մահք լինին ․ բազում անգամ թէ ևս չարեք ինչ մեծամեծք առաջի մարդոյն գայցեն ․ կամ նեղութիւնք որոց ոչ կարէ ժուժել ․ կամ փորձութիւնք որոց ոչ լիցի բաւական տանել ․ ած՟ կանխագէտ և մար

դասէր՝ զԹացեալ յիւր արարածն , տարա
ժամ մահուամբ զերծուցանէ զմարդն յայնպի
սի չարեաց · ըստ այնմ զոր գիրն ասէ · Թէ
յառաջ քան զչարն ժողովեսցի արդարն ։
Պատրաստեալ · և այլ ազգ և ս լինին մահք տա
րաժամք · զի յամենայն տիս՝ և 'ի քոլոր ժա
մանակս պատրաստական մարդոյն գտեալ՝
չերմիցի յաստուածպաշտութենէն ։ Բայց
Թէպէտ և յանխմից մտին ցաւք յաշխարհ ·
սակայն են և այլ պատճառք ։ Որբեմն վասն
մեղաց · ըստ այնմ զոր ցանդամալոյծն ասաց
Տէրն , Թէ ողջացար՝ այսուհետև մի՛ մեղան
չէր , ‖ Յօհ · ե · 14 ։ Իսկ հայեցեալ ընդ հաւա
տըս մատուցանողացն ասէ ց՚ միւս անդամա
լոյծն , Թէ Թողեալ լիցին քեզ մեղք քո ։ ‖ Մատ
Թ · 2 ։ Զի յայտ արասցէ Թէ են իւիք ցաւք
որք վասն մեղաց լինին · և են իւիք ցաւք որք ոչ
վասն մեղաց · որպէս յորժամ աշակերտքն հար
ցին զնմա վասն կուրին · Թէ ո՞ր մեղ է՛ վասն
կուրութեան , դորա՞՝ Թէ ծնողաց իւրոց · և
նա՛ ասէ , ո՛չ դորա և ոչ ծնողաց իւրոց · այլ
վասն փառացն Աստուծոյ · զի փառաւորեսցի 'ի դմա
Ած ։ ‖ Յօհ · Թ · 3 ։ Իսկ են ցաւք որ ոչ վասն

մեղացեն, և ոչ ոք ինչ 'ի փառս․ այլ վասն չ'կշռելոյ խառնուածոցն ։ Քանզի մարդոյ մի մին, ի չորից տարրից խառնեալ է․ 'ի խոնաւութենէ, 'ի ցամաքութենէ, 'ի ցրտութենէ և 'ի ջերմութենէ․ և թէ մի ինչ պակաս իցէ, կամ յոլով իցէ՝ ցաւս գործէ 'ի մարմին․ և այն՝ կամ 'ի շատ ուտելոյ և յըմպելոյ լինի, կամ 'ի սաստիկ պահոց․ կամ յանխտիր կերակրոց․ կամ յոյժ 'ի տօթի աշխատելոյ․ կամ կարի 'ի ցրտոյ ըլկելոյ․ և կամ յայլոց ինչ այնպիսեաց հակառակորդաց․ որովք անհարթութիւնք 'ի մարմինս գործիցին ։ Իսկ պատերազմաց ըս կիզբն՝ յագահութենէ մարդկան եղև․ ուստի յափշտակութիւնք սահմանաց լինին և գիւղից և օտար քաղաքաց․ ընչից և ստացուածոց ։ Նոյնպէս և պոռնկութիւնք առ 'ի չկալոյ 'ի սահմանս ամուսնութեան զոր ած 'ի բնէ կարգեաց, թէ թողցէ այր զհայր և զմայր իւր և երթիցէ զհետ կնոջ իւրոյ․ ‖ Ծն․ բ․ 24 ։

Զհետ կնոջ իւրոյ ասէ, և ոչ զհետ կանանց զի և զառաջին սահման բնութեանն հաստատեաց․ ասաց Տէրն 'ի Սուրբ Աւետարանին թէ՝ զոր ած զուգեաց մարդ մի՛ մեկնեսցէ ։

|| Մատթ․ 19․ 6։ Ո՞չ դիմահարութիւք վասն
հպարտութեան մարդկան լինին։ Իմանդի եթէ
որդի ուրուք մտավարժ իցէ՝ դան ոչ ըմպիցէ․
և որք չէին մտավարժ՝ բազում անգամ զծա
ռայն տե՛րն առաջի նորա դա՛ն հարկանէ, զի ՚ի
նա հայեցեալ՝ ընդ այն լինիցի մտավարժ ․
ապա եթէ և այնու ևս ոչ խրատիցի, ՚ի նա
իսկ մատուցանէ զտանջանսն ։

( Ճառ․ ԽԱ ։ )

Թէ վասն էր տանջէ դասկերն
՚ի դէպս։

ՐԴԻ ՐԱՄԱՍՑԵԼՈՑ Ս․Ա․

սրն հարցանելոյ ումեմն, եթէ մե
ղաւորք վա՞ մեղաց տանջին ՚ի դժոխս
տղայոցն անմեղաց ընդ է՞ր տկրեցեն դեւք ։
Զի զամ մարդիկք յորդեղ բութի կոչէ ած․
որպէս մարգարէն խօս ասէր, որդի անդրանիկ
իմ իսրայէլ․ || Ելից․ 4․ 22։ Ո՞չ դարձեալ,
թէ որդիս ծնայ և սնուցի ։ || Եսայի․ 1․ 2։

Թուէ առաքինացեալքն ընդ օրինօք որդիք կո-
չէին · որ չարն ևս առաւել, զորոց ասէ, թէ
ես նոցա իշխանութե որդիս ոչ լինիլ · ‖ Յհ ·
ա · 12 · որդ քանզի եթէ յորդիս մատուցեալէ
'ի մեզ ոմն խրատել · երբեմն հարկանէ առաջի
մեր իբրև զծառայ զանհնազանս մեր · և եր
բեմն զանդս և զայգիս · զի ընդ այն հայեցեալ
մտցուք ընդ ընով, ոչ երկիւղին · ապա եթէ
այնու ևս ոչ խրատեսցիմք, 'ի մեզ իսկ մատու-
ցանէ զտանջանսն · կամ ցաւով կամ խեղութե
կամ դիւօք : Տանջին և անմեղք՝ զի 'ի մտի
կալցեն այլքն զբան իմաստնոյն որ ասէ, եթէ
արդարն հազիւ կեցցէ, ամբարիշտն և մեղաւ-
որն ո՞ւր գտանիցի : ‖ Առակ · 11 · 31 :
Եւ այն՝ յայն սակս լինի զի մի՝ արդարն յար
դարութեն նուաղի · և մի՝ մեղաւորն միշտ
'ի մեղս կայցէ : Եւ չէ այնմ պարտական ած,
այլ չարիք մարդկան ածեն զած յանպխն
տանջանօք խրատել զմարդիկ : Զի ոչ այլոց
հաճառով հաստատեաց զանդամալոյծն,
և շնորհեաց նմա թողութե մեղաց · նոյնպէս և
այլոց սակաւուց տանջանօք՝ ածէ յերկիւղ և
'ի խրատ զբազումս : Յորժամ դիպիցի անձն

ղօք. և յորժամ դէպ լիցի մեղաւորօք, որպէս
ինքն միայն ճարտար գիտէ: Իսկ ոչ եթէ 'ի
դատապարտութիւն ինչ ոգոց լինի մարդոյն
տանջանքն դիւաց, այլ առաւել ևս յորդահա
տութեն, մանաւանդ թէ անմեղ ոք իցէ, և
զի այլոց երկիւղ 'ի միտս արկանիցէ յայնպիսի
տանջանաց մատնիցի. զոր իբրև մարակ կալս
եալ 'ի մեծի տանս ցուցանէ այ տեսչութիւն.
զի հայեցեալ ընդ այն բազմաց՝ ամփոփեսցին
և մնասցեն երկիւղիւ ընդ այ հնազանդութեամբ:
Իսկ եթէ երբեք զի վասն մեղաց իւր լինին այսպի
սի տանջանք և է երբեք զի պատահարք պա
տահեն. և ապաշխարեալք 'ի սրբոց մարտի
րոսաց նշխարս, փրկին մարդիկ յայնպիսի տան
ջանաց. որովք զօրութիւն այ որ 'ի սրբսն է՝
երևի. և ինքեանք յօգնս ինչ ոչ վնասին,
Ասել զի՝ դև զդև ոչ հանէ, զայն տէրն իսկ
յայտ արար. եթէ սատանայ ասէ զսատանայ
հանէ, ապա ուրեմն բաժանեալ է յանձնէ իւր
մէ. այլ ես ասէ հոգւովն այ հանեմ զդևս,
|| Մատ. 12. 26: Իսկ ընդէ՞ր ինքն որ ածն էր՝
ասէր հոգւովն այ հանեմ զդևս, այլ զի մարդ
կան ուսուսցէ. եթէ ոչ արժանաւորք չեոր

հաց հոգւոյն սրբոյ լինիցին, ոչ կարեն հանել զդեւս ։ Որպէս առաքեալքն․ մինչ ոչ նախ առին իշխանութիւն 'ի տեառնէ ոչ կարէին հանել զդեւս ։ Նաեւ նմին իսկ որ 'ի տանջանմն իցէ՝ եւ իշխանութի հանելոյ դեւն․ սակ այդ ազգ՝ ոչ ելանէ ինչ, եթէ ոչ պահօք եւ աղօթիւք ։ ‖ Մատ․ 17․ 10․ Ոչ եթէ մի ինչ ազդ իցէ դիւաց որ պահօք եւ աղօթիւք ելանիցէ եւ այլքն ոչ․ այլ ամ̃ իսկ դունդք դիւաց 'ի պահոց եւ յաղօթից 'ի փախուստ դնին ։ Այլ կախարդք սոքա, յղեն զդեւս՝ եւ հանեն զդեւս իսկ ։ Թէ կախարդք զդեւս ոչ կարեն հանել․ բաւականանէ մեզ հաւանեցուցանելոյ բան տն̃ զոր ասաց, թէ սատանայ զսատանայ ոչ հանէ․ զի կախարդն եթէ հանէր՝ ապաքէն դիւօք հանէր․ եւ զդիւէ՝ ասաց ք̃ս թէ դեւ զդեւ ոչ հանէ ։ Նպա յայտ է թէ այլ ազդ իմն իրք լինին, որ 'ի նոցանէ իսկ ելեալք բանն եւ ոչ 'ի մ̃նոջ սոսն՝ հանել չկարեն, բայց անդէն կապել մարթեն․ զի հանապազ խնդրեն անձին հոգւոց մարդոյն դեւն լինիցի․ եւ այն յոր արժանացն յիրաւի լինի ։ Զի եթող ամ̃՝ զած, զո̃ւս, զպահս, եւ զաղօթս․ եւ 'ի կա

խարդն՝ որ և անձին ինչ ոչ կարէ օգնել , ա-
պաշխինեցաւ • զի ո՛ ոք ՚ի կախարդաց՝ անցաւ •
ո՛ անդ և անմահ լիցէ ։ Այս և տեսանեմք իսկ
զկախարդսն միշտ ծնկեալս ՚ի դրանց՝ և մա
նաւանդ զմոլիսն ։ Զի նախ ինքեանք դիւա
հարին , և ապա այլոց ևս խոստանան տալ
որ չիցէ ՚ի ձեռս • ոչ նոցա և ոչ դիւաց ո-
րոց բանին խօսին տալ ինչ ումեք • բայց միայն
այն որ արարիչն և տէրն է ։

( Առակ • ԻԲ ։ )

Թէ դևք առանց հրամանին Այ
չկարեն ՚ի մարդ
մտանել ։

Ի ԱՐԴ՝ ՊԻՏԱՆ ԱՆ

դէն կապել կախարդացն զդևն՝
( որպէս ասենն ) և խնդրել ընդ անձին
միշտ ոգւոց մարդոյն առնել , լաւէր Թէ յայտ
նէր՝ և սրբոց ոմք աղաչեցել զԱծ՝ օգնականութն
գտանէր բուժելոյ ՚ի չարէն ։ Այլ մեք ասեմք

թէ՝ մտանելոյ 'ի մարդ. ջուն իշխանութիւն
առանց այ՟ թուլացուցանելոյ (և այնր պէս
պէս պատճառքն՝ որպէս ինքն միայն գիտէ)
և յայտ անտի է, զի յորժամ 'ի խոզից երամա
կին մտաբերեցին մտանել՝ ոչ կարացին մտա
նել եթէ ոչ նախ 'ի Քրիստոսէ առին հրա
ման: || Մատ. 8. 31: Եւ յորժամ զ յօբն կամե
ցաւ փորձել սատանայ, ոչ իշխէր ձեռն՝ եթէ
ոչ նախ յայ՟ եառ հրաման փորձելոյ: || Յոբ.
1. 11. Եւ զ յուդայէ ասէ, թէ ընդ պատա
ռոյն եմուտ 'ի նա սատանայ. || Յոհ. 13. 27.
Զի թէ չէր Այ՟ն թուլացուցել (և սատա
նայի որ գրգռեցին և յուդայի որ վ՟ն կծծու
թեան եկն յայն) ոչ իշխէր մտանել 'ի նա. այլ
վ՟ն յանդգնանելոյ զանձնիշխանութի երկո
ցունց՝ թուլացուց ըստ կամաց երկոցունց:
Այս և՝ մինչ դեռ տանջին խակ ոմանք 'ի դե
ւէ, եթէ ոչ յայ՟ տեսչութի լինէր նմա, չա
րաչար մահուամբ սատակէր: Այս և՝ զպաշ
տօնեայն խոկ իւրեանց եթէ ոչ այ՟ սաստ պա
հէր, ազգի ազգի խնդութեւք խնդէին և ան
ձնարին մահուամբ սպանանէին: Բայց վասն
զի ոչ են ձեռնհաս, ոչ իշխեն յայնպիսի լրս

մտաբերել ։ Եւ այս յայտ անտի է, զի Թէպէտ
և կանխաւ գիտէ Ած՝ Թէ ոմն կռապաշտ
լինելոց է. ոմն կախարդ և ոմն սպանօղ, ոչ
արգելու զնկարիլ սաղմնոցն նոցա, և զկենդանա
նալն և զբանաւորիլն ըստ հոգւոյ. զի նորա
բարերարութիւն երևեսցի, և նոքա յիւրա
քանչիւր անձն իշխանութեան պարտաւորեսցին։
Եւ յայտ է Թէ որպէս առնելոյն ինքն Տէր է,
նոյնպէս և 'ի դարմանոյն վայելեցուցանելոյ,
և 'ի լկանաց չարին ապրեցուցանելոյ ։ Զի
ոյր իւր ինչ ոք է յիւրն զտայ և խնայէ. և
որ ոչ է իւր. նա զօտարին օգտէ և ցրէ. որպ
առէ յաւետարանին, Թէ գայլ ոչ վն այլոյ
իրիք գայ, այլ զի յափշտակեսցէ և ցրուեսցէ
։ ‖ Յօհ. 10. 10 ։ Այլ ճշմարիտ հաւատա
ցելոց ոչ սատանայ փորձութեամբն կարէ ստը
նանել և ոչ կախարդք դիւօք. որպ ինքն Տէրն
ասաց ցիւր աշակերտսն. եթէ ահա ետու ձեզ
իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս, և զամ
զօրութիւն Թշնամոյն ։ ‖ Ղուկ. 10. 19 ։ Եւ դար
ձեալ, Թէ նշանք հաւատացելոց այս են, զդևս
հանիցեն և օձս 'ի ձեռն առցեն. և Թէ զդեղ
մահու ըմպիցեն, նոցա ինչ ոչ վնասիցէ ։

‖ Մարկ. 16. 18։ Այլ միանգամայն իսկ ասաց
եալ, թէ անմեղի ումեք և ոչ դեղք մեղանչել
կարեն և ոչ գազանք ապականել յօժարեն.
որ ոչ դանկելի գաղանքն վնասեցին. և ոչ երից
մանկանցն հուր հնոցին։ ‖ Դան. 12. 30։ և
3. 21։ Որպէս և առաջնոյ մարդոյն մինչև
յանցուցանելն, հնազանդ էին և ոչ մեղանչա
կանք։ Այլ որպ առ Նուաքեռովէն վատթար
եալն սատանայ, մինչ կախարդացն յահէնը
շանացն զօր առնէին, բերել զգիրս կախարդա
նացն զծանրագինս և այրել առաջի առա
քելոցն և դիւացն աղաղակել թէ՝ դոքա են
ծառայք այ բարձրելոյ։ ‖ Գործ. 19. 19։
Որոց նշանացն նշխարք, և այժմ ՚ի մեր յե
պիսկոպոսն՝ և ՚ի ճշմարիտ վանականսն երև
լին. և զսյնը զօրաց՝ ոչ միայն քրիստոն
եայք, այլ և հեթանոսք
և մողք գիտեն։

( Ճառ . ԺԳ ։ )

## Թէ Հրեշտակք եւ դեւք, եւ հոգի եւս մարդկան ան մարմին են ։

# ԲԱՅՑ ԵՒ ԶԱՅՍ ԵՒՍ

պարտիմք գիտել թէ, Հրեշտակք՝ դեւք եւ Հոգիք մարդկան անմարմինք են. զի զհրեշտակաց ասէ, արար զհրեշտակս իւր հոգիս եւ զպաշտօնեայս իւր 'ի բոց հրոյ։ Սաղ. 103. 4։ Հոգիս կոչէ զնո վասն արագութեան. ոչ զի ցուցցէ թէ քան զհողմս թեթեւք են ։ Վասնզի հոգւոյ եւ հողմոյ անուն երբայեցերէն եւ յունարէն եւ ասորերէն նոյն է Նա թէ եւ հայերէն ոք մանր միտ դնիցէ, նոյնպէս գտանի ։ Զի յորժամ տաղնապիլ ոք յումեքէ լիցէ, ասէ՝ ոչ ետ ոգի կլանել. ոչ ետ ոգի առնուլ. եւ այնու զօգոյս զոր միշտ ծծեմք, յայտ առնէ ։ Եւ բոցեղէնս կոչէ զնոսա վն սաստկութեան. ոչ յայլուր

ասէ

տան, Հզօրքն զօրութեամբ առնել զկամս նորա։
|| Սաղ. 148. 2. Այլ ոչ եթէ 'ի բնութեան հող-
մոյ և հրոյ են, որ եթէ 'ի բնութիւն հողմոյ և
հրոյ էին, ապա և նոքա՝ յերկրի մարմնաւորք
կոչէին և ոչ անմարմինք։ Նմանեալ որ մարմնա-
որ է՝ 'ի չորից հիւթից յօդեալ է՝. որպէս մար
մինք մարդկան և բնաւ խակ անասնոց. և որ
ինչ անմարմին է, նա պարզ բնութիւն է. որպէս
Հրեշտակաց՝ և դիւաց՝ և հոգւոց մարդկան։
Իսկ արդ՝ ո՞ւր լինիցին չէ՞ք որք ասեն, թէ
հրեշտակք ընդ կանանս ամուսնացան. զի նոքա
հրեղէնք կոչին, և մարդիկ խոտեղէնք։|| Եսայ.
40. 6։ Ուստի յայտ խակ է՝, թէ հրոյ ընդ խո
տոյ ոչ ամուսնութիւն լինի, այլ ծախումն։ Իսկ
Երեքեան ջոկքս այսոքիկ. քան զի համանմանք
են. նմանագոյնս և նովին խակ անուանք
անուանին։ Ոչ հրեշտակ հոգի. այլ հոգի
հարկաւոր որ է՝ ծառայող և կամակատար։
Ասի և դև ոգի. այլ ոգի չար՝ վասն անհնա
զանդութեան՝ և ապստամբութեան. զոր թէ
պէտ և 'ի մեր լեզու այս չար ասեմք (ոչ 'ի
խորանաց հարցն մերոց առաջնոց. բառ սովո
րութեան 'ի մեզ կարգելոյ) այլ զխոտեմք եթէ

այսն հոգին է՝ և հոգին որ է՝ ըստ առաջագոյ
նըն ասացելոյ. քանզի յորժամ մեք ասեմք թէ
սիգ չունչէ. ասորիքն ասեն, այսն չունչէ. և վ՟ն
անտարածութեն միայն և արագութեն կոչին
հրեշտակքն և դևքն, և հոգիքն մրդկան ոգե
ղէնք. որ է հոգեղէնք: Որպէս վասն սաստ
կութեն՝ բոցեղէն կոչին հրեշտակք, նոյնպէս
և վ՟ն արագութեն և անտարածութեն հոգե
ղէնք. որ է հոգեղէնք: Բայց բնութեն նոցա
'ի վերէ քան զհողմ և քան զհուր. նուրբ և
արագ քան զմիտս: Եւ՞ չէն ինչ զարմանք.
թէ նոքա մերոց դրացեաց ալորածոց անուամբ
քըս անուանեն. ուր և նոցա արարիչն ոչ գար
ծի զայնպիսի անուանս զինքեամբ առնուլ վ՟ն
իւրեք իւրեք տեսչութեց: Կոչի ա՟ծ հոգի.
այլ կայ ըստորուն 'ի միջի. ասէ՝ ա՟ծ հոգի կեն
դանի է. || Յո՟հ. 4. 24: որ է կենարար. կոչի
և հուր՝ ըստ այնմ, թէ ա՟ծ քո հուր ծախիչ է
|| 2. Օրէն. 4. 24: Եւ՞ արդ՝ տեսցուք թէ
հուր միայն ծախի՞չ իցէ ա՟ծ. նա աւանիկ նո
րին հոգւոյ միւսով մարգարէին՝ յայտ արար
եալ թէ լոյս է՝. ըստ այնմ թէ՝ տէր լոյս իմ
և կեանք իմ. ես յումմէ՞ երկեայց: || Սաղ.

26 · I · Եթէ հուր ծախիչ ևեթ էր , զի
ո՞րդ կոչէր զնա լոյս կենարար · ոչ ապաքէն
յայտ է , թէ ուր սաստկութի պիտոյէ՝ անդ
հուր կոչի · և ուր քաղցրութի , անդ լոյս
կենարար ։ Այլ ինքն 'ի վեր է քան զհուր և
քան զլոյս ։ Ի՞ այլ ինչ բազում զանուանս
առնու զինքեամբ վասն պէսպէս դարմանից ։
Ի՞ յորժամ երևիլ սրբոց իւրոց կամէր՝ ոչ
այլով իմ՛իք կերպարանօք , այլ միայն մարդոյ
կերպարանօք · զոր ըստ իւրում պատկերին
արար · յայտ է՝ և այն ոչ վայրապար լինէր ,
այլ զի զառաջել սէրն իւր զոր ընդ մարդկան
ունէր՝ ցուցանիցէ ։ Ի՞ դարձեալ՝ զի յառա
ջագոյն կրթեսցէ զմարդիկ ածել 'ի գիտութի ·
զի յորժամ զորդին իւր իբրև զմարդ յաշխարհ
առաքեսցէ , մի՛ օտարոտի ինչ զիրսն համա
րեսցեն · մանաւանդ զի գիտիցեն թէ ինքն իսկ
այնու կերպարանօք յայտնիւր · ո՞վ իջեալ 'ի
դրախտն առ ադամ ոտնաձայն իբրև զմարդոյ
առնէր · ‖ Ծն. · 3 · 8 ։ Ի՞ եկեալ որդւոյ առ
Աբրահամ երկուք հրեշտակօք արժանի առ
նէր ճաշ 'ի վրանի նորա ուտելոյ · ‖ Ծն. ·
8 · 2 ։ Ի՞ 'ի խօսս մատուցեալ 'ի լերինն ընդ

Աբրահամու , զերկուս պատանիս իւր զհր
եշտակս մարդանկերպեալս, 'ի սոդոմ ( առ. զե-
ղեցիկ աստուածակերպն ) առ ղովտ արձակեր :
|| Ծնն. 9. 1 : Իբր հրացուցեալ և չայլայլեալ
զհրեշտակն 'ի մորենւոջն 'ի մարդկեղէն բարբառ-
ածեալ. տայր ընդ նախ ընծայեցելոյ առն Այ
ընդ մովսիսի խօսել : || Ել. 3. 2 : Իբր այլակեր-
պեալ զզօրավարն իւր զմիքայել՝ զօրագլխին
իւրումն յեսուայ 'ի դաշտին ցուցանէր : || Յե-
սու. 5. 14 : Իբր առաքեալ հրեշտակ 'ի տուն
մանուէի խօսել ընդ նմա՝ մարդկօրէն ընծայ-
եցուցանէր : || Դատ. 13. 3 : Իբր երբեք երբեք
զդէ թէ իբր մարդացեալ խսկ բերան 'ի բերան
և ձեռն 'ի ձեռն ընդ բարեկամին իւրում ընդ
մովսէսի խօսէր : || Ել. 33. 11 : Իբր առն Թա-
գաւորի ըստ սրտի իւրում գտելոյ Թաղ-
ծելոյ 'ի հարուածոյն՝ հրեշտակ 'ի կերպարանս
մարդոյ սուսեր 'ի ձեռին ցուցանէր : || 2. Թագ.
24. 17 : Իբր եզեկիելի հրատեսիլ և բացալէ
զու 'ի կառս ազգի ազգի կերպարանօք յօղեալ
և կառավար մարդակերպարան երևեցուցա-
նէր : Իբր քերովբէս ազգի ազգի գազանօք յօղ-
եալ և ձեռն ձգեալ իբր զմարդոյ 'ի միջոյ

քրօբէից ցուցանէր ։ || Եզեկ. 14. 14 ։ Հրց՞ Իւր
իսկ երբեմն ոչ հինօրեայ՝ երբեմն իբրև զմա-
տաղօրեայ՝ վասն այլ և այլ տեսչութեանց
կերպարանեալ ցանկալւոյ առն Դանիէլի ե-
րևէր ։ || Դան. 7. 22 ։ Հրց՞ այնպէս՝ իւր, և իւ-
րոց ծառայիցն նոյնգունակ երևելով զառաւ՞
ել սիրոյն նշան՝ զոր ընդ մարդոյն ունէր ,
յայտ առնէր ։ Այս ամ՝ ասացա՞՝ զի ցուցցէ
թէ որ ինչ երևի՝ մարմնաւո՞րէ . և որ ինչ ոչ
երևի , անմարմին ։ Հրց՞ 'ի մարմնաւորացն են
որք թանձրամարմինք են . և են որք նօսր-
մարմինք . որպէս առաջեալն ասէ , թէ այլ
մարմինք երկնաւորացն և այլ մարմինք երկ-
րաւորացս ։ Երկրաւորք՝ մարդկան . և անաս-
նոց , թռչնոց և սողնոց ։ Հրց՞ Երկնաւորա՞ց՝
արեգական և լուսնոյ և աստեղաց ։ Հրց՞ զի՞
զնոցանէ ասէ և ոչ զհրեշտակաց , անդէն զնո-
վիմբ ածեալ ասէ՝ թէ այլ փառք արեգական
են և այլ փառք լուսնի . || Ա. Կոր. 15. 40 ։
Հրց՞ միանգամայն իսկ ասացեալ թէ՝ որ ինչ
'ի զգայնոցս շօշափի , կամ զննի կամ ազդի՝ այն
մարմնաւո՞րէ . և որ 'ի զգայնոց ոչ ազդի , ան-
մարմին ։ Յուրբէ տարր լուսոյ . այլ զի ալօք

զնոյն մարմնաւորէ ։ Սուրբէ տարր օդոյ՝ այլ զի ցրտութիւն աղղի մարմնոյ՝ մարմնաւորէ։ Սուրբ է տարր հրոյ, այլ զի ջերմութիւն աղղի մարմնոյ՝ մարմնաւորէ ։ Նոյնպէս և ջրոյ՝ որ քան զծառունս նրբագոյն է . և քան զթեթեւսն թանձրագոյն ։

( Ճառ . ԻԴ ։ )

Յաղագս լինելոյ կենաց յաւերժա հարսանեաց։

## Ի ԱՐԴ՝ ՔԱՆԶԻ ԱՆՄԱՐ

մինչ են հրեշտակք և դեւք . յայտակս և ծնունդք ոչ գոն նոցա ։ Այլ առնն աներծահարսից ծնունդք գոն՝ և մանկնն ։ Վասն զայն ասացուք . Թէ ընակեցին այլ ինչ արարածք բանաւորք քան զհրեշտակս , և զդեւս և զմարդիկ ։ Իսկ ապա ենկեսցուք յայնր ի քննել, Թէ էցե՞ն ի դեւաց կէսք մարմնաւորք և կէսք անմարմինք։ Ոչ էր ք ինչ արարած բանաւոր արտաքս քան զայս երիս զնս ։ Այլ մինչ զհրեշտակաց . զդեւաց

և զմարդկանց· յամենայն տծատուր գիրս ։ Եւ ս
'ի բնութենէ արարածոց յայտնի է ։ Բայց թէ
պէտ և ամէն ինչ անուանք 'ի դրոց յուշկա
պարկաց, կամ համբարուաց, կամ աւերծա
հարաց և պարկաց· ըն կարծեաց մնաց մարդ
կան ամէն և ոչ բստ բնութ ։ Քանզի գլուոց է
կերպարանս այլ և այլս ցուցանել· և մարդիկ
բստ կերպարանացն անուանս դնեն ։ Ո՞վ յոր
ժամ քաղաքք և գիւղք աւերեսցին, և անդ
դեաք բնակեսցին, և կերպս 'ի կերպս յայտնի
ցին, և մարդկան բստ կարծեացն անուանս
եդեալ՝ զոմն յուշկապարիկ · զոմն պարիկ · զո
մն համբարու և զոմն աւերծահարս կոչեցին ։
Նոյնպէս և դրոց բստ մարդկան կարծեացն
եկեալ առ 'ի նշանակելոյ զաստակութե աւերա
ծի աշխարհին · յուշկապարկաց ասեն բնակել
յաւերակսն · զոր յոյժ լեզու խշացուցս ասէ ։
Եւ ըդ՝ ցուցցեն թէ դատանեցին՝ խշացուցչ 'ի
բաւ խելքի· ապա ուրեմն յայտ է թէ՝ անուանք
առանց անձանց են յուշկապարկաց և յիշաց
լուց ։ Եւ՞ որ գիրք բստ սովորութե մարդկան
կարծեաց եկեալ՝ նոյնպէս անուանեցին առ
'ի զաւերս բաւ խլանի նշանակելոյ · երբ և դու

վացուցն զոր 'ի կողմն եղեալ ասեն • և զպայ իմն 'ի մարդկանէ • և զառակն 'ի շանէ • և այն ոչ եթէ անձինք ինչ են, այլ անուանք 'ի բանաստեղծից դնեալք • և բաջաղանք մոլորելոց մտաց դիւաց. Զի 'ի մարմնաւորէ աներևոյթ ինչ ոչ ելանէ • ոչ և ոչ յանէրևութէ 'ի մերէ մարմնաւոր : Ո՛չ երբէք 'ի մարդկանէ եղեալ պայն եթէ առ երես արարած իցէ • և ոչ 'ի կովուց ծովացուցն եղեալ եթէ 'ի ծովակս բնակիցէ • զի մարմնաւորք չէ հնար թէ 'ի ջուրս կեցցէ • որպէս և ոչ ջրականին թէ 'ի ցամաքի կեցցէ • և ոչ 'ի շանէ ինչ եղեալ եթէ ընդ աներևոյթ զօրուն ինչ կեցցէ : Իսկ յորժամ վիրաւոր ոք անկեալ 'ի պատերազմի դնիցի՝ թէ լիզիցէ և ողջացուցանիցէ զոր արալէզն կոչեն • այլ՝ ամենայն առասպելք են և պառաւանց դրդջիւնք • և մանաւանդ թէ 'ի դիւաց իսկ

մոլորութենէ :

Այլ վիճեալ ես պնդին յերացն վերայ • մինն ասէ , թէ 'ի մրում գեօղ՝ ծովացուլ զկով գործեաց , և զգոչիւնն հանապազ մեք լսեմք ամենեքեան • Եւ միւսն ասէ՝ զպայն

իսկ իմս աչօք տեսեալ եմ։ Ո՞ր թէ և զարա րիչն ես ո՛ք կարիցէ ասել, թէ և զայն ուրուք տեսեալ իցէ . և թէ յառաջին ժամանակին արալէզք լէզէին զ վերաձորս և ուղղացուցանէին, ա՛րդ՝ ընդէ՞ր ո՛չ լեզեն և ուղղացուցանեն . ո՞չ նոյն պատերազմունք են և նոյնպէս վերաձորք անկանին . և ո՛չ ոք լեզելով ուղղացուցանեն . այլ յայնժամ ասեն՝ դիւցազունք էին ։

( Ճառ . ԻԷ . )
Թէ չէին ծնեալ մարմնաւոր էին
ընդ հոգեւորք ։

ԵՒ ՄԻՒՍ ՋԳԻՏՑՆ ԻՍԿ ՊԱՀԱՆջեսցուք 'ինոցանէ . մարմնաւո՞րք էին արդեօք դիքն, թէ անմարմինք։ Եթէ մարմնաւորք էին, յա՛յտ է թէ մարդիկ էին . և զմարդկան զուրուձականս 'ի պաշտօն առեալ՝ դիս անուանէին ։ Ապա եթէ անմարմինք էին, չէր մարթ անմարմնոցն ընդ կա

նայս մարմնաւորս անուանեալ · զի թէ այնմ
հնար լինչ ոք էր , ոչ երբէք դադարէր սատա
նայ ի կանանց զաստուածայինս ծնուցանել ։
Եւ զի որ անմարմին ոք է՝ նա և անսերմն
է · վասն զի սերմն մարմնաւորաց է և ոչ ան
մարմնոց · Եւ առանց սերման 'ի կնոջէ ծնա
նել՝ միում և եթ մարթ եղև որ արարիչն է
բնութե մարմնոյ · Եւ որպէս կամեցաւ կարօղ
եղև 'ի կուսէ ծնանել առանց ամուսնութե ։
Աւստի ամ իմաստնոց արտաքնոց յիւրաքանչ
իւր զիւր տկարութի հայեցեալք , չիշխեցին
ասել՝ թէ 'ի կնոջէ ոք առանց ամուսնութե
ծնանի ։ Այլ և ոչ ոչ գոն ծնունդք դիւաց ,
նոյնպէս և ոչ մահ · թէպէտ և անմահ բնու
թեամբ Դիծուէն և եթ՝ որ մշտնջենաւորին է ,
և ոչ յուսմբք առեալ զսկիզբն լինելոյ · այլ
և սկզբնաւորացն և բանաւորաց պարգևեաց
անախանձ զանմահութն · զհրշտակաց և զդիւ
աց ասեմ և զոգւոց մարդկան · յորոց մրդկ
Դ՚անկլ յերկուց բնութեց են , 'ի մարմնաւ
որաց և յանմարմնոց · յերաւէի սերին ծննդ
եամբ և զայն յաճումն ամուսնութեամբ և
միաւորին ( մարմնովք և ոչ հոգւովք ) վասն

պատուիրանապահացուեն ։ Այլ հրեշտակք և դևք ոչ յաւելուած ծննդեամբ առնուն, և ոչ պակասութիւն մահուամբ ․ այլ ողջ հաստատեցան՝ նոյնպէս և նովին թուով կան առանց յաւելուածոյ և նուազութեան ։ Եւ ոչ այլ ինչ արարած գոյ՝ որ կարիցէ 'ի կերպարանս լինել․ որպէս զվիշապացն և զձիհանդացն ոմանք համբաւեն ․ այլ միայն հրեշտակք և դևք որք կարող են զօդս գնդել և պարզել ․ և այլ ազգի կերպարանս երևեցուցանել ։ Այլ և վիշապք ասեն և նհանգք կերպս 'ի կերպս լինին ․ յորոց մինն անձնաւոր է և միւսն ոչ անձնաւոր ։ Վիշապն որ մարմնաւոր է, զիւր կերպարանսն ոչ կարէ փոխել ․ զի եթէ հնար լինէր մարմնաւորաց զկերպարանս փոխել, նախ մարդ ( որ առաւել քան զնա է ) փոխէր զկերպարանս յինչ և կամէր ․ այլ որպէս մարդոյ ոչէ հնար փոխել 'ի կերպարանս յինչ յոր և կամիցի ․ նոյնպէս և ոչ վիշապին ։ Նա և ոչ նհանգ՝ ինչ անձնաւոր գոյ ․ բայց եթէ դև 'ի տեղւոջն բնակեալ իցէ, և մերթ կերպարանիցի, և մերթ խաղորդիցէ ։ Եւ ոչ վիշապք զտոհմականս ազգ-

եանց կրեն • և ո՛չ գրաստ զոյ ն՜ց եթէ զար
գելոյս 'ի կալոց յուրեք կրիցեն • և 'ի զ՛ուրէ
գալ՝ կայ՛ս առնել ումեք 'ի կալս և ոչ ա՛ռ ո՛չս ։
Զի վիշապն որ ինքն գրաստ է (այնու զի անա
սուն և անխօսուն է) բայց գրաստ վարիցէ, զի
վիշապի այլ ազգ ինչ ընդունելի չէ՝ եթէ ոչ օձի՝
այն յայտ իսկ է ։ Իսկ՛ զօձ յաղթանդամ, կամ
զգազան ինչ ծովածին, զոչէն գիրք վիշապ •
ո՛պ զմարդ յաղթանդամ հսկայ անուանեն •
նոյնպէս և զօձ ցամաքային անճոռնի • և զգա
զանն ծովական լեառնաձև • զկէտայն ասեմ
և զդելփինաց • զորս վիշապս անուանէ՝ ըստ այ
նմ, եթէ դու ջախջախեցեր զգլուխս վիշապացն
'ի վերայ ջուրց • և տուր կերակուր ժողովր
դոց եթովպացւոց ։ ‖ Սաղ • 43 • 13 ։ Տեսա
նե՞ս զի զձկունս մեծամեծս ծովածինս՝ վիշապս
կոչէն գիրք ։ Իսկ՛ յայտ անուի է թէ զձկանց
ասէ • այնու՝ եթէ տուր կերակուր ազգաց
եթովպացւոց ։ Ի՛ էպտ և աստ այլ 'ի սաղ
նայ առաքեցին զ վիշապն, ո՛պ և զայն զոր
յօբն գրեալ է ։ ‖ Յօբ 40 • 20 ։ Իսկ՛ այլ ինչ ոչ
են վիշապք՝ բայց կամ օձք մեծամեծք ցամաքայ
ինք • կամ ձկունք անարիք ծովականք • զորոց

ասէն թէ լեռնաբերձք և մեծամեծք են․ և
որս և կերակուր ՚նց մանր ձկունքն են․ ոմն և
օձից մեծամեծաց մանր ինչ ճճիք , կամ անա
սունք ։ Եւ՛ ոչ որս երբեք ոմն մարդկան արա
րեալ են վնասս , կամ առնեն․ և ՚ոչ տաճիրք
իբրև մարդկան են ՚նց ՚ի բնակութ․ և ոչ զոք
՚ի թագաւորազնեաց և ՚ի դիւցազանց ունին
կայելս առ իւրեանս կենդանի․ զի կենդանիք
՚ի մարմնաւորաց՝ երկու և եթ կան Ենօք և
Եղիա ։ Այլ որպէս զաղեքսանդրէ խաբէին
դեւք թէ կենդանի կայցէ․ որոց ըստ եգիպ
տական ծնարողութեանն կապեալ արկեալ
կախարդանօք զդև ՚ի չէշ․ կարծեցուցանէին
թէ՝ Աղեքսանդրոս կենդանի իցէ և մահ լինդ
րիցէ․ և զալուսան ՚Բ̃ի խայտառակեաց
զխաբէութիւն և եբարձ ՚ի միջոյ զգայթակ
ղութիւն ։ Նոյնպէս և մոլորութիւն դիւաց
խաբեաց զդիւցապաշտս Հայոց․ եթէ զոմն
արտաւազդ անուն արգելեալ իցէ դիւաց․ որ
ցայժմ կենդանի կայ՝ և նա ելանելոց է և ու
նելոց զաշխարհս , և ՚ի մնոտի յոյս կապեալ
կան անհաւատք ոմն և հրէայք , որք ՚ի զուր
յակնկալութի կապեալ կան՝ եթէ Դաւթ

գալոց է զԵրուսաղէմ շինել. և ժողովել զհր-
էայս. և անդ թագաւորել նմա նոցա: Եւ
այնպէս ջանայ սատանայ ոչ զամենայն ինչ 'ի
քարուք ակնկալութեանն վրիպեցուսցէ. և 'ի
սնոտի յոյս կապեսցէ: Մեծացուցանէ յաչս
մարդկան զվիշապս. զի յորժամ ահագինք ե-
րևեսցին ոմանց, առնուցուն զնա 'ի պաշտօն:
Կարծեցուցանէ թէ և նշանգք ինչ իցեն դե-
տոց. և շահապետք վայրաց. և յետ կար-
ծեցուցանելոյ՝ ինքն կերպարանի կամ 'ի վիշա-
պի կերպարանս, կամ 'ի նշանդ իմն և 'ի շա-
հապետի. զի այնու զմարդն յիւրն արարչէն
թիւրեսցէ: Զի եթէ էր ինչ նշանդն անձնաւ-
որ, ոչ երբեմն 'ի կնոջ կերպարանս երևէր.
և երբեմն փոկ լինէր և լուղորդաց ընդ սոս-
անկեալ հեղձուցանէր. այլ կամ կինն կին
կայր, կամ փոկն փոկ: Այնպէս և զոր շա-
հապետս վայրաց կոչեն. ոչ մերթ մարդ երև-
էր՝ և մերթ օձ. որով և զօձապաշտութեան
հնարեցաւ յաշխարհ մուծանել: Այնպէս և
վիշապն ոչ միանգամ օձաձև երևէր և միւս
անգամ մարդակերպ ոմ յառաջագոյն իսկ
ասացաք՝ թէ որ մարմնաւոր ինչ է, յոյժ

կերպարանս չ'կարէ փոխել: Այլ թէ 'ի կալս ջորեք և ուղտք երևեսցին, դիւաց կերպարանքն այնք և ոչ վիշապաց. Իսկ եթէ 'ի դաշտս երէ զ գազանք և ձիեսցին, և հեծեալք եւ րև զմարդկեղք զհետ երեկոց արշաւեսցեն. կեղծիք դիւացեն և ոչ ճշմարտութի ինչ իրաց: Իսկ եթէ 'ի գետս 'ի կանանց ինչ 'ի կերպարանս երևեսցին, սատանայի կերպարանքեն: Վասնզի նհանդ ինչ անձնաւոր չէք. և ոչ 'ի մարդ իբրև զգև մտանէ վիշապ. որպէս ոմանք 'ի շէկեղոյ դիւահարին կարծեցին. քանզի մարմնաւորի 'ի մարմնաւոր չէ հնար մտանել: Իսկ թէ բառնայցի 'ի վեր այնպիսի վիշապն, ոչ եթէ եզամբք ինչ անուանելովք, այլ ծածուկ զօրութե իւիք յոյ հրամանէ. զի մի շղթի այնպիսւոյն մարդոյ կամ անասնոյ մեղանչիցէ. որպէս որ բասիլիսկոսն կոչի ազգ ինչ օձից. որ հայելով միայն սատակէ զմարդ կամ զանասուն. ուստի յորժամ 'ի ծըր հորս գտանիցի ճրագ առեալ իջանեն 'ի նե րքս ըմբռնել, զի հայեցեալ ընդ ճրագըն ոչ մեղանչիցէ մարդոյն

օձն:

( Ճառ • ԻԶ ։ )

Յաղագս Թէ հրեշտակք պահապանք են
մարդկան • և թագաւորութեանց
նա և աշխարհին գիտաց ։

## ԱՅԼ ՄԻՒՔ ԸՍՏ ԳՐՈՑ ՍՐԲՈՑ

զ հրեշտակս արքանեակս գիտեմք յօգնականութի մարդկան • ազգաց և թագաւորութեանց • ըստ այնմ զոր ասեն, թէ կացոյց զսահմանս ազգաց ըստ թուոյ հրեշտակաց այ ։ ‖ Բ • Օրէն • 32 • 8 ։ Եւ դարձեալ այնու զոր ասէ Աստուածաբանն թէ՝ մի արհամարհիցէք զմի ՚ի փոքրկանցս, զի հրեշտակք նոցա հանապազ տեսանեն զերեսս հօր իմոյ որ յերկինս • ‖ Մատ • 18 • 10 ։ Այսպէս ի նո երկու ի նէ իւրաքանչիւր մարդոյ՝ հրեշտակ առանձինն պահապան կայցէ • թէպէտ և այլք զաղօթից կարծեցին ասացեալ ՚ի մէնէն • որպէս թէ աղօթք նց որ հանապազ մտանեն առաջի այ՝ կոչին հրեշտակք ։ Այլ և

առաքելոյն ասէ՝ ո՞չ ամենեքեան հոգիք հարկաւորք են առաքեալք 'ի սպասաւորութիւն ։ Վասն այնոցիկ որք ժառանգելոց են զփրկութիւն ։ Եբր․ 1․ 14 ։ Արք 'ի հարկի նմական, և փրկութեան սատարք մեզ լինին ։ Նաև թէ զսատանայէ ասեն գրգռիչ չարեաց և այլ արարածոցն, ընդէր մարթէ զերկրպագութիւ հեթանոսութեն․ և ոչ յինքն միայն կորզեաց․ զի բամբասեալ 'ի չարութեն սատանայ այն ամենեցուն յայտնի է ։ Որդ՝ եթէ ի՛ւրն միայն խնդրէր զպաշտօնն, վաղվաղակի խրտուցանէր զպաշտօնեայսն իւր․ այնու՝ զի չար և չարչարիչ կարծիցիւր նոցա․ այլ յօժարեցոյց զնեան՝ լուսաւորաց երկրպագանել․ և զայլս՝ օդոյ և հրոյ, երկրի և ջրոյ, և հասկից և փայտից և քարանց․ մինչև օձից և ղազանաց և ճճեաց անգամ, զի միայն զխաբանձն զոր 'ի մտի եդեալ էր գոռալոյ ընդ մարդոյն՝ կատարեսցէ ։ Իսկ արդ՝ մի՛ ինչ վարկեսցեն որ արարածոցն երկրպագանեն թէ՝ զսատանայի զկամս ոչ առնիցեն ։ Զի արարածոց պաշտօն մատուցանելոյ վարդապետ այլ ո՞ք չէր, բայց միայն սատանայ ։ Իսկ

արդ՝ զի՞ արդ կարիցեն նզովել զաստուածայ ,
որ զկամս նորա կատարեն ։ Զի եթէ որք զճշ
մարիտն Այ պաշտեն , և փառօք ինչ սնծի
ցին , բամբասին յԱծանէ քարոյ առոյ՝ եթէ
խոստովանին գիտել զԱծ , և գործովք իւր
եանց ուրացեալ են 'ի նմանէ ։ || Տիտ․ I․ 16 ։
Որ չար են առաւել նոցա առանց պա
տասխանատուութեան են , որոց առեալ զպաշ
տօն Ճշմարտին , անշնչոց և անմռնչից արա
րածոյն մատուցանեն ։

( Ճառ․ ԻԷ ։ )

Ցուցանէ յաղագս խնամատարութեան նոր
ծնելոյ․ ... ... ...
յաւիտենից Այ ։

ԲԱՅՑ ԹԷՊԷՏ ԵՒ ՊԷՍ ՊԷՍ
զինուք վառեցան թշնամին ճշմար
տութեան՝ յաղագս խնամողին կար
ծեցուցանելով թէ 'ի նմա ինչ միշտ առ ըն
թերցողաց կայր ո՛յ՝ ուսանի զօրազինեալ արարք ։
Իսկ քանզի 'ի լեթոյ անուն 'ի նոցա լեզուս՝

մի

մքրոյ մերձ է․ վա՜ այնորիկ դժարեացն սկիզըն անտի կարծեցին ։ Իսկ պարսից քէշին գտիչք առ 'ի տարակուսելոյ թէ ուստի՞ չարիքն լինիցին, ընդ նոյն արարչեան վրիպեալք 'ի ճշմարտութէ, զնոյն բաշխաղանս այլովք պատմութիւք կարկատեցին․ որպէս թէ 'ի միոջէ 'ի հօրէ երկու որդիք ծնան․ մինն՝ բարի և բարեաց արարիչ․ և միւսն չար՝ և չարեաց գործօղ․ 'ի նոյն խորամի անկեալ աղանդոցն՝ զոր թշնամին իբրև զորոմն 'ի մէջ ցորենոյ սերմանեաց ։ Զի կենաց երկս արմատս դը

նէին․ բարւոյ՝ արդարոյ, և չարի ։ Իսկ
այլքն երկուս, բարւոյ և չարի․
և ոմանք եօթն ։

Իսկ մեր՝ եկեղեցւոյ Սյ գործ այն է, զարտաքինսն՝ իբրօք ճշմարտութե առանց գրոց յանդիմանել․ և զկարծեցեալսն ներքինս՝ և ոչ ճշմարտեալս՝ գրովք սրբովք յանդիմանել ։ դժնեայն կարծիս որով յոյժքն մոլորեցան, բաւական համարեսցուք առաջնոց յանեցն յանդիմանութէ վճարել․ և ընդ պարսից քէշին գտօղս՝ պատերազմեալ 'ի շնորհս Այ մատիցուք 'ի պայքար ։

(Ճառ · ԻԸ ։)

Յաղագս պարսից [illegible] [illegible] ։

ՄԻՆՉ ՉԷՐ ԲՆԱՒ ԷՐ ԻՆՉ ԱՍԷՆ՝ ոչ երկինք և ոչ երկիր · և ոչ այլ ինչ արարածք որ յերկինս կամ յերկրի ։ Զրուան մի անուն էր · այսինքն արամազդ · որ թարգմանի բախտ կամ փառք · զհազար ամ աշտ արար ; զի զոհ կռոց · զի թերևս որդի մի լինիցի նմա որում անուն օրմիզդ · որ զերկինս և զերկիր և զամ որ ՚ի նոսա՝ առնիցէ · և յետ ռ. ամի աշտ առնելոյ , սկսաւ ածել զմտաւ՝ ասէ , օգուտ ինչ իցէ աշտս զոր առնեմ · և լինիցի ինձ որդի մի օրմիզդ · եթէ ՚ի զուր ինչ ջանայցեմ ։ Իսկ մինչ դեռ նա զայս խորհէր , օրմիզդ և արհմն յղացան յարգանդի մօր իւրեանց · օրմիզդն ՚ի յաշտին առնելոյ , այսինքն զոհելոյ · և արհմն ՚ի յերկուանալոյ անտի ։

Ապա իմացեալ զրուանայ ասէ, երկու որ
զիք են յորովայնի անդ, որ ՚ք ՚ի նոցանէ վաղ
առաջ հասցէ, զնա թագաւոր արարից • և
ծանուցեալ օրհնեալ զխորհուրդս հօրն՝ յայտ
նեաց արհմնին և ասէ, զրուան հայր մեր
խորհեցաւ եթէ՝ որ ՚ի մէնջ վաղ առաջ եր
թիցէ՝ զնա թագաւորեցուսցէ • և զայն լու
եալ արհմնին, ծակեաց զորովայնն և ել
եկաց առաջի հօրն : Իբրև տեսեալ զնա զրուա
նայ չգիտաց եթէ ո՞ որ իցէ, և հարցանէր՝
թէ ո՞վ ես դու • և նա ասէ, ես եմ որդին
քո • ասէ ցնա զրուան՝ իմ որդին անուշահոտ
և լուսաւոր է • և դու խաւարային և ժահ
դահոտ ես : Իբրև մինչ դեռ նոքա զայս ընդ
միմեանս խօսէին, ծնեալ օրմզդ ՚ի ժամու
իւրում լուսաւոր և անուշահոտ՝ եկն եկաց
առաջի զրուանայ • և տեսեալ զնա զրուա
նայ՝ գիտաց եթէ օրմզդ որդի նորա է • վասն
որոյ զոհս առնէր : Իբրև առեալ զբարսմունսն
( դաւթարան • ) զոր ՚ի ձեռին իւրում ունէր
( որովք զոհսն առնէր ) ետ ցօրմիզդ և ա
սէ, ցայժմ ես վասն քո զոհս առնէի • յայ
սմ հետէ դու վա՛ իմ առնիցես • և ՚ի տալ

զբռնամանայ զջարսմունսն ցօրմոյն՝ և յօրինէին զնա մատուցեալ արհմնին առաջի զբռնամանայ ասէ՝ ցնա, մի՛ այնպէս ուխտեցեր եթէ ։ մի՛ք յերկուց որդոցն իմոց յառաջ առնս հասցէ՝ զնա թագաւոր արարից ։ և զբռնամանայ առ ՚ի չ՚որեկոյ զուխտն՝ ասէ ցարհմնն ։ այ սուտ և չարագործ, տուեալ լինի քեզ թագաւորել ինն ՟Ռ ամի ։ Իսկ զօրմզդ ՚ի վերայ քո արքայ կացուցեալ ։ և յետ ինն ՟Ռ ամի օրմզդ թագաւորեսցէ ։ և զինչ և կամիցի առնել՝ արասցէ ։ Յայնժամ սկսան օրմզդ և արհմն առնել արարածս ։ Իսկ ա՛մ ինչ զոր օրմզդն առնէր՝ բարի էր և ուղիղ ։ և զոր ինչ արհ
մնն գործէր, չա՛ր էր և թիւր ։

( Հտ. ԻԹ ։ )

Վասն հերձուածողաց մանեայ ։ և ընդ մերձն որ
շուրջ հերձուածն ունէին ։

ԱՅՍՊԻՍԻ ԱՆՀԱՒԱՏ ԵՒ դանդաչանաց բանից ախմարաց մտաց

կարկատելոց , չէր պարտ ամենևիմք՝ նա և առնել պատասխանի ։ Զի բաւական էր իւրեանց իսկ անմտութիւն՝ յանդիմանել զնոսա անդստին ՚ի նոցին բանից որք ընդ միմեանս կռուին ․ և միմեանց հակառակ են ։ Բայց քանզի այսու իմն մեծարու երևին առաջ նորդք քեշին՝ իւրեանց հնազանդելոցն ․ և խնդրդ ընդ անձին արկեալ ձգեն զնա ՚ի խոր խորատ , հարկէ տալ պատասխանի ․ և ցուցանել թէ՝ ոչ ինչ առաւել քան զորմանի ( զոր ինքեանք քերթեցին ) ասեն ․ զի նա երկու արմատս բարեաց և չարի ասէ ․ և զայն ոչ յղութեբ և ծննդեամբ , այլ ինքնակացս միմեանց հակառակս ․ և նոքա զնոյն ասեն՝ սեն ջանօք զրուանս այն յղութեամբ և ծննդեամբ ։ Իսկ եթէ նոյն քեշէ երկոցունց , ընդէր ասցեն մոգք զդանդինս ․ եթէ ոչ զի փորուքզատ են ՚ի միմեանց՝ թէպէտ և կերպարանօք և ոչ ճշմարտութ․ այլ ՚ի քեշին մի են երկոքեան ․ նոքա երկար_մասնեանք ․ և սոքա նոյն պեսեք ։ Նոքա արևապաշտք և սոքա ծառայք արեգական ․ նոքա ամ անշէջոց շունչ կարծեն ․ և սոքա նոյն օրինակ զնոյն իմանան ։

Բա

Բայց զի մանի կամեցաւ վերադոյն քան զնո ցայն կեղծիւք վարս ցուցանել . թէ ամենեւին իսկ ազատ 'ի կարեաց ցանկութեանց իցէ . և ոչ քան զնոցայն միայն , այլ քան զամենայն քէ չեց . ուստի յանդիմանեալ յաղջկանց խելա ղատելոյ՝ մորթազերծ մահու ամբ պակասեցաւ 'ի կենաց : Որով յայտ է թէ՝ և վարուք և եթ մեկնեալ են 'ի միմեանց . զի նոքա կերպա րանօք են . և սոքա դեղովք . և յայտ յանդի ման անձնադիւրք , այլ կրօնիւք

նոյնք և նոյն պիսիք :

( Ծառ . Լ. : )

Առասպելաբանութիւն պարոնին Վառն չըրա նոյ . և ընծայումն Լէշտրոյ . ֆէշէյին ոճով մատերադարձեալ ար :



ՐԴ՝ ՄԵՐ ԹՌՉՆԱԼ ՁՆՈՍԱ

հարցցուք զսոսա : Զբռաւանն զոր յառաջ քան զամ ինչ ասեն , կա տարեալ ո՞ք էր , թէ անկատար : Եթէ ասիցեն

եթէ

եթէ կատարեալ էր․ լռիցեն եթէ՝ կատար
եալն յումմէ՞ կարօտանայր խնդրել զորդի,
որ դայցէ և զերկինս և զերկիր առնիցէ․ զի
եթէ կատարեալ էր՝ ինքն եւս կարող էր առ-
նել զերկինս և զերկիր։ Այլ եթէ անկատար
էր, յայտ է թէ՝ էր ոմն ՚ի վեր քան զնա,
որ զնորա թերակատարութիւն լնուլ կարէր․
և թէ էր ոք ՚ի վեր քան զնա, նմա պարտ
էր առնել զերկինս և զերկիր և զոմն որ ՚ի
նոսա՝ առ ՚ի ցուցանելոյ զեւր բարերարութիւն
և զօրութի․ և ոչ զբռնանայ որդի շնորհել
որ զերկինս և զերկիր և զոմն որ ՚ի նոսա առ-
նիցէ։ Այլ ասեն վասն փառաց առնէր ըզ-
յաշտն։ Հարցցուք․ փառքն յա՞յլ յումեքէ
աջողեալ էին նմա, թէ՝ վո՞ զի մշտնջենաւորն
էր՝ փառաւորիր։ Եթէ յայլ յումեքէ պար
գեւեալ էին նմա փառքն, հարկ է կարծել
թէ՝ էր ոմն ՚ի վեր քան զնա զօրագոյն և փա
ռաւորագոյն․ ուստի ՚ի նա փառքն հասին։
Այլ եթէ չէր ոք ՚ի վեր քան զնա, ՚ի
զուր էր գյաշտն հազար ամեան առնել․ զի
փառքն ոչ եթէ անձնաւոր ինչ էին, այլ ՚ի
յաջողութենէ ուրուք անուանին փառք․ ով

յանաջողութիւն ուրուք՝ անուանի Թշուառութ: Իսկ երկոքին 'ի դիւրաւածոց արդասիք են և ոչ յանձանց հաստատութիւք: Իսկ այլ ևս. զի եթէ արեգական և լուսին չև ևս էին լեալ՝ որով ժամքն և աւուրք և ամիսք և տարիք կարգին, հազար ամն ուստի՞ երևէր. զի չէին 'ի միջի լուսաւորքն որք զթիւ աւուրց և ամսոց և տարեաց կարգէին. այլ յայտ է թէ՝ անմտութեամբ լինին բաջաղանքն:

Պարձեալ. թէ երկինք և երկիր և որ 'ի նոսայն չէին. ուր առնէր զ'աշտն. կամ իւ. յորժամ երկիր չէր և ոչ տունկք ինչ որ 'ի նմանէ, զքարսմունս ուստի՞ գտանէր ունել 'ի ձեռին. կամ ընաւ զի՞նչ իսկ յարէր. զի անասունք ևս չէին արարեալ: Իսկ որ քան զամ անմտագոյն է. զհազար ամ ասէն յաշտ առար, և յետ ոչ ամին յերկուացաւ. ասէ, թէ լինիցի՞ ինձ որդի օրմզդ. և եթէ չ'լինիցի և 'ի զուր ինչ վաստակիցիմ: Իսկ այնու ցուցանէ թէ տկար էր զրուանն և կարօտ և առանց գիտութեան: Իսկ պատճառք չարեացն նոյն է և ոչ արհմն: Զի եթէ նորա

չէր յերկրորդեցեալ ( որպէս ասենն ) արդեօք ոչ
լինէր զոր չարեացն արարիչ համբաւեն · այլ
ինքն երկմտեաց որ անհնարին է և լի անկար
գութեամբ ։ Զի ոչ երբէք 'ի միջի աղբերց
երկու բղխմունք եղանեն · մինն քաղցր և մի
ուսն դառն · և ոչ 'ի միջի ծառոյ երկու
պտուղք մինն անոյշ և մինն դաժան ։ Որդ՝
եթէ քաղցր գիտեն զաղբերանն , ոչ պարտին
զդառն պտուղն դարձն 'ի նմանէ համարել ·
և եթէ դառն համարին , չէ պատճառ ըղ
քաղցր պտուղն զօրմոդ 'ի նմանէ լինել · Իբր
'ի դէպ եղանէ նոցա ԺԹ ծախման բարբառն որ
ասէ , կամ արարէք զծառն քաղցր և զպ
տուղ նորա քաղցր · և կամ արարէք զծառն
դառն և զպտուղ նորա դառն · զի 'ի ծառոյ
անտի պտուղն լինի ճանաչի ‖ Մտթ · Է · ԺԷ · ԺԹ ·
Իբր թէ արարածք յիւրաքանչիւր յօրինուա
ծըս կան , և երբէք զհամեմատ եղելոց նոցա
ոչ անցանեն , որ չափ և ս առաւել զբուանն՝
եթէ մշտնջենաւոր ոք էր՝ և արարածս առ
նելոյ նմարս խնդէր , եթէ անձամբ և թէ
այլով՝ և թէ որդւոյն ում ասենն , պարտ էր
կարգ լինել ցուցանել և ոչ անկարգութիւն ։

Զի

Զի ոչ երբեք տեսաք թէ կովք դէշս ծնան․ և էշք զեզինս․ և ոչ գայլք զմաքիս․ և ոչ մաքիք զաղուէսս․ և ոչ առիւծք զձիս․ և ոչ ձիք զօձս․ բայց միայն մի ինչ ծնունդ է՝ զոր մարդիկ հնարեցան․ արտաքոյ կարգաց բնութեան՝ ծնուցանել ՚ի ձիոց և յիշոց ջորիս․ և նոյնք անսերմ և անծնունդ են․ զի ոչ յայլ կարգեցան այլ ՚ի մարդկային հնարողութէ ։ Արդ՝ զրուցանն եթէ արջառ էր, զկարիճն զարհմն զի մարդ ծնանէր․ և եթէ զայլ էր, զղառն զօրմզդ հէրմ ծնանէր․ ոչ ապաքէն մարդկան մտաց բաջաղանք են ։ Զի և զրուցն թէ մարդ լեալ է այր մի քաջ՝ առ տիտա նօքն․ և այլ սովոր են յոյնք․ և արիք և այլ ազգք հեթանոսաց՝ զքաջս առ դիւցազունս ունել, հայեցեալ ընդ այն քէշակարկատին պարոյից․ թէ որով հետև մարդիկ յաղթար հիս զնա առ մեծս ունէին, եւ զերկնից իսկ և զերկրի և զամենայն արարածոց արարչութին ՚ի նմանէ կարծեցուցին․ և զի ճշմարիտ է բանս՝ յայտ առնել է, զի մարդկօրէն բարուք զէշին կարկատէ և յղութեամբ և ծննդեամբ զկրօնսն կցկցէ ։ Զի նախ երկուց արարչաց

զբարւոյ և զչարի ( 'ի միոջէ հօրէ ) զծնունդսըն համբաւէ. և ապա մայրենի և քուրական առանձինօք զարարած լուսաճորացն մուծանէ ։ Ո՞չ զայն ոչ վ՟ն այլ իրէք, այլ վ՟ն մարմնասիրութեան և ախորժական ցանկութ՟ն ։ Քանզի հայեցեալ յազգն արիական թէ իղձասէր էր, ըստ նմին նորին մեղկ բարուցն նմա օրէնս կցկցեաց. զի յորժամ զա՟ծոցն իւրեանց լսիցեն թէ՝ յանարժան խառնակութիւն մտաբերեցին, և նոքա նոցին նմանեալ՝ զնոյն անառակութիւն անխտիր գործեսցեն ։ Յորմէ Ա՟ծականն հեռի՝ որ 'ի վեր է. զի Ն՟յ որդի ունել ոչ ամուսնութե՟ վայելէ, այլ մշտնջենաւորութե՟ որպէս մտաց զբան. և աղբեր՝ զգետ. և հրոյ՝ զջերմութի. և արեգական՝ զլուսաճորութի ։ Ո՞չ ոչ ո՞ք նոքայն ծուլին թէ՝ կարօտեալ էր զի որդի մի ծնիցի նմա որում անուննն իցէ օրմզդ ։ Ո՞վ մորոսութի. չէ ուրեք որդի 'ի միջի, և նա չյղացեալ այն և չծնեալ այն անուն դնէր ։ Ամենայն ծննդոց յետ ծննդեանն դնէին անուանս. և նա զի որդյառաջ քան զծնանելն դնէր նմա անուն՝ որ միզդ. բայց թէ հաճատայր թէ՝ և սրդար և

լինէր նմա որդի ․ և եթէ հաճատայր՝ ընդ
էր երկմտեաց և եղև երկմտութեն պատճառ
ծննդեան արհմենի ․ ուստի չարիքն յաշխարհ
մտին ։ Զինչ այն են զարմանք՝ զի մինն 'ի հա-
զար ամեայ յաշտն առնելոյ հազիւ լինէր ․
և միւսն 'յառաժամայն յերկմտութէ անտի ։

Դարձեալ որ զայն գիտաց եթէ երկու որ
դիք էին յորովայնի անդ՝ զայն ընդէ՞ր ոչ
ծանեաւ թէ՝ մինն բարի և միւսն չար ․ և
թէ գիտաց և ոչ եղծ զչարն , ինքն է պատճառ
չարին ․ ապա եթէ զայն ո՛չ գիտաց , զի՞ արդ-
լիցէ հաճատալ եթէ զմիւսն ծանեաւ ․ և ե-
թէ յայնժամ ոչ իմացաւ՝ յորժամ խաւարոյն
և ժանդահոտ ետես զնա , և յայնժամ արդ-
եօք ո՞չ գիտաց ։ Այլ եթէ գիտաց՝ և ետես՝
և արար զխաւարին թագաւոր , ինքն է
պատճառ չարեացն , այսու՝ զի ոչ եղծ զչա-
րն ․ այլ և ս զթագաւորութիւն ետ նմա ինն
ռ̃ ամեայ ։ Զինչ ում թագաւորեցոյց զնա , եթէ
է ոչ բարւոք արարածոյն եղելոց յօրմզդայ ․
առ 'ի չարչարելոյ զնոսա ․ խառնելով 'ի նոսա
զեւր չար արարածս ։ Այլ և զօրմզդ ասեն
թագաւորեցոյց 'ի վ̃ռ̃ ․ Եթէ թագաւոր

՚նորա իցէ Որմզդն , զի մարդ զբարեօք արարած-
ոցն իւր տայցէ չարչարել ։ Եթէ Հայրն յոր-
դւոյն արարածս ոչ խնայեաց՝ այնու զի ՚ի ձե-
ռս չարին մատնեաց․ որդին զիւրսն զի մարդ-
ոյ զմտայցէ ։ Առ տկարութե՞ն ինչ՝ թէ առ
չարակամութեն , Եթէ առ տկարութեն զմեղ-
կիցէ , ապա ոչ այժմ թագաւորեալէ ՚նմա ,
և ոչ ՚ի վախճանի ( որպէս ասենն ) յաղթել
կարէ ։ Իսկ եթէ առ չարակամութեն իցէ ,
գտանի՝ զի ոչ միայն Հայրն որ թագաւորե
ցոյց զչարն՝ է պարտական չարեաց, այլ և որ
դին որ կամակից եղև Հօրն և Համարձակիչ
չարին ։ Դարձեալ՝ զի զթագաւորութին որ
գոյն եա․ միում զինն ո՛ ամեան , և միւսումն
զանապատականն․ ինքն յորժամ կարգի կացցէ ։
Զի մինչ չէրն ինչ՝ չէր ևմիք թագաւոր՝ քան
զի և ոչ արարիչ իւիք էր․ և յորժամ որդիքն
եղեն , ՚նոքա եղեն արարիչք․ ոմն բարեաց և
ոմն չարեաց․ և ՚նոքին թագաւորք․ ոմն ժա
մանակեն և ոմն յաւիտենականն ։ Եւ մնաց զը-
րուանն դատարկ յարարչութե և ՚ի թագա
ւորութե ։ Զի արարիչ չէ , քանզի չէ իւր
արարեալ․ և թագաւոր չեղև , քանզի ո՛յր

արարածոց լինէր Թագաւոր ։ Իսկ յայտէ թէ՝
ոչ երբեք էր զրուանն, և ոչ է ։ Զի որէ ոք,
կամ արարիչ է, կամ արարած ։ Արդ՝ սա
քանզի ոչ արարիչ է, և ոչ արարած․ ուրեմն
ոչ երբեք էր նա ամ․ և ոչէ՝ և ոչ լինի ։ Այլ
երբև զրուանն ասեն՝ զայն ՚ի մտի խորհեցաւ
թէ՝ ո ոք յորդւոցն իմոց վաղ առ ես հասցէ՝
զնա Թագաւոր արարից, գիտաց օրմզդ՝ և
զխորհուրդն յայտնեաց արհմնենին ։ Ետ զհօրն
խորհուրդ ծանեաւ օրմզդ՝ զերզօրն դէա
բաձնի զխորհուրդն ընդէր ոչ գիտաց՝ թէ
ծակէ զօրովայնն և ելանէ՝ և յառաջ երթայ
առնու զԹագաւորութիւն ․ որ լինելոց էր առ
եղբօրանէ նմա՝ և արարածոցն իւրոց ․ որ նախ
յառաջնումն խնկյետս հարեալ փոտթարիցէ
զնա, և ապա զինն ՌՌ ամն զերդ և ապաշաւ
լինիցին առ ՚ի դարձ հայելոյ յետ յուզէղ
արարածոն՝ զոր աղաւաղեալ կամակորիցէր ։
Իսկ կամ զրուանն որ զերկուց որդւոց զայր
դաւթին գիտաց յորովայնի կնոջն, յորժամ
եկեալ առաջի կայր արհմն՝ ընդէր ոչ ծան
եաւ զնա ։ Կարծեալ որ զիւր որդին օրմզդ
անուշահոտ և լուսաւոր անդէն յորովայնին

գիտէր, զմիւս որդին թէ՝ ժանդահոտ և խառ-
նարային իցէ՝ ի՞բր ոչ գիտաց։ Ո՛չ ապաքէն
յայտ է. եթէ՝ ոչ իբրև հաւատալիք պատմին
՚ի նոցանէ, այլ առասպելք կարկատունք։
Եւ միւսն ևս որ քան զամենայն անհաւատա-
գոյնն է, զի մինն ՚ի ճ. ամեայ յաշտն առնելոյ
հաղբե լինէր, և միւսն առ ժամայն յերկրա-
նալոյ անտի։ Եւ եթէ ՚ի յերկրու ամուսնոյ անտի
եղև արհմն որդի, ոչ պարտէր զնա իւր որ-
դի կոչել. զի եթէ իւր որդի էր՝ նմին նման
դոյր և նոյնպիսի. կամ թէ բարի էր՝ բարի.
կամ թէ չար էր՝ չար. մի՞ թէ և նոյնպէս
հայրն զրուան՝ և բարի էր արդեօք և չար.
և ՚ի բարւոք երակէն նը բարւոք որդին եղև,
և ՚ի չար մայրէն նը չարն։ Եւ թէ այնպէս
ինչ ոչ էր, ապա և ոչ նա զչարն իւր որդի
կոչէր, և ոչ թագաւորութի տայր նմա։
ԱՅԼ թէ ինքն բարի էր՝ զչարն եղծանէր և
բարւոյն տայր զթագաւորութին. որով ինքն
քաջ անուն լինէր և զբարի որդին իւր զօրացու-
ցանէր միշտ սրտառուչ։ ՆԱՅԼ յայամ ամէ
յայտ է եթէ՝ ոչ երբէք լեալ է զրուանա հայր
ամծոց, և ոչ տուիչ թագաւորութեանց։

Պարծեալ ասէր զհարստութեան զոր 'ի ձեռին ունէր ց՚որդին իւր ց՚օրմզդ ետ. Եւ ասէ՝ ցայժմ ես վասն քոյ յաշտ առնէի. յայսմ հետէ դու վասն իմ առնիցես։

Արդ եթէ նա վասն նորա յաշտ առնէր զի որդի լինիցի նմա, իսկ օրմզդ վասն նորա յո՞ր սակս առնէր. մի՞ թէ կասկած ինչ յուստեքէ էր նմա, եւ այնր աղագաւ պատուէր էր նմա վասն իւր յաշտ առնել։ Ապա թէ յորմէ զորդին խնդրեաց թէ դուցէ ընդ որդոյն տալոյ՝ զնա բաժին առնուցու։ Եթէ այն ինչ 'ի մտի էր նորա, բարսմունքն ինչ ոչ կարէին օգնել. Եւ 'ի տալ զհարստութիւնն՝ չասաց նմա թէ դու ինձ յաշտ առնիցես. զի ցուցցէ՝ թէ էր ումն որում նա վասն որդոյն յաշտ առնէր, եւ որդոյն պատուիրեաց վասն իւր նմին յաշտն առնել։

( Ճառ . ԼԱ : )

Համառօտութիւնըն ցուցանէ . թէ շրջուանն
ոչ ինչէ , և թէ էր ինչ այս պատուերան
առնէր . ուրեմն ինչն ոչ
էր ած :

ԵՒ ԵԹԷ ԷՐ ՈՔ 'Ի ԴԵՐ ՔԱՆ զնա և քան զորդին ( որում զվաշտօն առնէին ) զնա պարտ էին խմանալ պատճառ խրատուց և արարիչ ամենեցուն . և ոչ զ զրուանն պատճառ օրմզդի և արհմնի . և զնո արարիչ չարեաց և բարեաց : Կամ թէ՝ քան զրուանայ որդի արարիչ տայր որ 'ի վեր քան զ զրուանն էր , ինքն իսկ նորա վե չկարէր զզինս և զ ձր և զմ ինչ որ 'ինն առնել ( որպէս յառաջագոյն ասացաք ) և զնոր զօրութին և բարերարութին նց ցուցանել : Կամ թէ յորդոյն յիւրմէ արհմնայ կասկած ինչ էր նմա և վասն այնորիկ զքարոմունսն յօրմզդ տայր , զի նոքօք յաշտ արարեալ վերադունին՝ անկասկած լինիցի . Նպաքն

պա՛րտ էր ումեք 'ի միջի լինել որում զպաշտօն առնէր ։ Իսկ թէ էր ոք 'ի միջի որում օրէն էր յաշտօն առնել, ապա զըռօ՛ամն չէր մշտըն ջենաւոր, այլ յումեքէ՛ եղեալ ։ Իսկ պարտ է խնդրել՝ յումմէ՛ նոյն եղև ։ և ո՛ 'ի վերը՝ որում ինքն զպաշտօն առնէր՝ և ո՛վ այն՝ որում որդոյն հրամայեաց վ՛՛ իւր յաշտ առնել ։ Զի ո՛չ է մարթ ումեք զսկիզբն առնուլ լինելոյ՝ եթէ ո՛չ յայլմէ առնուցու զլինելն ։ և Ա՝Յ միայն կարօղ է առնել յոչնչէ ինչ ոմ՞ և կամի ։ Իսկ արդ՝ ո՛վ իցէ որ զ զըռօ՛ամն արար, եթէ ոչ ա՛ծ, որում և զպաշտօն առնէր ։ որ և որդի այնպիսի եւ նմա, զի զեր կինս և զերկիր՝ և որ 'ինոսա, առնիցէ ։ Իսկ այն իսկ են զարմանք ։ զի ինքն ո՛չ արար՝ և որդոյն զըռօ՛ամնայ կարօղուլ եւ զառնելն ։ Այլ չէր ոք 'ի միջի ասեն որում զըռօ՛ամն զպաշտօն առնէր ։ և թէ այնպէս իցէ, և

ոչ զըռօ՛ամն իսկ էր 'ի միջի ։ և

մեծի ծաղու արժանի է ։ զի

չէրն՝ չէին, վասն

չէին յաշտ առ-

նէր ։

( Ճառ. ԼԲ. )

Աստուածաբանութեան պարունակեց. Եւ Զրուան
եր չափ բաղդեց, զոր
ընծայեց ։

ԱՅԼ ԹԷ ԵՒ ԲԱԽՏ ԵՒՍ ԷՐ ոմ՛ ասենն զրուան՝ ապաքէն ու րուք բախտ էր. և ո՛վ էր արդեօք այր բախտներ. զի բախտ անձնաւոր ինչ չէ. այլ դիպուած յաջողութեան. որպէս յարդարութեան արդարն կոչի. և ՚ի քաջութեան՝ քաջն ։ Նոյնպէս և ՚ի փառաւորութեան անուն՝ բախտաւոր. Արդ՝ եթէ բախտ էր զրուանն ; չէր ինչ անձնաւոր ։ Աստի յայտ է թէ բնաւ իսկ ոչ էր զրուանն ։ Իսկ եթէ ոմ ասեն ՚ի յերկուանալոյ անուն յղացած արհին, յառաջնումն իսկ պարտեր նմա յերկուանալ ( զի եթող անդէն չար լինել նմա որդի ) և ոչ ո՛ ամ տառապել և յաշտ առնել զի որդի ծնցի. թէ և եղև նմա թէ չար և թէ բարի ;

զչարութիւն յիւրոց բարուց եւս. և ոչ 'ի
ծննդենէ անտի ։ Վասնզի չէր մարթ 'ի միում
արգանդի զչարեացն գործունեայ և զբարեա
ցըն արարիչ ընդունել ։ Զի եթէ չար էր ,
չարին և եթ պարտ էր ասպնջական լինել . և
եթէ բարի էր՝ բարւոյն ։ Վասնզի բարին և
չար 'ի միում տեղի անկանել . ոչ մարթ էին .
որպէս զի ոչ գայլք և գառինք 'ի միոջէ յար
գանդէ՝ ծնանին . զորոց զբարւոյն կողմն յորմոր
դէ զնեն , զարջառաց և զոչխարաց և զայլոց
պիտանացուաց . և զչարին կողմն յարհմն այն .
զգայլոց և զգազանաց և զճճեաց վնասակարաց ։
Իսկ զայն ոչ գիտեն , թէ ո՞վ վնասակարացն
ընդ անվնասակարսն չմարթի բնակել , նոյն
պէս և ոչ բարւոյն ընդ չարին մարթ էր 'ի մի
ում արգանդի յղանալ ։ Զի զոր օրինակ չէ
մարթ զհուր և զջուր 'ի մի վայր առնել
թէ՝ գուցէ յոլովեալ կողմն ապականիչ լինե
բին հուրում լինիցի . նոյնպէս և ոչ բարւոյն ընդ
չարի 'ի մի վայր մտանել հնարէր . ապա եթէ
ոչ՝ կամ նա զսա ապականէր՝ կամ սա զնա ։
Արդ՝ եթէ 'ի սերմանէ լիցին որդիքն , չմարթ
էր միումն երկուս սերմանս հակառակ մի

մեանց արկանել. Նա և ոչ 'ի միում յարգանդ
դի երկուս սերմանս այլ և այլս ընդունել.
զի թէպէտ և բազում արք 'ի մի կին մերձե
նայցեն, այլ ոչ եթէ ամենեցուն սերմանքն
կուռեցին. քանզի առաջին անկեալ սերմն՝
զայլսն իբրև վանելորդս 'ի բաց թքանէ. և
զիա՞րդ էր՝ զի այն արգանդ երկուս սերմանս
միմեանց թշնամիս ընդունել: Ո՞չ դարձեալ
ընդէ՞ր ոչ յաղթեաց յառաջածին ծնունդն և
եղև արգել երկուորեկան ծննդեանն, այլ իջին
միմեանց թշնամիքն. հաշտութե՛ խաղաղին
'ի միում արգանդի առնէին: Նա և հայրն
եթէ երկուս որդիս գիտէր յորովայնին, ըղ-
մինն բարի և զմիւսն՝ չար, ոչ խառնիխուռն
պարտ էր խոստանալ զթագաւորութին. այլ
այնմ միայն՝ վասն որոյ զհաշտան առնէր:
Բայց ապաքէն և օրհնգն մինչ չև ծնեալ էր,
թերակատար էր. և զիա՞րդ թերակատարն ըղ-
խորհուրդն հայրենի իմացաւ. զի որ զխոր-
հուրդս ուրուք ճանաչել կարէ, նա 'ի վեր է
քան զնա. որ Այ միայն է և ոչ մարդոյ,
Աստի օրհնգ վերագոյն է քան զհայրն. և
հզօր և իմաստուն. զի մինչդեռ յորովայնի էր

զխորհուրդ հօրն գիտաց․ և ելեալ յօրովայ
նէ անտի՝ կարօղ եղև զերկինս և զերկիր
առնել՝ զոր հայրն ոչ կարաց առնել։ Ի՞նչ
արդ որ այն չափ հզօր՝ և իմաստունն էր քան
զհայրն, զտանի վատթարագոյն․ զի ՚ի վատ
թարէն խաբեցաւ․ այնու, զի զխորհուրդ
հօրն յայտնեաց նմա՝ ընդ որում անհաշտ

Թշնամութի պարտէր ունել և
ոչ բարեկամութի։

Պարծեալ՝ թէ ծակել ևս պարտ ինչ էր
զորովայնն և ելանել, նմա պարտ էր որ
զխորհուրդ հօրն իմացաւ․ զի թող ինքն նախ
երթայր և առնոյր զթագաւորութեն և ոչ
արհամենայ՝ որ ոչ զխորհուրդ հօրն գիտէր՝ և
ոչ զթագաւորութին ինչ նմա անգէր։ Նայց
թէ ծակեաց զորովայնն, թերևս և սպան
իսկ զմայրն․ զոր պարտ էր խնդրել․ թէ՛ ար
դար և արդեօք մայր գո՞յր նոցա թէ ոչ։
Այլուստի՞ յայտ իցէ թէ մայր գոյր․ մանա
ւանդ զի աւելն իսկ թէ՝ մինչև էր ինչ ընաւ՝
ոչ երկինք և ոչ երկիր՝ զրուա՛ն միայն էր․
որ մ․ծի ծաղու արժանիէ, եթէ ինքն հայր
իցէ և թէ ինքն մայր․ և նոյն սերմն արկու

և նոյն սերմն ընկալ ․ և որ ես վատթարա
գոյն է , իբրև ծակեաց ասեն արհամն զորո
վայնն և եկն եկաց առաջի հօրն , ոչ ծանեաւ
զնա հայրն ։ Որ՛դ՝ զի՞ որդ ո՛չ ճանաչէր , զի
ոք ուրեք չէր մի՛նչ ինքն միայնէր ․ ոչ ապա
քէն յայտնէր թէ՝ որ առ այն եկն , մի ո՛ք յոր
դոց նորա էր ․ և դտանի վատթարագոյն ես
քան զվատթարն , զի նա զնա ծանեաւ , և
սա զնա ոչ ծանեաւ ․ և յուրաստ էր յորդոյ
անտի՝ եթէ իմ որդին անուշահոտ և լուսա
հորէ , և դու խաւարայինն և ժանդահոտ ես ։
Ուստի զի՞ արդ ոչ էր նր որդի , որ ընդ բարւոք
որդոյն նորա 'ի նմին յարդանդի յղացեալէր ․
և զնմանէ յուրաստ էր , թէ չես դու իմ որ
դի՝ և զմիւսմէն խոստովանի՝ թէ որդի իմ է ։
Ուստի եթէ իբրև 'ի չարէ յուրաստ էր , ապա
և յղութեն զնա չէր պարտ արժանի առնել ․
այլ անդէն իբրև 'ի չարէ խորշել և սատա
կել ․ և ոչ միայն զնա , այլ և զօրմզդ որ
զխորհուրդսն 'ի վեր եհան ։ Այլ և միւսն
ես անպիտանագոյն է զոր ասենն ․ թէ և ըզ
բարսմունսն ետ նմա առնել վ՞ իւր յաշտ ․
իւր ո՛չ եթէ յորմզդի՝ կամ 'ի յաղէմն էր զօ

բութին, այլ 'ի գաւազանն ։ Զի եթէ լին
քըն հաւատարիմ էր լսելն լինելոյ, ապա աւե
լորդ լինէր զգաւազանն 'ի ձեռին ունել. և
եթէ ինքն չէր արժանի, և ոչ գաւազանքն
բաւական էին արժանի առնել յաղելոյ զնար
ժամն ։ Զի զբարսմունս ունել և յաշտ առ
նել, մարդկան գործ է և ոչ այ ։ Իսկ եթէ
նա ած էր, և կարողէր զերկինս և զերկիր
առնել, զի՞նչ պիտոյէր նմա բարսմունս ու
նել և յաշտ առնել զի զհայրն 'ի կասկածա
նացն ազբեցուսցէ ։ Զերկինս և զերկիր կա
րողէր առնել առանց բարսմանցն, զհայրն
զի՞ որդ ոչ կարէր անհոգ առնել առանց գա
ւազանացն ։ Այլ արդ՝ յայտ եղև թէ՝ և
հայրն անմիտ և տկար և յայլ ապաստան էր.
և որդին նոյնպէս տկար և անմիտ. զի ոչ նա՛
զորդին առանց յաշտ առնելոյ կարաց ծնա
նել, և ոչ որդին առանց զգաւազանն 'ի
ձեռն առնլոյ՝ կարաց զնա ազատ առնել
'ի կասկածանաց ։ Եւ և ընկանայ եւս չարին
երկոքին պատճառք եղեն չարչարելոյ զքար
հոգ արարածս բարւոյն ։ Զի օրմզդ (ասեն)
որ ինչ բարի էր զայն առնէր. և արս արդա

ըլս և բարեգործս • և արհամն զչար արա-
րածս և զդևս :

( Ճառ • ԼԳ : )

Պտուղն ոչ չորէ ըստ Բնութեան •
այլ ըստ Բարոյ :

ԵՒ ԱՐԴ՝ ԵԹԷ ԴԻՆԻ քըն չարի արարածք և չարքէին բնութեամբ , և ոչ մի՛ ոք ՚ի նոցանէ բարի լինել երբէք իմանալ կարէր • նա և ոչ արժանի իսկ գոլոյին : Բայց արդ տեսանեմք զմիոյն զարեգականն • որ կարի փայլունն իսկ է ՚ի մէջ արարածոց ամ սանն • և այնմ արժանի եղև հնարագիւտ լինելոյ • Որ իբրև ետես սանն , թէ արարածս գեղեցիկս արար որմզդ ; և լոյս չգիտաց առնել • խորհեցաւ՝ ընդ դևս և ասէ : Զինչ օգուտ է որմզդի , զի այնպիսի գեղեցիկ արարածս արար՝ և ՚ի խաւարի կան • զի լոյս ոչ գիտաց առնել : Արդ եթէ իմաստուն էր որմզդ • ընդ մօրն

մտանէր՝ և արեգակն որդի լինէր նմա . և ընդ-
քեռն անկանէր՝ և լուսին ծնանէր ։ Իբր պա-
տուէր տայր զի մի ոք զխորհուրդն 'ի վեր
հանիցէ ։ Զայն լուեալ մահմեա՝ դիւի , վաղ-
վաղակի առ օրմզդ հասանէր , և զխորհուր-
դն նմա 'ի վեր հանէր ։ Ո՜վ անմտութի և
անհամ մորոսութի . Եր զերկնից և զերկրի
և զա՜մ որ 'ի նս՟ զհանդամանսն առնելոյ կա-
րաց գտանել . զպակասէիկ ինչ զհայթայթա-
նացն հնարս ոչ մարթ էր իմանալ ։ Իբր այնու
ոչ միայն զօրմզդ անմիտ առնեն , այլ և զար-
համն բարի , և բարի արարածոցն հնարա-
գիւտ ։ Որպէս և զմիւս ևս զբան ասեն . Թէ
արհամն ասաց . ոչ եթէ չկարեմ առնել բարի
ինչ , այլ չկամիմ . և առ 'ի հաստատուն
զբանն առնելոյ , արար զսիրամարգ . Տեսա-
նես՝ զի կամօք է չար և ոչ 'ի ծնէ ։ Արդ
զ՞ինչ պայծառագոյն քան զլոյս կայցէ . ո-
րում արհամն հնարագիւտ եղև . կամ զ՞ինչ
գեղեցկագոյն քան զՍիրամարգ՝ զոր առ 'ի
ցուցանելոյ զգեղեցկագործութիւն , արար ։
Իբր այսու յայտ է . զի թէ չար ոք էր բնութ՟
արհամն , ոչ հնարագիւտ լուսոյ լինէր , և

ոչ արգելիչ գեղեցկութեան ։ Այլ և եթէ դևք բնութեամբ չարք էին, չէր հնար մահմէային հանգամանաց լուսոյն առնելոյ՝ դուշակ լինել. որում ցայժմ պաշտօնեայք այնր քէշի՝ երիցս յամին զոհս մատուցանեն ։ Աստի յանդիմանեալ կշտամբէին, թէ և նոքա դիւապաշտք են ։ Եթէ դևքն ոչ չարք 'ի բնէ՝ այլ կամօք ։ Եթէ ինքեանք դիւի զոհս մատուցանեն, որո՞վ երեսօք զդիւապաշտսն հալածիցեն. տեսանես զի՞մ ինչ որ 'ի նոցանէ ասի՝, առասպելքն և սնոտի պատմութիւնք ։

Դարձեալ նոքին որք զլուսաւորացն արարած այսպիսի պատճառանաց դնեն, շրջեալ զայս բանս՝ այլ իմն պատճառ լինելոյ արևուն մուծանեն ։ Արհամն ասեն զօրմզդ 'ի ճաշ կոչեաց. և եկեալ օրմզդի չկամիցաւ զճաշն ուտել՝ եթէ ոչ նախ որդիքն նոցա կռուեցեն. և 'ի խնթկել որդոցն արհամնի զորդին օրմզդի. 'ի խնդիր եղեն դատաւորի և ոչ գտին. ապա առեալ արարին զարեգակն զի լիցի նոցա դատաւոր ։ Ընդ հնարագիւտ լինելոյ արեգակն՝ ասեն զարհամն. և սաստ յայտնի

խակ գնեն արարչակից լուսոյ ։ Իսկ թէ այլ-
ոք ոչ գոյր դատաւոր , առ հայրն չկարէին
երթալ. կամ առ այն որում հայրն և որդին
յաշտ առնէին ըստ առասպելին ։ Իսկ արդ-
զի մարդ լցեն թշնամիք միմեանց. օրմզդն և
արհամն. որք 'ի միում յարգանդէ գոյացեալն
և 'ի միմեանց ճաշ երթային. և իւրեանց գոր-
ծակցութե զարեգակն առնեղծեալ դատաւոր
կացուցանէին ։ Արդ զմին՝ զրադաշտ ումն՝
զեղխագործութե գնէ. եթէ 'ի մայրենի և
'ի քեռական առակմանց արեգակն և լուսին
արարան՝ զի ընդ յայն հայեցեալ ազգին՝ 'ի նոյն
պղծութիս անխտիր լինիցին. և զմիւսն մի-
զամօթն ծածկելոյ համբաւէ թէ վասն դա-
տաւորութեն արարին ։ Իսկ քանզի ընդ գրովք
չէին կրօնքն , երբեմն զայն ասեն՝ և այնու-
խաբեն. և երբեմն զայս , և սովին պատրեն
զտխմարս ։ Բայց եթէ ածէր որմզդն՝ յոչէն
չէ կարողէր առնել զլուսաւորսն զերկինս
և զերկիր և ոչ 'ի ժանդագործութե , կամ
առ 'ի չգոյէ դատաւորի ։

Դարձեալ միւս ևս խմ ասեն որ ամենև-
ին առասպելէ. թէ իբրև մռանէր օր

մրգդ յարհմնայ զսերմն իւր յաղբիւր մի եարկ թէ մօտ ՚ի վախճանի՝ յայն սերմանէ կոյս մի ծնանելոց է . և ՚ի նմանէ որդի եղեալ՝ հարկանէ զբազում ՚ի զօրացն արհամնի ։ Իսկ երկու ևս նոյնպիսիք նոյնգունակ եղեալք , հարկանեն զնորա զօրսն և սպառեն ։ Վասն այնորիկ յանդիմանեն . զի ջուրն սերման ոչ պահէ է այլ կորուսիչ ։ Իսկ ապա մուսոյն կշ-տամբքն , քան աղբերն զսերմն կենդանի տայր պահել , զինքն ընդէ՞ր ոչ զօրեաց պահել կենդանի ։ Այլ այնպիսւոյ բարւոյ այ որդի՝ ՚ի չարէն որդւոյ սատակեցաւ ։ Իսկ յայտ է թէ որք յանկածութեն յաղթեցին բարւոյն և որդւոյ նորա , և ՚ի վախճանի նոքին բռնանալոցեն ։ Որոց այն չափ անչափ

զօրս համարեն ։

Պարծեալ եթէ ածք նոցա մահկանացուք իցեն , ինքեանք յարութե ակն զի մրդ-ունիցին , և մանաւանդ երեք մատեանն յարութե . զոր չէ պարտ յարութի համարել . այլ չյարութի ։ Բայց թէ արդարև ած ասենն . թէ որդին մեռաւ , և յօրմզդէ և ՚ի մուսմէ որդւոյն նորա ՚ի խորաշէտէ . չէր

օրէն թերահաւատ լինել՝ թէ չմեռանիցին · որով հետեւ որ միանգամ ամուսնաւորաց եւ մանկանացուաց աղբէ տոհմ ա՟ծոց նոցա ։ Իսկ զայնպիսի ա՟ծս՝ ոչ առ ա՟ծս պարտ է ունել, այլ առ չա՟ծս ։ Զի որ ճշմարիտ ա՟ծն է, զա՟մ ինչ իւր մշտնջենաւորութի՟ւ ունի · ո՟չ զէութիւնն, նոյնպէս եւ զկատարեալ կենդանութիւնն · եւ զորդին միշտ ընդ իւր ունել առանց իրիք պատճառանաց եւ միջնորդութե՟ ։ Իսկ զարարչութիւն ոչ 'ի հայթայթանաց, այլ 'ի կամակար՝ կարողութե՟ · եւ ոչ զոք ունի իւր հակառակ թէ ինքն բարեաց արարիչ իցէ եւ միւսն չարեաց · ո՟չ նոքա որմզդի զչարի աբարածս դնեն, եւ արհմենի զչարսն ։ Զոր ոչ կարեն ցուցանել թէ հաւաստեաւ հայեցին, չար ինչ արարած որ 'ի բնէ չար իցէ · ոչ զարհմն եւ ոչ զդեւս զոր նմա արարածս դնեն ։ Որպէս բազում անգամ յոգնագոյն օրինակօք ոչ մոռացուք յառաջին ճառումն յայտ առնել ։ Այլ թէ արհմն չար՝ կարծիցի ն՟ց վասն զխարամանի անուանն յանձին կրելոյ առ 'ի յարեւելս զարեգակնա տենչիկան արկանելոյ · ուստի եւ զանուանն իսկ զխարամանոյ կառ ։

Որպէս և սատանայն անուն․ ոչ բնութեն ինչ անուն, այլ բարուց․ որ ՚ի բարութեն ՚ի բարի կոչի․ և ՚ի չարութեն չար․ և այն ոչ եթէ բնածին բարք են, այլ եկամուտք ։ Ի՞նչ յայտ անտի է․ զի բազում անգամ զչա րում անզգամս տեսանեմք զզօնացեալս․ և ըզ զգօնսն անզգամացեալս․ զլկտիս զգաստացեալս․ և զզգաստս լկտեացեալս ։ Ի՞նչ այլն որ ՚ի բանաւորաց կողմա նէ անտի է ։

☼☼☼☼☼☼☼☼☼☼☼☼☼☼☼☼☼☼☼☼☼☼☼

( Ճառ․ ԼԴ ։ )

Թէ բանականաց և անբանից Դէ տարբերէ ։

ԶԱԵՒԱՆ ԲԱՆԱՒՈ րացն անասնոցն՝ վասն այլ և այլ բարուցն ոչ երկուս արարիչս պարտ է իմանալ, որպէս նոքայն առ տխմարութեն կարծեցին թէ օրմզդն՝ զանասունս զչորքոտանիս․ և զթռչունս․ և զձկունս․ և զամ ինչ որ բարի և գեղեցիկ՝ արար։ Ի՞նչ արհամն՝

զդազանս չարս. և զթռչունս պիղծս՝ և զսո
ղունս՝ և զօձս և զկարիճս. և զամ՟ վնասա-
կար ճճիս: Եթէ երկինք և երկիր և օդք և
ջուրք որմզդի արարածք իցեն, զի՞ արդ վնա
սակարքն արարեալք արհմենի 'ի նորա երկիր
բնակիցեն. և զնոյն օդս ծծիցեն. և նովին
կերակրովք որք յերկրէ են՝ բուծանիցին. և
'ի նոյն ջուրս պիղծ ճճիքն ընդ մ̃ծ ձկունսն
սնանիցին. և 'ի նոյն օդն գիշակեր թռչունն
քլին ընդ ազնուագոյն թռչունսն շրջայցեն:
Զորս պարտ էր որմզդի (բարւոք արարչին)
սատակել և ոչ սնուցանել: Քանզի նորա էր
երկիր և ջուր. և օդ: Եւ թէ գազանք վ̃
վնասակարութ̃են 'ի չարէ ումեքէ արարչէ կար
ծիցին, զմարդիկք առաւել արժան է 'ի չարէ
արարչէ իմանալ և ոչ զն̃ա. զի սոքա աւելի
վնասակար են գազանացն քան թէ գազանքն
սոցա: Զի սոքա ելեալք 'ի քաղաքաց և 'ի
գիւղից հետամուտք լինին կոտորելոյ զգա
զանսն. և նոքա սրացեալք 'ի լերինս և յախա
փայս ճեպելն անկանել փախստականք: Որոց
կխոցն և մորիքն արտաքոյ ընտանութեան
մարդկան են: Նոյնպէս և սողնոցն զկոշիւն

միայն զմարդոյն առնալը , է որ 'ի ծակս , է որ 'ի սորս . է որ ընդ փապարս երկրի մտեալ ղօղեն : Իսկ եթէ 'ի կարի ներքնոյ գնա մարդկան մեղանչիցեն , և այնմ մարդիկ են պատճառ և ոչ նոքա : Նման որոյ՝ ոչ 'ի չարէ ումեք է պարտէ զգազանսն և զճճիս իմանալ , այլ 'ի միոջէ բարւոյ արարչէ , զկեան 'ի պէտս և զկեան 'ի զարդ . և զկեան զարհուրեցուցիչս վ՛ն զտարապարտ հպարտութ՛ մարդոյն ցածուցանելոյ :

Պարծեալ 'ի նոցա իմաստակարութիւն հայեցեալ միմեանց չմեղանչել . զի թէ զինչ այն իմաստակարութիւն որ ոչ խորհրդով լինի՝ առել պարտ իցէ , որ չափ ևս առաւել զմարդկան մեղանչականութիւն որ խորհրդով և ներգործութբ լինիցի : Նա և չքոտեօքն զկծեցուցանէ զմեզ . ոմն լուիս և ճանճիճ և մժխով . և զռեխով և մնով և մկամբ . և այլովք նոյնպիսեօք որք չինչինքն են , և զմեզ աշխատ կարեն առնել : Զի է 'ի նչէ որ զմեզ աշխատ առնէ . և է ինչ որ միրուն իմաստակար լինի որպէս և մուկն՝ և ցեց՝ և որդն . և որ ինչ նոցա նմանօղ իցէ . և նոքօք ցածուցեալ նրս

տուցանէ զմիտս մեր։ Զի յորժամ գիտիցեմք․
թէ և փոքունքն կարողեն մեզ վնասակար լի-
նել, իջցուք 'ի տարապարտ հպարտութե
չունել զանձինս առ մեծարգիս։ Պարծեալ
և զկնամն ևս այ զմտաւ ածել․ թէ ուր փո-
քունքն կարեն մեղանչել մեզ․ զի՞ արդ կար-
էաք ապրել թէ ընդ սողունս և ընդ գազանս
բնակակիցս արարեալ էր զմեզ։ Այլ և յայն
ևս հայել պարտիմք․ թէ որ չափ անասունս
վ̅ մերոյ պիտոյից ընդ մե՛օք հնազանդեցոյց
զձիս, և զուղտս․ զկովս, զարջառ և զոչ-
խար։ Իսկ 'ի լերանց՝ և 'ի դաշտաց զայծե-
մունս և զեղջերուս․ և զվարազս․ որոց
կէսքն կրելիք են՝ և կէսքն ուտելիք։ Իսկ զայն
ևս գիտել ետ մեզ, թէ որոց՝ նա կամի՝ յաղ-
թական կարեմք լինել․ և որոց ոչ կամի,
չկարեմք յաղթել․ ոչ միայն յարգահորացն,
այլ և որք չնչինք են։ Զի՞նչ վատթարագոյն
քան զլուն և զմուկն կայցէ․ և զայնս ոչ սպա-
նել կարեմք․ և ոչ յաշխարհէ մերժել։ Իսկ
զայլսն ևս որք 'ի ջուրս են, և 'ի մեր պէտս
ոչ հարկաւորք բայց միայն զի զկծեցուցա-
նիցէ․ զի յորժամ տեսանիցեմք թէ չեմք բաւա-

կան զնոսա սպառել , ծանիցուք զանձանց մե
րոց զտկարութիւն և լիցուք ՚ի գուր հայր
տուէ . և նմա միայնոյ տացուք զյաղթութիւն,
որ չէ չընովքն զմեզ աշխատ առնէ . և զմե
ծամեծամն հնազանդէ մեզ . զորօրինակ զփիղս
զուղտս՝ զառիւծս՝ զինձս , և զայլազգս :
Զորոց զկէսն ՚ի կրելս՝ և զկէսն ՚ի զօ
սանս ընտելացուցեալ համբու
րեցուցանէ :

( Ծառ . ԼԷ : )
Յէ՛ պատմութեան Բառլէէ որ չար
արեգծառ յոյյ :

ՁՈՒԿ ԱՅԼՔ ԱՅԼ ԱԶԳ ԿԱՐ
ծեցին զպատանայն , թէ մեծ խեղ
զնա չար արար : Որդ՝ եթէ ծ
զնա չար արարեալ էր , ընդ էր հալածէ եկեղե
ցի զդևս . ոչ եթէ վրէժ խնդրելը չարեաց
հատուցանել դևք , այլ վասն առնէ եկե
ղեցի այնոցիկ որք նորօք խրատեցին և հա

կառակ կամացն այ կայ · զի նա ՚ի խրատ ա-
ռնու զնոսա , և սա հալածէ ։ Բայց զի զհա-
լածեալն ոչ յանձնէ ինչ ունի , այլ յայ ·
յայտ անտի է , եթէ ոչ նախ փչեաց տէրն յեր-
կոտասանան հոգի · և ետ իշխանութիւն եօթա-
նասնիցն՝ ոչ կարէին հանել զդևս ։ Նա և
ինքն խաղ · Եթէ խրատիչ գիտէր զնոսա՝ ոչ
սաստէր ՚ի նա , և ոչ աշակերտացն իւրոց
հալածել հրամայէր՝ որոց և հրաման տուեալ
էր մտանել ՚ի մօրգիկ ։ Իսկ զի ասիցէ ·
զի հրեշտակք եղբ լսեն զանուն այ՝ ուրախ
լինին · և դևք ոչ երբէք · այլ առաւել եղբ
լսեն քատմնին ։ Իսկ եթէ կարծիցէ յանցանաց
էին դևք , ոչ երբէք զմօրգիկ ՚ի կռապաշտ-
ութեան յօժարեցուցանէին , և ոչ ՚ի պէսպէս
աղանդս փիլիսոփայից և հերձուածողաց ·
ոչ ՚ի բաշխս բախտից և ոչ ճակատագրոց · և
ոչ կապելոց հրամանաց · ոչ ընդ աստեղս պղ-
շուցանել եթէ նոքա ինչ իցեն պատճառք բախ-
տաւորութեան · և թշուառութեան ։ Իսկ զի
դիւաց դիւտէ կռապաշտութիւն , վկայէ դաւ-
իթ , եթէ ամենայն ածք հեթանոսաց դևք են ·
‖ Սաղ ։ 95 · 5 ։ Իսկ երանելին Պօղոս ասէ

թէ

թէ զի՞նչ հաղորդութիւն կայ քո ընդ բելիա
րայ . || 2 . Կոր . 6 . 15 : Իբր աշակերտնիկ ո՞չ
աւելին հաղորդութիւն կայ նոցա ընդ միմեանս :
Զի եթէ վասն զի չար արար զնա ա͞ծ , զի
չարչարեցէ , չէ՞ օրէն զնա չար կոչել՝ այլ վե
րէժ խնդրել . զի չար յայնժամ էր՝ թէ զհրամա
նըն ոչ կատարէր : Բայց ընդէ՞ր ոչ նա՝ այլ
հրեշտակ ա͞յ էհար զանդրանիկսն եգիպտա
ցւոց . || Ելից . 12 . 29 : Իբր բազում անգամ
զհրէայսն յանապատի անդ : Զի եթէ նա
յայն եղեալ էր զործ ընդէ՞ր ոչ նա հարկանէր
այլ հրեշտակ : Իբր յաւուրս դաւթի . հ ռ .
է հար յերկոտասան ցեղիցն իսրայէլի . || 2 . Թագ
24 . 15 : Իբր ՚ի բանակէ ասորեստանոյն
ճ հ ե ռ զօրս էհար հրեշտակին ա͞յ՝ և ոչ դեւք
|| Եսայ . 37 . 36 : Ընդէ՞ր և յաւուրս յեսո
վայ որդւոյ յովսեդեկեայ հրեշտակին ասէր
ցբանսարկուն որ կայր նմա հակառակ . թէ
սաստեսցէ ՚ի քեզ՝ տէր՝ սատանայ : || Զաքա .
3 . 2 : Ընդէ՞ր և որդիք սատանայի կոչին հր
էայքն ՚ի վ͞ռ զօրինօքն յանցանելոյ , եթէ նա
կայցէ ՚ի հրամանին զոր էառ . և նոքա ան
ցին զպատուիրանաւն : Իբր ընաւ խել սուտ՝

ընդէ՞ր կռուեցի որ արդարն կայցէ 'ի կարգին. զի ոչ 'ի նմանէ է չարութիւն, այլ յայնմանէ որ զնա այնպիսի արար: Իսկ զմի՞ առաքեցի 'ի խաւար արտաքին. Այլ ասեն, հանգիստ է նմա խաւարն. սակայն աճանիլ ոչ դայն հայցէր լեռնեան գիճաց, այլ թէ տանջանք պատրաստեալքն նմա. զի՞ կայմէր և քո ասէ որդի ամ. զի՞ եկիր այսր յառաջ քան զժամանակն տանջել ամզ: Մատթ. 8. 29: Իսկ զի զկատթարութիւն նորա յայտ առնիցէ՝ ասէ, ոչ ոք կարէ առնուլ զզօրծիս հզօրին, եթէ ոչ նախ զհզօրն կապիցէ: Որդ. ընդէ՞ր կապէր զնա, եթէ ոչ զի գիտէր թէ կամօք չարանայ. և յորժամ կամի կարօղ է զգօնանալ: Եթէ 'ի նոյն 'ի չարչարել եդեալ էր զնա, ընդէ՞ր բամբասէր չարին անուամբ. որ զէր նուլն նոյն գունակ որպիսի եղեն՝ պահէր. Նա և ոչ պատժոց արժանի էր վասն ստուգելոյ զբնութիւն: Մանզի և ոչ զհուր ոք պատժէ՝ եթէ ընդէ՞ր այրես. և ոչ զջուր թէ ընդէ՞ր հեղձուցանես. և միանգամայն և հրամանաց և հարցուածք սո
վին մտօք լուծանին:

( Ճառ. ԼԶ: )

Մահն 'ի վեր հրամանաւ վճռոյ. և
ոչ յառաջ ժամանակեան
իւր:

ՐԱՐԱՆԱՅ Ի ԱՍԻՆ ՄԻԹՄ

նելքն մարդիկք թէ առանց հրամանաց:

Նախ պարտիմք գիտել. թէ զինչ հրամանքն իցեն, և ուստի՞ բան հրամանացն ընդ աշխարհ տարածեալ իցէ. Հրաման կապեալ վասն մահուան յիմաստութ գիրս ոչ ուրեք գտանեմք. քանզի տէրն մահու և կենաց, և կարճել իշխէ զհրամանն իւր՝ և երկայնել. որպէս առ ջրհեղեղաւն ասէ, թէ եղիցին աւուրք կենաց մարդկան այսուհետև. ճ և ի. ամ. և վասն բազմութ անօրէնութ նոցա պակասեցոյց 'ի նոցանէ զքսանն: Իբր որպէս առ Ադամաւն ասէ. յաւուր յորում ուտես 'ի պտղոյ ծառոյն, 'ի նմին մեռանիս: Ծն. Բ. 17: Իբր վասն իւրոյ բարերարութեանն, և վասն որդեծնութեան և մարդկան յաշխարհս սերելոյ,

ներ

ներեաց նմա լինել Ջ եւ Լ ամ ||Ծննդ․ 5․ 5 զի
գեղեցիկ ստեղծուածն իւր հաճոյէր ըմբռնելի ։
Ըստ մն արտասուացն եզեկիայ արքայի յա
ւելաւ նմա հնգետասան ամ ։ ||․ Դ․ Թագ․
20․6 ։ Ըստ մն ապաշխարութե նինուէացւոցն
ոչ կորոյս զքաղաքն յաւուրն երրորդի ըստ
գուշակութե մարգարէին իւրոյ ։
||Յովն․ 3․ 10 ։

( Ճառ․ ԼԷ ։ )

Զաստուածպաշտից առաջնորդելոց վասն
կենաց եւ նահատակաց էջ
Ճառք ։

ԻՈՉ ՈՐԴԻՍ ՔՕԴԻԱՅՔՆ ԱՄ

տեղանշմարք , որք եւ գծննդոց պատ
ճառս եւ զմահուանց , յատտեղաց՝ իբրեւ
՚ի կենդանեաց գնեն ։ Որպէս թէ յորժամ
ծնանիցին , անդէն եւ մահք ՚ի վր իւրաքանչ
իւր ուրուք՝ անվրէպ սահմանիցին ․ եւ ըստ
այնմ ոչ յառաջել ումեք մեռանել հնար իցէ ,
եւ ոչ յամենալ ։ Այլ յանդիմանեն զնոսա եւ
պատերազմացն դէպք , զի ՚ի միում աւուր

բնութք բնութոց մարդկան կատարին այլ և այլ ով-
օք · կէսք մատաղօրեայք , և կէսք երկայ-
աւուրք · և այլք 'ի կատարեալ հասակի ծեր-
ութեան · որոց ծնունդքն 'ի միում ժամա-
նակին՝ և մահքն 'ի միասին եղանին ։ Իսկ դարձ-
եալ · թէ աստեղք էին պատճառք ծննդոց ,
ընդէ՞ր 'ի ծննդեանս ոչ եք երբեք սխալանս ծնօ՞ղ
և ոչ յայլ աշխարհս այնպիսի ինչ սովորակ ·
մի՞թէ յանդր միայն ոչ էհաս աստղն սխալա-
կարար · և ոչ յայլ յաշխարհս աստղն սո-
գործ ։ Իբր տատանմունքն ծննդեանն ուստի՞ լինին
այն չափ սխալակ ։

( Յառ · ԼԸ ։ )
Բաշխէ և յաճախորդութիւնն աստեղացն
ոչ են պատճառ ։

ԱՐՁԻ ԱՆ ԲԱԽՏԱՒՈՐՈՒ-
թեց և թշուառութեց զաստեղս
դնեն պատճառս · ով թէ աստ-
ղունք ինչ լինին , և բաղ դիպելոյ պատճա-

ուածորաց աստուածոյն յաստուածութեան ,
նոյնպէսեւ եւ ծնունդք լինիցին ։ Մինչ դեռ
առիւծն ասեն յաստուածութեան իցէ . եւ ծնա
նիցի որ , թագաւոր լինելոցէ . եւ մինչ դեռ
եզն է՝ եւ ծնանիցի որ , հզօր եւ բարեհաշան՝ լի
նելոցէ ։ Իսկ մինչ դեռ խոյն՝ եւ ծնանիցի որ ,
մեծատուն լինելոց է ։ Իսկ որպէս զնա թա՛
եւ ասուեղէն ։ Իսկ յորժամ կարիճն է՝ եւ
ծնանիցի որ , չար եւ մեղանչական լինելոց է ։
Իսկ այլքն եւս այլոց ազգի ազգի իրաց պատ
ճառք լինին ։ Որպէս թէ յորժամ կրոսն
յաստեղատունն մտանիցէ , թագաւոր մեռա
նի . ոչ եղեւն խիլ երկիցս . որպէս ասենն սո
թեղոգոսին կայսերք . եւ քաղդեայքն պնդեալ
էին թէ մեռանի թագաւորն , եւ նա ոչ մե
ռաւ . զի յամօթ լիցի ստամտոծաստ արուես
տագիտութեան ։ Արդ՝ նախ զայն ասասցեն .
ո եհան զայնպիսի երկրական անուանս զիշա
կեր եւ զաստղաբաշխս յերկինս . ոչ զի պատճառք
ծննդեան մարդկան լինիցին . զի որ ոք ուրուք
պատճառ ծննդեան կարիցէ լինել , նա՛ ի վեր
քան զնա որոյ պատճառն է՝ պարտի լինել
իմաստութեամբ ։ Արդ՝ հասարակաց մտօք հայ

եցեալ տեսցուք . ո՞ 'ի վեր իցէ . մա՞րդըն որ անասնոյն տիրէ՛, թէ անասունն՝ որ մարդոյն 'ի հարկի կայ . և ոչ միայն 'ի հարկի կայ՝ այլ և կերակուր նորա է ։ Եւ զգազանացն կեան փախըստականս եղեալս տեսանեմք . և զկեան յանտառախիտ մայրիս ամրացեալս , յորժամ զբարբառս միայն մարդոյն լսիցեն ։ Քանզի զա՛հ և զերկիւղ մարդոյն արկեալ է արարչին 'ի վերայ գազանաց , սողնոց , անասնոց , և թռչնոց ։ Եւ վասն առաւել զնա պատուելոյ , զնոյն զարարածն՝ նորանշան իմն ընծայեցուցանէ . թէ ստեղծ՝ ոչ ձեռօք . և փչեաց շունչ կենդանի ոչ թէ բերանով . և այնու զի առաւել պատուական ցուցանիցէ զնա , յայտ առնէ ։ Այլ զի ած 'ի յօգտակար մարմնոց 'ի վեր է , այն յայտնի է ճշմարտից ։ Եւ եթէ վասն նորա եղեն գազանքն և անասունքն . ոչ և փոքր իրացն իսկ ցուցանէ , զի մարդ . 'ի յերկինս ելանելոյն և մարդկան ծննդեան պատճառք լինելոյն՝ որք այն չափ հեռի են 'ի կենդանութենէ , որ չափ ճրագ մի որ 'ի մարդկանէ կազմեալ իցէ լուսատու լինել տան 'ի գիշերի ։ Եւ չկենդանիքն զի մարդ կարիցեն կեն

դամնեացն պատմառ ծննդեան լինել ։ Նաև թէ չէին կենդանիք ասեն՝ և ոչ գնա՛յունք էին ․ բայց զի գնան՝ յայտ է թէ կենդանիք են ։ Արդ լուծիցեն ․ Եթէ ամ ինչ որ գնայուն է՝ կենդանի իցէ , ապա և ջուրք որք գնան՝ կենդանիք համարեսցին ․ և կրակ վս՛ շարժելոյն կենդանի կարծեսցի ․ և օդք և հողմք վասն շնչելոյ՝ կենդանիք համարեսցին ( և տունկք և խոտոց բոյսք ( որք թէպէտ յամբարձնացք են , սակայն աճելովն ) երևին թէ՝ գնայունք են ) և արդ որպէս ոչ ամ գնայուն կենդանութի մտաւոր և բանաւոր ունի , նոյնպէս և ոչ արեգակն և լուսին և աստեղք ․ և ոչ երկինք իսկ , ընդ որում նոքա շրջին՝ կենդանութի ինչ մտաւոր և բանաւոր ունին ։ Նաև երկինք և երկիր անօթք ետեղականք են հաստատեալք յարարչէն ունել անմիտ ընդ ինքեամբք զամ որ 'ի մէջ նցէ ․ և լուսաւորքըն իբրև ճրագունք լուցեալք՝ վս զխաւարին 'ի միջոյ մեծի տանս փարատելոյ ։ Իսկ են հարկաւորք՝ բնակաւորք հրամանաւ արարչին խաբեանց 'ի վայելս ամ կենդանեաց ․ և խաբեանց ինքեանք չէն ․ քանզի ոչ գիտեն եթէ

լինեն և թէ չլինեն ․ որպէս երկինք և երկիր ․ ջուրք ․ փայտք և քարինք՝ են վ․ որոց եղենն ․ և խորհրդանց ինքեանք չէին ։ Քանզի ոչ գիտեն եթէ լինեն , և թէ չլինեն ․ այնու՝ զի չեն մտաւորք և բանաւորք ։

Դարձեալ ոչ ասեմք , թէ յորժամ առիւծն լիցէ յաստեղատունն , թագաւոր ծնանելոցէ ․ թէ այնպէս էր , բազում անգամ բազում թագաւորք պարտ էին ծնանել ․ զի ոչ մի միայն ծնանի յորժամ առիւծն աստեղատունն լիցէ , այլ բազումք ։ Եւ եթէ արդարև առիւծն էր պատճառ ծննդեան թագաւորաց , ապա ոչ թագաւորի որդի թագաւոր լինէր , այլ որք ուրուք և դիպէր ծնունդն մտանելոյ առիւծոյն յաստեղատունն ։ Իսկ եթէ տեսանեմք թէ թագաւորի որդի՝ թագաւոր լինի , ո՞չ դաւթայ որդի սողոմոն ՚ի հօրն աթոռ նստաւ , և նորա որդին ՚ի նորին աթոռ , և միըստմիոջէ կարգ թագաւորացն յուդայ ձգեցաւ մինչև ց՚մա կարգ այնցին ։ Նոյնպէս և ասորեստանեայցն և բաբելացւոցն՝ որդի ՚ի հօրէ՝ առնուին կար դաւ զթագաւորութիւն ։ Որպէս և ՚ի սասա

Նոյն ումեմնէ՝ սասանականքն որդէ 'ի Հօրէ՝ կարգած առին մինչև ցայսօր զԹագաւորութիւն սասանականացն ։ Իբր չգտած առնուծըյ յերկրին մնալ յաստեղատունն · զի զԹագաւորութիւնն յայլ այդ ուրեք կարասցէ փոխել յերկրէն արեւելից ։

( Ճառ · ԼԹ ։ )

Եթէ տարեշրջք ոչ են պատճառ մի ծնունդեան և աշխարհու թեան ։

ԵՒ ՅԱՅՏՆԻ ԹԷ ՈՐԴԻՍ ԹԱԳԱւորութեան չէ աստղն պատճառ · նոյնպէս և ոչ զօրութեան , և ոչ մեծատուն առնելոյ ։ Մանաւանդ իսկ զի տեսանեմք զմեծատունս աղքատացեալս և զաղքատըս մեծացեալս ։ Ապ թէ զայն ևս կարիցեն ասել թէ մի և նոյն աստղ մեծութեան և աղքատութեան կարէ պատճառ լինել · և զօրութեան

և տկարուէ ։ Բանզի և զհզօրս երբեք եր
բեք տկարացեալս տեսանեմք և զտկարսն
զօրացեալս ․ և զմեծս չարացեալս ․ և զչաքսն
զգօնացեալս ։ Իսկ ո՞ւր լիցի այն զոր ասենն ․
եթէ որ ինչ 'ի ճակատագրին գրեալ է Հրա
մանացն , այնմ չէ հնար վրիպել ․ այլ որ փա
ռաւորն գրեցաւ՝ փառաւոր է ․ և որ չքա
ւորն՝ չքաւոր ․ և ուր Հրամանքն լիցին և յաւե
լի Հրամանքն , ըստ այնմ և մեծանին և վրի
պել չէ հնար 'ի սաՀմանելոյ Հրամանէն ։
Ո՞ Հրաման տկար և անզօր սաՀման , զոր և
գողքն և աւազակքն կարեն խախտել յոր
ժամ 'ի վերայ Հասեալ զոմն յընչից և յարևէ
զրկիցեն ։ Իսկ եթէ 'ի սաՀմանելոյ ինչ Հրա
մանէ նոքքն գործիցեն , չէ պարտ՝ ոչ թագա
ւորաց զմաՀու Հրամանն տալ , և ոչ դատա
ւորաց քերել և սպանանել զմարդասպանն ,
որք զպատուՀասն 'ի վճիռ ածելով , յայտ առ
նեն թէ՝ ոչ ըստ սաՀմանելոյ ինչ Հրամանացն
եղանին մեղքն մեղանչականացն , այլ 'ի բըռ
նութէ չարագործութեն ։ Իսկ կամ յորժամ
Հէին յաշխարՀ արշաւէ լիցի աւերածս առ
նել և կոտորել զմարդիկ , մի՞ զօրս ժողովես

ցեն , և մի՛ գունդս առ գունդ՝ կազմեսցեն հանելոյ զհէնն յաշխարհէ , այլ խրախուսատասցեն թէ՝ հրամանք են աշխարհին ՚ի հինէ կոտորել · մեք լուեալ դառնայցեմք ընդ դէմ հրամանացն ։ Այլ գումարելով զզօրսն և հանելով զթշնամին յաշխարհէ , ցուցանեն եթէ ոչ ըստ սահմանելոյ ինչ հրամանին կոտորածքըն գործիցեն , այլ ՚ի բռնաւորութէ հինին ,
որ եկեալ ծլատութբ կոտորէ զաշխարհ
և մերկացուցան յընչից
և յստացուածոց ։

( Ճառ · Խ ։ )

Ա՛յ [illegible] և ընդէ՞ր ոչ [illegible] ։

ԲԱՅՑ ԶԱՅՆ ԻՒՍԳԻՏԻՒՂ պարտ է , թէ զմ̃ ինչ իմաստ որք ՚ի իմաստակարաց գործիցին , յառաջագոյն դիտել ած ։ Ապա եթէ փիտէ սուն զիմաստ որք գալոց են ՚ի մէջ մարդկան , ընդէր

ոչ արգելու ։ Բայց եթէ զոր չափ վնաս արգելու ած 'ի մարդկանէ՝ այն ոչ ամցուն յայտնի է · այլ նմա միայն որ զամենեցունց ըզ խնամս ըստ իւրաքանչիւր պիտոյից բաշխէ ։

Կարծէ երբեք և զ վնաս վնասակարացն, զի մի՛ այնպէս երևեսցի՝ թէ չկարիցէ արգելուլ զվնասն ։

Վարձեալ թուլացուցանէ և վնասակարին յագեցուցանել զկամս իւր վնասուք ընկերին, զի մի՛ թուեսցի ընդ հարկաւ վարել զգանաւորսն · այլ զի իւրաքանչիւր զործոցն անձին՝ իւր հանդէպ երևեսցին ։ Իբր կանխաւ գիտէ զամ, և կանխագիտութիւն ոչէ պատճառ չարեաց ։ Զանզի և ոչ յորժամ տեսանիցէ ոք զումեք իւր ընդ լպիրծ տեղիս գնացեալ՝ և ասիցէ թէ՝ գլորելոց է՝ նա ինչ եղև պատճառ գլորման ընկերին ։ Իբր ոչ յորժամ ընդ անապակուտ տեղիս գնեալ զնկերն ոք տեսանիցէ՝ և ասիցէ թէ՝ եղեռն գլտանէ՝ նա ինչ լիցէ պատճառ վնասուն ։ Իբր ոչ յորժամ զամբոււտկանի ուրուք զօրդի յաղա կատարմս հասեալ տեսանիցէ ոք՝ և ասիցէ թէ՝ կորուսանելոց է զինչսն հայրենիս՝ նա ինչ

իցէ պատճառք վարանելոյ ընչիցն ։ Որպէս
և ոչ ա՟յ յառաջ գիտութիւն պատճառ է ուրեք
բարեաց կամ չարեաց ։ Գիտէ ա՟ծ կանխաւ
զա՟մ. այլ է ինչ զոր կամի, և է ինչ զոր ոչ
կամի՛ ։ Կամեցաւ ածել զջրհեղեղ, ‖ Ծն՟ն.
6. 17 ։ Եթէ ոչ իւր այն կամք էին՝ թէ զջրհե
ղեղաւ մարդիկք և անասունք առ հասարակ
սատակեսցին, այլ անարժան խառնիցա գնաց
ազգին յանդգնութիւնն է ած զնա յայն՝ առնել զոր
ոչն կամէր. ո՟չ և ինքն իսկ ուխտէ մարգարէ
իւն, թէ ոչ կամիմ զմահ մեղաւորին, այլ
զդառնալն ն՟ր և զկեալն ‖ Եզեկ. 33. 11 ։ Կա
մէր թէ չէր յանցուցեալ Ա՟դամայ, և քանզի
կանխաւ գիտէր զյանցանելն, յառաջագոյն
պատուէրեաց նմա չուտել 'ի պտղոյ ծառոյն
և զի ոչ անսաց հրամանին, յիրաւի պատժե
ցաւ ‖ Ծն՟ն. 2. 17 ։ Կանխաւ գիտաց զյակո
բայ թէ առաքինի լինելոց է. և զեսաւայ թէ
յանպիտանութիւն կործանելոց է՝ և մի՛ այնո
րիկ մինչ չև ծնեալ էին և մինչ չև զմի ինչ բա
րի կամ չար գործեալ էին, ասէ զյակոբ սիրեցի
և զեսաւ ատեցի ‖ Հռոմ. 9. 11. 13 ։ Եթէ
յառաջագոյն հայեցեալ 'ի նախախնամութիւն

յովսիայ արքային յուդայ , առ. արար կ. ամա
գոյն մարգարէին , (Թէ՝ յառնելոցէ 'ի նմէ
Թագաւոր • որ զկռապաշտութիւն որդւոցն իս
րայէլ եղծանիցէ || 3 • Թագ • 13 • 3 ։ Իջ՛ յառա
ջագոյն ծանուցեալ զաղխուակմանութիւն կիւ
րոսի պարսկի , կանխաւ՛ գուշակեաց եթէ առ
ձակելոցէ զերիս ժողովրդեանն || 2 Մն. •
36 ։ Իջ՛ յայտ է թէ կանխաւն գիտէ
յառաջութէ սքանչելի է ութեանն
զբարին կամիլ և ոչ զչար ։

( Ծա • ԽԱ ։ )

Փառաւոր բարաւորութիւն • ոչէ
նմ պարծանս • այլ
ինչն ։

ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԱ
սէր բնութեն էր • որ յառաջագոյն
հայեցեալ 'ի հեստուէ փարաւոնի
ասէ , ես խստացուցից զսիրտն փարաւոնի •
|| Ելից • 7 • 3 ։ Իջ՛ թէ նա խստացոյց ասէն •

ընդունել եհար հարուածովք զնա և զերկիրն ե-
գիպտացւոց ։ Այլ առաջեալն մովսէս ջատա-
գովութիւն իւրոյ. թէ ոչ նա խստացոյց զփա-
րաւոն, այլ ինքն անձամբ զանձն ։ Հռովմ. 9
17 ։ Ասէ ասելն գիրն թէ ես խստացուցի, այս-
պիսի ինչ է, որպէս թէ ոք յորժամ ընկեր
իւր կամ զծառայ մեծարիցէ, և նա հպար-
տացեալ արհամարհիցէ զմեծարիչն. և նա
ասիցէ, թէ զի՞ գտնեմ նմա մեղս. ես անձամբ
արարի ինձ թշնամանս. զի ածի ՚ի պատիւ
զանարժանն ։ Նոյնպէս և զայս իմանալի է.
թէ ես ներելովս իմով եղէ պատճառ խս-
տանալոյն նր, զի ոչ յառաջնումն սատակե-
ցի զանդրանիկսն նորա ։ Այլ կամեցաւ ասե-
լով ցուցանել զբարկութիւն իւր և յայտնի առ-
նել զզօրութիւն իւր, զոր եած բազում երկայն-
մտութ. ՚ի վր ամանոցն կազմելոց ՚ի կորուստ ։
Աստի յայտ է թէ երկայնմտութիւնն այ
եղև պատճառ խստութե սրտին փարաւո-
նի այնու, զի զվերջին հարուածն յառաջ-
նումն ոչ եած ՚ի վերայ նորա ։ Այլ զի
չէր քարացուցեալ այ զսիրտն փարաւոնի այ-
նու իմանալի է զի մերթ հաւանէր արձակել

զծոցովուրդն և մի՛րթ չհաւանանէր . և անօթս
կազմեալս 'ի կորուստ՝ ինքեանք իւրեանց
զանձինս արարին և ոչ ա՛ծ : Զորմէ և զ՞մից
ասէ առաքեալն , եթէ կամի՛ ա՛ծ զի ա՛մ մար
դիկք կեցցեն , և 'ի գիտութի՛ ճշմարտու՛
եկեսցեն . ‖ Տի՛մ . Բ . 4 : Ընդէ՞ ոչ ապա՞քէն և
նոքա յա՛մ մարդկանէ էին : Ընդէ՞ ոչ ա՛մ ընդ
դիմակաց կողմն ասէ . եթէ ոչ ըստ կամելոյ է
և ոչ ըստ ընթանալոյն . այլ ըստ ա՛յ ողորմե
լոյն . զի որում կամի ողորմի , և որում կա
մի խստանայ . ‖ Հռ՛մ . 9 . 16 : Ընդէ՞ ընկերա
նել՝ զդիմակաց կողմն երանելւոյն՝ ասէ , դու
ովես մարդ որ պահանջես պատասխանի յա՛յ
եթէ և այնպէս ինչ էր , դու ո՞վ էիր որ հա
մարս պահանջէիր յա՛յ . մի՛ թէ ասիցէ կաւ՞ն
ցբրուտն թէ ընդէ՞ր այդպէս ստեղծեր զիս :
Բայց զի ոչ այնպէս է ,նորին իսկ 'ի նմին թըղ
թի գրեալ՝ ասէ . թէ՝ որում կամիք ընծայե
ցուցանէք զանձինս ծառ 'ի հնազանդութի .
եթէ արդարութե՛ , և եթէ հնազանդութե՛
մեղաց : Ընդէ՞ առ տիմոթէոս գրեալ ասէ ,
եթէ ոք սրբէ զանձն իւր , եղիցի նա անօթ
կազմեալ պիտանացու 'ի գործ տեառն իւրոյ :

|| 2 . Կոր՛ . 2 . 21 : Ի՞նչ մարգարէն ասէ ,
եթէ ախորժեսջիք և լուիջիք ինձ ,
զբարութիս երկրի կերիջիք .
|| Եսայ . 1 . 19 :

( Ճառ . ԽԲ : )
Ա՞ն ոչ պատրաստէ զոր 'ի դատաստ
պարտաւորին :

ԵՒ ԱՅՍՈՒ ԱՄԵՆԱՅՆԻ
և այլովք բազմօք յայտ է . եթէ ոչ՛ նա անօթս բարկութե՟ կազմ 'ի կորուստ , և ոչ անօթս ողորմութե՟ 'ի փառս , այլ ինքեանք զանձինս կամ 'ի կորուստ կամ 'ի փառս և չիք ակնառութի առ 'ի յայ՝ ասէ . եթէ հրեից միայն իցէ ած և հեթանոսաց ոչ . այո և հեթանոսաց . զի նոյն ածէ որ արդարացուցանէ զթլփատութիւն հաւատովք և զանթլփատութիւն նովին հաւատովք . || Հռոմ . 3 . 19 . 30 : Ի՞նչ դարձեալ . թէ զոր կոչեաց ոչ միայն 'ի հրեից . այլ և

'ի հեթանոսաց ։ Ո՞չ այլ ուր․ թէ մի՛ տէր
և մի հաւատ․ և մի մկրտութիւն․ և մի ա՟ծ
'ի վերայ ամենեցուն և ընդ ամենեսեան
և յամենեսին․ ‖ Եփես․ 4․ 5․ 6 ։

Դարձեալ յառաջագոյն սպառնացեալ գե-
րութիւն ժողովրդեանն՝ ուխտէր, թէ
ես խօսեցայ, արդ արարից՝ և ոչ դարձուցից։
Ո՞չ ոչ թէ խոր այն կամք էին՝ այլ նոցա ամ-
բարշտութիւն էած զնա յայն զոր ոչն կամէր ։
Ո՞չ եթէ 'ի նմին հեստութե յետ սպառնալ-
եացն, նոքա չէին ապստամբեալք ո՛չ մատնէր
զնո 'ի ձեռս թշնամեացն ։ Զի լա՞ւ համարէր
զիւր բանն շրջել․ քան զնոսա 'ի ձեռս այլ-
ազգեաց մատնել․ որպէս և 'ի նինուէացւոցն
ապաշխարութիւն հայեցեալ, ոչ կործանեաց
զքաղաքն ։ Դարձեալ և ցերեմիա յառաջա-
գոյն 'նկատեալ՝ ասէ, մինչչև 'նկարեալ էիր
յորովայնի՝ ծանեայ զքեզ ։ Ծանեայ զքեզ
ասէ․ ‖ Երեմ․ 1․ 5 ։ Զի ցուցցէ թէ յառա-
ջագոյն գիտէր թէ՝ որպիսի ոք լինելոց է․ և
դրոշմեաց զնա ընդ սէր՝ այնու՝ զոր ասէ,
թէ մինչչև ելեալ էիր յարգանդէ՝ սրբեցի զք-
քեզ․ և մարգարէ ազգաց եդի զքեզ ։ Այն

պէս և զսամուէլ և զյովաննէս և զպօղոս ։ Որպէս և ասէ իսկ , պօղոս թէ ընտրեաց զիս յորովայնէ մօր իմոյ օրհնել զորդին իւր ինև ․ ‖ Գաղ ․ 1 ․ 15 ․ 16 ։ Եւ զԱծ իսկ մեզ որպէս ասէ նոյն առաքեալն ․ թէ զորս յառաջագոյն ճանաչէր՝ յառաջագոյն սահմանեաց կերպարանակից լինել պատկերի որդւոյն իւրոյ ։ Եւ դարձեալ՝ թէ ընտրեաց զմեզ յառաջ քան զլինելն աշխարհի ․ ‖ Եփես ․ 1 ․ 4 ։ Եւ զի բարեաց կամեցողէ Ած , ուսուցանէ տէրն մեր յասելն ․ թէ սոյնեն կամք Հօր իմոյ որ յերկինսն է ․ զի Ամ որ տեսանէ զորդի և հաւատայ ’ի նա , ընկալցի զկեանսն յաւիտենից ․ ‖ Յօհ ․ 6 ․ 80 ։ Եւ դարձեալ՝ թէ իմ կերակուրն այն է , զի արարից զկամս Հօր իմոյ ‖ Յօհ ․ 4 ․ 34 ։ Եւ այսեն կամք Հօր իմոյ , զի Ամ զոր ետ ինձ Հայր ոչ կորուսից ’ի նմանէ , այլ յարուցից զնա յաւուրն յետնում ․ ‖ Յօհ ․ 6 ։ Որդ կամի Հայր զի ամենեքեան որք հաւատան յորդի նր , մի կորիցեն , այլ զի յարիցեն յաւուրն յարութե ։ Եւ գործն յարութեան յետ ապա բազմաց լինելոց է ։ Բայց Ած զչարաչարս կամս ունէր ’ի բնէ ,

և ունի․ և ոչ են եկամուտ ՚ի նա կամք․ այլ բնակաւորք ըստ անձառ բարերարութեն ։ Իբր որ յառաջագոյն ասացաք՝ իւր կամքն միշտ բարեախորժք․ և կամի զի և իւր բանաւոր արարածքն ցանկացօղք բարեաց և գործունեայք արդարութե լինիցին ։ Բայց քանզի գիտէ թէ կէսք գան ըստ կամաց նր, և կէսքն ոչ գան․ վասն այնորիկ զկնոցն առաքինութի վասն զայլս ՚ի բարւոք նախանձ յորդորելոյ, անդստին յորովայնէ քարոզէ․ նոյնպէս և զայլոց զանպիտանութի ։ Իբր ոչ թէ ինքն զոմն յորովայնէ անպիտան ստեղծանիցէ և զոմն պիտանի․ և թէ այնպիսի ինչ էր, զի՞ պիտոյ էր զպիտանին գովել և զանպիտանն պարսաւել, եթէ ինքն արարիչ էր

պիտանութեանն և անպիտանու

թեանն ։ Նա և ոչ մեղադիր

պարտէր լինել անպիտա

նութեանն թէ իւր ըղ

նա այնպէս ստեղծ

եալ էր յորո

վայնէ ։

( Ճառ · ԽԳ ։ )

Թէ համբերութիւնն այ · ոչ համեստ
գտնէ համայն · մարդոյ ։

ԵՒ ԱՐԴ՝ ՅԱՅՏ ԵԹԷ ԱՍԵԼՆ այ, թէ զյակոբ սիրեցի և զեսաւ ատեցի, կանխաւ գիտելէ · թէ սա սիրելի լինելոց է յիւրոց բարուց և նա ատելի ։ Ո՞չ զի յիւրոց բարուցն եղև ատելի եսաւ, ասէ առաքեալն · մի՛ ոք պոռնիկ կամ պիղծ իբրև եսաւ · և մի ոք արմատ դառնութ՛ ՚ի վեր երևեալ և զայլսն նեղիցէ ։ || Եբր · 12 · 16 ։ Ո՞չ յայտ արար թէ յիւրոց կամաց այնպիսի եղև եսաւ և ոչ յայ սահմանեածոց · այլ և այլ ուր ասէ · թէ արար այ զմարդն ուղիղ՝ և նոքա խորհեցան խորհուրդ չարութե ։ Ո՞չ մարգարէին ասէ, ես տնկեցի զքեզ որթ վայելուչ · և զի՞ արդ դարձար ինձ ՚ի դառնութի որթդ խոտանեցեալ · || Երեմ · 2 · 21 ։ Յւստի յայտ է թէ՝ այ զգործուածն ամենեցուն գեղեցիկ գործէ · և

'ի բարութիւն և 'ի չարութիւն դառնալոյ զանձն իշխանութեամբն արար կամակար · զի յոր կողմն և կամիցի՝ կարողիցէ դառնալ , և ըստ գործոցն և զհատուցումն նոյնպէսի առնուլ · և մի՛ իբրև զանասուն վարիլ՝ որոց ոչ գործք ինչ բարիք կան , և ոչ հատուցման ակնկալութիւն · այնու , զի անասուն է , և չգիտէ ընտրել զչար 'ի բարւոյ խորհրդիւ , բայց 'ի բընական բարուցն՝ որովք յիշատակօք միայն վարի յօգտակարն և խորշի 'ի վնասակարէն ։

( Ճառ · ԽԳ ։ )

Յանասունս տրն բնական աշխ հանձ ։

ՅՈՐՍԷՆ ԵՒ Ա ՃԴՄՈՒՆՔ ԻՆՉ ընակամք որովք հանդերձելոց էրէք իրաց ապդ լինիցի նոցա · ոչ ձիոյն 'ի սմբակն աձմանէ և ձգելոյ , և եզինն 'ի ձմերայնի 'Է աջոյ կողմն նստելոյ , և 'ի մօտ դարունն ընդ ձախոյ կողմն դառնալոյ ։ Եւ ծիծեռան՝ յա

ռաջ

ռաջ քան զաշունն , 'ի ջերմին տեղիս 'ի ձմե
րոցս երթալոյ ։ Ի՞նչ խորդոյն ՟ ( կռնկան )
իմանալ յառաջագոյն զձմերուանս կարեւորս՝ եւ
վաղ 'ի մարմանդ տեղիս փութալոյ ։ Ի՞նչ ճայ
ից՝ վաղագոյն տարմատարմ շրջելոյ ։ Ի՞նչ ա
ղաւնեաց՝ համագունդ երամ երամ խաղա
լոյ ։ Ի՞նչ ագռաւուց՝ 'ի ծմակաց վաղագոյն
'ի ջերմին տեղիս գնալոյ ։ Ի՞նչ անգեղաց 'ի
հեռաստանէ զգէշս՝ ախնարկելոյ դիտաւորու
թեամբ ։ Ի՞նչ այլոցն եւ ամ անասնոց եւ թռչ
նոց ․ որպէս եւ մրջեան՝ յամարային պատրաս
տելոյ զկերակուր ․ եւ ընդ երկուս զհատն
կտրելոյ զի մի բուսանիցի ․ եւ 'ի ջերմ ժամա
նակս հանելոյ զկուտն յորջէ անտի եւ ցամա
քեցուցանելոյ ։ Ի՞նչ մեղուաց՝ զգուրս մեղուա
նոցացն յառաջ քան զյուրտն ակնամածով
լնլոյ ։ Ի՞նչ արջոյ՝ յառաջագոյն քան զձմեռն
'ի քայոց մտանելոյ ։ Ի՞նչ երէոց՝ կանուխ 'ի լե
ռանց 'ի դաշտ դիմելոյ ։ Ի՞նչ եղջերուաց՝ զը
տողաքար զժամանակ խառնիցն իմանալոյ ։ Ի՞նչ
'ի շավայրաց քինացելոց , զարու յաւանակս
'ի մատաղութե կտրելոյ ։ Ի՞նչ այս ամենայն
ազդեցութիւք բնականքն յանասունսն եւ

ոչ խորհրդականք · որք ՚ի յարարչէն նոցա տնկեալեն ՚ի նոսա առ ՚ի յօժարելոյ յօգտակարն և խորշելոյ ՚ի վնասակարացն ։

( Ճառ · ԽԸ · )

Եւ ՚ի մարդս գոն բնական շարժմունք նշանականք ։

ԵՒ ՈՉ ՄԻԱՅՆ ՅԱՆԱՍՈՒՆՍ են բնական ազդեցութիւնք , այլ և ՚ի մարդիկ որք խօսունք և իմաստունքն ։ Որպէս յորժամ ակն խաղայցէ , բնական ազդեցութիւն վասն զնորոգ ոք տեսանելոյ լինի ասեն նշանակ · որք այնմ ստէպ միտ դնեն ։ Յորժամ երանաց կամ այլ անդամոց միս խաղայցէ , նշանակ հեծանելոյ ուրուքէ ասեն , կամ հանդերձս ագնիւս ագանելոյ · կամ սիրելւոյն պատահելոյ · կամ դան ըմպելոյ ։ Նոյնպէս և յորժամ ոտն կծկիցէ կամ ձեռն , մին ասեն ճանապարհ գնալոյ նշանակէ , կամ անձրևելի · և միւսն առնելոյ ինչ յուսմքէ · կամ տալոյ ։ Նոյնպէս և փրան

ջերն . և լեզուին կծել . և ունկանն հարկանել .
և ըմպանեին ( շրթանց ) կծել : Ոչ եթէ յայսց
յիմեքէ լինի , այլ 'ի բնական ազդեցուէ անտի՝
զոր ունկեալ է արարչին յանդամսն : Զի յոր
ժամ 'ի խորհրդական զգուշութենէ զերծիցի ,
բանական ազդեցութեամբն պատսպարեսցի :
Իսկ յօրանջելն և ձգըռտելն ( ոմն կարծեցին
ոմանք ) ոչ 'ի դիւէ լինի , այլ 'ի մեղկութենէ
և թուլուէ մարմնոյն . ուստի զատէպ յօրան
ջելն և ձգըռտելն հմուտ բժիշկք 'ի մըթե
րելոյ մաղասաց ասեն , զոր և փորձն իսկ յայտ
առնէ . զի յորժամ ստէպ ոք յօրանջիցէ , սար
սափումն գայ զոսկերօքն և քստմունք դնան
ընդ անդամսն : Իսկ ոչ փռնչելն 'ի հրեշտակէ ,
այլ կամ 'ի ցրտոյ , կամ վն այլ իրիք բանա
կան ազդեցութեան լինի : Իսկ յոգոցն հանել՝
երբեմն յիշատակաւ լինի և երբեմն առանց
յիշելոյ զոք : Իսկ զի բանական ազդեցութիք են
և ոչ 'ի դիւաց , յայտ անտի է . զի և յանսա
նոց բնութս գտանին նոյնք : Իսկ հոգոցն հանել՝
յորժամ ոչ զոք՝ կամ զինչ թէ բարի՝ կամ զկա
րիս յիշելոյ լինի , 'ի բնական ազդեցուէ է առ
ամփոփելոյ զոյն ընդ երկիւղիւ արարչին ,

և ճանաչելոյ զիւրոյ բնութեան զտկարութիւն ։ Իսկ յորժամ յիշատակած լինիցի , կամ առ մի րոյ սիրելւոյն լինի , կամ առ անարժանս ինչ՝ և զ՚ի նման աշխարհելոյ · որպէս յորժամ ՚ի լոր

ջաց ծուլանայցէ , գիշերական երազովքն ամփոփի ընդ նոկէւղիւ ։

(Ճառ . ԽԶ .)

Յաղագս երազոց ։

ԻՒ ԵՐԱԶՈՑՆ ԱՅԼ ԵՒ ԱՅԼ պատճառք են · Իսկ՝ ինչ զոր ցերեկ ընդ բերան ածիցէ մարդն , ՚ի նոյն և ՚ի դադարել մարմնոյն և ՚ի քունն զբաղմունն միտքն ։ Իսկ է ինչ՝ զոր բնաւ չիցէ ածեալ զմտաւ և տեսանէ յերազի · և այնր է պատճառք են ։ Կամ հաստատուն ինչ տեսանել՝ իւր ընդ հայելի օրինակաւ յոյժ ընդհարցն ազդեցութիւն վասն ՚ի լաւութիւն զմարդն յորդորելոյ՝ և ոչ յայտ յանդիման ճշմարտութեամբ ·

ոմ յովսէփայ և դանիէլի մեծամեծ իրաց տեսիլք յայտնեցան ։ Ինչ մի իմն 'ի հակառակորդէն ․ քանզի նա անմարմին է որպէս և շունչ մարդոյն անմարմին ․ և ածեալ զանազան կերպարանս առաջի նկարէ ․ մերթ զկանանց վասն 'ի ցանկութիւն գրգռելոյ ․ և մերթ զահագին գազանաց և սողնոց՝ վասն զարհուրեցուցանելոյ ․ որպէս և յոբն ասէ թէ՝ երազովք զարհուրեցուցանես զիս || Յոբ ․ 7 ․ 14 ։ Ինչ բազում անգամ 'ի կանանց կերպս եղեալ՝ զարս խաբէ յերազի ․ և է երբեք զի յարանց կերպս դարձեալ՝ զկանայս յանցուցանէ ։ Երբ ոչ թէ առոճական և 'ի դական անդամս կայցեն նորա , այլ խոտորեալ զաման ցանկութեան՝ տայ հեղուլ 'ի բաց զզօրութիւն ։ Ինչ ոչ յորժամ 'ի մարդ մտեալ իցէ և յառոճական կամ իդական բարբառս պատճառիցէ ՝ պարտէ հաճատալ թէ արութի կամ իգութի գուցէ նորա ։ Ինչ ոչ յորժամ ցուցանէ թէ 'ի գանից՝ կամ 'ի սրոյ երկնչիցի՝ հաճատալի է , զի նմա զան՝ այ սատանէ և սրբոց շնորհքն զոր 'ի հոգւոյն սրբոյ ունեցան ։ Քանզի կամ 'ի յարթնութեան , կամ 'ի քաղցրաքուն հանգըս

տեսանն ցուցանէ թէ 'ի գանէ և 'ի սրոյ երկն-
չէ, զի զմարդկն յայն ապաստան արարեալ՝
ծուլացուցանիցէ 'ի խնդրելոյ զիւր ողջնակա-
նութիւ. որ և տէրն իսկ յայտ արար ասե-
լովն, եթէ այս ազգ ոչ ելանէ, եթէ ոչ պա-
հօք և աղօթիւք ։ Մատ. ԺԷ. [illegible] ։

( Ճառ. ԽԷ. ։ )

Ոչ տկարայն ցնորք և մեղկութիւնք ցան-
կութեանց 'ի դիւրայ լինին ։

ԵՒ ՈՉ ԱՄԵՆԱՅՆ ԹՈՒԼԱ-
նալ և ցնորել մարդկան 'ի դիւէ է, այլ է
որ 'ի մաղձոյ է. և է որ 'ի մաղասէ,
և է որ յուղեղանն ծնանելոյ. և է որ 'ի ստա-
մոքսին խանգարելոյ. և է որ յորովայնին
խստանալոյ. մինչև ցփրփրել անգամ, և դա-
լար յեղյեղուլ։ Այլ և յուղղոյն ծնանելոյ՝
և 'ի մտաց խակ անկանի մարդ և խօսի ընդ
որմն և կարգի ընդ հողմն ։ Ասեն բժիշկք
յամառ թէ՝ բնաւ չիք դև որ 'ի մարդ մտա-
նիցէ, այլ ցաւքն այնք՝ և մեք դարմանովք
կարեմք բժշկել ։ Այլ մեք զայն ոչ ասեմք.

քանզի ճշմարիտ է մեզ քան աւետարանին է
Թէ՝ բազում գլուք իբրև տեսանէին զնա՝ աղա
ղակէին նախանձանէին 'ի մարդկանէ. և նա սաս
տէր 'ի նոսա և ոչ տայր խօսել նց || Մարկ ·
3 · 1 · Համբերեա այլովք նոյնպիսեօք ։ Իբր լուս
նոտքն .. ասին · ոչ եթէ լուսնոց մխասեալ
այնպիսիք կոչին · այլ զաս ինչէ զիւաց որք
ըստ լուսնոյ յայտնին ։ Իբր փորձել այնչափ
իշխէ սատանայ՝ որ չափ հրաման առնու · և
յայտ 'ի յոբայ փորձանացն է , զի եթէ ոչ նախ
էառ հրաման յայյ , ոչ ժտեցաւ փորձել զնա
|| Յոբ · 1 · 12 ։ Իբր 'ի խոզից երամակսն յոր ոչ
իշխեցին մտանել դևքն , եթէ ոչ առին
հրաման 'ի տնէ || Մատթ · 8 · 31 ։

( Ճառ · ԽԲ ։ )

Ընդդէմ Խոյս · որք ասեն թէ սատանայ ոչ փորձէ
զմարդ ։ Եւ թէ ոչ արարեալն 'ի պատրոն
չարութե · այլ կամաւ չարացեալ ։



ՅԼ՝ ԵՆ ՈՄԱՆՔ ՈՐՔ Գ.Ի
ճին եթէ ընաւ խսկ սատանայ ոչ
փորձէ զմարդ ։ Այլ յանդիմանին

յառաջելոյն որ ասէ · թէ բազում անգամ
կամեցայ գալ առ ձեզ՝ և խափանեաց զիս սա
տանայ ·‖ 1 · Թեսաղ · 2 · 18 ։ Ո՞չ դարձեալ ա
սէ · թէ ոչ է մեզ մարտ ընդ մարմնոյ և ընդ
արեան, այլ ընդ իշխանութիւնս և ընդ պետութիւնս
և ընդ աշխարհակալս աշխարհի խաւարիս այ
սորիկ · ‖ Եփես · 6 · 12 ։ Ո՞չ յաւետարանին
ասէ, թէ սատանայի իսկ արկեալ էր 'ի սիրտ
յուդայի իսկարիովտացւոյ մատնել զնա ‖ Յովհ·
13 · 2 · 27 ։ Ո՞չ դարձեալ թէ՝ ընդ պատառոյն
եմուտ 'ի նա սատանայ ‖ Յովհ · 13 · 27 · դարձ
եալ՝ խնդրեաց սատանայ խարբալել զձեզ իբ
րև զցորեան · ‖ Ղուկ · 22 · 31 ։ Ո՞չ 'ի վերա
փորձելոցն այն չափ տայ նմա իշխանութիւն ·
որ չափ մարդն համբերել կարէ · որպէս
երանելի առաքեալն ասէ, եթէ հաւատարիմ
է ած որ ոչ արկցէ զձեզ 'ի փորձութիւն առաւել
քան զկար ձեր · այլ արասցէ ընդ փորձութեանն
և զելսն՝ զի համբերել կարասջիք ‖ 1 · Կորն ·
10 · 13 ։ Ո՞չ տէր մեր ուսուցանէ յաղօթսն
ասել մեզ · թէ մի՛ տանիր զմեզ 'ի փորձութիւն,
այլ փրկեա զմեզ 'ի չարէ · ‖ Մատթ · 6 · 13 ։
Զի ցուցցէ թէ՝ և աղօթիւք կարեմք ապրել

'ի փորձանաց չարին ։ Եթէ այդպիսի իցէ ա-
սէն , փորձելոյ վասն հաստատեալ է զնա Ած ։
Այլ մեք 'ի վերագոյնսն իսկ բազում վկայու-
թբ գրոց ցուցաք · թէ ոչ 'ի չարչարել և 'ի
փորձել արարեալ է զնա Ած , այլ և նովաւ
( որ 'ի չարութիւնն կործանեցաւ ) գործ բար
ւոք գործէ Ած , թէպէտ և չարն ոչ այնպիսի
մտօք մատչի փորձել՝ այլ համարի յաղթել
և գտանի պարտաւորեալ ։ Թուլացուցանէ
ըստ չարեաց կամաց նր փորձել զառաքինիս,
և մտեալ 'ի փորձութիւն նորա իբրև 'ի բովս՝
զտին և ընտրին իբրև ոսկի սուրբ ելեալ
'ի հալոցաց ։ Որ· եթէ չարեաց արքանեակ
արարեալ էր զնա Այ , ոչ յաճուրդն աքայա
բու հոգի սուտ լինէր 'ի բերան մարգարէիցն
սորա ‖ 3 · Թագ · 22 · 22 ։ Այլ նմա պարտէր
հարկանել զայն սպասաւորութիւն ։ Իսկ ընդէ՞ր
հոգի որ ոչ դաւանի զտէր յն՝ իցէ յայ · որ
զայ սպասն ոչ խափանէ ։ Իսկ ընդէ՞ր մարդ-
ասպան կոչիցի որ կեցուցիչնէ փորձութեք ։
Իսկ ընդէ՞ր որք ոչն հաւատոն 'ի տէր յս՝ որ
դիք չարին կոչելն · եթէ նա այ բանիւ իցէր
փորձիչ ։ Իսկ եթէ չարին կամարարի այ որդիք

իցեն հրեայք, ընդէ՞ր և ոչ աբրահամ այնպէս անուանեցի։ Իսկ ընդէ՞ր սուտ և մարդասպան անուանեցի չարն, եթէ 'ի ճշմարտութեն կայցէ և ոչ 'ի սուտութեն. և գրեսցուք Թէ հրեայն յանձնէ խօսիցէ սուտ, նա ընդ էր կոչեցի հայր հրէին ‖ Յոհ. 8. 44. որ ոչ սուտ առնէ զընութենն. այլ ո՞չ եղև՝ նոյնպէս խօսի: Իսկ ընդէր ասիցէ առաջեալն, Թէ նմազան դևլոցէ փրկչին մերում հանդերձ մահուամբ և սատանայ. և անկանելոցէ յիշխանութէ և՝ 'ի պետութեն խուժէ՛, որ մահ՝ անայն անձամբ կամեցաւ ‖ Եբր. 2. 14: Իսկ ընդէր կապեցի և 'ի տանջանս մատնեցի: Ո՞չ ապաքէն ո՞չ իւրովք կամօք զո՞յ սպասն խնդրէր առնուլ 'ի մարդկանէ: Իսկ 'ի կռապաշտութիս ձգեն, և դիւթութեք և հմայեւք և սատանայակամայնէ վրիպեցուցանել զմարդիկ յոյ ճշմարտութենէն: Իսկ Թշնամի կոչէ՛ վն զորոմն 'ի մէջ ցորենոյն սերմանելոյ ‖ Մատ. 13. 25: Աւստի յայտնէ եթէ ոչ 'ի բնութե Թշնամի է այլ կամօք: Իսկ եթէ բնութե էր նմա չճանաչելին զԱծ հայր, զորդին զի ո՞րդ կարէր ճանաչել և աղաղակել. Թէ զաւես որդին այ (Մարկ. 3. 12,

Եւ դարձեալ, զառաքելոցն Նորա ասէն․ Թէ արքն այնոքիկ ծառայք են ա՟յ բարձ րելոյ․ ‖ Գործոց․ 19․ 19 ։ Եւ յայսմ յա՟մէ յայտ է եթէ՝ ոչ բնութ՟բ չար՝ այլ կամօք ։ Եւ ոչ չար և չարչարիչ արարեալ է զնա ա՟ծ, այլ չարակամ բարուք Նր՟ ․ առաջինեցու ցանէ զարդարն, և Նորա ոչ ինչ գո՟յ յայնմ շնորհ ։

( Ճառ․ ԽԹ ։ )

Աստեղք չեն ինչ կենդանիք․ և ոչ են պատճառք գործոց պատահմանց․

ԶԻ ՈՉ ԼՈՒՍԱՒՈՐՔՆ ( ՈՐ պէս յառաջագոյն ասացաք ) կենդանիք ինչ են և պատճառք բարեաց կամ չարեաց, այլ միայն լոյս կարգեցանն, զայն սպասաւորութե՟ն հարկանեն․ որպէս ասաց Մովսէս Թէ՝ արար ա՟ծ զլուսաւորսն մեծա մեծս, և եդ զն՟ս ՚ի հաստատութեան երկնից լուսատու լինել յերկիր ‖ Ծնն․ I․ 16․ 17․

Ուստի յայտէ թէ՝ վասն լուսատու լինելոյ միայն արարան. և ՚ի նշանս և ՚ի ժամանակս և յաւուրս. և յամս և ՚ի տարիս ։ Ոչ եթէ և զկենդանիս, այլ եթէ զլուսաւորս լուսատու լինել որք ՚ի ներքոյ երկնից ։ Եւ՛ զնշանս ած գիտութեն ցուցանել և զանձրևաց և զօդոց փոփոխմանց ։ Որպէս և տէր մեր ասէ, յորժամ տեսանիցէք ընդ առաւօտս զերկինս կարմրացեալ, ասէք թէ անձրև լինելոց է՝ և լինի. և յորժամ հարաւ շնչիցէ՝ ասէք թէ՝ խորշակ մեծ լինելոց է՝ և լինի. ||Ղուկ. 12. 55։ Քանզի ընդ ծագել արեգական օդոյն զխոնաւութի ջուրց առեալ զճառագայթիւք արևու արկանէ. և քանզի չև ևսէ թանձրացեալ և ամպացեալ օդն, սակաւիկ մի արգելլուին զնշոյլսն, կարմրացուցանէ միայն զարևն և ոչ մթացուցանէ. ուստի երևի թէ՝ անձրևի նշանակէ ։ Այնպէս և լուսոյն ՚ի խոնաւութէ յօդոց ներեալ, զանայ ՚յերմն զխոնաւութին ՚ի բաց պարզել. ուստի մերձեալ խոնաւութեն և ՚ի նա՛ չհասեալ, բաւառեալ ծրանայ շուրջ զնովաւ. որով յայտ առնի անձրևաց նշանակ ։ Եւ՛ այն ոչ միայն

'ի լուսնի . այլ և 'ի ճրագի որ նուաղագոյն լոյսէ՝ ևս երևի :

( Ճառ . Գ : )

Թէ երկինք ուր են շրջանակք :

ԵՒ ՈՉ ԵՐԿԻՆՔ ՇԸՐՋԻՆ զորմ ասեն արտաքինն իմաստունքըն թէ մերթ 'ի շրջելն ծածկեն զլուսաւորսն և մերթ յայտնեն : Իսկ եթէ զնմ' որ շրջեցին՝ զի՞ որդէ՝ արևն առաւր է առաւր 'ի նոյն արևելս ածիցեն . և լուսինն յամսեան հասիձ 'ի նոյն տեղիս գայ : Այլ ևս աստեղքեն որ 'ի տարւոջ հասնեն միանգամ հասանեն 'ի նոյն տեղի : Իսկ են ոմանք ոչ ասենն յերկոտասան ամ 'ի նոյն տեղի . և է որ 'ի տարւոջ և 'ի կիսում , և է որ Լ ամի : Այլ փորձ իրացն այլ ազգ յայտ առնէ : Զի աստեղքն որք զշայր յերկինսեն , և զցներեկ անդէն գտանին . թէ երկինք շրջէին , ոչ 'ի նոյն շաւիղս յորս ցայգն տեսանէաք 'ի նոյնս

և ցերեկն գտանելն, այլ քանզի 'ի նոյն շա-
ւիղս գնան ո՛չ և տեսանեմք իսկ և զլուսին և
զաստեղս 'ի նոյն շաւիղս՝ յայտ է թէ նոքա
գնան և երկինք կան անշարժ ետեղակայք որ
պէս և ա̃մատուր իսկ գիրք հաստատութե̃ կո
չեն զերկինս || Ծնն. 1. 8: Ո՞չ որ ինչ հաստա
տութի̃ է, չէ շարժուն: Իսկ այլոց 'ի գրոց
սպատճառս առեալ ասեն. 'ի նոյն իսկ 'ի գիր
ըս գրեալ է թէ՝ եդ զնոսա 'ի հաստատութե̃
երկնից. ուստի յայտ է թէ՝ բևեռեալքն և
ոչ գնայունք: Այլ թէ այնպէս իցէ, յորժամ
զադամայ ասէ. թէ՝ եդ զնա 'ի դրախտին
փափկութե̃, բևեռեալ համարեսցի և ոչ գը
նայուն: Իսկ եթէ զադամայ շրջելն եդեալ
կոչէն ա̃մատուր գիրք, յայտ է թէ և զլուսա
ւորացն զգնացս՝ եդել անուանեն գիրք: Ա՛յ
նաւանդ զի և 'ի բազում իսկ տեղիս գտանեմք
զգնացս լուսաւորացն, ո՛չ յորժամ ասիցէ յե
սու որդի նաւեայ. թէ կացցէ արեւն հան
դէպ ձորոյն գաբաւոնի. և լուսին դէպ դաշ
տին եղոմայ || Յեսու. 10. 12: Ո՞չ չասաց թէ
երկինք դադարեսցեն 'ի գնացից իւրեանց,
այլ լուսաւորքն: Ուստի յայտ է թէ երկինք

ետեղակալէն ,և լուսաւորքն գնայունք ։ Եթէ առ Եզեկիաւ ասէ , դարձուցի՛ շողն անդրէն յետս զ Ժ աստիճանօք աքազեան ժամացուցին ‖ Եսայ ・ 38 ・ 8 ։ Արով երևի թէ՝ արևն դարձաւ յետս՝ և ոչ երկինք ։ Եւ յէկլասիաստէսն գրեալէ , թէ ծագէ արևն և մտանէ արևն և 'ի տեղի իւր ձգի ・ ինքն ծագեալ անդ՝ գնայ առ հարաւով և պատի առ հիւսիսաւ ‖ Ժողով ・ 1 ・ 5 ・ 6 ։ Զի ցուցցէ թէ ցերեկ առ հարաւակողմամբ գնայ ընդ արևմուտս ・ և զգայդ առ հիւսիսնաւ դառնայ յարևելս ընդ լերանց ստորոտովք ・ ով ասեն իմաստունք ։ Եթէ ոչ ընդ ծով որպէս ասենն ・ և ոչ 'ի ներքոյ երկրի ・ զի 'ի ներքոյ երկրի՝ ոչ ին՛չէ որպէս ասէ յոբ , թէ ձգեաց զերկիր 'ի վերայ ոչնչի ‖ Յոբ ・ 26 ・ 7 ・ և յասորին ասի՛ , թէ կացոյց զերկիր 'ի վերա ոչն՛չի ։ Եթէ ընչի իմիք՝ յոչընչի չէ հնար գնալ և ոչ ցամաքական բնութեն ընդ խոնաւուէ ջուրց ։ Այլ ասեն , մեք իսկ աչօք տեսանեմք զի 'ի ծովէ ելանէ ։ Եթէ զայն ոչ գիտեն թէ՝ վասն զի ցամաք ուրեք 'ի ծովէ անտի ոչ երևի ・ յայն սակս թուի թէ՝ 'ի ծովէ ան

տի ելանիցէ ։ Որպէս յորժամ թէ յարեւմու-
տըս ոք մօտ՛ իցէ , և լեառն ինչ յարեւելից
կողմանէ կայցէ թուի նմա թէ 'ի լեռնէ ան
տի ելանիցէ արեգակն ։ Ա՛ յա՛մ տեղիս որ ընդ
անքաճուք ոք յուրեք կայցէ , թուի նմա թէ
անտի ուստեք 'ի մօտոյ ելանիցէ արեգակն ։
Նոյնպէս և նոցա որ մօտ առ ծովուն կայ
ցեն քանզի ոչ կարէ ակնբաց 'ի ցամաք գոր
ծել , թուի թէ 'ի ծովէ ելանիցէ ․ որք ոչ 'ի
ծովէ՝ անտի ելանէ , այլ 'ի ծագաց երկնից ․
որպէս և դաւիթ 'ի հոգոյն մէջ ուսեալ ա_
սէ ։ Թէ 'ի ծագաց երկնից են ել՛ք նորա , և
հանգիստ նր մինչև 'ի ծագս նորուն , Այլ
և ցօղ սառուցիկ ասեն արկանէ աշխարհի , ուս
տի յայտէ թէ 'ի ծովէ՝ ելանէ ։ Ա՛ զայն ոչ
գիտեն թէ զօդոյն որ ցայգ ուռնու 'ի խոնա
ւութէ ջուրց , հասեալ ջերմութե ճառագայթ
ից արեգականն՝ չքթեցուցանէ 'ի բաց զտամ
կութին՝ ուստի ոչ միայն անդ ․ այլ ամ երկ
րի ընդ արևածագս ցօղ անկանի ։

Ա՛ եթէ երկինք շրջեցին , զի որդ գնացսն
և զայլոց աստեղաց պատճառաւորաց ա_
սիցեն յաստեղատունսն մտանել՝ որոց մտանելն

ապա

ապաքէն գնալով լինիցի և ոչ առանց գնացից։
Նոյն և երկիր ասեն 'ի միջոցի կայ, և տան
օրինակ ինչ այսպիսի, թէ զփանփուշ յոր
ժամ փչել կամիցիս, ընկեա 'ի ներքս հատմի
կորեկոյ և փուքն որ 'ի փամփշտին արգելու՝
առնու զկորեկի հատն և 'ի միջոցի ունի. ոչ
'ի վեր տայ գալ և ոչ 'ի խոնարհ ձգել։
Նոյնպէս ասեն և օդս որ է՝ 'ի մէջ գընդին
երկնից, փակեալ կայ և ունի զաշխարհն 'ի
հաստարակածի. ոչ 'ի վեր տայ վերանալ, և
ոչ 'ի խոնարհ հակել։ Բայց նախ յիւրեանց
իսկ բանիցն յանդիմանին։ Զի ասեն թէ որ
ինչ թեթև է 'ի վերին կողմն գնայ. և որ
ինչ ծանր է 'ի խոնարհ. որպէս և իսկ փորձ
իրացն՝ յայտ առնէ. զի ծուխ և շոգի երկրի
և բոց հրոյ՝ քանզի թեթևքեն՝ 'ի վերին կողմն
գնան։ Իսկ զջուր և զերկաթ և զփայտ. և
զայլ ևս ինչ նոյնպիսիս՝ որ չափ և 'ի վեր ոք
ձգիցէ; 'ի խոնարհ միտեալ իջանեն։ Իսկ եթէ
զսակաւ ինչ զծանրութիւն ոչ կարէ օդն 'ի
վեր առնուլ ունել. ո՞ր չափ ևս առաւել
զայն չափ ծանրութիւն երկրի չէ հնար օդոյ
'ի վեր ունել. այլ ո՞յ բանին որ կացոյց զնա

'ի

'ի վերայ ոչընչի ։ Իսկ եթէ երկմտիցէ ոք , թէ զի՞ արդ կարիցէ այս չափ ծանրութիւն 'ի վր̄ ոչընչի կալ , հայեցեալ յերկնից հաստատութի՝ որ ո՛չ 'ի վերայ իրիք կայ , և հաւանեսցի թէ՝ որ զերկինս բանիւ հաստատեաց 'ի վր̄ ոչընչի , նոյն և զերկիր կացոյց 'ի վերա ոչընչի ․ և նորին հրամանն ունի և զերկոսեանն անշարժս և անտեղակալս՝ ըստ այնմ , թէ ինքն ասաց և եղեն , հրամայեաց և հաստատեցան ։ Իսկ կացոյց զնո՛ յաւիտեանս յաւիտենից ․ հրաման եդ և ոչ անցցէ ‖ Սաղ ․ 148
6 ․ և այլ ևս ասէ , թէ 'ի վերա ոչընչի կա՛յ երկիր՝ զի՞ արդ ասէ դաւիթ , թէ հաստատեաց զերկիր 'ի վերա ջուրց ։ Իսկ դարձեալ թէ ինքըն 'ի վերա ծովու էարկ զհիմունս նորա ․ և 'ի վերա գետոց պատրաստեաց զնա ‖ Սաղ ․ 23 ․ 2 ։ Որ զայդոսիկ 'ի դաւթայ լուաւ , զմիւսն 'ի յօբայ և զեսայեայ լուիցէ ‖ Եսայ ․ 45 ․

12 ։ Զի՞ նոքա 'ի վերա
ոչընչի ասեն և
սա 'ի վերա
ջուրց ։

( Ճառ · ԺԱ ։ )

Սուրբ Գիրք որ հակառակ խօսին ·
թէ զնոյն գոյն՝ գոյն
հաւասարէ ։

ԱՐԴ՝ ՈՉ ԵԹԷ ՀԱԿԱՌԱԿ ինչ միմեանց են գիրք, այլ զոր միոյն Թողեալ է, միւսն առնու ՚ի նովին հոգւով · որպէս տեսանեմք իսկ ։ Զի որ ինչ ՚ի Մովսիսէ չէ ասացեալ, այլ մարգարէք լցին նովին հոգւով ։ Մովսէս ասէ, ստեղծ ած զմարդն հող յերկրէ, և փչեաց ՚ի նա շունչ կենդանի ‖ Ծնն · 2 · 7 ։ Իսկ փչելն դեռ ևս՝ ՚ի միջի կայ կարծելոյ՝ թէ՝ եղե՞ արարած շունչն՝ թէ չեղե ։ Արդ՝ գայ Զաքարիայ մարգարէ նովին հոգւով վարել և ցուցանէ զարարած գոլ շնչոյն · ասելով · որ հաստատէ զհոգի մարդոյն ՚ի նմա ‖ Զաք · 12 · 1 · և Եսայեա՛ ասէ, թէ զամ շունչ ես արարի ‖ Եսայ · 57 · 16 ։ Նոյնպէս և ոչ զհրոյ՝ և ոչ

զջերոյ և ոչ զօդոյ՝ և ոչ զխա՛յլատականց · և ոչ զորոտմանէ · և ոչ զխա՛ւարէ՝ ճառէ ինչ մովսէս ։ Զորս յերկուց 'ի մէծ անօթոյն երկնից և երկրէ պարտէ իմանալ · թէ՝ ա͞մ ինչ որ 'ի միջի ն͞ց գտանի, հա՛րկէ զի ը͞ նովին արարեալ իցէ · բայց այնմ թէ՝ արար ա͞ծ զերկինս և զերկիր և զա͞մ որ 'ի նս ։ Այլ զի մի պատուօ՛ք ինքնակայք գոլ 'ի տգիտաց կարծիցին · որոց արարածն 'ի մօվսիսէ ոչ ճառեցա՛ւ ( առ 'ի հատանելոյ զպատճառն պատճառախնդրացն ) այլովք մարգարէիւք նոյն հոգի ընծայեցուցանէ զարարած գոյն նոցա ։

( Ճառ · ԺԲ ։ )

Արարածք ա͞յ 'ի կառավարութեան ա͞յ եղեն ըստ ներքին իւրեանց ,

ԶԱՅՍ ԴԱՒԻԹ ԻՍԿ՝ ՈՐՈՎ զա͞մ իմանալի զօրութիւն՝ և զերևելի արարածս 'ի փառաւորութի

արարչին կոչէ պարգամս ասէ թէ՝ ։ Օրհնե-
ցէք զնա երկինք և երկիր ․ և հրեշտակք , և
զօրութիւնք ․ և հուր , և հողմք , և մրրիկք
որք առնէք զբան նորա ։ Սաղ․ 138 ․ 8 ։ Իսկ
որ ՚ի պաշտօն մտանեն , և զարբանեկութիւն
կատարեն , յայտէ թէ արարածքն ձիւն և
սառն և կարկուտ և մրրիկք ։ Զի թէ յայլում
արարչէ՝ էին , ոչ կոչէր զնոսա հոգին ՚ի
փառաւորութիւն ․ այլ իբրև զօտարոտիս մե-
կուսի դնէր ։ Բայց՝ տեսանեմք աւանիկ , զի
ոչ զնոսա միայն , այլ և զվիշապս և զգազանս
և զխաւար և զխայլաստակունս ( զորս ՚ի չարե
դնեն ) ՚ի նոյն փառաւորութիւն նոյնով հոգւով
կոչեցաք ։ Իսկ դաւթաւ և գ մանկամբքն ՚ի
հնոցի անդ հոգին ընծայեցուցանէ , զի ցու-
ցէ թէ յորժամ արարեալքն , ՚ի նոքին և ՚ի
փառաւորութիւն յիրաւի կոչին ։ Իսկ ոչ որպէս
մարկիոնն դանդաչէ թէ՝ Արդարոյն արարա-
ծոց պարտէ օտարին բարւոյ՝ պաշտօն մա-
տուցանել վասն բարերարութե ․ զորոյ անմի-
տութիւն ՚ի դէպ ժամանակի յանդիմանեսցուք ։
Իսկ արդ՝ թէպէտ յայնմանէ իսկ յայտէ , թէ
որ ինչ ՚ի փառաւորութիւն արարչին կոչի ,

Նորա և արարածէ ։ Այլ և զմիոյ միոյ իսկ ՚ի նոցանէ զգօնն արարած մարթի և ՚ի գրոց ցուցանել ։

( Ճառ · ՃԳ ։ )

Թէ հրեշտակք և այլք ոչ են անոփեղծք ։

ԱԽ ԶՀՐԵՇՏԱ ԿԱ ՑՆ ՈՐ պէս ասէ դաւիթ · Թէ՝ արար ըզ հրեշտակս իւր հոգիս՝ և զպաշ տօնեայս իւր բոց հրոյ · ‖ Սաղ · 103 · 4 ։ Ապա՝ և զհրոյ և զպայրոցն և սիրատամէ ոջէ · զխայլատակունս իւր յանձրևս արար ‖ Սաղ ։ 134 · 7 ։ Նա՛ փայլատակունք ոչ եթէ այլ յուսանքն՝ եթէ ոչ ՚ի չորութէ և ՚ի հրոյ ։ Նա՛ զխաճարէ՝ ասէ՝ , եդիր զխաճար և եղև գիշեր ։ ‖ Սաղ ։ 103 ։20 ։ Նա՛ զօրութ մանէ և զհողմոյ միանդամայն ասէ Մովս՝, թէ որ հաստատէ զօրութեամն և հաստատէ ըզ հողմ , տէր ամենակալ անուանէ Նորա ·

‖ Ամով․ 5․ 13 ։ Որ այսպէս զօր միոյ մարգարէի թողեալ էցէ, միւսումն ըստ Հոգւոյն սբ։ Արդ՝ եթէ զամիթ ասէ, եթէ 'ի վր ջրուց է՝ երկիր, և յօբան և խայծան թէ 'ի վր ոչընչի կայ, ոչ ինչէ ընդ այն զարմանալ․ և ոչ զմարգարէութեն հակառակ միմեանց համարել․ քանզի և այն ճշմարիտ է, և այս հաստատուն ։ Որ առ օրինակ 'ի մարմնոյ․ որոյ 'ի վերոյ մորթ և միսն․ և 'ի միջի երակք և խողովակք արեան, և 'ի ներքոյ դարձեալ նոյնպէս մորթ և միս, և է մարմին 'ի վերոյ քան զերակս արեանն, և 'ի ներքոյ քան զերակսն ։ Ըստ նմին օրինակի և երկիր 'ի վր ջրոց է․ քանզի 'ի միջի խռուամ ունի զջուրս․ և 'ի ներքոյ քան զջուրս․ և 'ի վերա ոչ ընչի հաստատեալ կայ եւտեղակալ և ունի յինքեան զանփոփ զլոյծ բնութեն ջրոցն ։ Որ երկոցունց մարգարէութեցն մի՝ և նոյն գիտաճորուեն է, և չիք ինչ այլաբանութեն 'ի միջի․ քանզի ոչ այլ և այլ հոգի ետուն զմարգարէութիւնն այլ նոյն և մի հոգի․ որ արժանի արար զմինն պատմիչ առնել այլոց իրաց․ և զայլսն մնացելոցն 'ի նմանէ ։

( Ծնն. Ա. Գ. )

Զնործիս արարչագործութեան Աստուծոյ ,
Բառ հաստատոյ ըստ արարչութեան զամ . և
Ընդ ըստ արարութեան նորա :

ԱՐԴ՝ ԶԻ ԵՐԿԻՆՔ ՈՉ ՂԸՐ
ջին . զի ամ ինչ որ չէր՝ և եղև .
արարած է , և ոչ ինքնակայ :
Առաջին բնութեցն օրինակք և գրոց վկայ
ութիք բաճական էին հաճանեցուցանել զմտա
վարժս . բայց քանզի 'ի նմին յամառութե
կան՝ զամ ինչ կենդանի և շնչաւոր համարե
լով , վ՝ որոյ ոչ հեղգացուք ըստ միրում
կարի , և այնմ ևս առնել պատասխանի :
Լուսին ասեն քան զարեգակն՝ որ անցեալ
ընդ ամ աստեղատունս ( այս ինքն ընդ ամ
երկինս ) հասանէ 'ի նոյն տեղի : Եւ արեգա
կն 'ի տարուոջ . և երկինք զմի՝ տիւ և գիշեր
առածեալ զինքեամբ շրջին 'ի նոյն տեղի . և
է աստեղք միայնն զնայ՝յուռնք , և այլքն ամ

բևեռեալն յերկինս. և որ գնայունն աստեղ-
քն են, արեգակն և լուսինն՝ և այլ ևս Է աս-
տեղք, ոչ եթէ յարևելից յարևմուտս գը-
նան այլ յարևմտից յարևելս: Ի՞ տան օրի-
նակ ինչ որ ոչ նմանէ. եթէ յորժամ անիւ
շրջանակիցի. և մրջիւն մի՝ ՚ի խեցին գնայցէ
յարևմտից կողմանէ ընդ արևելս, վասն
անուին արագագոյն ընդ յարևմտից կողմն
շրջելոյ, թուի թէ մրջիւնն յարևելից յարև-
մուտս կոյս ընթանայցէ. որ ոչ յարևելից
յարևմուտս կողմն գնայ. այլ յարևմտից
յարևելս. և անիւն ստէպ շրջելովն այնպէս
երևեցուցանէ: Ի՞ երկինք ասեն որ չափ
՚ի վերեն՝ գոյն չափ ՚ի խոնարհ են. և գոյն
չափ յամ կողմանց շուրջ զերկրաւ, և զեր-
կիրս շուրջ ջուր պատէ. և զջուրն և զերկիր
պատէ օդն՝. և զօդն և զջուր և զերկիր հուրն:
Ի՞ լուսնի չէք իւր լոյս առանձինն. այլ
յարեգականէ գայ ՚ի նա լոյսն: Ի՞ յայտ ան-
տի է ասեն, զի յորժամ կուսէ արեգակն լցէ.
յայնժամ կուսէ սկսանի ՚ի նմա լոյսն ծնանել.
և ըստ հեռաւորութեան արեգականն,
սակաւ գայ ՚ի նա լոյսն, և ըստ տակաւ տա-

կա՛ մերձենալոյն յաճախէ ՚ի նա լոյսն՝ և յորժամ մօտ հասանէ ՚ի նա՝ լնու․ և յոր ժամ անցանէ զարեգակամբ, սկսանի տակա՛ նուազել․ և որ չափ ՚ի բաց հեռանայ, այն չափ պակասէ ՚ի նմանէ լոյսն՝ մինչև ամե նևին՝ նուազէ, և յորժամ միւսանգամ հան դիպի, ծագէ ՚ի նմա սակաւ՛ ինչ ՚ի լուսոյն վասն հեռաւորութեան․ և որ չափ մերձենայ, այն չափ առ սակա՛ սակա՛ աճէ ՚ի նա լոյսն։ Ե՛ր լուսին ասեն ՚ի ներքոյ քան զարեգակն և քան զամ աստեղս։ Ե՛ր քանզի ՚ի ներքոյ․ յորժամ զուգակշիռ դէպ արեգական պատա հիցէ, յայնժամ խաւարի արեգակն։ Ե՛ր պատ ճառս փոփոխմանց տարերաց չորից բնու թեանցն, զաստեղս իբրև զկենդանիս ինչ դնեն։ Զայս ամենայն ասեն հայթայթանօք․ զի զերկինս և զլուսաւորսն կենդա նիս և ամս կարծե ցուցեն։

( ՃԾ · ԾԷ · )

Մոլորեալքն 'ի ճանաչմանէն այ · ընդ եղկամս մոլորին :

ԱՐԴ՝ ԵԹԷ ՈՐՊԷՍ ԵՒ ԵՐԱնելի առաքեալն ասէ, թէ իմաստութեամբն այ ոչ ծանեաւ աշխարհ զած || I Կորն · I · 21 · և զինչ զարմանքեն ընդ նոցա · թէ զերկինս վասն անչափ մեծութեան և զլուսաւորսն վն առաւել պայծառութեան աստս կարծէին · յորժամ 'ի փայտս և 'ի քարինս · և 'ի գազանս և 'ի ճճիս անգամ զածութիւն խնդրէին · զորս իւրեանց իսկ բնութիւն բարքն կշտամբեն, այսինքն՝ զի արարչախնդիր և ածախոյզ են · և անկեալք 'ի մինչև ճշմարտութէ · 'ի բազում ոտն առեցին, և ոչ ուրեք եղև նոցա կայ և հաստատութի : Զի խնդրելն զած՝ գովութեան արժանի էր · և ոչ զմին և եթ՝ այլ զբազում մուծանել աննշմարին անբարշտութի : Եւ առաւել յունաց

իմաստունքն գորովին . զի հասեալ 'ի վերա
իմաստութեն չծանեան իմաստութքն զարարիչն ։
Վասնզի զնեն և նոքա մի ինչ ինքնակաց պատ
ճառ ա̃մի , որոյ ոչ յումեքէ է եղեալ . այլ
ինքն անձամբ ինքնակաց առաջին գտեալ . և
երկրորդ ա̃ծ և արարիչ զնեն զմիտս . և եր
րորդ զշունչ . զոր ոգի ա̃մի կոչեն ։ Զերկու
սին 'ի միոջէ պատճառէ անտի զնելով՝ ցու
ցին թէ՝ մերձեցան 'ի դրունս ճշմարտի գի
տութեն . և 'ի նոցանէ այլ անթիւ իմանալիս
երևելիս զա̃ծս ծննդեամբ ստեղծանելով՝ ան
ձամբ անձին փակեցին զդրունս հաւատոյ գի
տութեն ։ Զի իբրև զարեգական և զճառայ
գայթս զնեն զա̃ծ . և զա̃ծսն իմանալիս և
երևելիս՝ և ընու́ խոկ զաշխարհ՝ մշտնջենա
ւորակից նմա ։ Իսկ յա̃մի զնորա ոգին իբրև
շունչ ա̃մի , յերկինս և 'ի լուսաւորսն . և 'ի
հուր և յօդն և 'ի ջուրս և յերկրի . մինչև
ցքարինս և ցփայտս և ցծառս և ցարմատս
խոտոյ անդամ ։ Իսկ այնու կենդանութք ասեն
ա̃մ արարածք զնր ընութենէն կախեալ կան .
ոչ ճառագայթք արեգական զանուէն կախ
եալ կան . և ինքն մի է և բազում . և բա

գումի՛ և մի • որպէս սրբոդակն մի է և բաղ
ում: Զի մի՛ անձնէ և բազում ճառագայթք
և զայս ոչ ամենեքին այսպէս ասեն: Այլ են
բազում կրօնք փիլիսոփայից: Պիւթագոր
եանքն և պերիպատետիկեանքն՝ միութի և խնա
մակալութի ասեն • և չորհնել ածոց: Իսկ կրօնս
պիւթագորաս զընչաւորաց միս չճաշակել •
և 'ի զինւոյ ժուժկալել • և 'ի լուսնոյ 'ի վեր
զամ ինչ որէ՝ անմահ համարել • և որ ինչ
նորա 'ի ներքոյ՝ մահկանացու: Իսկ փոփո
խումն շնչոց 'ի մարմնոց 'ի մարմինս՝ մինչ ցանա
սունս և ց'ձկնս անդամ: Իսկ լռութե կրօնս
սահմանեաց, և յետոյ զկուր անձն ած անուան
եաց: Իսկ պղատոնեանքն, ած և հիւլէ և
իդոս, որ առաջին նիւթ է • և երկրորդն
առանձինն ինչ ուրուք • և զաշխարհս՝ արա
րած և եղծանելի • և զշունչ՝ անարար և ան
մահ և ածական: Որոյ գ մասունք են • բանա
կան ցասմնական, և ցանկական: Իսկ զկանայս
հասարակաց ամենեցուն համարել • և մի՛ ումեք
մի կին առանձինն ունել • այլ զոր արքն կա
միցին, և կանայքն անխտրժելցեն, այնց ընդ
այնս լինել: Իսկ փոփոխմունս շնչոց յայլ և

այլ մարմինս՝ մինչեւ ց՚ճճիս եւ ց՚սողունս անգամ • միանգամայն եւ ա̃մս բարուսս 'ի միոջէ եղեալ սահմանեն ։ Իսկ ստորիկեանքն մարմին զա̃մ ինչ եղեն ։ եւ զերեւելի աշխարհս՝ ա̃մ համարեն ։ Իսկ իմանք 'ի հրոյ եւ ես, համարին ունել սմա զէութիւն • եւ ա̃մ զմիտս սահմանեցին լինել թէ շունչ ամի լցեալ սարերաց • երկնից եւ երկրի ։ Մարմին նմա՝ զամենայն ինչ որ է, եղեն, եւ այս աշխարհս, զուսուսանեն ։ Ո՞ զմարմինս անմնեցուն՝ կորուստականս • եւ զշունչս՝ փոխանեալս 'ի մարմնոց 'ի մարմինս ։ Իսկ եպիկուրեանքն ասեն թէ, անհատ եւ անբաժին մարմինք էին զառաջինն, եւ անտի եղաց ա̃մ ինչ ։ Ո՞ վաղճան լաւութեն՝ զցանկութ սահմանեցին • եւ եթէ՝ ոչ ա̃մ գ՚ոյ եւ ոչ խնամակալութի որ վարիցէ զա̃մ ։ Այս են կրօնք մոլոր մայից ։

( Ճառ . ԳՋ , )

Կռապաշտութեան պատճառ սերմն ։

Դրոշեալքն 'ի Նարայէ ։

ԲԱՅՑ ՀԵԹԱՆՈՍՈՒԹԻՒՆ սկիզբն 'ի սերուքայ ժամանակաց անտի եղև • զի որ լա՛ոք եկեալ յՃ մռանէր • վասն յիշատակի քաջուէն • զպատկերն երանգօք 'ինկարս հանէին , և դրօշելոց հանդամանք առ Թարայիւ հարբ Աբրահամու ։ Եւ անտի իւրաքանչիւր ոք իւրովի առուեստիւ զնոյն դրօշէր ։ Պարբերին զարգնութեամբ • հիւսն հիւսնութե • արծաթագործն և պղնձագործ • և քարակոփ և բրուտ • իւրաքանչիւր ոք ըստ արուեստիցն ։ Եւ անտի կարգեալ հասանէր յեգիպտացիս և 'ի բաբելօնացիս և 'ի փռիւգացիս՝ և 'ի փիւնիկացիս գործ դրօշագործութե և խորհուրդք նորին ։ Եւ ապա 'ի հելլէնս՝ ( որքին յոյնք ) առ կիկրոպեաւ , և ևս յետոյ առաւել սաստիկք

առ

առ կռօնան · և ռեհան · և դիոնսան · և ապողոնիւ , և առ այլովք բազմօք · զորս մի ըստ միոջէ՝ ածս անուանէին ։

Եւ հելլէնք կոչէին յոյնք · յառնէ միոջէ , որում Հելլինոս անուն էր յելլադացւոց աշխարհէն ։ Բայց այլք ասեն թէ՝ 'ի ձիթենւոյն որ յաթէնս բուսաւ խորովն · վասն զի ձիթենի յունարէն ելեա կոչի ։ Բայց յոյնք 'ի յաւանայ · որ էր մի յառաջնորդաց աշտարակագործութեան · վասն որոյ մերօս ամենեքին կոչին յաղագս բարբառոյն բաժանելոյ ։ Քանզի բաժանումն յունարէն մերիսմոս կոչի ։ Եւ առաջին կրօնքն խուժականք · սկիւթականք , և հեթանոսականք կոչէին մինչև ցկն Սերահամու ածպաշտութիւն և աղաւաղեաց զայն ։ Եւ յուդայութիւն 'ի յուդայէ ( որ է հրէութիւն )'ի չորրորդէ որդւոյն յակոբայ · յորմէ թագաւորութիւն էր , և կալաւ անունն զամ ազգն յուդայական ։ Եւ 'ի վախճանի հրէութեան · Քրիստոնէութեան անունն 'ի քրիստոսէ որ նախ յանուն ոք անուանեցաւ աշակերտելոցն ։

( Ճառ . ԾԷ . )

'Ի բնութեան ևրոց շնորհ ենդրելն ես վելոյ : և ՐԷ ու ևուրեանն անհաղորդելն է :

## ՐԴ 'Ի ԽՆԴՐԵԼՆ ՓԻԼԻՍՈՓԱ

յեց զմարդ 'ի բնական օրինաց որ 'ի միտսն անկեալ ( ըստ յառաջագոյն ասացաք ) զուղղութիւն արժանի է : Այսպէս 'ի բազում ժամս անկանել՝ և զաշխարհս նմա մեղ տրտմեցուցանելով զնել, անձնաւորին անբարբառ ութիւն , և 'ի դէպ ելանէ նոյն առաջնորդական քանն , եթէ՝ ծանեան զմարդ և ոչ իբրև զմարդ փառաւորեցին ․|| Հռով․ Ա․ 21 ։ Զի ոչ սա ռաւորել այնէր թէ յարարածոցն մկնեալ էին զիմաստս արարչին , որով և արարածքն իւր խորաքննէին շարժմամբք և փոփոխմամբք զարարչէն քարոզեն : Այլ եթէ ասսնեղջն ը նոցա բանդագուշանացն մեծք իցեն , և եր կինք և արեգական և լուսնին ( որք անխօսք և անմռունչքեն )' զինչ ասելն իցէ՝ պատճառն

քան զպատճառաւորսն ։ Իբր մանաւանդ յոր
ժամ զնոցին խակ զմիտսն եւ զ շունչ ․ ( եթէ
մարթիցի՝ ) ոչ շունչ ասել , զամենայն արա
րածս , զշնչաւորս եւ զան շունչս բնութեամբ
'ի նոյն էութենն դնեն ․ որ անհնարին անբարշը
տութիւն ․ զոյ զնորոյ էութենն կենդանութի,
հոգեւորաց եւ շնչաւորաց եւ անշնչից առ հա
սարակ համարել , եւ ոչ առաւել արարածս
քան կենդանութի՝ 'ի հրեշտակս եւ 'ի դեւս՝ եւ 'ի
մարդիկ որք բանաւորքն եւ մնաւորքն են ։
Իբր յայլ շնչաւորսն բնական կենդանութի
'ի չորից նիւթոց խառնեալ եւ յօդեալ՝ որք
յորժամ քակտիցին , եւ կենդանութի 'ի նոյն
չորեսին հիւթսն լուծանի , են որք հրեշ
տակաց եւ դիւաց եւ շունչք մարդկան ։ Որդ՝
եւ յիւրեանց բանիցն խակ ոչ ամաչիցեն՝ որք
զշունչն անարար , անմահ եւ անծնելին [illegible]՝ յոյ
բնութ անոր ասեն , եւ դարձեալ զտանջանս
եւ զպատիժս շնչոցն յանցուցելոց դնեն ․ որ յե
տին հայհոյութի է՝ եթէ էութենն ոչ 'ի մա
սունս բաժանիցի՝ եւ 'ի բազում շունչս կո
տորիցի ․ եւ դարձեալ զնորոյ զկէս բնութին միւս
կէսն տանջիցէ ․ եւ կէսն 'ի փառս , եւ կէսն

յան

յանարգանս · և մի՛ թերին յանուշս և միւս
թերին 'ի դժոխս ։ Ուստի՞ դարձեալ ասեն · թէ
ոչ կենդանութիւն ինչէ յամի , զի՛ որդ լցէ՝ զի
ամենայն ինչ շարժի՝ և սերմանիք և տունկք
արկեալք յերկիր՝ բուսանին և յէգս մարդկան
և անասնոց անկեալք սերման՝ դան 'ի ծնունդս
և 'ի յաճումն · զորս՛ և ո՛չ մեք ուրաստ ինչ
եմք վասն փորձոց իրացն զարդեանցն յայտ ա-
ռնելոյ ։ Այլ խնդիր այնէ , թէ այն կենդա-
նութիւն ոչ ո՞յ էութեան կենդանութիւն է , այլ
արարածական կենդանութիւն · այլ այլ 'ի բա-
նաւորսն և 'ի մտաւորսն , և այլ այլ յանա-
սունս և յամ շնչաւորսն · և այլ այլ 'ի բնա-
կանսն , որպէս 'ի սերմանս՝ և որ 'ի յէգս մարդ-
կան և անասնոց անկանին · յորոց մարդկանն
առաւել և պատուականագոյն է ։ Յորում
և բնական կենդանութիւնն է · ըստ մարմնոյն · և
բանաւորսն սքանչելի ըստ շնչոյն ։ Զի և մար-
մինք նոցա թէ որ 'ի չորից հիւթոցն կան · և
հոգին ոչ 'ի չորիցն հիւթոց յօդելոց , այլ
'ի պարզական և 'ի սոսկական բնութէ ։ Իսկ
այլոց անասնոց , ոչ նոյնպիսիէ , այլ 'ի բնա-
կան և յազդեցական բնութէ · և սերմանց ոչ

նոյնպիսի , այլ 'ի բնական և յանշնչական խաղացից : Նոյնպէս և ոչ 'ի լուսաճորոյն ճնչաճորութիւն ինչ բանաճորէ , այլ բնական և անզգայական շարժմունք : Աստի ոմանք և հրեշտակս վարիչս եդին 'նց :

( Ճառ . ԾԸ : )

Դեւք չընդունելեան երայ` ուչ կարեն կոկեել :

ՅԼ ՄԵՏ ԸՍՏ ԳՐՈՅ ՍՐԲՈՅ

զհետ երթիցուք ( որ դանձրեւացն ասէ , թէ չեւ և ս էր ոչ տեղացեալ յերկիր ) || Ծնն . Բ . Ե : Դէ ոչ որպէս ոմանք դանդաչեցին թէ` սատանայ ունէր իշխանութի շարժելոյ և փոփոխելոյ զօդս , զի այնմ զօր առաջեալն ասէ , թէ ըստ իշխանի իշխանութեան օդոյս այսորիկ || Եփես . Բ . Բ : Իշխան օդոյս այսորիկ կոչէ զնա` վասն յերկնից անկանելոյ և 'ի յօդս թափառելոյ և յայտ ան

տին՝ զոր ասէ, թէ օդոյ խառնարկս այսորիկ՝ զի ցուցցէ թէ 'ի լուսոյ 'ի խաւար կործանեալ է. և չէ օդոյն փոփոխիչ մերթ յանձրևս մերթ 'ի ձիւն, և մերթ 'ի կարկուտ. քանզի այս գործ է այն և ոչ սատանայի ։ Ասասցէ դաւիթ հոգւոյն սրբով 'ի մօտոյ, թէ հանէ զամպս 'ի ծագաց երկրէ և զփայլատակունս յանձրևս արար. և հանէ զհողմս՝ 'ի շտեմարանաց իւրոց. ‖ Սող. 134. 7 ։ Եւ դարձեալ թէ զնէ զձիւն իբրև զասր. և զեղեամն իբրև զմոխիր ցանեաց. և արկանէ զսառն իբրև զպատառս, հանդերձ այլովքն. ‖ Սող. 147. 16 ։ Եւ այլ մի մարգարէ ասէ. թէ կոչէ զջուր ծովու և հեղու զնոսա 'ի վ(երայ) երեսաց երկրի ‖ Ամովս. 9. 6. և յոբ ասէ, ո ծընաւ զշիթս անձրևի և յո՞ր որովայնէ ելանէն սառնամանիք. և զեղեամն յերկինս ո՞ ծընաւ. որ իջանէ իբրև՝ զջուրս ծորեալ ‖ Յոբ. 38. 29 ։ Զի ցուցանիցէ թէ այս գործ է և ոչ այլ ուրուք ։ Նոյնպէս և զլուսաւորսն շարժել. նորա բանին գործէ և ոչ այլ ուրուք ։ Եւ ոչ միայն է աստեղք զնոյնունք են և այլքն առանց զնացից, այլ ամենեքեան զնոյնունք.

կէսքն յամրագնացք և կէսքն արագագնացք ․ և ոչ յերկինս բևեռեալքն ո՛չ յառաջագոյն ասացաք ․ թէ՝ իբրև զուռնականն շրջեցին ․ և մերթ յայտնեսցին և մերթ ծածկեսցին ։ Իծ որ առաւել ծաղուն արժանի է ․ թէ արեգակն յարևմտից յարևելս գնայցէ ։ Իծ ընդէր ոչ զարևմուտսն արևելս կոչեցեն ․ և զարևելս արևմուտս ։ Այլ ընաւ իսկ ասեն ոչ ուրեք մտանէ արեգակն ․ և թէ ոչ մտանէ , անտի յայտ է՝ զի ցայգ 'ի ն՞ր լուսոյն 'ի լուսնի ամանն լոյս ծագէ , քանզի նոքն երթեալ հեռացեալ յայլ կողմանս երկնիցն դըտանի ։ Եթէ ասիցես՝ թէ նա յերկինս իցէ , 'ի ցայգ խաւարն որ լինի ուստի՞ իցէ ․ ասեն յերկինս ստուերէ լինի ։ Իսկ անդ որ 'ի վեր երկինս խաւարն լինի՝ ուստի՞ իցէ ։ Եւ ապաքէն յայտ է՝ թէ ուրեք ծածկի 'ի ցայգ՝ ո՛չ և 'ի մտիցնէ տեսանել ․ զի իբր 'ի վերուստ 'ի խոնարհ իջանէ , և դարձեալ յելանելն իբրև 'ի ներքուստ 'ի վեր ելեալ համբառնայ ։ Եւ 'ի զուր է ճամարտակելն նոցա զի այն չափ մեծութեի երկնից սան քան երկրի ․ զի ամտուր ղերգ զերկինս թղաւ ասեն և զերկիր

քլաՀ ∥ Եսա. 40. 12 ։ Ո՞ւր ոչ աՀելի զթիզն քան զքիլն գտանեմք ։

( Ճառ. ԾԹ ։ )

Լուսինն ոչ տանի լոյս ։

## ՀԱՐՑԵԱԼ ՎԱՍՆ ԼՈՒՍՆԻ

Թէ՝ ոչ իւր առանձինն ունի լոյս ՚
Նախ նորա բանն սուտ է զոր ասեն ՚
եթէ ՚ի յաճախելն՝ յամ ի միջ աճէ հիւթն որ
՚ի նմանէ. և ՚ի լնուլն լնու, և ՚ի պակասելն
պակասի, այլ փորձ իրացն իսկ յուղերս ամ
մանրեաց ցուցանէ. և ՚ի ծառս և ՚ի տունկս
խոնաւութիւն. և յարբոյն տեղիս ինչ են ծա
փուց՝ որոց ջուրն ըստ աճել լուսնին՝ աճէ և
ըստ լնլուն՝ լնու. և ըստ պակասելն՝ պակասի ։
Ո՞ր նոքա այս չափ ժամերտեալք մինչև զամ
մարդկան աչս կամին փակել. որ ցայգ ՚ի մէ
տանել արեգականն առաւել պայծառացեալ
զլոյս լուսնի տեսանեմք։ Զի՞նչ արգ արագագոյն
քան զարեգակն զչանձնաւոր լուսինն ասիցեն ,

զի նա ասէն ՚ի աճուրբ կատարէ զնթացմն ։
և արեգակն ՚ի տարւոջ ։ Զորս փորձ երացն
յանդիմանէ ․ և ամծատուր գիրքն որ ասէ ,
թէ արար երկուս լուսաւորս մեծամեծս և
եդ զնոսա ՚ի հաստատութեն երկնից ։ Իսկ զի
զառաւել պայծառութի արեգականն ցուցա
նիցէ՝ ասէ ․ արար զլուսաւորն մեծ յիշխա
նութիւն տունջեան , և զլուսաւորն փոքր
յիշխանութի գիշերոյ և զաստեղս ‖ Ծնն․ 1․16 ։
Ուստի յայտէ թէ՝ յերաքանչիւր իշխանու
թիւնս կարգեալն , և ոչ մի ՚ի միոջէ առնու
զլոյս ։ Իսկ զաճելն և նուազել լուսնի , երբե
ընդ պատնիւք իմն մտանել և ելանել ասէն
իմաստունք ։ Իսկ նշանս անուն տան , զի է
երբեք յորժամ յաճմունսն իցէ՝ և ՚ի նլոյն՝
շուրջ զանօթումն ծանրանայ ․ որպէս թէ ընդ
սակաւ ինչ փեռեկուամ ծերպից ․ նշոյլք երե
ւեսցին ։ Իսկ դարձեալ խաւարելոյ արեգա
կանն՝ եթէ լուսնին պատահելն պատճառ իցէ
յորժամ լուսինն միջամտեացէ՝ նմա զինչ պա
տահիցէ ։ Եթէ զաստղ պատճառ պատահե
լոյն դնիցեն , ահա ոչ տեսանեմք այն չափ
մեծ աստղ յերկինս որ պատահելով լուսնին


ծած

ծածկել կարիցէ զլուսինն ։ Ո՞չ ապա ղ ցածագոյն գոյ քան զլուսինն · թէ 'ի ներքոյ նը հանդիպեալ զնա խաւարեցուցէ ։ Նա և թէ զարեգական լոյսն արգելուլ կարէր լուսինն , ապաքէն զիւր լոյսն ծագէր յերկիր · զի գտանայ՝ իբրև զլուսնակայ երևէր տիւն և ոչ ամենևին խաւար ջուտ ։

❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊❊

( Ճառ. Կ ։ )

Լուսաւորչին խաւարին ասէ՝ յայ ։ և ոչ լուսին յերկիր իջանէ ։

ՅԼ. ՃՇՄԱՐԻՏԷ ԲԱՆ

Ա գրոյն որ ասէ , թէ դարձուցից զարեգակն 'ի խաւար և զլուսինն յարիւն ‖ Յովէլ. 2. 31 ։ Զի ցուցցէ թէ տէրէ լուսաւորացն՝ և լուսաւորելոյ և խաւարեցուցանելոյ առ 'ի կշտամբութիւն արևապաշտացն և լուսնապաշտացն ։ Ո՞չ չէ

ցնար լուսնի յերկիր իջանել . ո՜չ կախարդաց
տեսեալ 'ի ժամանակի հրամանաւն ոչ զլուս
նոյն արեւնագոյն լինելոյ զկերպարանն ,
գիտէի նմանել լուսնի բարբանջեն . թէ զլու-
սին իջուցանիցեն որում չեն մարթ առնել ,
թէ՝ որ քան զերագոյն աշխարհս մեծ է՛ . թէ՝
'ի կալ մի փոքրիկ ամփոփիցի եւ կթիցի
անմտելին ։

Ո՜ քանի՞ անթիւք ի՜րոց կախարդացն են՝
յերկրի ։ եթէ իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ
իջուցանել կարէր զնա՝ , ոչ երբէք տայինն նմա
ելանել յերկինս ։ Այլ զի ոչ երբէք իջանէ՝ ,
յայտ անտի է . զի ոչ զիջանելն ոք տեսանէ լը-
նորա . եւ ոչ զամբառնալն ։ Իսկ եթէ կայցեալ
միտ դնիցես , անդէն մթացեալ առօթն լու-
սաւորի առ սակաւ սակաւ՝ մինչեւ ամենեւին
յարդարի ։ Զի թէ իջանելոյ ինչ ցնար դոյր ,
թէպէտ եւ զիջանելն ոք ոչ տեսանէր , սակայն
զհամբառնալն ամենեքեան տեսանէին ։

Այլ լուսաւորացն այնչափ ինչ է՝ ո՜չ տժա-
տուր զիրք անեն թէ՝ եղիցին 'ի նշանս եւ
'ի ժամանակս եւ յաւուրս եւ 'ի տարիս ։ || Ծն. Ա.
1. 14. Որդ եթէ լինին ինչ 'ի նշանս կամ չէր

մոց կամ ցրտոյ աստեղք, ոչ եթէ երբեւ ըն-
կենդանիս ինչ լինիցին, այլ թէ երբեւ ույ կար
գեալ յոյն, զի մի դադարիցք ինչ յարաշ̅ծոցն
ույ լիցին ։ Եւ յուշաց իմաստունքն այնու դս-
րովելեք են, զի թողեալ զպատճառն՝ պատ-
ճառաճորացն պաշտօն մատուցանէին, որ-
պէս երանելի առաքեալն ասէ՝ թէ՝ մոլորեցին
և պաշտեցին զարարածս և ոչ զարարիչն ։
‖ Հռոմ. 1.25. Եւ դարձեալ ոչ ուր ասենն է՝ եթէ
զերկիրս ջուր պատեցէ այլ ընդ երկիր և ՚ի
վերա երկրի են ջուրք. և ըստ երկիր անդր՝
ոչինչէ՝ և ոչ եթէ ջուրք ։ Եւ օդ ընդ ջու-
րբս և ընդ երկիր խառն է. և զի ընդ ջուրս
օդ խառնէ, ՚ի զեռնոցն յայտէ՝ որք ՚ի ջուր
ոյն զօդոյն կենդանութիւն ծծեն ։ Եւ զի ընդ
երկիր նոյն օդ խառն է, յորժամ անձրև լեալ
լիցէ՝ և արև տայցէ, ՚ի գոլորշոյն որ ՚ի սրտէ
երկրին ՚ի վեր ցոլանայ, յայտ յանդիման ե-
րևի ։ Եւ ընդ օդս հուր խառն է, ՚ի փայլա-
տականցն որ ՚ի շփելոյ ընդ միմեանս հողմոյն
և ամպոց յարձակին, յայտ յանդիման ցուցա-
նին ։ Եւ դարձեալ թէ յապակիս սպիտակ
ջուր արկեալ յարևու ունիցիս լուսաճորու

թեամն արևային մնեալ ընդ ապխտակութիւն ապակւոյն և ընդ յստակութն ջրոյն օդով թափանց անցեալ՝ հուր ծնուցանէ ։ Ո՞չ զի ընդ ջուրս հուր խառնի է , 'ի քարանցն հանելոյ 'ի ջրոյ զորքան ընդ մեծամեծ շիկացին և հանեցեն հուր՝ յայտ յանդիման ցուցանի ։ Ո՞չ գիշերի յորժամ առ ծով եզեր կայցես , և ըւ ջուրն ժգթիցես , 'ի շողշողէ լուսոյ հատուածին ։ Ո՞չ զեռունս որք 'ի ջուրսն 'ի ներքս են , 'ի հրոյ հիւթոցն յօդեալ են · յերկրէ և 'ի ջրոյ · յօդոյ և 'ի հրոյ · որպէս և մեր մարմնաւորքս որք 'ի պատմարանին ։ Զի այնպէս կազմեաց ած զդ · նախ զչորս հիւթսն մեկնեալս արարեալ , ապա նոքօք յօդեաց զմդ և միոյ արար նէր գործ է ամ ինչ · և նոյն վարէ և տածէ զբնաւս ։

( Ճառ . ԿԱ . )

Թէ [illegible] և [illegible] . ոչ են [illegible] ։ և վասն [illegible] [illegible] [illegible] ։

ԶԻ ՈՉ ՈՐՊԷՍ ԳԸԼՈՒԽ փիլիսոփայիցն նոցա պիւթագո-րոս՝ և պերիպատիկեանքն ասեն. մի միութիւն պատճառ ամի, և խնամակալութի զոր ոչ 'ինմանէ ասեն, այլ թէ զօրութի ինչ իցէ առանձին խնամակալութիւն։ Իսկ որպէս պատճառ ամի զմիոյն միութէ տայ, և զխնամակալութիւն ևս եթէ ընմանէ ընէր, զեղեցիկ և զօրութի արժանի կարգէր։ Բայց զի զայլ զպատճառսն կարգէ՝ և զայլն զխնամակալութիւն, պարսաւանաց արժանիէ՝ և ոչ յարգանաց ։

Ն՞ զարմէւ զի չամծոյն ոչ հրամայեաց զօհել՝ այնու զովելին . բայց՝ զի ոչ յայտնի քարոզեաց թէ՝ մի՛ ամէ և ոչ բազումք, այ

նու կարի դարովնըն ։ Գովելն՝ և առաւել գովելի , զի վասն կարեաց և ցանկութեանց յաղթելոյ՝ 'ի կերակրոցն կրճատորեցաւ , բայց զի փոփոխմունս հոգւոց 'ի մարմնոց 'ի մարմինս եւս , այնու յորժ նուէրելն · որպէս թէ արդարոցն մնալոց հոգւոց՝ յայլ 'ի սուրբ մարմինս փոխեցին · կամ 'ի մարդկան կամ յանասնոց սրբոց · և այն նոցա երբ ընդ հատուցման բարեաց գործոց լինիցի՝ և մեղաւորացն հոգւոց յաղտեղի մարմինս փոխեցին · կամ 'ի մարդկան կամ 'ի գազանաց և 'ի ձկանց և 'ի սողնոց · և այն նոցա ընդ հատուցման չարեաց գործոց լինիցի ։ Իսկ զմիսն չուտել եթէ վասն զկարիս մարմնոյն խափանելոյ հրամայէր , բարւոք և յիրաւի առնէր · ապա եթէ երբ 'ի պղծոյ 'ի մէջ արարածոց հրամայէր հրաժարել՝ վաս թարգոյն ։ Նաև յայտնի պատճառքն ( ուստի զմիսն չնչաւորացն հրամայէրչուտել ) որպէս թէ հոգի աստուածեղէն իցէ 'ի մսեղէն , և վասն այնորիկ չիցէ պարտ ուտել զմիս կենդանեացն , վասնորոյ և մոգքն նախ յաղէն , և ապա սպանա

նէն զանաստուածսն , զի յանդգնոյ եղանիցեն շունչ-
քըն 'ի մարմնոց զննելեացն ։ Իսկ զայն ոչ գիտեն
թէ՝ երկու մահուամբ սպանանեն , մի յաղե-
լոյն և միւս ևս փողոտելոյն ։ Նոյնպէս և պի-
թագորաս ոչ հրամայէ անասունս զոհել դի-
ցըն ․ ոչ թէ չիցէ պարտ զոհել ածս ածոց ․
քանզի հոգի ածեղէն ասէ յանասունսն ․ և
յայտ առնէ զի երկրպագանել հրամայէ և
զոհել ոչ ։ Աւարի անարժան գործ էր և 'ի
լուսոյ 'ի վեր զամ ինչ անմահ համարել ։
Այսր առնէ թէ՝ զայն ամենայն ածս կար-
ծէր ․ և անտի 'ի խոնարհ մահկանացուս դը-
նելով՝ ցուցանէր թէ հուր ․ յօդ և երկիր
կենդանիք ինչ իցեն՝ և մնանիցին , որոց ոչ
զկենդանութիւն զգացեալ և ոչ զմահու ազդ-
ումն առնուն որ չիչաճորացէ և ոչ անշըն-
չոց ։ Իսկ հինգ ամեայ լռութիւն զոր 'ի յա-
շակերտութի եկելոցն սահմանեաց՝ թէպէտ
և մեծի ծուծկալութե օրինակ էր , ( քանզի և
ոչ հարցանել ինչ իշխէին բայց միայն լսել ․ )
այլ ոչ ինչ կարէ՝ յօգուտ էր ․ զի թէ յառաջ
քան զհինգամեայ զժամանակն՝ վճարէր ոք
'ի նոցանէ , թէպէտ և կարի քաջ 'ի լսելոյն

իմաստնանայր , ոչ ինքն վայելէր յիմաստու-
թեանն . ( քանզի ոչ իշխէր խօսել . ) և ոչ
այլ ոք . վասն զի ոչ ոք լսէր զիմաստութիւնն :
Եւ որ անձնարրին յիմարութեան է , յետոյ ա-
սէն զեւր անձըն ընդ անուանեաց . որ յառաջ
եւ հպարտութեան զխպեցաւ նմա . զի ոչ եկն
'ի միտ ըստ բանի իմաստնոյն . թէ՝ որ
չափ 'ի մեծութի հասանիցես ,
'ի խոնարհութեան կալջիր
զանձն . || Սիրաք .
3 . 16 :

( Ծառ . ԿԲ : )

[illegible]

ԻՍԿ ՊՂԱՏՈՆ ՈՐ ԱՍՏՈՒԱ-
ծըն և հռչ՛լ և 'ի դէս գնէ էու-
թեամբ , ցուցանէ թէ կերպարանաց
արարիչէ ընդ և ոչ ընութեց . ուսանի և նորին
աղանդացն աշակերտք նովին դանդաչէն :

Թէ որպէս ած էութիւն էր 'ի բնէ , նոյնպէս
և հիւլէն ․ և 'ի դրան ըստ նախատիպս ) որէ
աստուածային ինչ ուրուք ոչ էոյ արուեստագի
տութեան աստուածային էր ․ և հիւլէ այն նիւթն ,
և 'ի կենպարարաս և նոյն կարող ածել զհիւլն
որ խառնի խուռն վարէր ․ և ոչ 'ի չեք ինչէ
'ի դոյական զոյն որպէս և կարող ամենայն ։ Որ առ
կարութեն արկանել զնով ․ Թէ կարօտ եղև
յայլմէ նիւթ մուրանալ ։ Որով ոչ ինչ ա-
ռանել քան զարուեստագէտսն զմանի , Թէ
իբրև զնոսա կարօտ նիւթոց լինէ ․ Եւ զաշխար
արարած և եղծանելի տես , և երբեմն նա
և այլքն մշտնջենաւորեց այս ։ Նաև եթէ արարած
եղծանելին է , զի որք մշտնջենաւորակից այս
լինէ ․ և եթէ մշտնջենաւորեցէ որպէս ասենն ․
Թէ ․ որպէս սոսա ևս իւրք ոչ երբէք հեռանայ
յիմքէն նոյնպէս և ոչ աշխարհս երբէք զատ
յայ ։ Թէ այնպէս լինէ , գուցէ ասեն Թէ ա-
րարած և եղծանելի է աշխարհս ․ բայց Թէ
զայն ևս իշխեցեն ամբաստանել Թէ և որ պատ-
ճառ սոսուերին է , 'ի միջոյ բառնալոց լինէ ․
ապա Թէ այն ոչ լինիցի (քան զի և չ լինի իսկ)
և ոչ սոսուերն 'ի միջոյ բառնալոց է ․ և սա

բաբախիւ են դանդաչանքն ։ Իսկ շունչքն , թէ վասն զի յոյժ նուաղեալ են իցեն , անարարք և անմահջք իցեն , դ մասունքն 'ի նոյն ուստի է ցեն · բանականն՝ ցասմնականն՝ և ցանկականն , Ոչ թէպէտ և մինչ է յամ , զի նա է աղբիւր ամենայն բանաւորութե , այլ 'ի ցասմանէ և 'ի ցանկանալոյ 'ի վեր և ազատ է ամ ։ Բայն զի՝ առանց կարեաց և առանց մասանց է ամա կանն ։ Իսկ թէ ինքն ոչ ասենն լաւութեց վասն՝ կոյս վճարեցա յոէ , այլոց զի՝ արդ հրամայեր զկանայս հասարակաց համարել և ոչ խորում կնոջ և նթ՝ հակել ։ Իսկ զանեղէն շունչսն ընդ նր և նա իր՝ զատապէնան փո փոխելեա 'ի մարմնոց 'ի մարմինս համարէր · մինչև և 'ի սողունս անդամ և 'ի ձկնս , ո րոյ հայհոյութեին 'ի բուռն խոյ զնոյ բառ 'նր ամբարշտութեանն · որպէս թէ զկէսն յիւր յինքեան ունիցի՝ և զկէսն իւր 'ի սողունսն և 'ի ձկնս տանիցէ ։ Որ ոչ նորա է՝ որ ան բաժին և անքանակ և անհատ՝ և առանց մա սանց է ։ Իսկ նթէ ( որպէս և դանդաչենն ) բաղում ամք 'ի միոջէ այն ելեալք իցեն , ընդ էր ոչ բաղում աշխարհք իցեն , և ոչ բաղում

երկինք՝ և ոչ բազում արեգակունք, և ոչ բազում երկիրք. այլ թերևս դատարկ ածծ նման յիւրում : Ո՞ դատարկ ածքն ում պիտոյ լիցին :

(Ճառ . ԿԳ :)

Յուշանէ և շնորհացատուութեան տօնից Տեառն :



## ՍԿ ՍՏՈՅԳԵՆԱՆԳԻՆ ՄԱՐ

Մնապէշք, հայեցեալք յերևելի ան . զամ ինչ մարմին կարծեցին . և զերևելի աշխարհս ած համարեցան, որք աղանդամոլք կարծին ՚ի միկեանկայս : Բայց ոչ են քեանք զիմանալի ինչ զմտաւոր կարացին ածել՝ և ոչ յայլոց ուսանել կամեցան թէ՝ է ինչ զօրութիւն որ զերևելիս շարժէ և զշարժիչն պարտէ ած իմանալ և ոչ զշարժականսն : Իսկ ոմանք ՚ի նոցանէ ՚ի հրոյ եւ թէ ասեն զէութիւն աշխարհիս՝ վասն զարեգակն առաւել զարմանալի համարելոյ՝ և զէութիւն հրոյ սաստկագոյն իմանալոյ : Ո՛ հայեցեալք

՚ի

'ի միտս թէ՝ զո՞մ էաս միտքն նկատել մարթի վասն այնորիկ զմիտս ամ համարեցան, և իբրև զշունչ երկնից և երկրի՝ և ամի որ 'ի նմ, և՛ աչս՝ զլուսաւորսն՝ որք լաւ անարժան անմրտութեն և ոչ պատասխանի առնելոյ արժանի են ։ Իսկ զմարմին իբրև զայլսն՝ կորըստական համարին ․ և զշունչսն փոփոխելի 'ի մարմնոց 'ի մարմինս, զոր և ոչ նոքա յայտնի կարեն առնել՝ և ոչ այլքն աւազադրյնք քան զնոսա ․ զի ամենեքեան առ ասպէլս արկանեն ։ Իսկ թէպէտ և կէսքն համին ճշմարտութեանն, այլ չկացին 'ի ճշմարտութեանն ։

❋❋❋❋❋❋❋❋❋❋❋❋❋❋❋❋❋❋❋❋❋❋❋

( Ճառ․ ԿԴ․ )

Յաղագս իշխանաց եկեղեցւոյ աշխարհաց ։

ԻՍԿ ԵՊԻԿՈՒՐԵԱՅՔՆ ԲՆԱՒ ինքնակայ իսկ համարին զաշխարհս՝ ոչ թէ նախ հաղամանց ըմթանայն

որպէս յորժամ շողն ընդ երդ մտանիցէ ; և հողամաղք ինն երևին 'ի շողն այնպէսի ասեն՝ մարմինք անհատք և անբաժինք էին զառաջինն • և անտի Թանձրացեալ յօդեցան ինքըն աշխարհս • Իբր Թէ՝ ոչ Աստուած՝ և ոչ խնամակալուԹի ինչէ որ վարիցէ զաշխարհս ։ Զորոց և փիլիսոփայքն զմիտսն եպերեն , և ամենևին չհամարին զնոցա աղանդն գոլ ինչ ։ Զորոց և առաքեալն ասէ , Թէ առանց Աստուծոյ շրջէին յաշխարհի || Եփես • 2 • 12 ։ Որոց այն քան կամակոր յամառուԹի եղև՝ մինչև յայն չափ 'ի բազմաց նախնեաց փիլիսոփայիցն աստուածոց և ոչ մի Աստուած ընդունել ։ Տեսանես , զի գործ սատանայ հակուԹե այն չափ բռնացեալ ըմբռնելեացն մինչև անԱստուած հանել յաշխարհէ ։ Առ սերուքաւ եղև ասեն սկիզբն հեԹանոսուԹե , ուստի յայտնէ Թէ՝ ցայն վայր Աստուածապաշտք էին • և եկեղեցի Աստուծոյ 'ի սկզբանէ աշխարհի էր ։ Զորմէ և դաւիԹ 'ի հոգւոյն սրբոյ ուսեալ մատուցանէր զաղօԹս • Թէ՝ յիշեա զեկեղեցի քո զոր ստացար 'ի սկզբանէ • || Սաղմ • 73 • 2 ։ Բայց ԹԷպէտ և հեԹանոսուԹիւնն եմուտ յաշխարհ , այլ Աստուածպաշտուեթին ոչ ամենևին

պակասեաց ․ և յայտ անտի է՛, զի գնացեալ աբրահամ ՚ի հեթանոսացն եկն ա͞ծապաշտից պատահեաց Մելքիսեդեկի քահանայի ա͞յ բարձրելոյ ․‖ Ծն․ 14 ․ 20 ։ Ո՞ քահանայ ոչ երբեք անուամբ՝ եթէ ոչ ժողովուրդ գուցէ նորա ։ Ո՞ Մելքիսեդեկայ՝ որ Ք͞Ս. և եթ խօսէր ընդ աբրահամու և ոչ դիմօք ։ Ո՞ բարեկամքն յօբայ և եկեալ ա͞յ միայն ամենակալա՞ խօսէին ընդ նմա ։ Ո՞ այնպէս ոչ եթող երբէք ա͞ծ զաշխարհս առանց վկայութեան ․ որպէս մարգարէն առ հրէութիւն ասէր եբրև յերեսաց ա͞յ ․ թէ յամենայն տեղիս արկանեն խունկս , և մատուցանեն պատարագս անուան իմոյ ‖ Մաղա․ 1 ․ 11 ։ Զի ցուցցէ՝ թէ յամենայն դարս Ա͞ծապաշտք զը տանէին որք յանդիմանէին ըզ հեշտակապատոն ։

( Ժա · ԿԵ ։ )

Պատճառ յաճելոյ մարդասիրոյն չէ ։

ԱՅԼ ԱՍԵՆ ԸՆԴԷ՞Ր ՅԱ մեցաւ գալուստն քո՝ և կորեան այն չափ ազգք առանց ա՛ծ պաշտութե՛ ։ Պատասխանեմ Եթէ չէր ա՛ծ զքարոզս ա՛ծպաշտութե՛ն յամենայն դարս առաջեալ, Թերևս գի՛րք մուտ այնպիսի բանից · բայց զի ոչ երբէք դադարեաց 'ի վկայութե՛ն տալոյ , անձանց մեղ՛ դիցեն չհաւանօղքն՝ և մի՛ այ ։ Չեկն քո 'ի տղայութե՛ն աշխարհի · զի տղայոյն կաթն պիտոյ էր և ոչ հաստատուն կերակուր ։ Իսկ ոչ՝ յեռանդեան երիտասարդութեանն · յորժամ հեղեալ զեղոյր մոլորութե դիւապաշտութե՛ն · այլ նախ կրթեաց քարոզովք և մարգարէիւք իբրև կաթամբ , և ապա եկն տալ զկատարեալ վարդապետութի՛ն իբրև զհաստատուն կերակուր ։ Քանզի և ո՛չ տղայն որք հաստատուն կերակուր տայ՝ և

ոչ մեծամեծ խորհուրդս յայտնէ , և ոչ առատ-
բանս խօսի՝ մինչև 'ի կատարեալ չափ հասա-
կին հասանիցէ ։ Որպէս առաքելոյն առեալ
զինքեամբ զերեսս ամենայն մարդկութեան՝
ասէ՛ , մինչ տղայն էի՝ իբրև զտղայ խորհէի․
այլ իբրև եղէ այր՝ զտղայութեանն 'ի բաց
խափանեցի ‖ Կորն․ ԺԳ․ 11 ։ Զի ցուցանիցէ
թէ 'ի հասուն հասակի եկն յաշխարհ զկատա-
րեալն տալ զգիտութի․ որպէս յայսմ աշխարհի
մարթի հասանել գիտութե ։ Այլ 'ի վայե-
լուչն կատարելոյ գիտութենն՝ և զանձն և
զայլս անդր հրաւիրեաց առաքեալն ։ Աստ այժմ
փոքր 'ի շատէ գիտեմք․ այլ յորժամ եկեսցէ
կատարումն , դէմ յանդիման տեսանեմք ։
Ուստի յայտ է թէ՝ առ ամենայն կարօղէ ամ
և ամենայնի բաւական ։ Կարօղէր և վաղ
յառաջին յաճախեանսն առնել փրկութիւն․ այլ
այնպէս կամեցաւ , զի ոչ կարէր վաղ առնիցէ՝
և ոչ յոյժ անագան , այլ յորժամ դէպ և
պատշաճիցէ ։ Զի մի վաղն առնելով՝ ընալքն
վնասիցին , կարծելով թէ մշտնջենաւորք են
իցեն․ և մի՛ դարձեալ անագանն առնելով՝
կարծիք տկարութե լինիցին․ առաջին միջին ,

և վերջին խորհրդոց ։ Նա և զմարդն զոր ժառանգ ամենայնի կամեցաւ առնել՝ ոչ նախ քան զժառանգութիւն արար, այլ նախ զերկինս. և զերկիր. զջուրս՝ զհուր՝ զօդ. զլոյս՝ և զտունկս. զգազանս՝ զանասունս և զթռչունս ։ Նախ զտունն՝ և ապա զտնակալն. նախ զստացուածսն՝ և ապա զստացօղն ։ Նախ զծառայսն՝ և ապա զտէրն. զի մի՛ յորժամ յետոյ լինիցին (որոց իշխանն եղև) կարծիս վնասու առնուցու թէ՝ ո՞ւր արարածք իցեն ։ Նոյն յորժամ նախ զնոսա արարեալս տեսանիցէ, ծանուցեալ առնուցու 'ի միտ թէ՝ է իմն զօրութի որ արար և եդ զնո 'ի ձեռամ նորա. և զպատիւ փառաւորութեն մի անձինն առնուլ խորհիցէ, այլ ի՛ւր տէր արարիչն որ ձրի նմա զայն շնորհեաց ։

Սոյնպէս և զգալուստ որդւոյն իւրոյ յայնմ ժամանակի պատշաճեաց, յորում գիտէր թէ յօգուտ լինելոցէ ։ Իսկ թէ ընդէ՞ր ըստ պէսպէս հիւանդութեանցն ազգի ազգի դեղս ախտացելոցն մատուցանէր. զի որ սկզբան ցաւոյն դէպ իցէ, զայն՝ իսկզբանն մատուցանէ. և որ 'ընդմիջին, զայն 'ի միջոցին. և որ

'ի

՚ի յառաւել ցաւոյն , զայն հաւսկ յետոյ ։ Ո՞ր չափ ևս առաւել ամենաշնորհն՝ ( յորմէ ամենայն հանդամանք շնորհութեան բաշխին են ) ՚ի դէպ ժամանակի առնէ՝ զոր առնէ ։ Ոչ առաջին և երկրորդ և վերջին խորհրդով , այլ միանգամայն ըստ կամելոյն և զգործն որ դեմքը կատարէ ։ Նա՛ ոչ յետոյ ծնանի ՚ի նմա կամելն , այլ իբրև կանխագիտապէս՝ գիտէ զամ մինչև ինչ լեալ իցէ ։ Այլ որպէս պարտիցէ առնել . և յոր ժամանակի . և յոր պէտս ։ Նա՛ ոչ խառնիխուռն ինչ առնէ , թէ առ ապա զղջանայցէ և եղծանիցէ զստեղծուածն իւր ։ Նա՛ ոչ խիզք կարօտանայ առնելոյ ինչ յումեքէ . կամ յումեքէ ակն ունիցի . այլ բովանդակ յինքեան ունի զամենայն կարողութիւն առնելոյ և հաստատելոյ զամենայն և անխարխալ պահելոյ ։ Նա՛ չունի զուգ ընդ իւր զօգնականից իբրև զեղբայր կամ իբրև զընկեր . կամ իբրև զօտար ՚ի գործակից այլ միայն զիւր զօրութիւնն և զիմաստութիւնն . որ իւրոյ էութեանն ծնունդ է և մշտնջենաւորակից ։ Նա՛ զիւրոյ զէնութեան հոգին որ ՚ի նմանէ է և միշտ առ նմա . ան-

քանի և առանց բաժանելոյ :

( Ճառ . ԿԶ : )

Ասէ հեռուն ոչէ ձեռն աշխարհին : Եւ վասն էր որոր ըստեղծողն . և ըստ աղոյ կամօք :

ԶԻ ՅԱՅՍՄ ԱՄԵՆԱՅՆ յայտէ . եթէ ոչ հիւլ ինչ ( որէ նիւթ ) էր ընթերակաց այ՝ յորժամ ասեն յունաց իմաստունքն զարարածս արարեալ . և 'ի նմանէ չարեաց յաշխարհ մտեալ . որպէս ասեն աղանդքն որք 'ի նոցանէ առին պատճառս զհիւլէայն ածացուցանել . գնել ած հակառակ այ : Իսկ ոչ այլ ոք արարիչ էր չարեաց որպէս մոլորքն խաբին թէ՝ արհմն արար զչարիս . այլ մի միայն ած է արարիչ՝ և նոյն բարեաց և ոչ չարեաց , և մշտնջենաւոր արարիչ : Զի և մինչև արարեալ էր զարարածս , 'ի մտի խորհուրդ ունէր յառաջագիտութեն զայսման կազմածոյ արարածոց :

Իսկ չէր երբէք յորժամ չէր արարիչ․ այսու՝ զի ունէր յինքեան զկարողութի՛ն ամենեցուն բանական լինելոյ ։ Իսկ բազում պատճառք էին այլ՝ որովք ելին զարարածն առնել ․ Նախ զճշմարտութեան խնամութին չէր պարտ դատարկ թողուլ ․ զի մի՛ երբեւ զոկար ոք պարտաւեալ լինէր դատմեցի՝ առ ՚ի չկարելոյ առնել զայս ․ զորոց խնամութի՛ն յինքեան ունէր կանխակա՛լ գիտութ ։

Երկրորդ , քանզի բարերարն բնութ՝ չէին իրաւունք զբարերարութի՛ն անօգտակար պահել ։ Իսկ այլ ինչ բազում նման սոցին էր գո՛վ , վասն որոյ կարմածոյ աշխարհի արար սկիզբն՝ որպէս ոչ եթէ ճարտարութի իրաց ինչ գիտելցէ , եթէ զնուագածուն , և թէ զժշկուն և թէ զհիմնութի և արգեամբք զճարտարութեան չցուցանիցէ , ՚ի զուր ունի զհանգամանս ճարտարութե ․ քանզի ոչ ինչ վայելիցէ , և ոչ այլոց զգիտութի՛ն արուեստին ցուցանիցէ ։ Այնպէս և որ բարերար ոք իցէ՝ եթէ բարերարութեան վայելիցէ ոչ ցեն , ուր չահ իցէ բարերարութեն․ զի բարերարութեան առաքինութիւն այնէ՝ յորժամ

այլքն 'ի նմանէ վայելէցեն: Եթէ չէցեն որք վայելէցեն 'ի բարերարութենէն, զինչ շահեցէ 'ի բարերարութենէ անտի: Նոյնպէս և այ որ զամենայն ճարտարութիւն արուեստագիտութեան ունէր յինքեան. եթէ չէր զարարածս արարեալ, 'ի զուր կարծէր ունել զճարտարութիւն. յորժամ չէին որք 'ի ճարտարութենէն անտի երևէին: Նա՝ և ոչ բարերարութիւն բարերարութիւն ցուցանէր. եթէ արարածս չէր արարեալ, որք 'ի բարերարութենէն վայելէին: Այլ նա այնպէս բարերարէ՝ զի ոչ միայն զառնելն շնորհեաց նոցա, այլ և զուրախութիւն

լաւութեանցն վայելել:

Դարձեալ թէ չէր այ զարարածս արարեալ, և գիտէր իսկ 'ոչ 'ոք թէ բնաւ լիցէ ած՝ յորժամ չէին 'ի միջի՝ որք զկարողութիւն գիտութեան ստանայցին: Ուստի՝ քանզի յիւր գիտութիւն ածել կամեցաւ. և թէ՝ է ինքն, ցուցանել յօժարեաց: Վասն զարարածս առ իւրոյ գիտութեան ընծայեցուցանելոյ, զի վայելեցեն 'ի բարերարութենէ նր: Ընդ զպէտս նխ վասն մարդոյ արար 'ի սպասաւորութիւն ամ իրաց կարևորաց, և զմարդն յիւր փառս. զի

փառաւորեսցէ զտէրն և ծանիցէ զբարերա րութիւն ։ Ո՜հ այսպէս ոչ երբէք էր ամ դա տարկ յարարչութէ · քանզի միշտ 'ի մտին նկա րեալ ունէր զբոյս առնելոցն ։ Ո՜հ զի չէր 'ի դէպ 'ի կամսն և 'ի խորհուրդսն և եթ ունել զկարողութիւն , վասն այնորիկ առ յառնելոյ զկամսն և զխորհուրդսն , է ամ յայտ զարա րածս , զի իւր կարողութիւնն երևեսցի՝ և արարածքն 'ի նորա բարերարութեն վայելեսցեն ։

( Ծառ. ԿԷ ։ )

Թէ աշխարհս ողջ ինձ նուաճէր ։ և ոչ հոգւոյն յաւիտենից այ ։

ԱՐԴ՝ ՄԻ՛ ՈՔ Ի ՆՔՆԱԿԱՑ աշխարհս իշխեսցէ համօրէն · և մի ընթերակաց լինիջի այ · զի մի՛ զմեծութի զօրութե նորա խախտիցէ ։ Քանզի՝ որ ամե նեցուն չնորհեաց զլինելն որք ոչ էին յառա ջագոյն , ընդէր զզօրութիւն նորա 'ի միջոյ

բառնալ կամիցին, և արուեստագէտ միայն նիւթոյ ՚ի մէջ փոխ համարիցին, և ոչ ՚ի չգոյէ ՚ի գոյս ածող զհաստատս ածի։ Զոր ինչ ժամանակալից այ՝ և ոչ նիւթ ինչ՝ ուստի առեալ զարարածս կազմիցէ. այլ ինքն է ամենայն բնութեանց արարիչ և ոչ միայն կերպարանաց կազմիչ. և ոչ է ութեան է ականաց իրէք խառնիչ. այլ՝ գոյանալոյ գոյացելոցն գոյարար։ Զայսպիսիս պարտին ասել մարդիկ զայ. և այսպիսի պատմութեանց լինել պատմիչք, որով ած փառաւորի. և մարդիկք ոչ վնասին։ Այլ ըստ այ արժանեացն ( որ քան արժանաւոր լեցէ պատմիչ լինել ) ոչ ոք, բայց եթէ այ բարեկամքն, որք ըստ կարեաց իւրեանց վասն նորա սիրոյն զկեանս աշխարհիս արհամարհեցին. և մահու չափ վասն կենդանի յուսոյն որ առ այ՝ ջան գոր

ծեալ մատնեցին զանձինս ՚ի կոր

ուստ մարմնոյն, ուս

տի փրկութիւն

հոգւոյն գը

տանել.

( Ճառ. ԿԸ. )

Յաղագս ղօնաղան հերձուածոց խաղաղութ— դէ
ընդէմ այսր. և մաքիսիան անբարրշի, որ երեք ան
աստուածելըմբանն ։ Եւ ըստ յեռաս է որդի օտար
այն, որ աստուծեալ 'ի երկիւ ըղ բան
ընթեւ աւարաճա օրինայն այ ։

ՆՈՒԱՐԴ՝ 'Ի ՋՈՒՐ ԻՍԿ ՁԱ
նան իմաստունքն յունաց զփոյձա
ռել . այսու՝ զի զարարիչն և զարա
րածս 'ի միմեանց ոչ կարացին ընտրել . որք
միթոլ գիտացն խաւարեալք , ծնունդս բա
զումս և անթիւ չաստուածոց մուծանել դանդաչե
ցին . որպէս եսիոդոս ոմն իմաստուն 'ի նոցա
նէն . բազում ծնունդս աստուածոց համարէր ։
Իսկ հաւրոս ըղաբանեալ զնորին հետ երթեալք
պածուձեալ բանիւք՝ զնոյն ճամարտակէ ։
Իսկ այլք բազումք 'ի փիլիսոփայից . առաս
պելական բանիւք բանդագուշեալք՝ խոստա

նան զ՟յ պատմութիւն կատարել․ որք զա՟ծն ոչ ճանաչէին՝ և ոչ զարարիչն յարարածոց մեկնել գիտէին, զի արդ զ՟յ ճառել մտաբերիցեն։ Եւ՛ մանաւանդ որ քան զամենեսին իմաստնագոյն համարին զպղատոն, որ վասն ա՟յ՝ և վասն ոգւոց, և վ՟ն արարածոց խօսել յօժարեցաւ, Եկ՛ արդ՝ ընդ նմա իսկ մարտիցուք դոռուէ բանիւք՝ որ քան զա՟մ փիլիսոփայսն ա՟ծապաշտագոյն երեւի յունաց․ զի նորա առաւել դատանի չծանուցեալ զա՟ծ՝ և ոչ զանըջութիւն արարածոց․ զի յորժամ զն՟ր մեծարգոյ կարծիսն դձձեսցուք՝ և հանցուք զնա յաջաց իւրոյն խաբեցելոց, ապա ցուցցուք թէ ո՞վ ա՟ծ է, և զ՞ինչ նորա արարածք։ Եւ՛ մի՛ ինչ զօր առաւել անճառ համարի պղատոն՝ այսէ․ թէ միշտ էր ա՟ծ՝ և արարածս ինչ ոչ ունէր․ զորոյ զկամսն սիրեմ վասն զա՟ծն խնդրելոյ․ և զամբարտաւանութիւնն ոչ գովեմ։

Մարկիոն մոլորեալ մուծանէ օտարութիւն ընդ դէմ ա՟յն օրինաց․ եդեալ ընդ նմա և զչիւրն էութ՟ի․ և երիս երկինս։ Ի միջին ասեն ընակեալ է օտարն․ և յերկրորդումն

օրինացն ա՟ծ . և յերրորդումն զօրք նորա ։
Եթէ յերկրի՝ հիւլ՟ն . և կոչէն զնա զօրութի՟
երկրի , և այնպէս կարգէ զաշխարհէ և զարա
րածոց . որպէս օրէնքն ասեն . այլ և յաւելու
թէ հաղորդութ՟ե ընդ հիւլէայն արար զմ՟ն
զոր արար ։ Եթէ որպէս թէ էգ ոք ինչ և կին
ամուսնութ՟ե էր հիւլ՟ն ։ Եթէ յետ առնելոյ
զաշխարհս . ել ինքն զօրօքն հանդերձ յերկինս ։
Եթէ հիւլ՟ն և որդիք նորա մնացին յերկրի և
կալան զիւրաքանչիւր իշխանութի՟ . հիւլ՟ն յեր
կրի և օրինացն ա՟ծ՝ յերկինս ։ Եթէ տեսեալ
օրինացն ա՟յ թէ գեղեցիկէ աշխարհս , խորհե
ցաւ առնել 'ի սմա մարդ . և իջեալ առ հիւլ՟ն
յերկիր . ասէ՝ տուր ինձ 'ի կաւոյդ քումմէ ,
և յինէն տամ ոգի . և արասցուք մարդ ըստ
նմանութ՟ե մերում ։ Տուեալ նմա հիւլէայն
յերկրէ կւրմէ՝ ըստեղծ զնա . և փչեաց 'ի նա
ոգի . և եղև ադամ 'ի շունչ կենդանի ։ Եթէ
վասն այնորիկ անուանեցաւ ադամ , զի 'ի կաւ
ոյն արարաւ ։ Եթէ ըստեղծեալ զնա և զա
մուսինն նորա , և եդեալ 'ի դրախտին . ո՟մ
և օրէնքն ասեն ։ Գայլին համապաղ պատուէ
րէին նմա և ուրախ լինէին 'ի նմա . Երբե

յորդորոց հաստարակաց ։ Իսկ տեսեալ սաէ նոյն օրինաց՝ որ տւի՛ն էր աշխարհի , թէ այնուա կա՛նէ ադամ . և արժանի ըսպասաւորութե՛ն , հնարեցաւ եթէ զի մ՛րդ կարասցէ գողանալ զնա՛ 'ի հիւլեայն և յիւր կողմն միաբանել . առնել զնա՛ 'ի մի կողմն ասէ՝ ա՛դամ , ես եմ ա՛ծ և չէք այլ ո՛ք , և բաց յինէն այլ ա՛ծ քեզ մի՛ լիցի , ապա թէ ունիցիս զոք այլ ա՛ծս բաց յինէն , գիտասջիր զի մահու մեռանիցիս ։ Իսկ իբրև ասաց զայս զնա , և յիշատակեաց նմա զմահուն մահու , զահի հարեալ ադամայ ընկաւ տակաւ զանձն մեկնել 'ի հիւլեայն ։ Իսկ եկեալ հիւլեայն՝ պատուիրել նմա բստ սովորութե՛ն . տեսանէր զի ոչ անսայր նմա ադամ , այլ խորշեալ 'ի բաց մերժէր . և չմ՛ր ձե՛նայր առ նա . յայնժամ հնարեցեալ 'ի միտս իւր հիւլեայն . իմացաւ թէ տւե՛ն արարածոց 'նենգեաց նմա . ասէ՝ յականէ աղբերն սըրբո բեալէ ջուր նր ։ Զի՞նչէ այս . չեւես բաղ մացեալ ադամայ ծննդամբ . և դողացաւ զնա՛ անուամբ ա՛ծութե՛ն իւրոյ յինէն ։ Որով հետև առնեաց զնա , և ոչ պահեաց ընդ իս զդաշն ես արարից ա՛ծս բազում , և լցից նորօք

զաշխարհ գոյն խռով · զի խնդրիցէ թէ ո՞վ լիցէ մեծ, և ոչ գտանիցի: Եւ արար ասեն կուռս բաղդումս, և անուանեաց զնս՟ ա՟ծս · և եդ նոքօք զաշխարհս · և ընկղմեցաւ անուն նր՟ մն՟ արարածոց ՚ի մէջ անուանց բաղդում ա՟ծոց · և ոչ ուրեք գտանիւր: Եւ մոլորեցաւ ծննդոց նորա նոքօք · և ոչ պաշտէր զնա · զի ձգեաց զամենեսին առ ինքն հիւլին · և ոչ ետ թոյլ և ոչ միում ՚ի նոցունց պաշտել զնա: Յայնժամ ասեն · բարկացաւ տէրն արարածոց, զի թողին զնա և անսացին հիւլէայն, և միջատմիջն որք եղանէին ՚ի մարմնոց իւրեանց, արկանէր զնոսա առ ցասման ՚ի դեհէն: Եւ զաղամ է արկ ՚ի դեհեան վասն ծառոյն: Եւ այնպէս արկանէր ՚ի դեհեան զամենեսին մինչև ցքսան և ինն դար:

Եւ տեսեալ ասեն ա՟յն բարւոյ և օտարի որ նստէր յերրորդ երկինս՝ թէ այն չափ ազգք կորեան և տանջեցան ՚ի մէջ երկուցնեն գաւառաց · տեառն արարածոց և հիւլէայ, ցաւեաց նմա վասն անկելոցն ՚ի հուր և տանջելոց: Առաքեաց զորդի իւր երթալ փրկել զնոսա · և առնուլ զնմանութի՟ ծառայի · և

լինել 'ի կերպարանս մարդոյ 'ի մէջ որդւոց ա̃յ
օրինացն ։ Բժշկեսջի՛ր ասէ զքորոտս նոցա ·
և կեցուսջիր զմեռեալս նց̃ · և բացջիր զկոյրս
նոցա · և արասջիր 'ի նոսա բժշկութիւս մեծա
մեծս ձրի ։ Մինչ զի տեսանիցէ զքեզ տ̃րն ա-
րարածոց · և նախանձիցի և հանիցէ զքեզ 'ի
խաչ · և ապա 'ի մեռանելն քում խզցես 'ի դժ-
ոխս և հանիցես զնոսա անտի ։ Զի չէն սովոր
դժոխք ընդունել 'ի միջի իւրեանց զկենանս · և
վասն այնորիկ նեղանես 'ի խաչ , զի նմանեսցիս
մեռելոց · և բացցէ դժոխականն զերանն իւր
ընդունել զքեզ ։ Եւ մտցես 'ի մէջ նորա · և
թափուր արասցես զնա ։ Եւ իբրև էհան զնա
'ի խաչէ՝ ասեն էջ 'ի դժոխսն · և թափուր ա-
րար զնա · և հանեալ զոգիսն 'ի միջոյ նորա
տարաւ յերրորդ երկինսն առ հայրն իւր · և
տէրն արարածոց զայրացեալ առ ցասմանն ,
էցել զպատմուճանն իւր և զվարագոյր տա-
ճարին իւրոյ · և խաւարեցոյց զարեգակն իւր
և զգեցոյց թուխս աշխարհին իւրում · և նըս
տաւ 'ի սուգ առ տրտմութեն ։ Ապա երկ-
րորդ անգամ իջեալ յեսու կերպարանօք ա̃ծ-
ութեան իւրոյ առ տէրն արարածոց · դնէր

դատ ընդ նմա վ՟ մահուան իւրոյ · և տեսեալ
տեառն աշխարհի զա՟ծութին յեսուայ գիտաց
թէ դոյ այլ ա՟ծ արտաքոյ քան զնա · և ասէ
ցնա յեսու · դատաստան կայ իմ ընդ քեզ · և
մի՛ ոք լիցի դատաւոր ՚ի միջի մերում · այլ քո
իսկ օրէնքն զոր գրեցեր, և իբրև եդին զօր
էնսն ՚ի միջի, ասէ ցնա յեսու · ո՞չ դու գր
րեցեր յօրէնսդ քում թէ որ ըսպանանիցէ՝
մեռցի · և որ հեղու զարիւն արդարոյ, հեղ
ցին զարիւն նորա, և ասէ՞ այո՛ ես գրեցի · և
ասէ ցնա յեսու · արդ՝ տուր զքեզ ՚ի ձեռս
իմ զի ըսպանից և հեղից զարիւն քո · որպէս
ըսպաններն դու զիս և հեղեր զարիւն իմ · զի
արդարեւ իրաւամբք քան զքեզ · և Երախտիս
մեծամեծս արարի յարարածն քում · և ըս
կսաւ համարել զերախտիսն զոր արար յարա
րածս նորա ։ Իբրև Ետես տէրն արարա
ծոց թէ յաղթեցաւ ՚ի նմանէ, և ոչ գիտէր
զի՞նչ խօսիցի · քանզի յիւրոց օրինացն պար
տաւորեցաւ · և չգտանէր տալ պատասխա
նի · զի եղև մահապարտ փոխանակ մահուա
նըն նորա ։ Ապա՝ յաղօթս անկեալ աղաչէր
զնա · թէ՝ փոխանակ զի մեռայ և ըսպանի զքեզ

յանդգնես. քանզի ոչ գիտացի թէ ո՞վ իցես. այլ մարդ համարէի զքեզ. տուեալ քեզ ընդ այնր վրիժուց. զամենեսեան որք կամիցին հաւատալ ՚ի քեզ, տանիլ յո՛ և կամիցիս: Ապա՝ թողեալ զնա յիսուսայն. յափշտակեաց զպողոս, և յայտնեաց նմա՝ զգիրսն. և առաքեաց զնա քարոզել. թէ զնոցա գնեալեմք մեք, և ամենայն որ հաւատայ ՚ի յիսուս. վաճառեցաւ յարդարոյ անդ ՚ի բարւոյն: Այս ըսկիզբն է աղանդոյն մարկիոնայ. Թող զայլ բազում Թարմատարսն. և զայս ոչ ամենեքին գիտեն, այլ սակաւք ՚ի նոցանէ. և աճանդեն զուսումն միմեանց ՚ի բերանոյ. ասեն օտարին գնովք գնեալ զմեզ ՚ի տեառնէն արարածոց. և թէ ո՞ր պէս կամ ե՞ր գնեալ իցէ զայն ոչ ամենեքին գիտեն:

( Ճառ. ԿԹ. )

### Սանդրամանաւոր դասաւորանին եւ եղծանման հերձուածոյն մոլեկանէ :

ԱՐԴԱՐ ԵՒ ՈՐՊԷՍ ԵՐԱնելին առաքեալն ասէ թէ՝ իմաստութիւն աշխարհիս այսորիկ յիմարութիւն է առաջի այ || 1. Կորն. 2. 19. որ նէ առնել, կամ ոչինչ, կրկնել. կամ ինչ ընտրելի խօսելն : Թէ ճշմարիտ է քան զնմա օրինացն այ յորմէ զարարածս ամենայն ունէ, ապա՝ օտարին զոր նմա պտղոց մաւծանէ՝ չէր պարտ նորա արարածոցն ցանկանալ, թէ եւ 'ի տանջանս էին թէ 'ի հանգստեան : Զի եթէ այն էր, եւ իւր իսկ արժան էր զարարածս առնել. եւ ոչ այլոյ արարածոց ցանկանալ : Նա ոչ ոչ ինչ արար, յայտ է թէ ընտրէ եւ էր իսկ ոչ : Զի թէ էր իւրն զած, պարտ էր նմա զսոյն կարողութիւն յանձին ունել. եւ թէ ինքն

 յան

յանձնէ իմաստութե ինչ այնպիսի ոչ ունէր ,
գեթ՝ յարարչէն աշխարհի նայեցեալ իցէ ու-
սանել 'ի նմանէ զարուեստն։ Բայց եթէ նմա
նմանօղ չկարէր լինել , զ'մնեայ հիւլէայն լի
նիցէր նմանօղ որ է գետինն քարշէր՝ և եղե-
հաղորդ արարչութե արարչին ։ Այլ յայտէ
թէ մտաց բաշխաղանքեն աղանդքն և ոչ ճշ-
մարտութիւն ։

Արդ՝ նախ զած օրինաց և զհիւլն նմա
հաւասար դնել 'ի փիլիսոփայից դողա-
ցեալ դնէ ․ որք զտկարութի արկանեն զած
թէ՝ չկարոց յոչնչէ ինչ առնել ․ այլ 'ի նիւթոյ
ընթերակացէ ։ Այս թէպէտ բիւրապատիկ
յանուն օտարին և որդւոյ նր յեսուայ ( զոր
բարերարն կոչեն ) ապաւինիցեն , չեն ինչ է
հատ 'ի հեթանոսաց , քանզի՝ ո՞վ նոքա Ածս
բազումս ասեն , նմանապէս և սոքա՝ Ածս
զնոյնան քարոզեն ։ Այս բազմապատիկ մահա-
պարտքն ․ զի արարեալք յօրինացն Այ՝ յօտա-
րի անուն խրախուսեն իբրև զտիրադրուժս
որ և 'ի մարդկան միջի ոչ պաշտի ․ զի ոչ
իշխէ արքայից արքայի ծառայ 'ի կայսր խրա-
խուսել ․ և ոչ կայսեր ոք ծառայ 'ի սասանա

կանն

կա՛ն խիզախել. ապա թէ ոչ՝ գլխապարտ
գտանի ։

Դարձեալ և նոքա ծնունդս ածոց բազմաց ասեն, և սոքա յամուսնութե՛ օրինացն ո՛յ և հիւլեայ՝ ասեն արարեալ զամենայն արարածս. և զի՞նչ աճելի լիցեն քան զմիգս որք յամուսնութե՛ զնեն զա՛ծան իւրեանց ։ Արդ՛ ցուցցեն՝ ո՛ր հոգի եա՛ նոցա զայն օրէնս. զի թէ 'ի հոգւոյն սրբոյ ասեն (որ 'ի մարգարէս և յառաքեալս խօսեցաւ) զայն ուրացեալքեն ։ Նաև Պօղոս ասեն յափշտակեցաւ յերրորդ երկինս և լուաւ զայս բանս անճառս զորս մեք քարոզեմք ։ Նա՛ ահանիկ Պօղոս ասէ՝ զոր ոչէ պարտ մարդկան խօսել ։ Արդ՛ մարկիոնն թէ մարդ ոք իցէ, ապա և նմա անճառելին բանքն որ և մարդ իսկ է՝ և փառաւորագոյն քան զամենայն մարդիկ. որոյ թողեալ զճշմարտութի հոգւոյն սրբոյ և ուրացեալ առասպելս կարկատէ ։ Իսկ այս չափ յանդգնեալ սատանայութե հոգւոյն, մինչև 'ի պատգամաց հոգւոյն սրբոյ քաղ հանել. զկէս աւետարանին ընտրել և առնուլ. և զկէսն լքել գլխովին 'ի բաց թողուլ ։ Նոյն

պէս և զառ աքելական Թղթոցն • և դէին կը
տակարանն ամենևին ուրանալ՝ որպէս Թէ
յանգգամ տուեալ իցէն և ոչ 'ի բարբառոյ։ Իսկ
առաքելոյն ասէ • Թէ անպատումն բանքն
զոր լուայ ‖ 2 Կոր՝ • 12 • 4 • և մարկիոնն ա-
սէ՝ եթէ ես լուայ ։ Որք առաքելոյն ( որ
անճառ զբանսն համարի ) պ՞րտէ անսալ •
Թէ՝ մարկիոնի • որ 'ի քարշանկեալ ընդ վայրս
զբանսն ածէ ։ Դարձեալ՝ Թէ մշտնջենաւոր
էր օրինացն ա͞ծ , ապաքէն պարտէր կանխա
գէտ և ամենագէտ՝ է անալ • և Թէ չէր կան-
խագէտ՝ և ամենագէտ , ապա և կատարեալ
ևս չէր ։ Այն աճանեկ կատարեալ երևի ,
այնու՝ զի զերկինս և զերկիր ամենայն արար •
և ոչ միայն զմի երկինս , այլ երկուս • և զօրս
բազումս ։ Իսկ որ այնմ ամենայնի բաւական
եղև • զայն զի ո՞րք ոչ կարէր գիտել Թէ՝ է
ոք 'ի վեր քան զնա՝ յորում կասկած կայր նմա ։
Իսկ եթէ գիտէր՝ ընդէր ոչ ամրացոյց զևր
տեղին զի մի՝ լինէր անդր մուտ հակառակոր
դին՝ որ կայր և ապստամբեցուցանէր զարա
րածս նորա 'ի նմանէ ։ Իսկ դարձեալ բարին
զոր կոչէն • եԹէ որպէս ասենն՝ բնուԹեամբ

բարի էր և չարութին 'ի նմա ոչ գոյր , զի այ լոցն բարի խորհէր ․ նմա չար ընդ իւր խորհեցան առնել զնա սրտատուչ յիւրոցն արարածոց ․ զի սա հանապազ առնէր զմարդիկ , և նր միշտ հանել 'ի սմանէ , առնէր զսա Թախծալից

որ ոչ բարւոյ գործէ՝ այլ չարի ։

Դարձեալ և զոր արդարն առնէ ․ Թէ որ դարև արդար էր , յետ բաժանելոյ զէշ խամուտոն՝ իւր զերկինս երկոսին առնլոյ , հիւլեայ և որդւոցն նր զերկիր միայն Թողլոյ ․ զի արդ էր՝ զի միւս անգամ նր աշխարհին ցանկացեալ՝ ասէր Թէ տուր ինձ 'ի կամոյդ քումդ՝ և յինէն տաց հօրդ ․ և արասցուք մարդ ըստ նմանութե մերում ․ որ ոչ արդարոյ գործէ այլոյ աշխարհի ցանկանալ՝ այլ անի բանի ։ Կամ հիւլեայն զի մրդ ընդ միտս հար եալէր յետ միանգամ բաժանելոյն 'ի նմանէ՝ դարձեալ հաղորդութի առնել , և անձամբ անձին նենգել , և մասն մուտ առնել օտարի յիւր աշխարհն ․ զի առնիցէ անդ կազմին և զմասունսն նր , որ մերթ 'ի սա՝ տայր ձեռն և մերթ 'ի նա ։ Բայց և տր արարածոց զար դարն միայն զի մրդ կոչեցեն ․ զի և յառաջ

նուամն ( որպէս ասէն ) ոչ միայն ինչ արար · այլ հասարակ արարքն զինչ և արարին · և յերկրորդումն 'ի հասարակաց նիւթոյ արարին զմարդն · և երկոքին զոյգ ուրախ լինէին 'ի նմա ։ Զի թէ որպէս ասէնն , արդար միայն էր օրինացն ա՟ծ , յայտ է եթէ զարդարութե՟ զպատուիրանս տայր նմա · և եթէ չար միայն էր հիւծն , հարկէր եթէ չարեաց և եթ խր րատ տայր նմա · և ուր էր՝ զի երկոքին ուրախ լինէին 'ի նմա · որ հակառակ միմեանց տային զպատուէրս · մինն զբարեաց իբրև զբարի · և մինն զչարեաց իբրև զչար ։ Զի ոչ արդարոյ ( որ բնու՟թ արդար իցէ ) մարթի զչար ինչ պատուէր տալ · և ոչ չարի որ բը նու՟թ չար իցէ , զբարւոյ խրատ տալ ։ Այլ և ուրախ լինել չարին ուստի՞ էր · որ միշտ խածարին և գժդմնագոյն էր · կամ արդարոյ նենգել՝ որ 'ի բնէ արդարակորով · և իրաւախոհ էր · որում չէր մարթ իւր միայն խորհել զմարդն հասարակաց ստեղծուած , այլ իբրև արդարոյ՝ պարտ էր խորհել թէ՝ ոչ 'ի միայն արարաք զնա , առ հասարակ արժանէ մեզ և վայելել 'ի նմա ։ Բայց ոչ իբրև

զարդարակերով , այլ իբրև ընծնդաւոր և զկասկածոտ առնել մեկուսի զմարդն զերծուցանէր ․ Թէ՝ ես եմ ա՛ծ և չէք այլ ո՛ք բաց ՚ի նէն ։ Ո՞ր ՚ի դէպ էր ադամայ ասել թէ՝ մինչ առնելն կամեցար զիս , զի՞նչ այլ ա՛ծ ․ յորժամ զհօրն խնդրեցեր ։ Ո՞ր արդ՝ զի՞ խորհելդ զիս քեզ կամիս միայն ․ որ դու միայն իցես ա՛ծ ․ և այլ ո՛ք ոչ ։ Նոյն թերևս ՚ի համբաւէն մահուանն զարհուրեցաւ ․ զոր թէ կամէր՝ թէ չկամէր , սակայն կրեաց ։ Ո՞ր զայն ոչ գիտէր թէ առ ննջելն , ննջէ՛ նմա և հի՛ւլն ․ և ընկղմէ՛ զմի՛ անուանն ՚ի մէջ բաղում ա՛ծոց զոր առնէր գայթակղութե՛ մարդոյն ։ Ո՞ր այնպիսի՛ իմաստու՝ ոչ յիմնա՛ մեղն եղև պատճառ , այլ որ նախնննդեաց ։ Զի թէ նորա զայնպիսի արուեստ չէր ցուցեալ , հիւլն ոչ իմանայր ․ այլ ինքն եղև վարդապետ ․ իւրոյ ննդութե՛ն , և հիւլեայ խորամանկութե՛ն ։ Ո՞ր իբրև տեսանէն՝ թէ ոչ ո՛ք պաշտէ ըղնա , բարկացեալ արար զնոսա մահկանացուս և որոց ոգիքն ՚ի մարմնոցն ելանէին , արկանէր զնոսա միլատմիոջէ ՚ի գեհեան ։ Արդջան զնոսա արկանէր ՚ի գեհեան , զի որ

պատրեացն զնոսա՝ ընդ էր ոչ արկանէր 'ի գե
հեան, մի՞ թէ՝ վա՞ զի ոչ կարէր յաղթել նմա.
ապա եթէ բռնագոյն քան զնա էր հզօրն,
զի՛ ես 'ի ձեռս՝ զիւր պատրեալսն նմա չար
չարել ։ Բայց և արդարն թէ արդարև ար
դար՝ էր, չէր պարտ այնու հետև զմարդիկ
առնել. զի գիտէր եթէ խաբելոցն զնա՞ հզօրն.
այլ իբրև արդարոյ արժանէր խորհել. թէ՝
զի՞նչ օգուտ է զի ես առնեմ. և այլ ոք հանէ
զնոսա յինէն ։ Այս և տանել իսկ չէր օրէն
զնա. զի գիտէր թէ՝ այլոց բանից
մեղանչէն ։

( Ծա . Հ ։ )

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]



ՅԼ. ՄԻԻՍՆ ՆԻՍ ՋՈՐ Ա.
ռեն՝ ամբարշտագոյնկ քան զնմ.

թէ իբրեւ ետես բարին (որ յերրորդ յերկինս
նստէր ) զայն չափ զքաղն եւ զ'ի նմա ազգաց զո
գիս տանջեալս 'ի գեհենի, գթացեալ 'ի նոսա
առաքեաց զյիսուս զորդի իւր՝ երթալ առ
նուլ զխոնարհութիւն ծառայի եւ 'ի կերպարանս
մարդկան լինել ։ Եթէ այն չափ գթածէր, հետ
ընդ հետ, իսկ ընդէ՞ր ոչ յղեաց զորդին իւր
երթալ փրկել զնոսա ։ այլ յետ քսան եւ ինն
ազգաց այն չափ ոգւոց 'ի գեհենի տանջելոց ։
Այլ նախ երրորդ երկինս ասել ուսանի՞ իցէ
նմա ։ զի մովսէս երկուս երկինս ասէ ։ Այլ
ոմն յամի մոլորեցան հերձուածողք ։ նոյնպէս
եւ յայսմ ։ Զի ոմն Ժ երկինս խօսէ՝ ոմն Է ։ եւ
մարդկան երիս ։ Իսկ 'ի դպրոցաբանաց կամին հաս
տատել զմոլորութիւնն խաբեանց թէ երկինս
եւ երկնից երկինս՝ բազմաբար ասեն գիրք ։
Յորժամ ոչ յուսմքն սանձահարին հարցուա
ծոյք, աստուածոյ գրոց սրբոց բարբառելն ։ եւ
իբրեւ վստանգին՝ աստ 'ի գիրս աստուածայինն ։
Բայց երկինս եւ երկնից երկինս ։ յայս սոսկ
զտանեմք 'ի գիրս ։ զի 'յեբրայեցւոց լեզու,
երկին չմարթի ասել միայն եւ ոչ յասորի լեզու
ջոց կամ երկին ։ այլ միշտ բազմաբար ասի ։

Իբր՛ յայտ անտի է, զի եօթանասնիցն թարգ-
մանեալք ՚ի յոյն լեզու ասեն, ի սկզբանն ա-
րար ա՟ծ· զերկին և զերկիր՝ իբրև զմիոյ եր-
կրնէ յայտ արարեալ։ Իբր՛ յասորի լեզու՝ քան-
զի չմարթի երկին ասել՝ ասէ, ի սկզբանն ա-
րար ա՟ծ զյաթն երկինս· և զյաթն երկիր·
թէպէտ և միաբար չմարթի ասել՛ ն՟ց զմիոջէ
երկնէն, սակայն՝ յաթն ասելով որ է, տար՝
իբրև զմիոջէ տարբերէ միոյ երկնի յայտ առ-
նէ թարգմանութեն։ Նա և զերևելի հաս-
տատութիւնս որ ՚ի ջուրց մնեցան՝ երկին
թարգմանեցին եօթանասունքն։ Աստի յայտ է
թէ՝ վերին երկին և ներքին, է՟ երկինքեն և
ոչ դ՟, կամ բազումք։ Նաև ասեն՝ պօղոս
ասաց· թէ յափշտակեցաւ այնպիսին մինչև
յերրորդ երկինս || 2· Կորն· 12·2։ Իբր՛ զայն
ոչ գիտեն թէ՝ չև ևս յայտ է՝ թէ մինչև ցեր-
րորդ երկինս ասիցէ· կամ թէ մինչև ցերրորդ
ինչ մասն ՚ի բազում մասանց միոյ երկնին ա-
սիցէ· զի բանն ՚ի յոյն լեզու՝ յերկոսին հար-
կանէ· և մանաւանդ զի առանց աթերն աս-
որեն· զի ոչ ասէ թէ մինչև ցերրորդ ծին,
այլ թէ յերրորդ երկնի առանձինն ասելոյ·

ուստի տայ ակնարկութ̅ի, եթէ 'ի մասն ինչ
երրորդ 'ի բազում մասանց երկնի յափշտակե-
ցաւ պողոս · վ̃ս որոյ ածէ զնորին զկնի թէ՝
յափշտակեցաւ այնպիսին 'ի դրախտն ։ Եւ
դրախտն ոչ եթէ յերրորդ երկինս իցէ, և
կամ գնաց 'ի յերկինս ուրեք, այլ յերկրի ։
Զոր և ինքեանք իսկ վկայեն · թէ՝ իբրև ս-
րալին զմարդն 'ի դրախտի անդ եդին, որէ
յերկրի և ոչ յերկինս ։ Բայց թէ և կոչէ բարձ-
րութ̅ի ինչ երկինք՝ ո՞չ յորժամ ասիցէ գիր,
թռչունք երկնից՝ և ցօղք երկնից · և ամպք
և հողմք երկնից · ո՞չ եթէ յերկինս իցեն, այլ
զի 'ի բարձրութ̅ե են՝ երկնից կոչին ։ Նա և
զծառոց անգամ, որք 'ի սակաւ ինչ բարձ-
րութեան են, ասեմք թէ երկնաբերձ են · և
զծխոյ թէ՝ յերկին կցի ։ Ըստ նմին օրինակի
և պողոսի զերրորդ յերկինսն ասել՝ իմանելէ ։
Ակ՛եր յառաջինն և էջ յերկրորդն, և հա՛ս
յերրորդ օդդ՝ որ 'ի գրոց երկին կոչէ · և
գտանես զոր ինչ երանելին պողոս ասէ ։ Եւ
լուաւ զբանս անճառս զոր ոչէ պարտ ու-
մեք խօսել · թէպէտ և առաջեալ և անօթ
ընտրութ̅ե էր, սակայն՝ էր ընկեր պետրոսի ·

ըմպակից որդւոցն որոտման . և քարոզակից
բառնաբայ ։ Զի մարդ էր , զի՛նմա միայն սպար
տէր լսել և խօսիլ զջանսն անձառս՝ և իւրոց
ընկերացն ո՛չ ։ Ո՞չ ապաքէն մի շնորհքէին
յամենեսին , և միևնոյն հոգի և ՚ի նոսա ։
Այլ անձառ բանքն , ոչ եթէ նմա ճառել իք
էին . և յայլոց ընկերացն անձառք , այլ ըստ
այնմ զոր յառաջնումն թղթին կորնթացւոց
ասէ , զոր ակն ոչ ետես , և ունկն ոչ լուաւ
և ՚ի սիրտ մարդոյ ոչ անկաւ այն՝ զոր պատ
րաստեաց ած սիրելեաց իւրոց ։ ‖ Կոր․ ․ 2․ 9։
Է՛ և զայս խմանալ . թէ՛ ոչ զի ես՝ միայն ար
ժանի եղէ խորհրդոյն որ տրուպսնեմ առաջե
լոց , այլ թէ և պետրոս որ գլուխն է առա
քելոց՝ տեսանիցէ , չկարէ ճառել . և թէ լը
սիցէ չկարէ պատմել ։ Քանզի անպատումէ
և ՚ի վեր քան զմիտս և զլեզու մարդկան . և
վասն այնորիկ ասէ առաքեալն՝ թէպէտ և
տեսի՝ չկարեմ պատմել . թէպէտ և լուայ՝
չեմ բաւական ճառել ։ Դարձեալ ո՞ր ած՝
ո՞ր ո՞յ արարածոց խնամակալ լինէր՝ եթէ ՚ի
տանջանս էին և թէ յանդորրու ։ Կամ զան
ցանելն յետոյ ՚ի նորա աշխարհն , զի որդ-

ոչ ինքն զգայր. և ոչ ոք 'ի զօրաց նորա, և ոչ այլոց՝ զելանելն նորա անդրէն, Իբր եթէ զնորայն իբրև զոյս չկարէին իմանալ, և զայն չափ հողոց զորս եհան առ նոքօք լիւր եր կինն, զածածինն զի մարդ ոչ առնուին։ Իբր կամ պահապանքն ողոցն արդելականաց ընդէ՞ր ոչ առնէին առ տեառն իւրեանց. այլ յայտ է թէ՝ մնոտի բանքեն և անհաճատ պատմութիւնք։

(Ճառ. ՀԱ։)

[illegible]

Ի ԵԹԷ ՆՄԱՆՈՒԹԵԱՄԲ միայն եղև մարդ, և կերպարանօք և եթ էր նման և չարչարանք և մահն, ապա և փրկութիւն ինչ ոչ գործեցաւ,

Այլ և ընդէ՞ր իսկ փրկէր զայլոյ արարածս զօր լուր չէր արարեալ, որ ոչ բարւոյ գործ է, այլ ապիրատի, ապրդիլ և դաղտ մտանել ժայլոյ տուն և նենգել նմա : Բայց զայն ևս հարցցուք. մարմնաւո՞ր ոք էր յեսուն եթէ անմարմին : Եթէ ասիցեն թէ անմարմին էր, լուիցեն. զի եթէ անմարմին եկն՝ և աստ (որպէս ասենն) մարմին ոչ զգեցաւ. յայտ եթէ ոչ ետ ինչ՝ և ոչ է առ. ոչ մեռաւ և ոչ փրկեաց. և՛ ի զուր է ասելն մարկիոնի թէ՝ արեամն յեսուայ եմք գինք : Զի ոչ հեղաւ արիւն նորա՝ և ոչ նոքա գնեցան. այնու՝ զի կերպարանօք ասեն զխաչն և զմահն և ոչ ճշմարտութեամբ : Եւ յանդիմանեն զնոսա հրէայք, որք մինչև ցայսօր պնդեալ են՝ թէ հարքն մեր հանին զնա ի խաչ : Աստի յայտ յանդիման ցուցանի, եթէ ոչ կեղծեօք եղ քս ի խաչ, այլ ճշմարտութեամբ : Քանզի և ճշմարտի յարութեան մերոյ կացոյց զիւրոյ անձին զյարութեին օրինակ : Եւ եթէ որպէս ասենն, զօրէնս արդարոյն դատաւոր և միջնորդ խնդրեաց յեսուն, անդստին իսկ՝ յօրինացն բազմապատիկ մահապարտ դատանի. զի

նախ քան զխաչելութիւն իւր զբազումս յաշ
ակերտեաց, և ոչ միայն ինքն, այլ և զայլս
բազումս ընտրեաց 'ի նոցանէն . և առաքեաց
զի աշակերտիցեն և ձգիցեն առ ինքն ։ Եւ
ոչ միայն այն չափ, այլ և զօրութիւն զգեցոյց
նոցա՝ կոխել զզօրս տեառն իւրեանց . և է՛
արկ զսուր և զքաժինս 'ի տան նորա . և մա
ռեաց հուր յարքայածս նորա . մինչև կարծել
և խափանել զօրէնս նորա . ցածուցին յոհան
նու մկրտչէ . և ամենատարածել զիւր արքայու
թիւնն՝ արձակեաց զքարոզս բազումս առ 'ի
քարոզել . և հնձօղս բազումս 'ի հնձել՝ զոր
ոչ ինքն սերմանեաց ։ Եւ այն մինչև մեղու
ցեալ ինչ ուրուքէր նմա, ոչ 'ի խաչ հանեալ,
և ոչ զարիւն նորա հեղեալ, հառ աւար զտուն
նորա, և խախտեաց զթագաւորութիւն, և
նա լռեալ կայր . և ոչ ինչ մեղանչէր նմա ։
Եւ զի մարդ ասիցեն թէ խաչելութեամբն գնեաց
զմարկիանն . զի անհամեմատ զայս ամենայն ժո
ղովս բազմաց մինչև նա նշաւակէր 'ի խաչ՝
կոչեցաւ յինքն ։ Այլ ասեմ, զի նորա բժշկութեց
դիւս տարած . զհիւանդս բժշկեաց, և զքորո
տիս սրբեաց, զմեռեալս յարոյց . զանդամա

լոյծս հաստատեաց՝ և զդևս հալածականս արար ։ Ո՞չ իցէ ոք բժիշկ՝ յորժամ զորդի ուրուք բժշկիցէ՝ վարձս ոչ պահանջիցէ, այլ զբժշկեալն գլխովին զինս բժշկութեան խնդրիցէ՞ ։ Ո՞չ զրեսցուք եթէ բժշկեալքն էին ինչ նմա անկ վասն երախտեացն ։ Իսկ զորս ոչն բժշկեաց՝ ընդէ՞ր հրապուրեալ էհան ՚ի տեառնէ իւրեանց · որ ոչ բարւոյ գործ էր այլ նենգաւորի ։ Ո՞չ զօրէնսն զի՞ արդ իշխէր դատաւոր խնդրել՝ որոյ այն չափ վնաս յառաջագոյն քան զմահն իւր արարեալ էր ՚ի տան նորա · մանաւանդ զի և գիտէր իսկ՝ թէ պարտաւորեն զնա օրէնքն և ոչ արդարացուցանեն ։ Արդ՝ եթէ յիսրայելացւոյ կերպարանօք եկն ՚ի տուն նր, սակայն պարտաւորիցէր · զի դրեալ էր յօրէնսն, թէ՝ ամ հրէայ որ լուծանէ զօրէնս՝ սպանցի · և որ ոչ թլփատեսցի, և ոչ զշաբաթս պահիցէ՝ մեռցի · և նա ելոյծ զօրէնսն, և խախտեաց զկրօնսն, մահապարտ էր յօրինացն ։ Ո՞չ եթէ յայլոց ազգաց ՚ի կերպարանս եկն առ նոսա, նախ զօտար ազգին իսկ կատարել հրամայեալ էր նց և ոչ խնայել · և ապա ՚ի վերա եկացն և

 պան

պանդխտաց հրաման կայր՝ եթէ ո՛չ պահիցեն զկրօնս օրինացն , մահուամբ մեռցին ․ համայն և այնպէս յօրինացն մահապարտէր ։ Ոչ՞ ոք որ մտանիցէ դաղտ 'ի տուն ընկերի իւրոյ զեղծել ինչ՝ և 'ի բռնան անկեալ՝ չլինիցի մահապարտ ։ Ոչ՞ կամ իցէ՞ ոք՝ որ մատուցեալ զայլոյ զորդիս կամ զծառայս յապիմակս և ստահակս յօժարեցուցանիցէ հանել՝ և հասեալ 'ի վերայ՝ ոչ հանիցեն զայն 'ի կառափն ։ Ոչ՞ կամ իցէ ոք՝ որ իբրև զգէտ մտեալ զայլոյ զԹագաւորութիւն դաղտ լրտեսիցէ , և ծանուցեալ զլրտեսն՝ ոչ սատակիցին վաղվաղակի ։ Այսպէս և յեսուն՝ յառաջ քան զխաչելութին բազում ինչ այսպիսի նշանս գործեաց 'ի տան արքայոյն ․ և ըստ օրինացն զոր դատաւորն խնդրեաց՝ բազում մահուց պարտական գտանի ․ զի օտարոտի մի էկեալ յայլոյ տուն՝ զայն չար մեծամեծ աղէտս գործեաց 'ի նմա ․ զօրէնս և զմարգարէսն նոարգել և զիւր Թագաւորութիւն անհատարանեաց ։ Արդ՝ ո՞վ էր նա որ զայն չար մեծամեծս կարաց գործել՝ եթէ ոչ տէրն ամենայնի՝ որ ասաց , թէ ամ ինչ տուաւ ինձ 'ի հօրէ

իմմ ․ || Մատ․ 11․ 27։ Ուստի յայտէ Թէ՝
ոչ իբրև զօտար ոք է առ յափշտակութիւն ,
այլ 'ի հօրէ՝ տուեալ 'ի ձեռս նորա , և իբրև
զտէր օրինացն գաղարեցոյց զօրէնսն ․ և յա
ռաջ քան 'ի խաչ ելանել՝ եցոյց զԹագաւորու
Թիւն իւր ։

Ո՞ անմիտք զի ա՛րդ ոչ իմացայք եԹէ՝ հայր
յ՜ոյն է տէրն ամենայնի ․ այսու՝ զի զամե
նայն ետ՝ 'ի ձեռս նորա ․ և նա՛է տէր ամի ․
և ոչ զօրմէ դուքն կարծեցիք՝ որ չէր իսկ ։
Զի ամենայն որ արտաքոյ քան զնա ա͞ծ ա
նուանի , չէ նա 'ի բնէ ա͞ծ ։ Եւ՛ բազում ինչ
և այլէ՝ որով ցուցանի Թէ տէր մեր յիւրան
եկն և ոչ յօտարոտիս ․ և ինքն և հայրն իւր
են մի տէր աշխարհի ։ Եւ՛ առաւել 'ի վերա
ծորէն իմա՛ , որ մինչդեռ յերուսաղէմ յերի
քով իջանէր , վերածորեցաւ յահազակաց ․ ||
Ղուկ․ 10․ 30։ Ցուցանի Թէ ոչ օտարոտի
որ էր վերածորէն քո , այլ մերձաւոր և դար
մանիչ նր ․ ա՛յլ և ինքն իսկ 'ի փարիսեցւոյն բա
տուգեաց հարցմամբ ։ Եւ՛ յոչխարէն և 'ի դր
ամէն որք կորուսեալքէին և գտան։ Յայտէ
եԹէ յիւրան եկն և ոչ յօտարոտիս ։

( Ճառ · ՀԲ ։ )

[illegible]

## ՀԱՐՑԵԱԼ · ԶՄԻՒՍ ԲԱ

նըն առաքելոյն զոր ուղիղ ասա ցեալ՝ խախտեն · Թէ յորժամ խա փանեսցէ զամ[ենայն] տէրութիւնս և զիշխանութիւնս · զի պարտ է նմա թագաւորել մինչև դիցէ զամենայն թշնամիս ընդ ոտիւք նորա · ‖ 1 · Կորն · 15 · 25 ։ Իսկ ասեն թէ տէրն աշ խարհի խափանէ զնոսա և զաշխարհս իւր 'ի յա ւիտեան ։ Ո՞ անմիտք եթէ յիւր ձեռն է շի նէն և քակէն · և զայս աշխարհս վ[ասն] զի ծե րանայ և հնանայ՝ քակեսցէ , ընդ է՞ր ոչ զայլ նոր և գեղեցիկ քան զայս առնիցէ ։ Եթէ մինչ չէրն աշխարհս , գիտաց խորհել և առնել բա նիւ · այժմ զի լուաւ և տեղեկացաւ թէ՝ զայ

այլ աշխարհ օտարին գեղեցիկ և ազնուագոյն քան զնորայն • զմի՛ ոչ առնիցէ լաւագոյն քան զնորայն • այնպէս՝ զի և ընտանիք օտարին նորայնոցն ցանկանայցեն վասն գեղեցկութեան և պայծառութեան ։ Զի ո՞չ զառաջինն կարող եղև բանիւ առնել, այնպէս թէ և կամի՝ և այլ ազնուագոյն քան զայն կարողէ առնել • և որ այնպէսն կարօղէ առնել, ընդէ՞ր խաբանիցէ զանձն 'ի լինել պատուանդան ընդ ոտիւք այլոյ • և ոչ առնիցէ զնոր աշխարհ նոր և գեղեցիկ քան զառաջինն և թագաւորիցէ 'ի նմա յաւիտեան ։ Բայց թէ արգելուցու զնա օտարն, և թէ այն չափ զօրագոյնէ քան զնա՝ մինչ զի և արգելուլ կարիցէ ապա ոչէ տէր ամենայնի որպէս ասէ ինքն, այլ ծառայ այլոյ տէրութեան ։ Կամ զայն ուստի՞ ցուցանիցէք թէ ած օրինացն քակելոցէ զաշխարհս • եթէ վասն զի գրեալն 'ի մարգարէսն նորա եթէ երկինք գալարեսցին իբրև զմագաղաթ, և երկիր իբրև զմոմ հալեսցի, այլ և զայն գրեալ է 'ի մարգարէսն թէ արարից երկին նոր և երկիր նոր ‖ Եսայ • 65 • 17 ։ Աստի յայտէ ըստ մարգարէութեան թէ՝ զայս

քահնր և զայլ նոր առնէր • որպէս և դուք իսկ ձերեն վկայեցիք ։ Բայց և միւսումն ևս արարէք պատասխանի թէ ո՞ իցէ որ զիշխանութիւն և զպետութիւն խափանիցէ , և եթէ դուք ոչ գիտիցէք , ուսարուք յառաքելոյն՝ զի ք՟ս խափանէ զիշխանութիւն և դնէ զա՟մ թշնամիս 'ի ներքոյ ոտից իւրոց • և ոչ այն զորմէ դուքն ասէք , որ չեն իսկ • և ոչ արար եալ ինչ նր՟ և ոչ առնէ • այլ տէրն մեր և հայ րըն իւր որք կարողեն առնել զա՟մ • և հնազան դեն զա՟մ թշնամութիւն ընդ ոտիւք ։

( Ճառ • ՀԳ ։ )

ՅԱՂԱԳՍ ԱՌԱՔԵԼՈՅՆ ՀԱՐՑՄԱՆՆ ՈՐ ԱՍԷ ԹԷ՝
ԶԻՆՉ ՕՏԱՐ ԳՈՐԾԵԱՑ 'Ի ՊԱՏՃԱՌԱՑՆ
ԳՐԻԳՈՐԵԱՅ ՂԻՆՈՍ • ԵՒ ԹԷ՝ ԶԻՆՉ ԷՐ
ՈՉ ՅԵՏՈՅ ։

## ԵՒ ԴԱՐՁԵԱԼ՝ ԹԷ ԶԵՌՆ

հաս ինչ ոք էր օտարն ( ոմն մարկիոնն ասէ ) ազատել զհոգիսն 'ի տանջանաց անտի ,

ընկեր ոչ բռնութեամբ խել ձեռն է արկ , և կոր
ցեաց զհողս տանուտէրութեանց յինքն , այլ
նախ թող տայր զի տանջեցին՝ և ապա հա
նէր . և այն ոչ համարձակութեամբ , այլ կաս
կածանօք և արեան գնոյ գնելով : Այլ ասեն
վասն ողորմութեան արար տեսեալ զհողս տան
ջանաւորացն նեղեալ ՚ի դժոխս , առաքեաց
զորդին իւր փրկել զնա : Եթէ փրկեաց զնա ,
վերջինքն զինչ գործեցին որք ՚ի նոյն դժոխս
անկանելոցեն : Եթէ վասն ողորմութեան արար
զոր արարն , պահեալ ընդդէմ չէցէր զգալուստ
որդւոյն իւրոյ մինչև ՚ի վաղճան աշխարհի ,
և ապա առաքեալ՝ զի ՚ի մի անմնեցուն առ
նիցէր զողորմութիւն և հանէր ՚ի կենանս , քան
փութացանն և առաքեաց ՚ի կէս դարուն ,
և չիք հնար վերջնոցն որք անկան անդր թէ
ելանիցեն . քանզի այնուհետև զգուշացան
նոցա տանջիչն : Այլ յոյժ մոլորեալեն , և
մոռացան զայն թէ՝ չիք ծառ չար՝ որ առ
նիցէ զպտուղ բարի . և ոչ քաղեն խաղող ՚ի
փշոց՝ և ոչ թուզ ՚ի տատասկէ ‖ Ղուկ . 6 .
43 : Նմանէ իւրաքանչ իւրն՝ զիւրն տայ :
Ապա մեռն ես զոր ասեն թէ՝ ոչ ընդունելին

դժոխոց զկեանս , վասն այսորիկ եւ 'ի խաչ՝ զի
իջեալ իբրեւ զմեռեալ՝ ընկալցին զնա դժոխքն :
Իսկ արդ ո՞չ ոք առաքեցի անդր կենդանի՛ ,
կամ մարդիկ յանցաւորք , կամ սատանայ՝ եւ
դեւք կենդանութեամբ . եթէ այնպէս իցէ՝ եւ զնո
ոչ ընդունին : Կամ յետուն իբրեւ զմեռեալ
յո՞ չոգաւ . մի՞ թէ՝ 'ի գերեզման եկեալ զոր
գիրք դժոխոց կոչեն . եւ ահա անդ չեն հոգիք
եւ ոչ հուր որ տանջիցէ զնոսա : Իսկ եթէ ա-
սիցեն 'ի գեհեանն չոգաւ իբրեւ զմեռեալ ,
չէր մասն բանից նոցա . զի ոչ տայ թոյլ ա-
ռաքեալն թէ յերկուս մահս մեռաւ , այլ մի՛
զոր մարմնովն կրեաց 'ի խաչէն . եւ հնազանդ-
եղեւ մահու խաչին || Հռոմ . 6 . 10 : Իսկ ոչ
գտնէ թէ՝ այլ որք դատեաց զնա՝ եւ էարկ 'ի
գեհեան . այլ թէ՝ հայր ետ զնա 'ի մահ : Իսկ
դարձեալ թէ՝ ինքն ետ զանձն իւր փրկանս
փոխանակ բազմաց || I . Տիմ . 2 . 7 :

Մահուամբ մարմնոյ եւ ոչ տան
ջանօք հոգւոյ :

( Ճառ․ ՀԴ․ ։ )

*Ընդդէմ Մարկիոնի․ որ բարբանջէր թէ՝ այլ էր Ած յայն օրինաց․ և նորին օրէնքն հակառակ է օրինացն Այ ։ և թէ՝ չկայցն պարտէ ուտել․ և ըմպել և ամուսնանալ էէրև ըղէչն հաճելեւ։*



ՅԼ՝ ԱՅՆ ՉԱՓ ԱՍԵՆ՝

հակառակ են օրէնք արդարոյն շնորհացն յիսուսայ՝ զի անդ երանութիւն մեծատանց տայ, և եղկութի աղքատաց․ և աստ երանութի աղքատաց, և վայ մեծատանց․ ‖ Ղուկ․ 6․ 24 ։ Անդ ասէ՝ մի՛ սպանաներ․ և աստ ասէ թէ՝ որ բարկանայ ընկերի իւրում տարապարտուց՝ պարտաւո՛ր է գեհենի ‖ Մատ․ 5․21․ Անդ ասէ մի՛ շնար, և աստ ասէ, թէ որ հայի 'ի կին մարդ առ 'ի ցանկանալոյ՝ անդէն շնացաւ 'ի սրտի իւրում ։ Անդ ասէ, մի՛ երդնուցուս սուտ․ այլ հատուսջիր տեառն զերդմունս քո․ և

ասա ասէ՝ ամենեւին մի՛ երդնուցուք ։ Իսկ
արդ՝ զի մ՛րդ լիցին օրէնքն և շնորհք միմեանց
հակառակք ։ Զի Աբրահամ վասն զօտարս
և զաղքատս ընդունելոյ՝ բարեկամ ա՟յ կոչե
ցաւ ‖ Յակ · 2 · 23 · և Ք՟ս ասէ , թէ աղքա
տըն 'ի գոգն Աբրահամու չոգաւ · և մեծա
տունն 'ի տանջանս հրոյ · ‖ Ղուկ · 16 · 22 ։
Ք՟ս աղքատաց երանութի՟ տայ , նա և ող
որմածաց թէ՝ ողորմութիւն գտանելոցեն ·
‖ Մատ · 5 · 3 ։ Իսկ օրինացն ա՟ծ այն չափ ցու
ցանէ ողորմութի՟ , մինչև զգրաստու թըշ
նամւոյն անկելոյ բեռամբ չհրամայէ զանց առ
նել , թէ 'ի ժողովրդենէ ոք իցէ՝ և թէ յօ
տար ազգաց · և զուլ 'ի մօր կաթն չհրամայէ
եփել · և ոչ զհաւ 'ի ձուոց կամ 'ի ձագուց
վերա նստել՝ 'ի միասին միանգամայն առ
նուլ ‖ Ելից · 23 · 5 ։ Անդ ասէ սիրեսցես զըն
կեր քո իբրև զանձն քո ‖ Ղևտ · 19 · 19 ։ Իսկ
ասա ասէ՝ սիրեսցես զտէր ա՟ծ քո յամենայն
սրտէ քումէ · և սիրեսցես զընկեր քո իբրև
զանձն քո · զի զայսց երկուց պատուիրանաց
կախեալ կան օրէնք և մարգարէք · և ասէ՝
ոչ եկի լուծանել զօրէնս կամ զմարգարէս ,

այլ լնուլ զնա || Մատ. 5. 17. Որդ՝ զի որդ-
հակառակ օրինացն լիցի որ եկն լնուլ զօրէնս
և զմարգարէս ։ Իսկ ասէր ցբորոտն զոր սըր-
բեաց՝ թէ երթ մատո՛ պատարագ վասն մը-
ռւթեանդ քո՝ որ պատուիրեաց Մովսէս յօրէն-
սըն || Մատ. 8. 4 ։ և յօրինակամն որ եհարց
ցնա՝ թէ զի՞նչ ինչ արարեալ զի զկեանս յաւի-
տենից ժառանգեցից ։ Նա՝ զպատուիրանս
օրինացն գիտե՞ս . և հարցեալ կրկին թէ՝ զո՞ր
պատուիրանս , ասէ՝ զմի՛ շնար՝ զմի՛ գողա-
նար , զմի սպանաներ || Մատ. 19. 18 ։ Որ
ով յայտ արար եթէ՝ ոչ հակառակ օրինացն
ուսուցանէր , այլ նմին միաբան ։ Դարձեալ
ճշմարտանալն խոստմանցն ոչ եթէ հակա-
ռակ լինէր , այլ կարի քաջ միաբան ։ Զի թէ
ոչ ոք բարկանայցէ , և ոչ զգործ սպանութե-
ման բերէ ։ Նոյնպէս և ոչ ցանկանալն չըն-
լոյն՝ ոչ եթէ ընդ դիմակաց լինէր , այլ առա-
ւել համաձայն ։ Զի եթէ ոք ոչ ցանկանայ-
ցէ , և ոչ 'ի գործ շնութեան ժտի ։ Իսկ ամե-
նեւին չերդնուլն՝ սուտ չերդնլոյ ոչ եթէ ընդ-
դէմ լինէր , այլ յայտ ընկերակից . զի եթէ ոչ
սովորեցի ոք ամենայ երդնուլ , և ոչ սուտ

երբէք երդնուլ ։ Ընդ քանզի յանուն կռոցն երդնուին , ասէ՝ հատուսջիր տեառն զերդմունս քո ‖ Մատ․ 5 ․ 33 ․ այս ինքն՝ յիս երդնուցուս որ կենդանի եմ, և մի՛ ’ի կուռսն որք ոչ են կենդանիք ։ Իսկ աստ՝ զի կատարեալս առնիցէ ք͞ս զիւր աշակերտեալսն , ասէ՝ ամենևին մի՛ երդնուցուք ․ այլ եղիցի ձեր ա՛յոն այո՝ և ոչն ոչ ․ և որ ինչ աւելի է քան զայն՝ ’ի չարէ անտի է ‖ Յակ ․ 5 ․ 12 ․ և թէ որ աւելի քան զայն և զոչն է՝ ’ի չարէ անտի իցէ , ո՞ր չափ ևս առաւել՝ որ սուտ յահաւոր անուամբն երդնուցու ։ Արդ՝ յիսուսայ շնորհքն զչափ ա͞ծային օրինացն ունի՝ զի զնորա սասցեալսն հաստատէ յաւէտարանին ․ և նոքա մոլին թէ հակառակ ուսուցանէ նոցա

յեսուն ։

Նոյնպէս և վասն կերակրոց և ’ի հնումն և ’ի նորումս դատանեմք ․ զի յո՞յ տուեալ քեն ’ի դարմանն ։ Անդ ասէ՝ զե՛ս և կեր զի՞մ անասուն և զթռչունս ուտելիս ‖ Գործոց ․ 11 ․ 7 ։ Իսկ աստ ասէ , թէ՝ ամենայն ինչ որ մտանէ ընդ բերան մարդոյ , ոչ պղծէ զնա ․ այլ որ ինչ ելանէ ’ի բերանոյ անտի՝ այն պղծէ

զմարդն || Մարկ. 7. 15 ։ Ոչ՛ յամենէն ՚ի մէջէ՝
մի ինչ և մտանէ. և եթէ պիղծ ինչ էին կե-
րակուրքն, նախ ինքն քս ոչ ճաշակէր ՚ի նո-
ցանէ՝ և ապա այլոց հրամայն տայր ճաշակել.
իսկ եթէ յոչ ուրեք գտանեմք ասացեալ նր
՚ի նորումս. թէ՝ զայս ինչ մի՛ ուտիցես, յայ-
տէ եթէ զխտրութիւնս կերակրոցն որք ըստ
օրինացն էին՝ դադարեցոյց. այնու՝ զի ընդ
մեղաւորս և ընդ մաքսաւորս և ՚ը փարիսե-
ցիս ուտէր և ըմպէր || Մատթ. 9. 11 ։ Ոչ՛ ըզ-
զատկէն ասէր ցաշակերտսն թէ՝ ցանկանալով
ցանկացայ ուտել զզատիկս զայս ընդ ձեզ.
|| Ղուկ. 22. 15. մի՛ թէ և զզատկէն ասիցեն
թէ ձուկնէր և ոչ գառն. Քանզի Քս զամ
կերակուրս ուտէր անխտիր ող՛ յայտէ յաւե-
տարանին ։ Իսկ թէ ասիցեն թէ՝ քս յետ
յարութեն եկեր զձուկն և ոչ զմիս. վասն
այսորիկ և մեք զձուկն ուտեմք և ոչ զմիս ։
Ասելէ թէ՝ ուրեմն և նոքա այժմիկ մի կե-
րիցեն զձուկն, այլ ՚ի յարութե անդ. որպէս
և նա՛ յետ յարութեանն եկեր զձուկն զոր
եղիտ առ ձկնորսն ։

Այլև զի ձուկն միս է՝ այն ամենեցունց յայտ

է․ զի որոյ մարմին՝ և արիւն՝ ճարպ և ոսկերք
են, հարկէ թէ մանողէն իցէ և կենդանի ։
Իչ՞ է ձուկն՝ որոյ իբրև խոզի պառակաց
թամբ 'ի վերա կողիցն կայ․ արիւն այն չափ
եղանէ՝ որ չափ յոչխարէ ոչ եղանէ․ Իչ՞ զկե
րակուրս ժանտս ունէ․ զոր և գազանք և
անասունք չուտեն ։ Իչ՞ զձուկն խոկ առաւել
պարտէ գազան կոչել՝ որ զեւր համազգիսն
անխտիր ուտէ ։ Իչ՞ զի այն չափ սուրբ են
անասունքն քան զնա՝ զի 'ի նոցանէն զոհք և
ողջակէզք մատչէին այ․ և 'ի ձկանց ոչ ինչ
այնպիսի ։ Այլ և 'ի խորհուրդ և յօրինակ
մեծի խորհրդոյն որ յայտնելոցէր, ոչխար և
արջառ տպաւորէին և ոչ ձկունք․ որպէս
գառն՝ որոյ արեամբ փրկեցան անդրանիկք որ
դեռոցն իսրայելի յեգիպտոս ։ Իչ՞ խոյն որ սպա
նաւ փոխանակ 'ի սահակայ՝ խորհուրդ էր
ճշմարիտ գառինն որ բառնայ զմեղս աշխար
հի․ և երինջն զոր արտաքոյ բանակին բազա
նանէին յողջակէզ՝ ըստ որոյ օրինակի և
քս̄ արտաքոյ քաղաքին չարչարեցաւ ‖ Եբր․
13․12 ։ Իչ՞ Պաճէիթ այն է․ հաճոյ նըզէ
ա̄ն իբրև զորթ մատաղ՝ և ոչ իբրև զձուկն

մա

փափուկ․ || Սաղ․ 68․ 32։ զի ձուկն թէպէտ
և գայ յառակ, զերեզմանի առակ գայ և ոչ
կենդանութե․ ըստ այնմ զոր տէրն ասէ՝ թէ
ո՛պ եղև յովնան 'ի փոր ձկանն զերիս տիւս
և զերիս գիշերս, նոյնպէս պարտէ և որդւոյ
մարդոյ մտանել 'ի սիրտ երկրի․ և լինիլ անդ
զերիս տիւս՝ և զերիս գիշերս || Մատ․ 12․ 40։
Եւ այսպէս ոչ գտանեմք 'ի գիրս մեր եթէ
զձուկն սրբեաց և ետ 'ի կերակուր, և 'ի մի
սոյ հրաժարեցոյց իբրև 'ի պղծոյ և 'ի խո
տանէ իմիքէ։

Այլ և յօրէնսն գրեալէ․ եթէ՝ ետու ձեզ
ուտել զանասունս և զթռչունս իբրև
զկանաչ խոտոյ․ բայց՝ միայն զմեռելոտի և
զարիւն մի՛ ուտիցէք․ զի շունչ անասնոյ՝ ար
իւն իւրէ || Ծնն․ 9․ 3․ 4։ Եւ առաքեալքն 'ի թղ
թին զոր յերուսաղէմէ յանտիոք գրեցին՝ զնոյն
հաստատեցին թէ՝ պահել ձեզ յարենէ և 'ի
հեղձուցելոյ․ 'ի մեռելոտւոյ, և 'ի պոռնկութե
|| Գործ․ 15․ 29․ և չասացին թէ 'ի մսոյ։
Նա և՝ յօրէնսն զուտելի՝ անասունսն մեր
կոչէ, և զչուտելին պիղծս․ իբր ոչ եթէ
պիղծք բնութե էին, այլ զշախորժականն

մտաց մարդկան պիղծս կոչէ ։ Զի գիտէր
թէ՝ է ինչ՝ զոր ախորժեն ուտել ․ և է ինչ՝
զոր ՚ոչ ախորժեն ուտել ․ և ըստ նմին նման
օրէնս եդ ։ Նոյն զի չիք ինչ պիղծ ՚ի կերակրո
ցն , զայն ՚ի տեառնէն լուիցուք ․ թէ՝ չիք
ինչ որ մտանիցէ յորովայն մարդոյ ․ թէ կարի
ցէ զմարդն պղծել ․ այլ որ ինչ ելանէ ՚ի մար
դոյ անտի՝ այն պղծէ զմարդն ։ Եւ՛ յառաջելոյ
յառաջագոյն հայեցեալ մարգարէութեամբ
՚ի տարապարտ հպարտութի ադանդաւորա
ցն՝ ասէ ․ կարճեն զկերակուրս և արգելուն
զամուսնութի զոր ած արար ՚ի մխիթարութի
հաւատացելոց՝ որք գոհութ վայելեն ․ զի սր
բի բանիւն այ և աղօթիւք ‖ 1 Տիմ ․ 4 ․ 5 ։ Եւ ըբ
ոչ եթէ պիղծ ինչ իցէ և սրբիցի , այլ որ նո
պիղծն կարծիւր վասն զոհելոյն ․ զայնմանէ
ասէ առաքեալն ․ թէ սրբի բանիւն այ և ա
ղօթիւք ։ Վասն որոյ և ՚ի միւսում թղթին
ասէ ․ թէ՝ յորժամ կոչիցէ զձեզ ոք յանհաւա
տից և երթայցէք , զամ ինչ զոր դնիցեն ա
ռաջի ձեր՝ կերիջիք ․ և մի խղճիցէք ‖ 1 ․ Կորն
10 ․ 27 ։ Իսկ յայտ է թէ մի ինչ յամենայնէ
միան էր ։ Եւ՛ դարձեալ՝ թէ որ ինչ վաճառիցի

'ի մակեղոնի ( որ է 'ի մսավաճառանոցի ) · կերիջիք և մի' խղճայցէք · || Հռոմ · 14 · 21 ։ Այլ՝ ասեն · թէ ասէ առաքեալն թէ՝ լաւ է ոչ ուտել զմիս և ոչ ըմպել զգինի · և ոչ որ ով եղբայրն իմ գայթակղեսցի ։ Պտ՟ դարձեալ թէ՝ ոչ կերայց զմիս 'ի յաւիտեան որով եղբայրն իմ գայթակղիցի || I · Կոր՟ · 8 · 13 ։ Ասացուք՝ եթէ ձկամբն գայթակղիցի եղբայրն, ապաքէն և զայն չիցէ պարտ ուտել ։ Քանզի վասն գայթակղութե̄ չէ պարտ ուտել, և ոչ թէ վասն զի պիղծ ինչ կայցէ 'ի կերակրոցն ։ Պտ՟ մանաւանդ գինւով · որով բազումքն իսկ զեխանան · և ոչ այն չափ միան յանցուցանիցէ՝ որչափ գինին զեղծէ զմպօղսն և գայթակղեցուցանէ զտեսօղսն ։ Պտ՟ զի արդ իցէ՝ զի 'ի մսոյ պահեն և 'ի գինւոյ ոչ զգուշանան մարկիոնքն · զի բանն յերկուցունցն վերայ կայ · ասէ՝ ոչ ուտել զմիս և ոչ ըմպել զգինի և զնովիմբ ածեալ զպատճառսն՝ ասէ · թէ՝ և ոչ որով եղբայրն իմ գայթակղիցի, կամ տկարանայցէ ։ Որով ցուցանէ թէ՝ վասն գայթակղելոյն եդ զայնպիսի միտս 'ի միջի · և ոչ եթէ զկերակուրսն պիղծ համարէր ։

Ե՞ որ ասէն թէ՝ է՛ որ հաւատայ ուտել զամենայն ինչ, թէ հաւատաս ասէ՝ թէ բանիւն այ և աղօթիւք սրբին կերակուրքն, կե՛ր և մի՛ խտրեր. ապա եթէ տկարացեալս հաւատովք և խղճես, քանզի և եթ կեր և մի գայթակղիր. և յորժամ ոչ հաւատաս ուտել զամենայն իբրև զսուրբ, մի իշխեր դատել զայն՝ որ ուտէն. որպէս և որ ուտէն՝ ոչ պարտի անգոսնել զքեզ իբրև՝ զտրկար. որ ոչ ըդ հաւատաս ուտել զամենայն ինչ իբրև զսուրբ ։ Քանզի ոչ եթէ կերակուրքն կացուցանեն զմեզ առաջի այ և ոչ հանեն յերեսաց այ ։ Այլ կամ հաւատ
քըն՝ կամ խիղճ մտացն և կամ
գայթակղութիւնն

( Ճառ. ՀԷ : )

Արքունաւորաց դա շրջակէ. զոր ճանճեա ըստ լեան. և ոչ զոր անսուրբ հա հալեցուցէ :

# ԻՍԿ ՁԵՐ ՈՒԽՏԱՒՈՐՔՆ

ասեն՝ ընդէր են մսահատք, մեր ուխտաւորքն ոչ վն՝ այնորիկ հրաժարեն 'ի կերակրոց. եթէ թէ զկերակուրսն պիղծս համարեցին, և 'ի հիւլէեայ եթէ 'ի չարէ իմեքէ արարեալ, զի եթէ վասն պիղծ զկերակուրսն համարելոյ ուխտաւորքէին, և ոչ ուխտաւորութեան նոցա յուխտաւորութիւն համարիւր: Այլ կարճեն զանձինս 'ի կերակրոց՝ զի զօրութիւն զոր 'ի մտի եդին պահել՝ դիւրաւ պահիցեն : Նա և կուսանք սրբոյ եկեղեցւոյ, ոչ վասն այնորիկ պահեն զկուսութիւն՝ եթէ զամուսնութիւն տուեալ մեղ պղծութի համարիցեն, որպէս մարկիոնն և մանի. և մրծղնեայք, զի եթէ յայն միտս ուխ

տաճարքէին, ապա և կուսութիւն նոցա՝ չէր լինէր.
ըստ կարգի կուսութե. այլ վասն առաւել
սիրելոյ զԱծ 'ի բարւոք արարածոցն իւրոց հե-
րաժարեն, զի նմանեալք հրեշտակաց իւրոց՝ ուր
ոչ արու է՝ և ոչ էգ, ցուցանիցեն և յերկրի
զնոյն առաքինութի։ Ըստ այնմ թէ՝ Են ներ-
քինիք որք զանձինս իւրեանց արարին ներքի-
նիս վասն արքայութեն երկնից լինել, 'ի յա-
րութեն համասար հրեշտակաց ‖ Մատ. 19.
12։ Եւ առաքեալն՝ այր հաւատարիմ կոչէ
զկուսանսն. բայց հայեցեալ 'ի ընտրութն՝ չիշխէ
յայտնի հրաման տալ. այլ ախորժելով յօժա-
րեցուցանէ։ Որպէս և տէրն ան ասէ՝ այլ
ոչ ստիպէ ‖ Ա. Կորն. 7. 25։

Այս ամենայն վասն մարկիոնեաց աղանդի-
ասացաւ. որք զամուսնութին և զմանկ-
բութն խոտեն. և ուխտաճարեալք հանդերձ
աշխարհականօքն 'ի կուսութի՝ ստեն ուխ-
տին. զի առ չժուժելոյ ցանկութեն՝ արկա-
նեն միւսանգամ զնոսա ընդ ապաշխարութ։
Արդ եթէ օրինաց ոչ հաւատայցեն՝ որ ասէ՝
եթէ՝ Թողցէ այր զհայր և զմայր իւր՝ և եր-
թիցէ զհետ կնոջ իւրոյ. և եղիցին երկոքին

'ի մարմին մի' ։ || Ղկ. 2. 24 ։ Յեսուսյն է
էր ոչ հաճատայցէն որ զնոյն հաստատէ ։ և
յաճելու ։ թէ՝ զոր ած զուգեաց մարդ մի
մեկնեսցէ ։ Որ՛դ հաճատացելոց որք զճշմար
տութին կամիցին ցուցանել, նախ զործ այնէ
զի զերան որպէս և իցեն՝ նոյն պէս խոստովանի
ցին ։ և ապա թէ արք ընտիրք լինիցին յառա
քինութեան ։ զի այնէ ընդունելի ։ և ոչ որպէս
նոքա որք մեծամեծս կոտորեն ։ թէ՝ մեք ան
դրստին խել յաճ ապանէն ուխտաճոր եմք 'ի մի
ասկերութէ և յամուսնութէ ։ և ապա լու
ծանեն զուխտն՝ և զան մտանեն ընդ ապաշ
խարութ ։ Իսկ եթէ հարցանես՝ եթէ տան
ջանք զ՛ոն բարուոյն, ասեն թէ ոչ զոն ։ և
եթէ 'ի տանջանաց կասկած չեցէ, ապաշխա
րութի առ 'ի՛մի՛է ։ ոչ ապաքէն յայտէ թէ՝
'ի տանջանաց ոչ երկնչէին ։ և 'ի մեղցն անխր
տիրքեն ։ Բայց որ՛ս տանջանք չեն, յայտէ
թէ՝ և նորա պարգևք ոչ զոն ։ Այլ մեք ա
սեմ՝ յայն սակս փախեաք յարդարոյն, զի ա
հագին ապառնալեա ապառնայ յօրէնսն իւր ։
թէ՝ հուր վառեալէ 'ի բարկութեն խմուժ ։
և այրեցեմ մինչև 'ի դժոխս ներքինս ։ և թէ

այս ա՟մ պահեալէր 'ի գանձի խմուլ || 2. Օրէն
32. 22. և յայլ ուր թէ՝ հրով գատէ ա՟ծ.
Ո՞ անմիտք և մոլորեալք. թէ վ՟ ահագին
սպառնալեացն փախչէցիք յօրինացն ա՟յ, յոր
ժամ յա՟ ևս աւելի սպառնալիս քան զայն լս
պառնայցէ՝ հուր անշէջ և որդն անմահ, և
տանջանս յաւիտենականս, յի՞ ունիցիք փախ
չել: Իբր յորժամ 'ի հնումն և 'ի նորումս ըզ
նոյն սպառնալիս և զնոյն խոստմունս բարու
թեց գտանեմք, ոչ ապաքէն յայտ յանդիման
ցուցանի, թէ՝ մի՛ տուիչէ հնոյն
և նորոյս:

( Ճա. ՀԶ. )

Ընդդէմ Մարկիոնացւոյն, որք ուրանան
զյարութիւն մարմնոյ:



ՅՆ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ

մարմնոց չհաւատալ ուստի՞ եղե՞
մարկիոնի՞ և մանեայ և այլոց նոյն

պիտեաց։ Վասն Առաքեալն ասաց թէ՝ մարմին
և արիւն զարքայութիւնն այ ոչ ժառանգեն. և
ոչ ապականութիւն զանապականութիւն. I. Կորն.
15. 50։ Իսկ դարձեալ՝ թէ՝ ելանել ՚ի մարմնոյս
ցանկացեալ եմ և ընդ տեառն լինել. ‖ Փիլ. I.
23. որով յայտնէ ասելն՝ թէ վասն զի ՚ի հիւ-
լեայ է մարմինս, յայն սակս ոչ առնէ արժանի
յարութեան։ Իսկ թէ վն զի ՚ի հիւլէայն է մար
մին չյառնիցէ յարքայութիւն. ապա և վասն
զի յարդարոյն են հոգիքս, մի լինիցին արժանի
արքայութեան քարոզն։ Այլ յանդիմանէ զնո
նոյն առաքեալն անդէն ՚ի նմին տեղւոջ՝ որ
իւրև մատամբ ցուցեալ զմարմինն՝ ասէ,
թէ պարտ է ապականութեան այսմիկ զգենուլ
զանապականութիւն, և մահկանացուիս այսմիկ՝
զգենուլ զանմահութիւն. ‖ I. Կորն. 15. 53։
Նաև յայտնէ թէ՝ ոչ զոգիսն կոչէ ապակա
նացուս և մահկանացուս, այլ զմարմինս։
Իսկ ՚ի միւսումն թղթին ասէ թէ՝ ամենե
ցուն մեզ յանդիման լինել կայ առաջի բեմին
Քի. զի ընկալցի իւրաքանչիւր ոք իւրով մար
մնով զինչ և գործեաց յառաջ՝ թէ բարի և
եթէ չար. ‖ 2. Կորն. 5. 10։ Տեսանեմս՝ զի

մարմնով հանդերձ ասէ կրել զծարիս կամ զչա
րիս. և ոչ միայն հոգւով: Այլ ասէն. ա-
սաց առաքեալն թէ՝ ապականութիւն զանա
պականութիւն ոչ ժառանգէ: Ո՞վ չար բանս
քաղդ. Մարկիոն. որ զմինն լսես, և զմիւսն
ստունգանես: Զի եթէ ուղիղ մտօք լսէիր
զայն՝ թէ ապականութիւն զանապականութիւն
ոչ ժառանգէ, կարէիր կալ 'ի վերայ ճշմար
տութեանն. զի առաքեալն այն չափ ստուգէ՝
զյարութիւն մարմնոց, մինչ զի և զեղագում օրի
նակս 'ի մէջ բերէ: Նախ առաջին և բուն՝
զՔի յարութիւնն: Եթէ Քս մեռաւ ըստ գրոց.
և թաղեցաւ և յարեաւ յաւուր երրորդի.
|| I. Կորն. 15. 4: Երկ՛ զետեղեալ անդէն ըզ-
տեղեաւն. բաղում հանգամանօք ցուցանէ
վասն յարութեան հաստատութեան. և առաւել
զայն զոր լքբրև ցուցանէ Մարկիոնի՝ և Մա-
նեայ աղաղակէ և ասէ, եթէ մեռեալք ոչ
յառնեն, զի՞նչ գործիցեն այնոքիկ որք վասն
մեռելոցն մկրտեցան. || I. Կորն. 15. 29:
Դուք ասէ. ասէք թէ՝ մարմինք վասն զի 'ի
հիւլենայն են՝ ոչ յառնեն. եթէ մարմինքն
մահկանացուք ոչ յառնիցեն, հոգիքն կենդա

նէք վասն մարմնոյն մեռելոց ընդէ՞ր դաւա
նեցեն. և կամ մարմինքն մահկանացուք ընդ
ոգւոցն կենդանեաց վասն է՞ր մկրտեցին՝ թէ
ոչ ասէ՞ք՝ չիցեն յառնելոց մարմինքն մահ
կանացուք: Այսպէս իմանալի է բանս՝ և ոչ
որպէս մարկիոնն դանդաչէ, թէ փոխանակ
երախայի մեռելոյ պարտ է կենդանւոյ մերձա
ւորի խուռում մկրտել՝ զի անդ նմա համարի
ցի. զոր և առնեն իսկ մարկիոնքն: Այլ յան
դիմանէ փնոսա բանն տէրունական որ ասէ,
եթէ ոք ոչ ծնցի վերստին, ոչ կարէ տեսա
նել զարքայութիւն այ || Յովհ. 3. 5. Եւ՛ դար
ձեալ եթէ ոք ոչ ծնցի ի ջրոյ և ի հոգւոյ,
ոչ մտցէ յարքայութիւն երկնից: Արդ յայտ է
թէ իւրաքանչիւր ումեք պարտ է մկրտել.
և ոչ այլում ընդ այլոյ: Եւ՛ դարձեալ. ի
սերմանեացն առակէ յայտնի ցուցանի յարու
թիւն մարմնոյ. թէ ոչ զսերմն զոր սերմանես՝
ոչ այլ ընդ այլոյ դայ՝ թէպէտ և բազմապա
տիկ վայելչութի զգենու. այլ ոչ երբէք սեր
մանեցեր զգարի՝ և ծնանեցեր զցորեան. և ոչ
սերմանեցեր զկորեակ և ծնանեցեր զհաճար,
այլ զորս սերմանեցեր՝ զնոյն և ծնանեցեր:

Ըստ նմին օրինակի ասէ և մարմինն որ ան
կա՞ն նոյն և յառնելոց է ։ Դարձեալ և մար
մին և արիւնն ասել առաքելոյն թէ՝ զարքայ
ութիւն այ ոչ ժառանգէ, և ոչ ապականու
թիւն զանապականութի ժառանգէ, ո՛չ յայտ
միտս իմանալի է զոր մարկոնն առնու, թէ
վասն զի 'ի հիւլէական են մարմինքն՝ ոչ յառ
նեն. այլ յայլ երկուս միտս իմանի ։ Մ՝ի
յայն, թէ՝ մինչ դեռ 'ի մարմնոյ խորհուրդս
և 'ի գործս իցէ մարդն՝ շնչաւորէ և մարմին
և արիւն. և զի մարմնոյն և եթ խորհի և
գործէ, չէ արժանի մտանելոյ յարքայութին
երկնից ։ Որպէս և 'ի միւսում թղթին գրէ
նոյն առաքեալն առ աշակերտեալսն թէ՝ որք
մարմնովն են՝ զմարմնոյ խորհուրդս խորհին.
բայց դուք ո՛չ էք մարմնով, այլ հոգւով ‖ Հռովմ.
8.5.9. մի՞ թէ յորժամ զայս գրեաց առ
աշակերտեալսն՝ կէսքն էին 'ի մարմնի և կէսքն
չէին. ուստի յայտ է թէ 'ի մարմնի ամենեքեն
էին. այլ 'ի գործս մարմնոյ՝ և ոչ հոգւոյ ոչ
բոլորեքեան ։ Դարձեալ՝ և միւս միտս և ս
իմանալի է. եթէ ոչ շաղխով և արեամբ ա
ռուցեալ յառնեն մարմինքն, այլ նորոգեալք

յարութեն՝ ապականացուք զանապականու-
թիւն ժառանգեն. ո՜վ և ահէ իսկ զնովիմբ
թէ՝ փող հարկանի և մեռեալք՝ որք ՚ի քս՛՝
յառնեն անապականացուք. և մեք նորոգիմք
‖ Ա. Կոր. 15. 52: Արդ ցուցանի թէ՝
մարմինք նորոգեալք յարութեն՝ ազատացեալք
յամենայն կարեաց յառնեն. և ընկղմի մահ
՚ի պարտութիւն: Յորժամ ապականեալքն
զանապականութի զգենուցուն. և մահկանա
ցուքս զանմահութի. և սերմանեալք տկարու-
թեամբ՝ զզօրութի. և վարեալքն անարգութ՝
զփառաւորութի: Եւ չէք մարմին որ ՚ի հող
մնայցէ. այլ իւրաքանչիւր ոգւոց անձն՝ զիւր
զմարմին զգեցեալ յական թօթափել՝ կայցեն ա-
ռաջի ահեղ ատենին. ոմանք ՚ի կենաս յաւի-
տենականս և ոմանք ՚ի պատիժս դատաստանի:
Մարկիոս այս՝ ՚ի պոնտացւոց յաշխարհէ
անտի՝ եղեալէր որդի՝ եպիսկոպոսի. և ապա
կանեալ զկոյս մի՝ գնաց փախստական վս մեր
ժելոյ զնա յեկեղեցւոյ իւրոյ իսկ հօրն: Եւ
երթեալ ՚ի հռոմ խնդրել զապաշխարութիւն
յայնմ ժամանակի. և ոչ հասեալ այնմ, դըր
դուեցաւ ընդ դէմ հաւատոց. և եդեալ երկո

առաջս ։ Ուսուցանէ զբարւոյ՝ և զարդարոյ և զչարէ ։ Ոչ՞ զնոր կտակարանս օտարոտի համարի 'ի հնոյն . և յայտնման է որ 'ի նմայն խօսէր ։ Զյարութի մարմնոյ արհամարհէ . և զմկրտութիւնն . ոչ՝ մի՛ միայն տայ , այլ և երիս յետ յանցանելոյ ։ Ոչ՞ փոխանակ երա խայլից մեռելոց՝ այլոց ստիպէ առնուլ կնիք ։ Ոչ՞ այն չափ յանդգնեալ մինչև կանանց հրրամայէ զմկրտութիւն տալ . զոր ոչ՛ եք իշխեաց յայլոց աղանդոցն առնել . ոչ կնիք կըրկին և երեք կին տալ . և ոչ կամայս առ քահանայս ունել ։ Նա և նմա իսկ ուստի՞ իցէ քահանայութիւնն . որոյ ապականեալ զկոյս՝ տարագիր եղև յեկեղեցւոյ յիւրմէ՝ հօր է . մինչև ապաշխարութեան և հասանելոյ ոչ եղև արժանի ։ Ոչ՞ յերա՞ի չեղև արժանի . զի 'ի պատգամս հոգւոյն սրբոյ իշխեաց ձեռն արկանել . զկէսն հատանել և ընկենուլ իբրև զխոտան . և զկէսն ընտրել և առնուլ իբրև զպիտոյս ։ Ոչ՞ զայն ոչ գիտէ՝ թէ՝ յորժամ 'ի մարմնոց մասն մի կտրեցէ և առնուցու , զամենայն՝ մարմնոյն իսկ վկայ է սակաւ՞ ինչ մասն կտրեալ ։ Նուաճել ես յանդգնմանէ զնա՝

կատարիչն օրինաց • որ ասէր թէ՝ ոչ եկի լու-
ծանել զօրէնս և զմարգարէս , այլ լնուլ զն՟
|| Մատթ • 5 • 17 ։ Իբր՝ առաքեալն որ ա՛սէ ,
թէ ք՟ս է խաղաղութիւնն մեր որ արար զեր
կոսինն 'ի մի՝ || Եփես • 2 • 14 • որում
փա՛ռք յաւիտեանս ։
Ամէն ։

Վ Ե Ր Ջ

Նորին Իշխանայ Պարտաւորի Կոչեցելոյ .
Երրորդ ուղէ շոհէ և դիտանի :

ԱՍՏԻԱՑ ԱՍԻՐՆ ԻՐՈՒՄ կամացն ում թշնամւոյ զգուշանիս : Լաւէ յստակ խորհրդով 'ննջել՝ քան պիղծ խորհրդով աղօթել և վարձս ոչ առնուլ և 'ի զուր աշխատիլ : Զօրացիր չարչարանօքն քի . և համբերեա վասն նր . զի յաւելցիս յանանց բարութիւն : Որ դարունն 'ի հանգստեան կայ . ձմեռն 'ի սովու և 'ի սառնամանեաց սատակի : Որ աստ զմարմինն դարմանէ . յաւիտենական հանգիստն ոչ մտանէ : Ննդանդեա՛ սիրով . աղօթեա՛ յուսով . աշխատեա՛ համատով . պայծառացիր յերկնային հարսանիսն : Որոնաւոր մարմնասէր խոզի նըմանէ 'ի ծովացեալ մըղացն հեղձնու : Որ զերդեայր լւր տեսանէ և տրտում կայ . յաղթեալէ 'ի կեղծաւորութենէ : Որ առանձինն նստի և զուարթ կայ . զերծեալէ 'ի սատանայէ :

Ն·երանք մեր հոտեալեն 'ի պահոց· և լեզուք
մեր ընդ արմացեալ 'ի սաղմոսերգութէ · և
զոր ա՜ծ խնդրէ · զայն ոչ ունիմք , զսէր և
զխոնարհութի : Շ ըրթամբք սիրեմք զա՜ծ ·
և 'ի գործ աշխատիմք : Զ միս անասնոյ ոչ
ուտեմք · և զեղբայրն անյագաբար ուտեմք :
Գ·ինի ոչ ըմպեն · և զհոգին արեամբ շաղա
խեն : Զամուսնացեալսն ատեն · և պիղծ խոր
հրդով համապագ պոռնկեն : Զգեստ գյուլին
զգենուն · և ագահութե՜ այրեն · յայնպիսեա
ցըն արժանէ փախչել · և ոչ հաղորդութիւն
ունել : Զպայծառութի աչաց · շլացուցանէ
ծուխ · և զպայծառութիւն կրօնաւորի · ըն
տանութի մանկանց : Մ՛անուկ կրօնաւոր ·
որ ոչէ առ ոտս ծերոց · անջան որսէ սատա
նայի : Մ՛անկագոյն կրօնաւորի · մի՛ ասեր գծա
ծուկս քո · զի մահէ նոցա : Կրօնաւոր ուրա
խամիտ · դևէ գերգեսացի : Գ·ինի զբազմութի
ախտից զարթուցանէ և զերկիւղն ա՜յ հալա
ծէ : Մ՛ի՛ տրտմեցուցաներ զոք · և մի՛ տրտ
միր յումեքէ : Մ՛ի՛ բարկանար աշակերտին
մեղուցելոյ · զի հիւանդն ոչ եթէ յիւրոց կա
մացն հիւանդանայ : Ա՜ծ սիրուի է առանձին

յանդիմանեն ։ Մի՛ թիւնաթափ լինիր յեղբօրն խրատու պատճառաւ ։ Կրօնաւոր պճնող․ ասպնջականէ դիմաց ։ Որ մարմնական ընչից ցանկայ․ պոռնկութիւնէ ։ Եթէ վասն այ հալածիս․ մի՛ խեթ պահեր ։ Թ՝է առնուս ինչ յումեքէ․ յաւել ՚ի սովորական աղօթմն ։ Դուք յինչսն ժողովին․ և հրկ շտակք ՚ի բաշխելն ։ Ընչասիրուի․ մակլեցէ կռապաշտութեանն ։ Աղօթք ՚ի սուրբ սրտէ, պատարագի փրկութն գործէ ։ Մ՝ի՛ խնդրեր զհամեղութն կերակրոց ։ Զքն նա տեսանէ․ որ զինչսն ատէ ։ Կրօնաւոր բերդ ամուրէ ան զբաղութ ։ Եղբայրասէր կրօնաւոր․ ազգակցութիւն ունի առ քն ։ Խաղաղասէր կրօնաւոր․ ջահ պայծառէ եղբայրութն ։ Որ ոխ ունի ընդ եղբօրն․ դաշնաւորէ սատանայի ։ Որ խնթիւ ՚նլինչէ․ բարկացուցանէ զած ։ Երեկոյին երբ ՚ի մահիճն ելանես․ համարեա՛ թէ ՚ի գերեզման իջեր․ թող զխորհուրդս և զբանս որք մտոյի ընթանան․ և բևեռեա՛ ըզքեզ ընդ երկիւղն այ․ և ած զմտաւ զօր դատաստանին ։ Որ զեղբայրն ՚ի մարմնաւոր կերակրոյն զրկէ․ ոչէ ցանկացող քն ։ Որ փու-

թմ առնուլ ինչ յումեքէ , ոչ ունի յոյս առ
քս ։ Եթէ խնդրէ ոք ՚ի քէն և տաս , գոհացիր
զմյ , զի դու առաւել շահեցար քան զսայ ։
Մի լինիր ծաղրածու և կատակ երգակ ․ զի
մի ժառանգեսցես զանվաղճան զլացն ։ Խո
նարհութի և յուսով հնազանդիլ ․ և գիտութի
աշխատիլ ․ կատարելութի է ։ Ուլեն առա
քինութիւք և այլ ընտրութեամբ ․ զհաց անուրն
քրտամբք հրամայեաց ուտել ․ և դու զկեանս
յաւիտենից քնով կամիս ժառանգել ։ Եօթա
նասուն ամէ կարգեալ կենաց քոց և զայն ցա
ւօք և հեծութի ․ դու զհազարամեայ օրն ,
առանց ցաւոց կամիս ստանալ ։ Աշխատելոցն
հրամայեաց զհանգիստն ․ և ոչ որդնապարար
մարմնասիրացն ։ Եթէ ցաւակցութի ոչ սիրես
զեղբայրն ․ մի կեար ընդ նմա ։ Սեղեա զմար
մինդ գիտութի ․ են առաքինութիւք ․ որք ոչեն
հաճոյ այ ․ և այն չարին խաբէութիւն է ։ Յոր
ժամ աղօթես , ծանիր թէ ընդ ում խօսիս ,
կամ զինչ խնդրես ․ և զխորհուրդ ՚ի քեզ հա
ճաքեա ։ Յորժամ առաքէ քեզ այծ փառաւոր
կերակուր կամ մաքուր հաց , կամ միրգ ․ զջանի
ման կարօտեալ եղբօրն տուր նախ քան զքո

ճաշակելն · զի քո՛ քեզ սեղանակից լինի ։ Յոր ժամ նստիս ՚ի սեղանն, խոնարհեցո զգլուխդ մի՛ այլ ինչ տեսաներ բայց միայն զքեզ · և գոհութեամբ ճաշակեա ։ Մի խնդրեր զհամեղութիւն կերակրոց և զպատրաստելն · այլ միայն որ զկարօտդ բառնայ ։ Հանդերձ քո մի՛ լիցին առ ՚ի պճնել · այլ միայն առ ՚ի մարմնոյ դիւր· զայն որ զմեռեալն ծածկեն · ապա թէ դաշնե լորդն և զան պատշաճն սիրես, զրկեա յերկնաւոր զարդուքն ։ Եթէ հիւանդ ես կամ տըխատեալ · մի՛ խշտանութեամբ վարիր · Որ ՚ի սաղմոսելն ծիծաղի կամ մարմնական խօսս բերէ ՚ի մէջ · արտաքոյ լիցի սրբութեան մին չև առողջացի ։ Յառաջոյն է զձեռս ամբառնալ առ Աստուած, յորժամ աղօթեսցէ բայց սուածել կարևորէ զմիտսն ։ Եթէ հաստատեսցես լես յեղծայրն՝ հնազանդեա՛ ՚նմա, ապա թէ ոչ ՚ի սովորականէն մի՛ ելաներ ։ Պարտէ կրօնաւորին տրեամբ չափ հակառակ կալ ընդ դէմ մարմնական ցանկութեանց · և այնպէս պատարագ լինել այ ։ Նոյն հնազանդն թէպէտ և պղերգ է և ծոյլ · կրօնաւորէ ծառայութեամբ ՚ի տանն այ ։ Ոն գործ մեղու լաւէ քան զծիր



կար

կարիճ ։ Որ զինքն ուրացեալէ և ՚ի լուծ պատուիրանին մտեալ բառնալով զխաչն Ք՜ի , չէ պարտ ընտրողութիւն առնել հրամանաց առաջնորդին ․ այլ անսալ երկիւղիւ ․ զի և պետրոս չօգտեցաւ ինչ ըն
տրութեն ։

Ցանկ գլխաւոր բանից պարունակելոց ի սմին՝ ըստ տառից դասաւորութեան ։


Ագահութի՝ պատճառէ զպ՜տերազմ 71
Ադամայ զյանցմնէ ըն գիտր ա՜ծ 148
Աղօթք՝ կոչին հրեշտակք 96
Այլք վ՜ այլոց ոչ պարտին մկրտիլ 268
Անասունք ՚ի պէտս և յերկիւղ մեզ ա՜րան 54
Անհաստատութին՝ է պատճառ չարեաց 38
Անմարմինք հեռի են յամուսնութէ 89
Աշխարհս՝ նմանի լծեալ կառի 12
Արարածոց պաշտօն ոչէ մատուցանել 9
Արարածովս ճանաչի արարիչն 190
Արարածք զյարութէ վկայեն 64
Ա՜ծ ոչ յումեքէ ունի զսկիզբն 2
Ա՜ծ զէակսն պահէ անխախուտ 5

Ած է անկարօտ և զօրաւոր առ ամենեսեան 4
Ած ոչէ արարիչ չարեաց 5
Ած յայտնեալ լինի փոփոխմամբ էիցս 7
Ած է անշարժ և անփոփոխ 7
Ած յոչնչէ արար զաշխարհս 21
Ած ոչէ տղէտ 47
Ած որ ոչ եսպան զսատանայ • վն էր 48
Ած ոչ է առիթ չարեաց 38
Ած վն էր ետ մահ բնութեես 65
Ած՝ զմարդն կենդանի պահէր թէ չէր յանցեալ 63
Ած՝ 'ի մարդոյ կերպարանս երևին վն էր 83
Ած՝ զանազան անուանս ունի 83
Ած՝ 'ի վերէ քան զլոյս և զհուր 83
Ած՝ կանխագէտ գոլով չարեաց վն էր թոյլ տայ գոյանալ 78
Ած՝ ոչ չար ստեղծ զսատանայ 134
Ած՝ արգելու զլալոց մեան 146
Ած՝ զոր ինչ գիտէ, ոչ զամ կամի 148
Ած՝ ոչ զոք պատրաստէ 'ի կորուստ 152
Ած՝ ոչէ ակնառու 152
Ած՝ ոչ ունէ հարկ կամաց մարդոյ 156
Այ էութին անքննելի է 2

Այ տեսչութիւն պահէ զտանջեալսն 77
Այ հեռութիւն յաճախտնելից է 128
Այ երկայնմտութիւն խստացայց զփարթուածն 150
Այ կամքն ոչէ նկամուտ 155
Աստեղք ոչէն պատճառ ծննդեան և մահու 138
Աստեղք ոչ թելադրեն զդիպուածս 140
Արալէզն չէր բնաւ 88
Արամազդ , որէ զրուան ըստ մոգուց 100
Աւերժահարսունքն ըստ կարծեաց է 87
Աւերժահարսից գոյն բաց ասի 87
Արգելումն եղև կերակրոց վասն գայթակղութեանց ոմանց 260
Բախտն դիպուած է 117
Բաքեկոս օձն · հայհոյիչն սատանայէ 95
Բարւոքէ ամուսնութիւն 31
Բարեաց կամեցողէ ածն 154
Դեւք աղօթիւք լինին փախստական 75
Դեւք թարցրիչսւոնուէ չէշխեն մտանել ի խմբէ 77
Դեւք ոչ ծնանին 90
Դեւքն՝ կամօք եղեն չար 125
Դեւք յայլ և այլ կերպարանս երեւին 87
Եկեղեցի հայածէ զդեւս 133
Եղիա և Ենովք միայն կան կենդանի 93

Երկիւղութեամբ զքեզ ուրանային 187
Երկիւղութեամբ ինքնակաց համարին զ՟ս 209
Երկիւղութեամբ ասէ զքեզ և զխոնարհութիւն 210
Եսխողոս բազում ամս համարեաց 221
Երազք յայլ և այլ պատճառաց լինին 161
Երկինք ոչ են շրջականք 170
Երկինք բարձրաբար ասին 237
Երկիր ՚ի վերայ ոչինչ կայ 174
Զրադաշտ եղև հնարիչ կրօնից մոգուցն 12[illegible]
Զրուան հայր որմզդի և արհմենայ աստծոց
մոգուցն, սուտ դոյն ցուցանի 116
՚Ի խրատել պատժէ զմեզ Ած 73
՚Ի մարդս գոն բնական ազդեցութիւնք 159
՚Ի մարմնաւորէ անմարմին ոչ եղանէ 88
՚Ի յօձէ լինի Թիրիակ 55
Ուրաքանչիւր մարդոյ գոյ հրեշտակ պահա-
պան 96
Լուսինն յարեւէ զօրինակն ՚նկարէ 11
Լուսին իջուցանել ոչ կարեն կախարդք 199
Լուսաւորաց ստեղծմանն 125
Լուսաւորաց խաւարելն յայս է 198
Լուսաւորքն ոչ են կենդանիք 168
Ադամ՝ ոչ էր բնութեամբ մահարեր 41

Կաղանջանն բուժիչէ 58
Կախարդք դղևս ոչ կարեն հանել 79
Կանեփուկն կասեցուցանէ զցանկութին 58
Կռապաշտութի՝ դիւաց գիւտ է 134
Հակառակք՝ երերաց ծախիչք են 56
Հաւատացելոց չէշխէ մերձենալ սատանայ 78
Հեթանոսք զարեգակն ա͞ծ ասէին 185
Հեթանոսք 'ի սերուքայ են 188
Հեթանոսք զքաջս, դիւցազն ասէին 108
Հին և Նոր օրէնքն միմեանց ներհակ չգոլն՝
ցուցանի բազմօք 253
Հելլէնք 'ի Հելլէնոսէ ըսկսան 189
Հիւլն ոչ է պարզ բնութի 26
Հոգին է պարզ բնութի 192
Հոգի՝ եռամասնեայ է 207
'ի Հպարտութ͞է լինի դիւահարութի 72
Հրեշտակք՝ յոչնչէ արարան 65
Հրեշտակք՝ զանազանաբար անուանին 82
Հրեշտակք ոչ առնուն զյաւելուած 91
Հրեշտակք ոչ ծնանին 86
Հրեշտակք ստեղծուածք են 179
Հրշ͞տկց ը կանոյս խառնակին առաքելց 81
Հրէայք որդիք կոչին սատանայի 135

Մահն 'ի մեզ եկամուտ 137
Մահտարաժամ թէ յուստեքն լինի 70
Մանի 'ի յաղջկանցն յանդիմանի 104
Մանկունս զերկուս ընկղեցուս զնէ 103
Մանրագործն · 'ի լոկ ուտելն սատակիչէ 57
Մաւօլէ ջուրն վնասակարէ 58
Մարդիկք են արարիչք չարեաց 23
Մարդիկք 'ի պատժել չարժեն զա՜ծ 73
Մարդն յանձնէ միտն 'ի չարիս 25
Մարդն բանութե՜ ոչ ծառայէ ա՜յ 34
Մարդն ոչ եղև բնութե՜ չար 37
Մարդն անմահ ըստեղծա՜ 60
Մարդն ոչ 'ի հարկէ վարի 67
Մարդն անձին իշխանութե՜ պարտաւորի 78
Մարկիոն թէ ուստի և ո՛վլոք 270
Մարկիոն եղծիչ եղև ո՜ր գրոց 270
Մարկիոնի մոլար կարծիքն ցուցանի 222
Մարկիոնի մոլար կարծիքն յանդիմանի 229
Մարկիոն ուրանայր զյարութին մեռելոց 265
Մարկիոն զամուսնութե՜ն և զմիս ուտելն խոտէր 263
Մարմնաւորք յայլ կերպարանս փոխել ոչ կարեն 91

Մարմին և արիւն զարքայութիւն ոչ մտանէ ասէ՝ երկու միօք իմանի 259
Մարմինք մեր յ՟մ կարեւց աղտ յառնեն 270
Մարմին որ անկանի միհուսմբ նոյն և յառնէ 269
Մոգուց կրօնից առասպելագոյն ցուցանի 117
Մոլախինդն հատանէ զմաղձն 38
Յակոբայ ընտրութին որպէս 148
Յանխտիր կերակրոց պատճառին ցաւք 71
Յանասունս գոն բնական ազդեցուիք 158
Յարութին մեռելոց հաստատուն 266
Յարութին մեռելոց․ ճշմարտի յարութենք ո՞ւի 267
Յարութեան մեռելոց, հանդերձ մարմնով լինելոցէ 266
Յարութեան մեռելոց ցուցանի օրինակաւ սերման 268
Յուշկապարիկք ոչ գոն 87
Նախախնամութին ա՟յ պահէ զմեզ ՚ի վնասուց պողնոց 132
Նախանձն ՚ի պատուելոյն ա՟յ զմարդն՝ եղև 38
Նախանձն՝ սկիզբն է ամենից չարեաց 43
Նհանգ՝ ստեղծուած ինչ ոչ գոյ 91
Նիւթն ոչ էր յաւէտակից ա՟յ 98
Չարիք ոչ են անձինք 23

Չարիք ո՛չ գործին ա՟յ կամօք 30
Չարիքն կամածինք են 53
Չարն՝ յանսաստութ՟է է 37
Չարն՝ է՛ արտաքոյ կամացն ա՟յ 43
Չէ մարթ ումեք յինքենէ լինել 116
Պարսկաց առասպել՝ վ՟ն զրուանայ 100
Պիւթագորաս շնչաւորաց միս ուտել արգելու 186
Պիւթագորաս զինքն ա՟ծ անուանեաց 186
Պիւթագորաս զնախամակալութիւն ա՟յ ժխտէ 202
Պիւթագորաս հոգւոց փոփոխիլ ասէր 203
Պիւթագորաս զտարերս մահկանացու ասաց 204
Պիւթագորայ՝ հինգ ամեայ լռութիւն 204
Պղատոն՝ զա՟ծ՝ զհիւլ՝ և զկղոս 'ի միասին դնէ 186
Պղատոն՝ զկանայս հասարակաց համարէր 203
Պղատոն զհոգիս փոփոխական գոլ ասաց 207
Պղատոնի սահման վ՟ն հոգւոց 186
Պօղոսի յերկինս վերանալն, որպէս 239
Սասանեանք 'ի սատանայ են 144
Սատանայ 'ի պատուիրանացն ուսաւ զչարիս 42
Սատանայ՝ ոչ եղև չար 43
Սատանայ՝ կամօքն եղև բանսարկու 45

Սատանայ՝ է հրահանգ կռուածոցաց 50
Սատանայ թոյլատրութեն ո՛չ փորձէ 68
Սատանայ՝ յանդգնոս փորձեաց զՔս 68
Սատանայ՝ իմացաւ զգալուստն Քի 68
Սատանայ յայլ և այլ կերպարանս փոփոխի 94
Սատանայ՝ ՚ի բարուցն կոչեցաւ 129
Սատանայ՝ կամօք է մեզ թշնամի 166
Սատանայ ոչ կարէ փոփոխել զօձն 193
Սատանայ՝ իշխան օդոյս կոչի 193
Սոփիկեանք զածս ած համարէին 187
Սոփիկեանք՝ զաշխարհս ՚ի հրոյ ասեն 208
Ցաւն՝ յանցանօք պատճառեցաւ ՚ի մեզ 62
Ցլու արիւն ըմպել մահ գործէ 57
Քս՝ և եթ առանց սերման ծնաւ 90
Քս և հայրն իւր են մի տէր աշխարհի 246
Քս՝ ոչ ում զօտար ոք յափշտակեաց զիշխանութիւն · այլ ՚ի հօրէ տուաւ նմա 246
Քս տիրաբար արար զքանչելիս և խափանեաց զօրէնս 245
Քս ուտելով ՚ի մեղաւորս և ՚ի մաքսաւորս՝ զխստութեն օրինացն դադարեցոյց 256
Քս մարմնոյն իւրով միանգամ · և մի մահուամբ մեռաւ 251

Քանի յարութիւն և խաչին՝ ոչ էր առաջօք 242
Քանի յարութեան՝ օրինակ է մերոյս 242
Քանի գալուստն՝ խայտառակեց զսատանայ 93
Քանի մարդանալոյ յամենայն՝ ոչ առանց պատճառաց 212
Քրիստոնեայք 'ի քանէ անուանեցան 189
Օձն՝ ոչ էր չար բնութեամբ 55
Օձն զգօնանայ 'ի Թովչաց 55
Որմզդն՝ ծնանի 'ի յաշտն առնելոյ 100

## Յիշատակարան ։

Փառք՝ պատիւ՝ գոհութիւն և երկրպագութիւն ամենասրբոյ երրորդութեան միոյ և Միութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ · որ իւր անհուն բարերարութեան և ամենառատ ողորմութեան , եւ կարողութիւն մեզ տկարացս 'ի կատար հասուցանել զտենչալի և 'ի բաղձից փափագելի նորագիւտ գիրքս սրբոյ Ն շրհա

պետին Էջմիածնայ կողմացուոյ՝ հայոց իմաստա
սիրի · 'ի պայծառութեն սրբոյ եկեղեցւոյ.
Յամի փրկչին մերոյ 1763 և հայոց ՌՄԺԲ
մարտի ( ԺԲ ) ։ Արդեամբք զմիւռոնոյ արհի
Եպիսկոպոսի և Ռաբունոյն Տեառն Սերա
համու Աճ իմաստ Վարդապետի · որ զօրի
նակ գրքոյս 'ի ձեռն բերեալ ունելով, ըստ
գրասէր բարուցն իւրոց ցանկացաւ տպագը
րութե 'ի լոյս ածել զսա · վասն երկուց ։
'Նախ՝ զի մի՛ անհետացեալ խափա կորիցէ
աշխատանք գերաշնորհ տե Վարդապետին
Էջմիածնայ · ըստ ճրագի ընդ գրուանաւ ծած
կեցելոյ · վն որոյ վերստին արժարժեալ՝ եդ
զսա յաշտանակի բարձրութե · զի որդիք Նորոյս
սիօնի, պղայն իմաստից սորին վայելեսցեն ։
Երկրորդ՝ զի տե գիրքս ոչ այնքան գոյր տա
րածեալ 'յաշխ մերում · բայց թէ զանուանն
միայն լսէաք · զոր և գերամեծար Պատրիար
քըն կոստանդնուպօլսոյ Յակոբ Նճարեան
Վարդապետն 'ի տեսանելն, առ ժամայն կա
թոգին սիրով յարեալ՝ ոչ սակաւ կրեաց աշ
խատանս 'ի վն սորին թէ 'ի յարպաճելն 'ի սղա
լանաց և թէ 'ի զանազան պրակս բաժանելն զձա

ռակերպ ասացուածոն սրբոյ Հեղինակին • որ
և միանգամայն Հրամայեալ զի տպագրեսցի •
որոյ տէ՛ր յ՚ս զնեանս երկարաձիգ ս՛նա և զվարձս
բարիս պարգևեսցէ Ամն ։

Ա՛յ յորժամ շնորհիւ տեառն սկիզբն արարեք
'ի տպել զգիրքս զայս • խրազեկ եղեալ սուննեցի
Տիրացու յօհաննէս՝ և ը̅ բարեսէր որդին իւրոյ
խնդրեաց Թախանձանօք 'ի վերոյոգեալ դէտէն
Զմիւռնոյ • զի զնէս ծախն տպեցման սորին
ինքն տայցէ , առ 'ի լինել յիշատակ հոգւոյ
իւրոյ ընդ որ հաճեալ բաւ սիրելոյն զնա , զի
լինիցի այնպէս ։ Արդ՝ երես անկեալ մաղ
թեմ 'ի յԱմենասիրութենէդ ձերմէ • որք կա
րօտից զովացուցանէք զպասքումն ծարաւոց
ձերոյ 'ի մշտահոս աղբերէս , յիշել յաղօթս
ձեր նախընծնիս վերատեսուչն զմիւռնոյ զՏէր
Աբրահամ Արքիմատ Վարդապետն աստա
պատցի • այլ և զհոգեկից և զանխոնջ սիրով
շաղկապեալ հարազատ եղբայրն իւր զՏէր
Սիմէօն Արքեան Վարդապետն երևանցի •
( որք են մտերիմ գործունեայք և ցանակից
միաբանք լուսանկար և քառակերպ Աթոռոյն
սրբոյ Էջմիածնի • ) համդերձ հոգևոր և մար

խաւոր ծնողէւք նոցին։ Բարս և զմէրոյ յիշել
հոգացողն կէս ծախուց սորին · զխնեցի և 'ի
դեղջէ աղօ՛անոյայ, զհամեստակենցաղ և զխո
հեմամիտ տիրացու Յօհանն · և զհայրն իւր
դրիգոր զհանգուցեալն առ քս · նա և զհօր
եղբայրն իւր զՅօհաննէսն , և զորդիսն նո
րին , զաւետիսն և զտիրացու Ղազարն ։
Յիշեսջիք և զ Տէր Մեսրոպ Նուաքինաջան
և զխտնակին Մարդապետն զանձակեցի զհան
գուցեալն առ քս · որ զօրինակ սորին վերըս
տին աշխատուե գրեաց և ետ մեզ 'ի տպել ·
որում տէր զհանգիստն յաւիտենական պար
գևեսցէ ։ Յիշեսջի՛ք և տծ ողորմի ասասջի՛ք
՚ընոսին առ տր հանգուցեալ կեսարացի մահ
տեսի կարապետեան զմիւռոննացի մհնի սիմ՛ոն
հայաւակ և հոգև որ զորդեակն մեր · որ յոյժ
աշխատեցաւ 'ի ժողովելն վկայութեց և զդանկ
դրքոյս · և 'ի յակնարկելն 'ի տպեցեալ թուղթ
սյն , 'ի վեր քան զկարն՝ ըստ տըւեցելոյ նմա
շնորհաց ։ Այս և զնօտար մնացականն
մարգարեան · զի և նա ըստ կարի
իւրում աշխա
տեցաւ ։

Հուսկ յետոյ յիշման արժանի վարկջիք զտպագրող գրքոյս այսորիկ զմ՟ղծ՟ի Մարկոս անարժան ծառայս ձեր. հանդերձ ծնողիւք իմովք որ զբովանդակ կեանս իմ ընդ գոյից իմոց վատնեցի. մինչեւ շնորհիւ տ՟ն զտպագրարանս զայս ՚ի լոյս ածի. յօգուտ եւ ՚ի պայծառութի՟ ազգիս. վ՟ն ՚ի լոյս ածելոյ զզանազան գրեանս ա՟ծայինս. որ աճասիկ ՚ի ծառայութե՟ ձերում ՚ի պատրաստի կամ, զի զոր ինչ առաջադրեցէք ինձ զգրեանս՝ արարից ըստ կամաց ձերոց ՚ի փառս տ՟ն ա՟յ եւ ՚ի շահ ընթերցասիրաց։

Յիշեսջիք հանդերձ աշխատաւորօքս իմովք. եւ զշարօղ եւ զցրուօղ կապարեայցս. զսեբաստիացի հանգուցեալ սանդրինոսի որդի զտիրացու յօհաննէսն, որ ՚ի մանկութե՟ իւրմէ հետեւող եղեւ արհեստիս. որում տէր տացէ զշնորհս եւ զիմաստութիւն։

Նա եւ՝ զկողբեայ սեւանցի կարապետի որդի զմահտեսի իգնատիոսն։ Եւ տէր յ՟ս, թէ պատճառ եղողաց եւ թէ ստացողաց. միայն զամայն յիշողացդ եւ յիշեցելոցս առ հասարակ ողորմեսցի։

Ամէն։

Եւ այս 'ի գործող տեսչաց եղած ուղղակցեալ բազում և հանդերձ յոգնոց ջանիւք ոչ ծանեցի . այլ որ 'ի ընթերցողացն և 'ի վերծանողութեան հոլովման բառից ոմանց կայր ուղղութիւն վասն ոչ կարող ներհան շարադասութեան . ուստի աղաչեմ զա շնորհ ընթերցողաց . կարող դիւրաճանաչել ընթերցողաց վասն որոյ ներողամտ ժամ 'ի բանից պատահմանց ըն կամ մեր այս ժամ եղև ուղղագրութեան շարադասել շնորհել :

| | | |
|---|---|---|
| 28 | մինչ էր | մին չէր |
| 33 | մարդիկք ասէին | մարդիկք ասէն |
| 34 | շինել | լինել |
| 42 | եկէր | եկեր |
| 53 | մարթեմք | մարթիմք |
| 61 | գտանի | գտանի՝ զի |
| 69 | գայցեն | կայցեն |
| 72 | զի զամ | զամ |
| 76 | իմն խոստա | իմն իմն խոստա |
| 82 | ըստ առաջս | ըստ յառաջս |
| | սաորիքն | ստորինեայքն |
| 88 | մտաց գլխաց | մտաց 'ի գլխաց |
| 90 | ինչ ոքէր | ինչ էր |
| 91 | յինչ յորև | ինչ յորև |

ժ. խթ.

93 դիւաց 'ի դիմաց ‖ 98 կարիցին կարիցեն
105 լինին լինեն ‖ 107 պատճառ պատշաճ
101 է ոչ ոչ ‖ 119 առնէին դառնեին
119 զհաշտն զյաշտն ‖ 121 'ի յաղերն 'ի յազգէն
125 արևն արեգական ‖ յարդարանդէ արդարանդէ
127 յանդիմանեն յանդիմանեին
138 զի գեղեցիկ զի մի՛ գեղեցիկ
145 վիրիպել վրիպել ‖ 148 զեսուայ զեսաւյ
149 յառլութէ յառաճելութէ
160 քանակին քնակին ‖ 178 կոչեցաք եռչեցեալ